
ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԸ

1958-1990
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ

THIS PUBLICATION SPONSORED BY KOTAYK DIOCESE
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC
OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

LILIT HARUTYUNYAN

LEBANON FROM 1958 TO 1990

The book is recommended for publication by the Scientific Council of the Institute of Oriental Studies, National Academy of Sciences, Republic of Armenia

YEREVAN
2007

956.93

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԸ 1958-1990 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գ30414



ԵՐԵՎԱՆ
«Լուսակն» 2007

ՀՏԴ 950
ԳՄԴ 63.3 (5 Լի)
Հ 422

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագիր՝ Ն.Հ. Հովհաննիսյան
պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Հարությունյան Լիլիթ
Հ 422 Լիբանանը 1958-1990 թվականներին: Եր.- «Լուսակն» հրատ. 2007թ.,- 338 էջ:

Աշխատության մեջ քննարկվում են 1958-1975թթ. Լիբանանի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հիմնական ուղղությունները, դրանց վրա տարածաշրջանային գործընթացների ազդեցությունը, Լիբանանի կրոնադավանական համակարգն ու կրոնական համայնքները, դրանք ներկայացնող քաղաքական ուժերն ու կուսակցությունները, երկրի ներքաղաքական կյանքում 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին պաղեստինցիների լուրջ քաղաքական գործոն դառնալու գործընթացը: Ուսումնասիրվում են նաև 1975-1990թթ. Լիբանանում ընթացող քաղաքացիական երկրորդ պատերազմի բռնկման նախադրյալները, ընթացքն ու հետևանքները, լիբանանյան գինված հակամարտության մեջ ներգրավված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուժերի դերակատարությունը: Քննության են ենթարկվում 1970-ականների կեսից Լիբանանի շիական համայնքի քաղաքական և տնտեսական ակտիվացմանը նպաստող գործոնները, այդ համայնքի ազդեցության ուժեղացման գործընթացը: Հետազոտվում է նաև 1989թ. հոկտեմբերի 22-ին կնքված Տաիֆի համաձայնագրի ստորագրման և 1990թ. երկրում վերջնական խաղաղության հաստատման գործընթացը:

Նախատեսվում է արևելագետների, միջազգայնագետների, դիվանագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

Հ 0503000000 / 0150(01) 2007 2007թ.

ԳՄԴ 63.3 (5 Լի)

ISBN 978-99941-48-66-0

© Լիլիթ Հարությունյան, 2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 9-19

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1958-1975ԹԹ.)

1. Լիբանանի տնտեսության ընդհանուր բնութագիրը 20-21
2. Գյուղատնտեսությունը 22-27
3. Արդյունաբերությունը 27-35
4. Արտաքին առևտուրը 36-38
5. Ֆինանսները, պետական բյուջեն, բանկային համակարգը, զբոսաշրջիկությունը և տրանսպորտը 39-48
6. Տնտեսական զարգացման ծրագրերը 48-54

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿՐՈՆԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1958-1975ԹԹ.)

..... *55-75*

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1958-1967ԹԹ.)

1. *Քաղաքական իրադրությունը 1958թ. քաղաքացիական պատերազմից հետո 76-99*
2. *Ֆուադ Շիհաբի նախագահության տարիները (1958-1964թթ.): Հարաբերական կայունության շրջան՝ հին խնդիրներ, նոր մոտեցումներ. շիհաբականություն 99-112*
3. *Շարլ Հելուի նախագահության առաջին տարիները (1964-1967թթ.): Հարաբերական կայունության շրջանի ավարտը 113-124*

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1967-1975ԹԹ.)

1. *Շարլ Հելուի նախագահության վերջին տարիները: Պաղեստինյան գործոնը Լիբանանի ներքաղաքական կյանքում (1967-1970թթ.) 125-152*
2. *Պաղեստինյան ռազմաքաղաքական ներկայությունը որպես լիբանանյան հասարակության երկփեղկման և*

Լիբանանյան ճգնաժամի խորացման հիմնական պատճառ (1970-1973թթ.) *152-174*

3. Լիբանանը 1975թ. սկսված քաղաքացիական պատերազմի նախօրեին (1973-1975թթ.) *174-196*

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԼԻԲԱՆԱՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1975-1990ԹԹ.)

1. Քաղաքացիական պատերազմի առաջին փուլը (1975թ. ապրիլից մինչև 1976թ. մայիս) *197-207*

2. Քաղաքացիական պատերազմի երկրորդ փուլը (1976թ. հունիսից մինչև 1978թ. փետրվար): Սիրիական վերահսկողության հաստատումը Լիբանանում *208-214*

3. Քաղաքացիական պատերազմի երրորդ փուլը (1978թ. մարտից մինչև 1979թ.): Իսրայելի առաջին ներխուժումը Լիբանան *214-218*

4. Քաղաքացիական պատերազմի չորրորդ փուլը (1980-1981թթ): Լիբանանյան աջ ուժերի դիրքերի ամրապնդումը *219-224*

5. Քաղաքացիական պատերազմի հինգերորդ փուլը (1982թ. հունիսից մինչև 1984թ փետրվար) *225-245*

ա/ 1982թ. Իսրայելի «Խաղաղություն Գալիլեային» ռազմական գործողությունը 225-236

բ/ 1983թ. մայիսի 17-ի լիբանանա-իսրայելյան խաղաղության համաձայնագիրը լիբանանյան հակամարտության միջազգայնացման համատեքստում 236-245

6. Քաղաքացիական պատերազմի վեցերորդ փուլը (1984թ. փետրվարից մինչև 1988թ.): Սիրիական դիրքերի վերահաստատումը Լիբանանում 245-254

7. Քաղաքացիական պատերազմի յոթերորդ փուլը (1988-1989թթ): Միշել Աունի «Սիրիայից ազատագրման պատերազմը» և Տաիֆի համաձայնագրի ստորագրումը 254-262

8. Քաղաքացիական պատերազմի ութերորդ փուլը: Վերջնական խաղաղության հաստատումը Լիբանանում 262-267

ՎԵՐՋԱԲԱՆ *268-273*

ԱՄՓՈՓՈՒՄ (անգլերեն) *274-310*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ *311-326*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ *327-337*

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*



* Աղբյուրը՝ www.maps.com

ԱՌԱՋԱԲԱՆ

Լիբանանը, չնայած իր փոքր տարածքին և փոքրաթիվ բնակչությանը[1], ուրույն դերակատարություն ունի արաբական աշխարհում, ինչը պայմանավորված է այդ երկրի նպաստավոր աշխարհագրական դիրքով, ինչպես նաև մտավոր և մշակութային զգալի ներուժով:

Այդ երկիրը մշտապես գտնվում է օտար ուժերի հետաքրքրությունների կենտրոնում, ինչը բացատրվում է նաև նրա՝ մերձավորարևելյան խոշոր բանկային և առևտրային կենտրոն լինելու հանգամանքով: Պատահական չէ, որ Լիբանանում բազմիցս բախվում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ոչ տարածաշրջանային մի շարք պետությունների ռազմավարական շահերը:

Լիբանանն առանձնանում է նաև իր յուրահատուկ կառավարման համակարգով, որը հիմնված է կրոնադավանական սկզբունքի վրա: Ըստ 1943թ. ձեռքբերված «ջենտլմենական» բանավոր համաձայնության՝ «Ազգային դաշինքի», որը պայմանավորում է Լիբանանի քրիստոնյա և իսլամադավան կրոնական համայնքների և ազգային փոքրամասնությունների փոխհարաբերություններն ու երկրի արտաքին քաղաքականությունը[2], հանրապետության նախագահը պետք է լինի քրիստոնյա մարոնի, վարչապետը՝ իսլամադավան

---

[1] Լիբանանի Հանրապետությունը Միջերկրական ծովի ափին գտնվող արաբական պետություն է՝ 10,4 հզ. կմ² տարածությամբ: Բնակչությունը 1992թ. տվյալների համաձայն՝ շուրջ 3մլն է: Քաղաքաբնակները բնակչության 70%-ն են, գյուղաբնակները՝ 30%-ը: Ժողովրդագրական աճը տարեկան 2,1% է, իսկ կյանքի միջին տևողությունը՝ 67: Բացի արաբներից, որոնք բնակչության մոտ 90% են, Լիբանանում բնակվում են նաև հայեր, հույներ և ազգային այլ փոքրամասնություններ: Մանրամասն տե՛ս Économie du Monde Arabe et Musulman, Paris, 1992, p. 150, Межэтнические конфликты в странах зарубежнего востока, М., 1991, с. 105.

[2] Համաձայն «Ազգային դաշինքի»՝ Լիբանանի արտաքին քաղաքականությունը պետք է հիմնվի դրական չեզոքության սկզբունքի վրա: Լիբանանյան քրիստոնյաները չպետք է փնտրեն Ֆրանսիայի կամ արևմտյան որևէ այլ պետության հովանավորությունը, իսկ լիբանանյան իսլամադավան բնակչությունը չպետք է փորձի այն միավորել Սիրիայի կամ որևէ այլ արաբական պետության հետ:

սունցի, խորհրդարանի նախագահը՝ իսլամադավան շիա: Այս սկզբունքն ընկած է նաև խորհրդարանում պատգամավորական տեղերի բաժանման և վարչական մարմիններում պաշտոնների նշանակման հիմքում: Լիբանանի նորագույն պատմությունը, երկրում տեղի ունեցող գործընթացներն ու ներկա շատ իրողություններ դժվար է ըմբռնել առանց երկրի կրոնադավանական համակարգի շատ հաճախ բացասական, բայց երբեմն նաև կարևոր կարգավորող դերի ուսումնասիրման:

Լիբանանի պատմության ամենակարևոր ժամանակահատվածներից մեկը, իրավամբ, համարվում է 1958-1990 թվականներն ընդգրկող շրջանը՝ 1958թ. երկրում բռնկված առաջին քաղաքացիական պատերազմից մինչև 1975թ. սկսված երկրորդ քաղաքացիական պատերազմի ավարտը: Պատմագրության մեջ Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմի ժամանակագրության վերաբերյալ կան երկու տեսակետներ: Առաջինի համաձայն այն ընդգրկում է միայն 1975-1976 թվականները[3]: Ըստ երկրորդի[4] պատերազմն ընթացել է մինչև 1990թ.՝ երկրում վերջնական խաղաղության հաստատումը, իսկ 1975-1976 թվականներին Լիբանանում ընթացող զինված հակամարտությունը քաղաքացիական պատերազմի միայն առաջին փուլն էր: Ավելի հիմնավորված է, ըստ իս, երկրորդ տեսակետը:

1960-ականներին և 1970-ականների առաջին կեսին՝ Լիբանանի նորագույն պատմության այս խիստ հակասական ժամանակահատվածում, մի կողմից նկատվում էր սոցիալ-տնտեսական ընդհանուր առաջընթաց, քաղաքական իրաղրության համեմատական հանգստություն, մյուս կողմից՝ 1975թ. սկսված երկրորդ քաղաքացիական պատերազմի նախադրյալների առաջացում:

---

[3] Տե՛ս P. Seale, Asad. The Struggle for the Middle East, London, 1988, pp. 269-288; D. Pipes, Greater Syria: The History of an Ambition, New York, Oxford, 1990, p. 119; H. Cobban, The Grouth of Shi'i Power in Lebanon and Its Implications for the Future, Shi'ism and Social Protest, ed. by C. Joun and K. Nikk, London, 1986, p. 145.

[4] Տե՛ս D. Hiro, The Essential Middle East. A Comprehensive Guide, New York, 2003, pp. 297-300; E. Picard, Lebanon. A Shattered Country. Myths and Realities of the Wars in Lebanon, New York, London, 1993, p. 121; Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. III, Երևան, 2006, էջ 638:

Հատկապես 1960-ականների երկրորդ կեսից Լիբանանի ներքաղաքական կյանքում աստիճանաբար մեծ ազդեցություն սկսեցին թողնել տարածաշրջանային իրադարձությունները, որոնք շատ դեպքերում ճեռք էին բերում միջազգային նշանակություն, ինչպես 1967 և 1973 թվականների արաբ-իսրայելյան պատերազմները, 1973թ. պատերազմի հետևանքով առաջացած համաշխարհային էներգետիկ ճգնաժամը, մերձավորարևելյան հակամարտության մեջ պաղեստինյան գործոնի դերի բարձրացումը և այլն:

Ուսումնասիրվող շրջանում Լիբանանի պատմության քննությունը ցույց է տալիս, որ ներքին ճգնաժամերը հաճախ հաղթահարվում էին լիբանանյան գրեթե բոլոր հիմնական համայնքների համատեղ ջանքերով: Դրա վառ ապացույցն էին ամենատարբեր և անհավանական քաղաքական դաշինքների կազմավորումն ու տարբեր կրոնական համայնքների ղեկավար շրջանակների համագործակցությունը:

1958-1990 թվականների ներլիբանանյան և տարածաշրջանային զարգացումների հետազոտությունն արդիական է ոչ միայն Լիբանանի այդ շրջանի պատմությունը, դրան հաջորդած տարիների զարգացումներն ու երկրի ներկա իրավիճակը, այլև տարածաշրջանային գործընթացներն ավելի համապարփակ ու խորը գնահատելու տեսանկյունից:

Աշխատության շրջանակներում քննարկվող հիմնախնդիրները նպաստում են նաև մերձավորարևելյան հակամարտության որոշ ծալքերի առավել ընդգրկուն պատկերացմանն ու այդ հակամարտության սրման արդյունքում Մերձավոր Արևելքի տարբեր պետություններում, տվյալ դեպքում Լիբանանում խորացող հակասությունների ճիշտ ըմբռնմանը: Պատահական չէ, որ 1975թ. Լիբանանում բռնկված երկարատև քաղաքացիական պատերազմը նաև մերձավորարևելյան հակամարտության խորացման հետևանք էր:

Մինչև 1970-ական թվականները Լիբանանին հաջողվում է զերծ մնալ մերձավորարևելյան հակամարտությանն ուղղակի մասնակցությունից: Սակայն 1960-ականների վերջից՝ հատկապես 1969թ. նոյեմբերի 3-ի Կահիրեի համաձայնագրի ստորագրումից հետո, որով պաղեստինցիներին հնարավորություն տրվեց օրինականացնել Լիբանանի հարավում, փաստորեն, արդեն իսկ գոյություն ունեցող ռազմա-

կան ճամբարների կարգավիճակը՝ հարգելով Լիբանանի անկախությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև 1970թ. Հորդանանում «սև սեպտեմբերի» դեպքերից հետո, երբ Յասիր Արաֆաթի գլխավորությամբ Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) ռազմական և քաղաքական կառույցները հաստատվեցին Լիբանանում, այս երկիրը ևս, մինչ այդ աննախադեպ չափերով, աստիճանաբար ներքաշվեց արաբ-իսրայելյան հակամարտության մեջ՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Ինչպես նշվեց, աշխատանքի էջերում ուսումնասիրվում է նաև 1975-1990 թվականներին Լիբանանում ընթացող քաղաքացիական երկրորդ պատերազմի բռնկման նախադրյալները, ընթացքն ու հետևանքները, ինչպես նաև քննության է ենթարկվում լիբանանյան զինված հակամարտության մեջ ներգրավված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին, հատկապես տարածաշրջանային ուժերի՝ Սիրիայի և Իսրայելի դերակատարությունը ներլիբանանյան զարգացումներում:

Խիստ հետաքրքրական է 1970-ականների կեսից Լիբանանում շիական համայնքի քաղաքական և տնտեսական ակտիվացմանը նպաստող գործոնների, ինչպես նաև այդ համայնքի ազդեցության ուժեղացման քննությունը: Պատահական չէ, որ 1978, ապա նաև 1982 թվականների Իսրայելի ներխուժումներից հետո հենց շիական համայնքը (հանձինս «Ամալ» և «Հիզբալլահ» շարժումների) գլխավորեց Լիբանանում իսրայելյան ռազմական ներկայության դեմ պայքարը: 1970-1980-ականներին շիական համայնքում ընթացող գործընթացների լուսաբանումը կարևոր է ոչ միայն հետագայում Լիբանանի ներքաղաքական կյանքում շիական գործոնի ուսումնասիրության, այլ նաև 2006թ. հուլիս-օգոստոս ամիսներին Իսրայելի՝ Լիբանանի տարածքում «Հիզբալլահի» դեմ ձեռնարկած ռազմական գործողությունների պատճառների ու հետևանքների մեջ խորամուխ լինելու տեսանկյունից:

1970-ականների երկրորդ կեսին ԱՄՆ-ի հովանու ներքո սկսվեց մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման քեմփդևիդյան գործընթացը, ինչի արդյունքում Եգիպտոսի և Իսրայելի միջև 1978թ. ստորագրվեցին Քեմփ Դևիդի համաձայնագրերը, իսկ հաջորդ տարի նաև եգիպտահսրայելյան խաղաղության պայմանագիրը: 1982թ. Իսրայելի Լիբանան ներխուժմանը հետևեց 1983թ. մայիսի 17-ի

լիբանանահսրայելյան խաղաղության համաձայնագրի ստորագրումը, որը քեմփդևիդյան գործընթացը շարունակելու փորձ էր: Սակայն այն ոչ միայն չնպաստեց Լիբանանի և Իսրայելի միջև վերջնական խաղաղության հաստատմանն ու Լիբանանում իրավիճակի կայունացմանը, այլև էլ ավելի սրեց առկա ճգնաժամային իրավիճակն ու նպաստեց երկրում արմատական տրամադրությունների սրմանը:

Մենագրության էջերում ուսումնասիրվում է նաև 1989թ. հոկտեմբերի 22-ին կնքված Տաիֆի համաձայնագրի ստորագրման և երկրում վերջնական խաղաղության հաստատման գործընթացը: Մասնավորապես լիբանանյան աջ ուժերի ճակատում Տաիֆի համաձայնագրի ստորագրմամբ պայմանավորված տարաձայնությունները վերաճեցին աջերի շրջանում զինված հակամարտության՝ Լիբանանում վերջնական խաղաղության հաստատումը հետաձգելով ևս մեկ տարով՝ մինչև 1990թ. հոկտեմբերը:

Սույն աշխատության արդիականության հարցն ողղակիորեն պայմանավորված է մերձավորարևելյան տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կարևոր գործընկերներից մեկի՝ Լիբանանի Հանրապետության նորագույն պատմության, ներքին և արտաքին քաղաքականության, տնտեսության զարգացման հանգուցային հիմնախնդիրների ուսումնասիրման կարևորությամբ:

Ուսումնասիրվող շրջանում մերձավորարևելյան տարածաշրջանում, մասնավորապես Լիբանանում տեղի ունեցած քաղաքական գործընթացները Հայաստանի համար կարևորվում են այդ երկրում մեծաքանակ հայկական համայնքի գոյության փաստով ևս: Լիբանանահայ համայնքը Լիբանանի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցվածքի կարևոր բաղկացուցիչն է և հասարակական-քաղաքական կյանքի էական դերակատարներից մեկը:

Աշխատությունը գրված է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Ուսումնասիրության համար սկզբնաղբյուր են ծառայել Լիբանանի Հանրապետության սահմանադրությունը[5], Լիբա-

---

[5] Конституция Ливанской Республики, - в. кн. Конституции государств Ближнего и Среднего Востока, М., 1956.

նանի կառավարության պաշտոնական վիճակագրական տվյալները, Լիբանանի Հանրապետության զարգացման և ծրագրավորման նախարարության տարբեր տեղեկատուները[6], որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում Լիբանանի տնտեսության տարբեր ոլորտների զարգացման ծրագրերի վերաբերյալ:

Գոյություն ունեցող սկզբնաղբյուրների մեջ կարևորվում են նաև Միավորված ազգերի կազմակերպության նյութերը՝ ՄԱԿ-ի տարեգրքերը, Միջին Արևելքի տնտեսական զարգացմանը նվիրված տեղեկագրերը[7], պաղեստինյան հարցի վերաբերյալ ՄԱԿ-ի պաշտոնական հրատարակումները[8], Պաղեստինին վերաբերող միջազգային փաստաթղթերի ժողովածուն[9], ԱՄՆ-ի պետքարտուղարության՝ մերձավորարևելյան տարածաշրջանին առնչվող տեղեկագրերը[10], ԽՍՀՄ կառավարության արաբական երկրներին առնչվող փաստաթղթերի և նյութերի ժողովածուները[11]:

Մյուս կարևոր աղբյուրը լիբանանյան և արաբական զանազան պարբերականներն են, հատկապես արաբալեզու «Ալ-նահարը»,

---

[6] Republic of Lebanon, Council for Development and Reconstruction, Beirut, 1994; Republic of Lebanon, Ministery of General Planning, The Six Year Development Plan (1962-1967), Beirut, 1967; Republic of Lebanon, Ministery of General Planning, The Six Year Development Plan (1972-1977), Beirut, 1971.

[7] Industrial Development in the Arab Countries, United Nations Publication, New York, 1967; Industrial Development in the Arab Countries, United Nations Publication, New York, 1969; Industrial Development in the Arab Countries, United Nations Publication, New York, 1975; United Nations Studies on Selected Development Problems in Various Countries of the Middle East, UN Publications, New York, 1970; UN Economic Developments in the Middle East 1962-1967, UN Publications, New York, 1961, UN Economic Developments in the Middle East 1972-1975, New York, 1971.

[8] Палестинская проблема, Документы ООН международных организаций и конференций, М., 1984.

[9] International Documents on Palestine, Beirut, 1970; International Documents on Palestine, Beirut, 1971.

[10] Department of State Bulletin, LXII, 1650, 1970.

[11] СССР и Арабские страны 1917-1960, Документы и материалы, М., 1961; Ближневосточный конфликт 1957-1967гг., Из документов архива внешней политики Российской Федерации, Международный фонд демократии, Т. II, М., 2003.

«Ալ-ահրարը», «Ալ-ցիդան», «Ալ-ախբարը», «Ալ-սաֆիրը», «Ալ-մուհարիրը», «Ալ-մասալումաթը», «Ալ-ահրամը», «Ալ-բասսը», «Ալ-սաուրան», ֆրանսալեզու «Լ'օրիանը», «Լը ժուրը» (որոնք 1970թ. սեպտեմբերին միավորվեցին), «Լը կոմմերս դյու լևանտը», «Լը սուաըը», ինչպես նաև լիբանանահայ մամուլ՝ «Մեր ձշանաբանն է հառաջ», «Ազդակ», «Զարթոնք», «Արարատ» և այլն, ուր տեղ են գտել Լիբանանի նախագահների, կառավարությունների և պետական բարձրաստիճան գործիչների հայտարարություններն ու պաշտոնական փաստաթղթեր՝ համապատասխան մեկնաբանություններով:

Աշխատանքում լուսաբանված տարբեր հարցերի մեկնաբանությանը մեծապես նպաստել է արաբագետ Ն. Հովհաննիսյանի՝ Մերձավոր և Միջին Արևելքի, հատկապես, Լիբանանի պատմության տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող արժեքավոր աշխատություններն ու հոդվածները[12]:

Հայ արևելագիտությունը լավագույնս ուսումնասիրել է Մերձավոր Արևելքի, մասնավորապես արաբական երկրների պատմության ու արտաքին հարաբերություններին առնչվող հարցերը, որի վկայությունն են Հ.Գրիգորյանի, Հ.Թոփուզյանի, Շ.Կարամանուկյանի, Ռ.Կարապետյանի, Ա.Հովհաննիսյանի, Ե.Նաջարյանի, Վ.Ջիջիյանի[13] և այլոց մենագրություններն ու հոդվածները:

---

[12] Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982, Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում 1939-1958թթ., Երևան, 1967, Ն. Հովհաննիսյան, Հ. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան, 1975, Н. Оганесян, Ливанский конфликт и Армянская община Ливана, Советский опыт решения национального вопроса и его значение для народов Африки и Азии, Ереван, 1982; Н. Оганесян, Отнашения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985, Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. III, Երևան, 2006:

نقولا ي هوفهانيسيان،ألنضال ألتحّرري ألوطني في لبنان(١٩٣٩–١٩٥٨)،بيروت،١٩٧٤.

[13] Հ. Գրիգորյան, Սիրիայի ձախբասսիստական դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 14, Երևան, 1989, Հ. Թոփուզյան, Սիրիայի և Լիբանանի

Հետազոտվող խնդիրների քննությանը նպաստել են նաև խորհրդային հետազոտողների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր և Միջին Արևելքի պատմության հարցերի վերաբերյալ տպագրված մենագրություններն ու ժողովածուները[14]:

Խորհրդային շրջանի հեղինակների հրատարակությունների շարքում հետաքրքրական են Վ. Վոլնովի, Վ. Կատինի, Ե. Դմիտրիևի (նույն ինքը՝ Ե. Պիրլին), Գ. Նիկիտինայի, Ե. Մելնիկովի, Ս. Իվանովի, Ա. Ագարիշևի, Ե. Պրիմակովի, Լ. Դադիանիի, Ի. Զվյագելսկայայի, Վ. Կիսելյովի, Ե. Կարշունովի, Ն. Լիֆանովի, Ռ. Օվինիկովի, Մ. Ռոդիոնովի, Ն. Սերյոգինի ու Ս. Պետրովի և այլոց ուսումնասիրություններն ու մենագրությունները, որոնք առնչվում են Մերձավոր Արևելքի ժողովուրդների և երկրների փոխհարաբերությունների համակարգին, արաբ-իսրայելյան հակամարտության

հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986, Շ. Կարամանուկյան, Արաբական պետությունների լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988, Ռ. Կարապետյան, Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996, Երևան, 2000, Ա. Հովհաննիսյան, ԱՄՆ-ի քաղաքականությունը 'իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ, Երևան, 2001, Ե. Նաջարյան, Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին, Երևան, 1985, Վ. Ջիջյան, Հայաստանը և Միջին Արևելքը. Տնտեսական համագործակցության հեռանկարները Սիրիայի և Լիբանանի հետ, Երևան 2001:

[14] Новейшая история арабских стран Азии, М., 1988; Ближний Восток и Международное право, М., 1982; А. Кунина, Доктрина Эйзенхауэра, М., 1957; История дипломатии, Т. V, Книга I, М., 1974; О. Туганова, Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1960; Ю. Маргунов, Ю. Потемкин, Арабо-турецкие отношения на современном этапе, 1946-1960, М., 1961; Э. Пир-Будагова, Сирия в борьбе за упрочение национальной независимости (1945-1966), М., 1978; Политика Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1966; А. Федченко, Ирак в борьбе за независимость (1917-1969), М., 1970; Межарабские конфликты в странах зарубежнего Востока, М., 1991; Современный Ливан (Справочник), М., 1963; Политика США на Арабском Востоке, М., 1961; Арабский мир. Три десятилетие независимого развития, М., 1990.

առանձին խնդիրներին և Լիբանանում տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած զարգացումներին[15]:

Արաբ-իսրայելյան հակամարտության հետազոտմանը, Լիբանանի պատմությանն առնչվող տարբեր խնդիրներին նվիրված արևմտյան ուսումնասիրողների աշխատությունների շարքում անհրաժեշտ է նշել Բ. Օդեհի, Մ. Մաքեյի, Ջ. Բուլլոչի, Պ. Սիլի, Ի. Ռաբինովիչի և Հ. Շեքդի, Ջ. Նաքաշի, Լ. Մեոյի, Վ. Գորիայի, Ռ. Համիզրաչիի, Հ. Քուբեյնի, Հ. Քիսինջերի, Մ. Քալբի և Բ. Քալբի, Ա. Նորթոնի, Ա. Դաուիշայի, Թ. Փեթրանի, Մ. Հադսոնի, Ջ. Հուրևիցի, Ջ. Նաթեթի, Մ. Ջոնսոնի, Ֆ. Գրիբլաթի, Ջ. Ռանդալի, Պ. Կալվակորեսսիի, Դ. Հիրոյի, Է. Պիկարի և այլոց մենագրությունները, հոդվածներն ու հրատարակումները[16]:

---

[15]Л.В. Вольнов, Ливанский дневник, М., 1980; В. Катин, Ливан: Экономика и внешняя тарговля, М., 1961; Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1986; Его же Палестинский узель, М., 1978; Е. Пырлин, Ближневосточный лабиринт, М., 1996; Г. Никитина, Государство Израиль, М., 1968; Е. Мельников, Политический и государственный строй Ливана, М., 1976; А. Иванов, Межарабская политика Сирии, Том 1, М., 1986; А. Агарышев, От Кэмп-Дэвида к трагедии Ливана, М., 1983; Его же Ближный Восток: Терроризм и его покровители, М., 1986; Е. Примаков, История одного сговора, М., 1985; Л. Дадиани, Государственный строй Ливана, М., 1973; И. Звягельская, Роль военной верхушки в формировании государственной политики Израиля, М., 1982; В. Киселев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, М., 1988; Е. Каршунов, Репортаж из взорванного рая, М., 1982; Н. Лифанов, Ливан, М., 1966; Р. Овинников, Зигзаги внешней политики США, от Никсона до Рейгана, М., 1986; М. Родионов, мароните, Из этно-конфессиональной истории восточного средиземноморие, М., 1982; Н. Сенегин, С. Петров, Ливан, М., 1969.

[16] B. Odeh, Lebanon: Dynamics of Conflict, A Modern Political History, London, 1985; S. Mackey, Lebanon: Death of a Nation, New York, 1991; J. Bulloch, Death of a Country. The Civil War in Lebanon, London, 1977; P. Seale, Asad. The Struggle for the Middle East, London, 1988; I. Rabinovich, The War for Lebanon 1970-1983, Correll University Press, 1984; I. Rabinovich, H. Shaked, From June to October, The Middle East between 1967 and 1973,

Աշխատանքի մեջ օգտագործված են նաև Լիբանանի քաղաքական գործիչների՝ Պիեր Ժմայելի, Քամալ Ջումբլաթի[17], Քարիմ Բագրատունու[18] աշխատությունները, որոնցում հեղինակներն իրենց գնահատականներն են տալիս Մերձավոր Արևելքում և Լիբանանում ուսումնասիրվող ժամանակահատվածում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններին: Առանձնահատուկ արժեք են ներկայացնում արաբ պատմաբանների՝ արաբ-իսրայելյան հակամարտությանը, Լիբանանի և արաբական այլ երկրների քաղաքական և տնտեսական հարաբերություններին նվիրված հետազոտությունները: Հարկ է նշել

New Jersey, 1978; G. Naccache, Un Rêve Libanais 1943-1972, Ficher du Monde Arabe, 1983; L. Meo. Lebanon, Improbable Nation, Indiana University Press, 1965; W. Goria, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, Ithaca Press, 1985; B. Hamizrachi, The Emergence of the South Lebanon Security Belt: Major Haddad and the Ties with Israel, New York, 1988; F. Qubain, Crisis in Lebanon, Washington, 1961; H. Kissinger, White House Years, Boston-Toronto, 1979; H. Kissinger, Years of Upheaval, Boston-Toronto, 1982; M.Kalb, B. Kalb, Kissinger, Boston-Toronto, 1974; A. Norton, Amal and the Shi'a. Struggle for the Soul of Lebanon, USA, 1987; A. Dawisha, Syria and Lebanese Crisis, New York, 1980; T. Petran, The Struggle over Lebanon, New York, 1987; M. Hudson, The Precarious Republic: Political Modernization in Lebanon, New York, 1985; J. Hurewitz, Confessional Democracy, Lebanon, Middle East Politics: The Military Dimension, New York, 1969; J. Nantet, Histoire du Liban, Paris, 1963; M. Johnson, Class and Client in Beirut: The Sunni Muslim Community 1840-1985, London, 1986; F. Griblat, La Communauté Libanaise et le Mouvement National Palestinien 1967-1986, Paris, 1988; J. Randal, Going all the Way: Christian War lords Israeli Adventures, and the War in Lebanon, New York, 1992; П. Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Книга 1, М., 2000; D. Hiro, The Essential Middle East. A Comprehensive Guide, New York, 2003; E. Picard, Lebanon. A Shattered Country. Myths and Realities of the Wars in Lebanon, New York, London, 1993; E. Picard, The Lebanese Shi's and Political Violence, Geneva: Unites Nations Research Institute for Social Development, 1993.

[17] P. Gemayel, Conaissance des Kataeb, Beyrouth, 1960; K. Joumblatt, Pour le Liban, Editions Stock, 1978; K. Joumblatt, Democratic Nouvelle, Beyrouth, 1987; كمال جمبلاط،حقيقة الثورة اللبنانية،بيروت، ١٩٨٩

[18] كريم بقرادوني، السلام المفقود ١٩٧٦-١٩٧٢،بيروت، ١٩٨٤

Ֆ. Աջամիի, Հ. Բարաքաթի, Ա. Ազմեհի[19], Ք. Սալիբիի[20], Մ. Իբրահիմի[21], Բ. Քորանիի և Ա. Դեսյուկիի[22], Ա. Բադրի[23], Ա. Իսմայիլի[24], Ռ. Ռազակի[25], Ի. Աբուշդիդի[26] և այլոց աշխատությունները:

Օգտվելով առիթից՝ շնորհակալություն եմ հայտնում ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի իմ գործընկերներին աջակցության համար, մասնավորապես պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին՝ աշխատանքը ղեկավարելու, արաբական երկրների բաժնի վարիչ՝ պատմական գիտությունների թեկնածու Շահեն Կարամանուկյանին՝ արժեքավոր խորհուրդների և դիտողությունների համար: Շնորհակալություն եմ հայտնում նաև Անի Փաշայանին՝ գրքի խմբագրմանն աջակցելու համար:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպիսկոպոս Քարամյանին՝ սույն գրքի հրատարակությանն օժանդակելու համար:

---

[19] F. Ajami, The Vanished Imam Musa al-Sadr and the Shia of Lebanon, Cornell University, 1986; H. Barakat, Lebanon in Strife: Student Preludes to the Civil War, New York, 1977; A. Al-Azmeh, "The progressive forces", Essays on the Crisis in Lebanon, London, 1976.

[20] K. Salibi, Cross Roads to Civil War: Lebanon 1958-1976, London, 1976; K. Salibi, The Modern History of Lebanon, London, 1965;

كمال ألصليبي،تاريخ لبنان ألحديث،بيروت، ١٩٧٢.

[21] محسن ابرهيم، الحرب و تبرية الحركة الوطنية اللبنانية، بيروت، ١٩٨٣.

[22] B. Korany and A. Dessouki, The Foreign Polices of Arab States, Cairo, 1984.

[23] ألبرت بدر، محاضرات في ألأقتصاد أللبناني،بيروت، ١٩٧٢.

[24] A. Ismail, Le Liban. Histoire d'un Peuple, Beyrouth, 1965.

[25] الدكتور رزق رزق،لبنان و بلادالسوفيات(١٩١٧-١٩٨٧)،بيروت، ١٩٨٧

[26] E. Abouchdid, 30 Years of Lebanon and Syria, Beirut, 1948.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1958-1975ԹԹ.)

1. Լիբանանի տնտեսության ընդհանուր բնութագիրը

Լիբանանը, որը 1960-ականներին և 1970-ականների առաջին կեսին համարվում էր Մերձավոր Արևելքի ամենաազատական տնտեսություն ունեցող երկիրը, չնայած թույլ զարգացած արդյունաբերությանը, ուներ ընդհանուր տնտեսական զարգացման բավական լավ ցուցանիշներ: Լիբանանը զգալի եկամուտներ էր ստանում բանկային համակարգից, տարանցիկ առևտրից, լիբանանյան սփյուռքի դրամական փոխանցումներից, զբոսաշրջիկությունից և այլ ծառայություններից, որոնք կազմում էին ազգային եկամտի 2/3-ը[27]:

Լիբանանի տնտեսությունը զարգանում էր հիմնականում ծառայությունների և թեթև արդյունաբերության ոլորտների հաշվին, որոնք երկրի տնտեսության հիմքն էին: Այդ ժամանակաշրջանում Լիբանանի զարգացմանը նպաստում էր Ծոցի նավթային երկրների տնտեսական աննախընթաց աճը, քանի որ Լիբանանի ֆինանսա-բանկային համակարգը մասամբ ինքն էր միջնորդի դեր կատարում նշված երկրների կապիտալի և արտերկրում ներդրումային հնարավորությունների միջև[28]:

Լիբանանի, հատկապես Բեյրութի՝ որպես Մերձավոր Արևելքի առևտրային և ֆինանսական կենտրոնի, կարևորությունը սկսեց ավելի արժևորվել 1950-1960-ականներին, երբ Սիրիայի և Եգիպտոսի

---

[27] The Middle East Journal, H. Aly and N. Abdun-Nur, An Appraisal of the Six Year Plan of Lebanon (1972-1977), Vol. 30, Autumn, 1972, p. 151.

[28] Վ. Ջիջիյան, Հայաստանը և Միջին Արևելք. Տնտեսական համագործակցության հեռանկարներ Սիրիայի և Լիբանանի հետ, Երևան, 2001, էջ 34-35:

տնտեսություններում ազգայնացման գործընթացների արդյունքում ֆինանսական միջոցների զգալի ներհոսք տեղի ունեցավ դեպի Լիբանան, որտեղ գրեթե սահմանափակումներ չկային դրամական միջոցների և ապրանքների ազատ հոսքի նկատմամբ: Լիբանանի տնտեսական վերելքին մեծապես նպաստեց նաև 1950-ականներից Եգիպտոսում խորացող «օտարատյացության» (xenophobia) պոռթկումը: Շատ օտարերկրյա ընկերություններ, որոնք մինչ այդ իրենց մերձավորարևելյան գործունեության համար կենտրոն էին ընտրել Կահիրեն, ստիպված եղան իրենց հիմնական գրասենյակները տեղափոխել Բեյրութ: Լիբանանում նրանց գործունեության համար կային ավելի բարենպաստ պայմաններ:

1967թ. արաբ-իսրայելյան պատերազմի հետևանքով փակվեց Սուեզի ջրանցքը, որի պատճառով էլ ավելի կարևորվեց Լիբանանի տարանցիկ և վերաարտահանող երկիր լինելու գործոնը[29]:

Լիբանանը Մերձավոր Արևելքի այն եզակի պետություններից է, որի ողջ տնտեսական համակարգի հիմքում դրված է ազատ տնտեսական հարաբերությունների սկզբունքը, սակայն մասնավորապես մեծ բիզնեսի ոլորտում հաճախ առկա էր կլանային համակարգը:

Առևտրաֆինանսական ազատ գործունեությունը, հյուրանոցային ցանցի և զբոսաշրջիկության զարգացումը Լիբանանի տնտեսական աճի երաշխիքն էին և նույնիսկ ստացել էին «Լիբանանյան ֆենոմեն» անվանումը:

1965-1975թթ. Լիբանանի իրական համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճը կազմում էր տարեկան 7%[30]:

---

[29] Նույն տեղում:
[30] Նույն տեղում:

2. Գյուղատնտեսությունը

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լիբանանում գյուղատնտեսության ոլորտում զբաղված էր երկրի աշխատուժի մոտ 30%-ը, սակայն ազգային եկամտի մեջ գյուղատնտեսության մասնաբաժինը 19% էր [31]:

Լիբանանի ցանքատարածքները բավական սահմանափակ էին՝ տեղաբաշխված հիմնականում Բեքաայի հովտի հարավարևելյան մասում և ծովափնյա շրջաններում[32]: Լիբանանի տարածքի մշակելի հողերը կազմում էին 280.000 հեկտար, որից միայն 42.000 հեկտարն էր ոռոգելի[33]: Ավելի քան 575.000 հեկտարը ժայռոտ հողեր էին, 75.000 հեկտարը՝ անտառներ և այլն: Որոշ հետազոտողների տվյալներով մշակելի հողերը Լիբանանում կարելի էր ընդլայնել մինչև 500.000 հեկտար, իսկ ոռոգելի հողերը՝ մինչև 73.000 հեկտար[34], ինչը մեծապես կբարելավեր Լիբանանի տնտեսության վիճակը:

Լիբանանի գյուղատնտեսությունն ապահովում էր երկրի բնակչության պարենամթերքի պահանջարկի միայն 1/3-ը, իսկ մնացած 2/3-ը Լիբանանը ստիպված էր ներմուծել արտերկրից[35]:

1960-ականներին և 1970-ականների առաջին կեսին Լիբանանում շարունակվում էր պահպանվել գյուղատնտեսության պատմականորեն ձևավորված կառուցվածքը. առավելապես զարգանում էին արտահանման ճյուղերը: 1960-1970-ականներին գյուղատնտեսական արտադրանքը կազմում էր լիբանանյան արտահանումից ստացվող եկամտի 45%-ը[36]:

Բեքաայի հովտում 1970-ականների սկզբին դեռևս գերիշխող էր համայնքային հողատիրությունը: Իրավական տեսանկյունից այդ

---

[31] UN Economic Developments in the Middle East, 1972-1975, New York, 1975, pp. 126-127.

[32] J. Sellier and A. Sellier, Atlas des Peuples d'Orient, Paris, 1983, p. 69.

[33] Современный Ливан (Справочник), М., 1963, с. 42.

[34] ألبرت بدر، محاضرات في ألأقتصاد أللبناني،ألقاهرة،١٩٥٥،ص ٤٠

[35] The Middle East and North Africa 1968-1969, London, 1969, p. 428.

[36] Л. Дадиани, Государственный строй Ливана, М., 1973, с. 7.

հողերը համարվում էին պետության սեփականությունը և համայնքն այդ հողերի միայն կոլեկտիվ օգտագործողն էր: Սակայն փաստացի համայնքային հողերի մեծ մասը գյուղական ավագների և հողատերերի մասնավոր սեփականությունն էր: Լիբանանյան գյուղում անընդհատ տեղի էին ունենում գյուղացիության շերտավորման գործընթացներ:

1960-ականների առաջին կեսից սկսած շուկայական հարաբերությունների արմատավորման արդյունքում՝ Լիբանանում ի հայտ եկան խոշոր գյուղատնտեսական տնտեսություններ, որոնցում հողատերն առանց վարձակալ-ձեռներեցների միջնորդության վարձում էր գյուղատնտեսության մեջ աշխատողներ և վճարում էր նրանց ոչ թե բնամթերքով, այլ դրամական միջոցներով: Այս տնտեսությունների դերը երկրի գյուղատնտեսության մեջ գնալով դառնում էր ավելի էական և կարևոր[37]:

Լիբանանում մշակվող հողերի զգալի մասը կարիք ուներ արհեստական ոռոգման, սակայն ոռոգման տեխնիկան Լիբանանում դեռ շատ պարզունակ էր և չէր ապահովում հողի արդյունավետ օգտագործումը: Լիբանանում ոռոգելի հողերի ավելացման նպատակով 1960-ականների սկզբին սկսվեց երեք ամբարտակների և ջրամբարների կառուցումը, ինչը հնարավորություն տվեց լրացուցիչ ոռոգել 25.000 հեկտար հողատարածք[38]:

Ընդհանրապես Լիբանանում հողը շատ թանկ էր: «Լը կոմմերս դյու լևանտ» թերթը դեռևս 1960թ. գրում էր. «Լիբանանում գյուղատնտեսական հողերը շատ թանկ են: Ոռոգվող կամ ցիտրուսային տնկիներով մեկ հեկտար հողը Լիբանանում արժե 20.000 լիբանանյան լիրա, մինչդեռ Ալժիրում և Թունիսում նույն հողակտորը արժե 4 կամ 5.000 լիրա»[39]:

Լիբանանում մշակվող հիմնական բերքատեսակներն էին ցիտրուսները, բանանը, խնձորը, խաղողը, ծխախոտը, շաքարի ճակնդեղը և բանջարեղենը:

---

[37] Л. Дадиани, նշվ. աշխ., էջ 10:

[38] Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում 1939-1958թթ., Երևան, 1967, էջ 46:

[39] "Le Commerce du Levant", Beyrouth, 26, Septembre, 1960.

Հացահատիկային կուլտուրաները զբաղեցնում էին 100.000 հեկտար հողատարածք կամ ամբողջ հողերի 42%-ը: Հացահատիկային կուլտուրաների 90%-ը, մասնավորապես ցորենը, ցանվում էր չոռոգվող հողերի վրա, ինչը բերքը կախվածության մեջ էր դնում տեղումների քանակությունից:

Լիբանանում արտադրված ցորենի, գարու և ծխախոտի քանակն ըստ տարիների

	Արտադրվել է					
	1958թ.	1963թ.	1967թ.	1968թ.	1972թ.	1975թ.
Ցորեն	58.000տ.	70.000տ.	70.000տ.	45.000տ.	55.000տ.	60.000տ.
Գարի	21.000տ.	18.000տ.	22.000տ.	20.000տ.	19.000տ.	21.000տ.
Ծխախոտ	3.000տ.	4.000տ.	3.200տ.	3.700տ.	3.500տ.	4.000տ.

Աղբյուրը՝ The Middle East and North Africa, 1975-1976, London, 1976, pp. 438-439.

1964թ. ցիտրուսային կուլտուրաներից ստացվող եկամուտը կազմում էր 50 մլն լիբ. լիրա, 1967թ.՝ 70 մլն լիբ. լիրա, 1970թ.՝ 75 մլն - լիբ. լիրա: Ցիտրուսային մրգերի արտադրությունը զարգացած էր Տրիպոլիում և Անթիլիասում[40]:

Լիբանանում ցիտրուսների արտադրությունը կրկնակի անգամ գերազանցում էր Կիպրոսի ցիտրուսների արտադրությանը և կազմում էր Իսրայելի ցիտրուսային արտադրության քառորդ մասը:

Լիբանանում արտադրված ցիտրուսների, խնձորի, խաղողի քանակն ըստ տարիների

	Արտադրվել է					
	1958թ.	1963թ.	1966թ	1970թ.	1973թ.	1975թ.
Ցիտրուսներ	200.000տ.	250.000տ.	250.000տ.	280.000տ.	290.000տ.	290.000տ.
Խնձոր	115.000տ.	120.000տ.	125.000տ.	130.000տ.	125.000տ.	125.000տ.
Խաղող	21.000տ.	23.000տ.	22.000տ.	23.000տ.	24.000տ.	27.000տ.

Աղբյուրը՝ The Middle East and North Africa, 1975-1976, London, 1976, pp. 438-439.

[40] Е. Мельников, Политический и государственный строй Ливана, М., 1976, с. 8.

1970թ. ցիտրուսային արտադրությունը կազմում էր գյուղատնտեսության համախառն արտադրանքի 11%-ը, խնձորի բերքը՝ 8%-ը, խաղողինը՝ 7%-ը, բանանինը՝ 6%-ը, հացահատիկային կուլտուրաներինը՝ 6%-ը[41]:

Գյուղատնտեսության մեջ լայն տարածում ուներ նաև ծխախոտի արտադրությունը, որը 1970-ականների սկզբին կազմում էր գյուղատնտեսական համախառն արտադրանքի 7%-ը: Ծխախոտի արտադրությունն ամբողջությամբ վերահսկում էին գյուղատնտեսության նախարարությունը և «Ռեժե դե տաբա» ֆրանսիական ընկերությունը, որի արժեթղթերի որոշ մասը պատկանում էր ամերիկյան մի ընկերության: Այս ծխախոտային ընկերության կարգավիճակը հնարավորություն էր տալիս նրան սահմանել ծխախոտի վաճառքի գները: Հիմնական ծխախոտային ցանքատարածքները գտնվում էին Լիբանանի հարավում՝ 50%, Լիբանանի հյուսիսում՝ 25%, և Լեռնային Լիբանանում՝ 17%[42]: Լիբանան ներմուծվող ծխախոտը հարկվում էր բարձր մաքսատուրքերով (մինչև 100% և ավելի):

Ինչ վերաբերում էր ձիթապտղի արտադրությանը, ապա 1970-ականների սկզբին նրանից ստացված եկամուտը միջին հաշվով կազմում էր 15 մլն լիբ. լիրա: Ձիթապտղի արտադրության մեջ 1970թ. զբաղված հողերը 27,6.000 հեկտար էին[43]: 1966թ. Լիբանանում ձիթապտղի արտադրությունը կազմում էր 49.000 տոննա, 1970թ.՝ 40.000 տոննա, 1975թ.՝ 42.000 տոննա[44]:

Լիբանանի գյուղատնտեսության մյուս ճյուղերն էին անասնապահությունն ու թռչնաբուծությունը: 1960-ականների վերջին անասնապահությունից ստացվող եկամուտը միջին հաշվով կազմում էր 75 մլն լիբ. լիրա, իսկ թռչնաբուծությունից ստացվող եկամուտը՝ 52 մլն լիբ. լիրա:

---

[41] G. Naccache, Un Rêve Libanais 1943-1982, Ficher du Monde Arabe, 1983, p. 234.
[42] "Le Commerce du Levant", Beyrouth, 26 Mars, 1954:
[43] Նույն տեղում:
[44] "Le Commerce du Levant", Beyrouth, 29 Octobre, 1975.

1960-ականների կեսին Լիբանանում արագորեն զարգանում էր թռչնաբուծությունը՝ հատկապես հավաբուծությունը: Արդեն 1967թ. Լիբանանի տարածքում կար մոտ 400 թռչնաբուծարան[45]:

1975թ. պաշտոնական տվյալների համաձայն՝ Լիբանանում կային 105.000 խոշոր եղջերավոր անասուններ, 205.000 ոչխար և 450.000 այծ[46]:

Լիբանանում բնական կաթի արտադրությունը չէր բավարարում երկրի ներքին պահանջարկը: Լիբանանը ստիպված էր դրսից ներմուծել զգալի քանակությամբ չոր կաթի փոշի: 1970թ. տվյալների համաձայն՝ Լիբանանում չոր կաթի օգտագործումը կազմում էր կաթի ընդհանուր սպառման 75%-ը: Կաթնատու անասնապահության պաշտպանության և քաջալերման նպատակով Լիբանանը 1963թ. վերջին ավելացրեց չոր կաթի ներմուծման մաքսատուրքերը, որը, սակայն, ոչ մի էական արդյունք չտվեց, քանի որ, հակառակ դրան, ներմուծվող չոր կաթի փոշու արժեքն էապես ցածր էր բնական կաթի արժեքից: Երկրի բնակչության պահանջարկը բավարարելու նպատակով Լիբանանը ստիպված էր ներմուծել նաև մեծ քանակությամբ մսամթերք[47]:

Գյուղատնտեսական արտադրության ավելացման նպատակով, 1960-ականների սկզբին լիբանանյան կառավարությունը սկսեց իրականացնել «կանաչ ծրագիր» կոչվող նախագիծը, որը նախատեսում էր 10 տարվա ընթացքում գյուղատնտեսական ոլորտում իրականացնել մի շարք միջոցառումներ՝ գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացում, անտառների տնկում, ոռոգելի և մշակելի հողերի ընդլայնում և այլն: Այս ծրագրի իրականացման համար նախատեսվում էր ծախսել 400 մլն լիբ. լիրա, որից 80 մլն լիբ. լիրա ներդնելու էր պետությունը, իսկ մնացած 320 մլն լիբ. լիրան՝ մասնավոր ոլորտը[48]:

---

[45] Н. Лифанов, Ливан, М., 1966, с. 43.
[46] The Middle East and North Africa, 1976-1977, p. 437.
[47] Е. Мельников, նշվ. աշխ, էջ 10:
[48] G. Grassmuck, K. Salibi, A Manual of Lebanese Administration, Beirut, 1970, p. 51.

Գյուղատնտեսության աջակցություն ցույց տալու նպատակով՝ 1964թ. լիբանանյան կառավարությունը մշակեց գյուղատնտեսության վարկավորման մասին օրենքը: Վարկեր տրամադրվեցին առաջին հերթին գյուղատնտեսական կոոպերատիվների անդամներին: Մեկ արտադրողին տրվող վարկի չափը տարեկան կազմում էր 2,5.000 լիբ. լիրա: 1966թ. այդպիսի վարկեր ստացան 80, 1967թ.՝ 200, իսկ 1970թ.՝ շուրջ 400 տնտեսություններ[49]:

Ամփոփելով փաստենք, որ ցանքատարածությունների սահմանափակ լինելու, հետևաբար նաև գյուղատնտեսական մթերքների սակավության արդյունքում, երկիրն ի վիճակի չէր լիովին բավարարել իր պահանջները, ինչը բացասական ազդեցություն էր ունենում առևտրային հաշվեկշռի և պարենային անվտանգության վրա:

3. Արդյունաբերությունը

Անկախության ձեռքբերումից մինչև 1970թ. ազգային եկամտի մեջ արդյունաբերության մասնաբաժինը 7%-ից ավելացել և կազմում էր 17%[50]: Լիբանանի արդյունաբերության զարգացումն այդ տարիներին արաբական այլ երկրների ցուցանիշների հետ համեմատած կարելի էր համարել բավարար: 1967թ. պաշտոնական տվյալների համաձայն՝ Լիբանանում կային մոտ 7000 արդյունաբերական ձեռնարկություններ, արդյունաբերության ոլորտում զբաղված էր Լիբանանի աշխատուժի 16%-ը[51], իսկ ներդրումները կազմում էին մոտ 700 մլն լիբ. լիրա[52]:

Լիբանանում արդյունաբերության դանդաղ զարգացման հիմնական պատճառն այն էր, որ երկրի զարգացման հայեցակարգում

---

[49] The Middle East and North Africa 1972-1973, London, 1973, p. 438.
[50] The Middle East and North Africa 1966-1967, London, 1967, p. 438.
[51] Industrial Development in the Arab Countries, United Nations Publication, New York, 1972, p. 107.
[52] Новейшая история арабских стран Азии, М., 1988, с. 121.

առաջնահերթությունը տրված էր ծառայությունների՝ առևտրի, բանկային, հյուրանոցառեստորանային ոլորտին[53]:

Լիբանանյան իշխող շրջանակների տնտեսական քաղաքականությունը լուրջ քննադատության էր ենթարկում Լիբանանի արդյունաբերական ձեռնարկությունների ասոցիացիան, որը պահանջում էր ազգային արդյունաբերության օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու կտրուկ միջոցառումների իրականացում: 1961թ. արդյունաբերական ձեռնարկությունների ասոցիացիան կառավարության առաջարկում էր տեղական արդյունաբերության զարգացմանը խթանելու նպատակով նորաբաց ազգային ձեռնարկություններին առաջին մի քանի տարիների ընթացքում ազատել հարկերից, կազմակերպել տեղական արտադրության ապրանքների արտահանումը, տեղական արդյունաբերությանն օժանդակություն ցույց տալ օտարերկրյա դեմպինգի դեմ պայքարում, երկարաժամկետ վարկեր տրամադրել տեղական արդյունաբերության զարգացման նպատակով և այլն[54]:

1960-ականներից սկսած լիբանանյան կառավարությունը սկսեց ձեռնարկել մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին երկրի արդյունաբերության զարգացման տեմպերի արագացմանը: Օրինակ՝ 1964թ. կառավարությունը մի քանի նորաբաց արդյունաբերական ձեռնարկությունների, որոնք ունեին 1 մլն լիբ. լիրա և ավելի ներդրումային կապիտալ, 5 տարի ժամկետով ազատեց հարկերի վճարումից[55]:

Ազգային արդյունաբերության խրախուսման նպատակով 1971թ. ամռանը Լիբանանում կազմավորվեց Արդյունաբերական զարգացման բանկը, որը միջնաժամկետ և երկարաժամկետ վարկեր էր հատկացնում արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկություններին[56]:

---

[53] Industrial Development in the Arab Countries, United Nations Publication, New York, 1967, p. 108.

[54] Նույն տեղում:

[55] The Middle East and North Africa 1969-1970, London, 1970, p. 439.

[56] "Le Commerce du Levant", Beyrouth, 9 Septembre, 1971.

Երկրի տնտեսության կախվածությունը ծառայությունների ոլորտից կրճատելու և օտարերկրյա մրցակցությունից ազգային տնտեսության որոշ երիտասարդ ճյուղեր պաշտպանելու նպատակով 1971թ. սեպտեմբերին լիբանանյան կառավարությունը հրապարակեց որոշում, որով նախատեսվում էր բարձրացնել ներմուծվող մոտ 500 տարբեր ապրանքների մաքսատուրքերը[57]:

Այս որոշումը, սակայն, կտրուկ քննադատության ենթարկեցին Բեյրութի, Տրիպոլիի (Տիր) և Սիդոնի (Սայդայի) գործարանները և Լիբանանում գործունեություն ծավալող արևմտյան ընկերությունները: Որոշումը քննադատողներն աջակցություն ստացան լիբանանյան խորհրդարանի աջ պատգամավորներից, որոնք սպառնացին անհրաժեշտության դեպքում նույնիսկ խորհրդարանի օրակարգում դնել կառավարությանն անվստահություն հայտնելու հարցը: Լիբանանյան աջ ուժերը, որոնք վերոնշյալ շրջանում ընդդիմադիր էին գործող կառավարությանը, փորձում էին օգտագործել հրապարակված որոշման կապակցությամբ երկրում սրված սոցիալ-քաղաքական ճգնաժամը և ստիպել Սաիբ Սալամի կառավարությանը հրաժարական տալ: Ինչ վերաբերում էր լիբանանյան ձախ շրջանակներին, ապա վերջիններս, հավանություն տալով ոչ առաջին անհրաժեշտության ապրանքների հանդեպ մաքսատուրքերի բարձրացմանը, միևնույն ժամանակ քննադատում էին վերը նշված որոշումն այն բանի համար, որ վերջինիս հրապարակման հետևանքով թանկացել էին նաև մի շարք լայն սպառման ապրանքներ: Լիբանանյան մամուլում կարծիքներ էին հնչում, որ նոր մաքսատուրքերը ոչ միայն կկրճատեին ներմուծման ծավալները, այլև կհանգեցնեին տեղական արտադրության ապրանքների գների բարձրացմանը և կարող էին նվազեցնել երկրում զբոսաշրջիկների թվաքանակն ու ավելացնել մաքսանենգության ծավալները[58]:

Նման իրավիճակում կառավարությունը, խուսափելով խորհրդարանում մաքսատուրքերի մասին որոշմանը նվիրված քննարկում-

---

[57] Նույն տեղում:

[58] النهار, «Ալ-Նահար», Բեյրութ, 30.09.1971:

ներում պարտություն կրելու հեռանկարից, շտապեց այն չեղյալ հայտարարել:

Լիբանանի տարածքով անցնում էին երկու նավթամուղներ, որոնք պատկանում էին «Իրաք փեթրոլիում» և «Թափլայն» նավթային ընկերություններին: «Իրաք փեթրոլիումին» պատկանող նավթամուղով Իրաքի նավթը տեղափոխվում էր լիբանանյան Տրիպոլի քաղաք, որտեղ և գտնվում էր նավթազտման գործարանը:

Մյուս նավթամուղը «Թափլայն» ընկերությանն էր, որն ամերիկյան «Արմինկո» ձեռնարկության դուստր ընկերություն էր: «Թափլայնին» պատկանող նավթամուղը Սաուդյան Արաբիայի նավթը հասցնում էր լիբանանյան Սիդոն քաղաք: Սիդոնում գտնվող նավթազտիչ գործարանն ամերիկալիբանանյան «Մեդրեկո» ընկերությանն էր: Լիբանանի տարածքում գործող երկու նավթազտման գործարանների ընդհանուր հզորությունը կազմում էր տարեկան մոտ 2 մլն տոննա նավթ[59]:

1962թ. «Թափլայն» ընկերության և լիբանանյան կառավարության միջև կնքված համաձայնագիրը վերանայվեց և «Թափլայնը» պարտավորվեց տարանցիկ փոխադրման, բեռնափոխադրման և նավթամուղի անվտանգության ապահովման նպատակով Լիբանանի կառավարությանը վճարվող գումարը, որը կազմում էր տարեկան մոտ 1,2 մլն ԱՄՆ-ը դոլար, ավելացնել և վճարել 4,5 մլն դոլար: Ընկերությունը պարտավորվեց նաև առաջիկա մեկ-երկու տարիների ընթացքում փակել նախորդ տարիներին կուտակված շուրջ 12,5 մլն ԱՄՆ-ը դոլարի արժողությամբ պարտքը: 1967թ. մարտին Սիրիայի և «Իրաք փեթրոլիում» ընկերության միջև վիճելի հարցերի պարզաբանումից հետո ընկերությունը պարտավորվեց 1966թ. սկսած լիբանանյան կառավարությանը վճարվող գումարն ավելացնել: Այս կապակցությամբ Լիբանանի վարչապետը հայտարարեց, որ 1966թ. «Իրաք փեթրոլիումից» ստացվող պետական եկամուտները կավելանան մինչև 5,9 մլն դոլար[60]:

---

[59] Industrial Development in the Arab Countries, United Nations Publication, New York, 1975, p. 110.

[60] ألنهار, «Ալ-նահար», Բեյրութ, 10.04.1967:

Նշենք, որ «Իրաք Փեթրոլիում» ընկերությունը պարբերաբար Լիբանանին չէր վճարում իր եկամուտներից ստացվող չափաբաժինները: Օրինակ՝ 1966թ. այս ընկերության եկամուտները կազմում էին 7 մլն լիբ. լիրա, սակայն համաձայնագրի համաձայն, երբ պետք է վճարվեր եկամուտներից ստացվող Լիբանանի չափաբաժինը, եկամուտի թվերը կտրուկ իջեցվեցին: Այն ներկայացվեց մոտ 3 մլն լիբ. լիրա[61]:

Լիբանանում օտարերկրյա ընկերությունները տնօրինում էին ոչ միայն նավթավերամշակման արդյունաբերությունը, այլ նաև վառելիքի վաճառքը: Վառելիքի մանրածախ առևտրի 96%-ը բաժին էր ընկնում 5 օտարերկրյա ընկերությունների՝ «Շել»՝ 25%, «Մոբիլ»՝ 35%, «Լենկո»՝ 20%, «Թոթալ»՝ 11% և «Էսսո»՝ 5%: Վառելիքի վաճառքի մնացած 4%-ը բաժին էր ընկնում «Շամմաս», «Ջալիս» և «Միսկաուի» տեղական երեք ընկերություններին[62]:

Լիբանանում արդյունաբերական ձեռնարկությունները և ենթակառուցվածքները կենտրոնացված էին հիմնականում մայրաքաղաքում: Հիմնական արտադրատեսակներն էին սննդամթերքը, խմիչքը, տեքստիլը և հագուստը, ավելի քիչ՝ մետաղագործական և մեքենաշինական արտադրանքը[63]:

Լիբանանյան արդյունաբերության գլխավոր և ավանդական ոլորտներից էր տեքստիլ արդյունաբերությունը, որը, սակայն, 1960-ականների վերջին ապրում էր խորը ճգնաժամ: Նշված ոլորտում անկումը գլխավորապես կապված էր օտարերկրյա մրցակցության առկայությամբ և տեղական կտորների անմրցունակությամբ ու բարձր արժեքով:

Լիբանանում բամբակագործական ձեռնարկություններն աշխատում էին հիմնականում Սիրիայից և Եգիպտոսից ներմուծվող հումքով: 1967թ. երկրում արտադրված բամբակյա գործվածքների կեսը բաժին էր ընկնում Բեյրութում գործող «Ասեյլի» ֆաբրիկային: Նույն թվականին 6 բամբակագործական ֆաբրիկաներում աշխատում էր 1000 մարդ, իսկ նրանցում ներդրված կապիտալը կազմում

---

[61] Л. Дадиани, նշվ. աշխ., էջ 15:
[62] "Syrie et Monde Arabe", 26 Juin, 1967.
[63] UN Economic Developments in the Middle East 1967-1970, New York, 1970, p. 160.

էր մոտավորապես 6 մլն լիբ. լիրա[64]: Բրդյա գործվածքների արտադրության հիմնական կենտրոններն էին Բեյրութն ու Զահլեն:

Լիբանանում ավանդաբար լայն տարածում ուներ նաև մետաքսի արտադրությունը: 1967թ. մետաքսի արտադրությամբ զբաղվում էին մոտ 55 ձեռնարկություն, որոնք ունեին 636 աշխատող և 7,5 մլն - լիբ. լիրա կապիտալ[65]:

Լիբանանի արդյունաբերության մեջ իր ծավալներով առանձնանում էր սննդի արդյունաբերությունը: Սննդի արդյունաբերության ձեռնարկությունները, որոնք կազմում էին երկրի արդյունաբերական ձեռնարկությունների հիմնական մասը, վերամշակում էին ինչպես տեղական, այնպես էլ ներմուծվող հումք և արտադրում էին պանիր, հրուշակեղեն, շոկոլադ, շաքար, բուսական յուղեր, հյութեր և այլն: 1970թ. Լիբանանում գործում էին 2,275 սննդի արդյունաբերության ձեռնարկություններ, որոնցում զբաղված էր մոտ 13.000 մարդ, իսկ այդ ձեռնարկություններում ներդրված կապիտալը կազմում էր 109.7 մլն լիբ. լիրա: Միայն Բեյրութում 1970թ. գործում էին շոկոլադի արտադրության 27 ֆաբրիկա, 65 հրուշակեղենի ֆաբրիկա, պահածոների 7 գործարան, պանրի արտադրության 39 գործարան, զովացուցիչ ըմպելիքների 5 գործարան և այլն[66]:

1963թ. Ջուբեյլում սկսեց աշխատել գարեջրի գործարանը, որը տարեկան արտադրում էր 40 մլն շիշ գարեջուր: 1960-ականների կեսերին լիբանանադանիական բաժնետիրական ընկերության կողմից Լիբանանում կառուցվեց պաստերիզացված կաթի գործարան՝ օրական մինչև 80.000 լիտր կաթ հզորությամբ[67]:

Լիբանանում զարգացած էր նաև շաքարի արտադրությունը: Հումքը ներմուծվում էր Կուբայից: Տարեկան միջին հաշվով արտադրվում էր 40.000 տոննա շաքար, ինչն ամբողջությամբ բավարարում էր երկրի ներքին պահանջարկը: Արտադրվող շաքարի մի մասն էլ արտահանվում էր արաբական երկրներ:

---

[64] "Le Commerce du Levant", Beyrouth, 22.09.1969.

[65] Նույն տեղում:

[66] ألنهار, «Ալ-նահար», Բեյրութ, 12.08.1971:

[67] Н. Серегин, С. Петров, Ливан, с. 45.

Սննդի արդյունաբերության ոլորտում լայն տարածում ուներ նաև բուսական յուղի արտադրությունը: 1000-ից ավելի ոչ մեծ ձեռնարկություններ արտադրում էին տարեկան 6-8.000 տոննա ձիթապտղի յուղ, սակայն այս քանակությունը հաստատուն չէր, այն ամեն տարի փոփոխվում էր՝ կախված ձիթապտղի բերքի քանակությունից[68]:

Լիբանանի ազգային արդյունաբերության զարգացման համար առաջնային կարևորություն էր ձեռք բերում վառելիքաէներգետիկ համակարգի կատարելագործումը: Ինչպես արդյունաբերության բոլոր ոլորտներում, այնպես էլ էներգետիկ ոլորտում զարգացումն ընթանում էր դանդաղ, ինչը ֆրանսիական տնտեսագետները բացատրում էին երկրում վառելիքաէներգետիկ աղբյուրների սղությամբ:

1960-ականների վերջին Լիբանանի էներգետիկ բազան ներկայացված էր 21 փոքր էլեկտրակայաններով, որոնց կեսը դիզելային էին: 1965թ. շահագործման հանձնվեցին Լիտանի գետի վրա կառուցված առաջին մի քանի հիդրոէլեկտրակայանները՝ 500 մլն կվտ/ժամ տարեկան հզորությամբ[69]:

Լիբանանում արտադրված էլեկտրաէներգիայի չափն ըստ տարիների

1970թ.	1230 մլն կվտ/ժամ
1971թ.	1375 մլն կվտ/ժամ
1972թ.	1545 մլն կվտ/ժամ
1973թ.	1791 մլն կվտ/ժամ
1975թ.	1850 մլն կվտ/ժամ

Աղբյուրները՝ United Nations, Studies on Selected Development Problems in Various Countries of the Middle East, UN Publications, No. E-70, IV.11.1970, p. 8; Statistical Abstract, Syrian Arab Republic, Office of the Prime Minister, Central Bureau of Statistics, August, 1978, p. 814.

---

[68] "Le Commerce du Levant", Beyrouth, 20 Decembre, 1967.

[69] Н. Серегин, С. Петров, Ливан, с. 46.

Լիբանանում էլեկտրաէներգիայի արտադրության ավելացումը տեղի էր ունենում ինչպես հին էլեկտրակայանների կարողությունները ընդլայնելու (Բարիդ, Իբրահիմ և Ռաշմիե), այնպես էլ նորերը կառուցելու արդյունքում, ինչպես, օրինակ՝ Շամուն ջերմաէլեկտրակայանը Զուկ Միքայելում և այլն[70]:

Լիբանանում ծանր արդյունաբերությունը թույլ էր զարգացած: Մետալուրգիական արդյունաբերությունը երկրում ներկայացված էր միայն մի քանի ոչ մեծ չուգունի, այլումինի, երկաթի և պողպատի մետալուրգիական ձեռնարկություններով:

Լիբանանի արդյունաբերության կարևոր ճյուղերից էր շինանյութերի արդյունաբերությունը: Շինանյութերի արդյունաբերությունը Լիբանանում ներկայացված էր հիմնականում մանր ձեռնարկություններով, որոնք արտադրում էին աղյուս, սալահատիկ, կղմինդր և այլն: 1967թ. շինանյութերի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների թիվը Լիբանանում 788 էր[71]:

Շինանյութերի արտադրության մեջ զգալի դեր էր խաղում ցեմենտի արտադրությունը: Երկրում կային ցեմենտի երկու գործարաններ՝ Ռաս Ալ-Շաքում և Անֆայում: Այդ երկու գործարաններն էլ պատկանում էին շվեյցարական կապիտալին: Ցեմենտի արտադրությունն աճում էր արագ տեմպերով, ինչը բացատրվում էր երկրում շինարարական աշխատանքների մեծ չափերով: Լիբանանը ոչ միայն լիովին բավարարում էր ցեմենտի իր պահանջները, այլև այն արտահանում էր Սաուդյան Արաբիա, Հորդանան և Ծոցի այլ երկրներ[72]:

---

[70] Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958թթ.), Երևան, 1967, էջ 24:

[71] "Syrie et Monde Arabe", 11 Février, 1968.

[72] كمال ألصليبي،تاريخ لبنان ألحديث،بيروت، ١٩٧٢،ص. ٣٥٢.

Լիբանանում արտադրված ցեմենտի չափերն ըստ տարիների

	Արտադրվել է					
	1969թ.	1970թ.	1971թ.	1972թ.	1973թ.	1974թ.
ցեմենտ	1.230.000տ.	1.339.000տ.	1.499.000տ.	1.686.000տ.	1.659.000տ.	1.744.000տ.

Աղբյուրը՝ Statistical Abstract, Syrian Arab Republic, 1978, p. 814.

Նշենք, որ Լիբանանի տնտեսության մեջ զգալի ներդրում ունի նաև հայ համայնքը: 1970-ականներին լիբանանահայ համայնքին պատկանում էր Լիբանանի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների 18%-ը և միջին ու մանր արդյունաբերական ձեռնարկությունների 43%-ը, իսկ երկրի արտահանման 10%-ը բաժին էր ընկնում հայ կապիտալին: 1960-ականներին Լիբանանի արդյունաբերության մեջ ներդրված 375 մլն լիբ. լիրայից 125 մլն լիբ. լիրան պատկանում էր հայ արտադրական կապիտալին[73]: Այս կապակցությամբ «Մանդի Մոնինգ» շաբաթաթերթը գրում էր. «Թեև լիբանանահայ համայնքը կազմում է Լիբանանի բնակչության 8%-ը, սակայն այն տալիս է ազգային արտադրանքի 25%-ը»[74]: Վերոնշյալը կարևորվում է հայ համայնքի տեղն ու դերը Լիբանանի տնտեսական կյանքում ճիշտ գնահատելու տեսանկյունից:

Այսպիսով՝ 1960-ականներին և 1970-ականների առաջին կեսին Լիբանանի արդյունաբերությունը, հատկապես թեթև և սննդի ոլորտները զարգանում էին բավարար տեմպերով:

---

[73] Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, էջ 44:
[74] Նույն տեղում:

4. Արտաքին առևտուրը

Լիբանանի տնտեսության համար արտաքին առևտուրը մշտապես ունի առաջնահերթ նշանակություն:

Ինչպես արդեն նշել ենք, Լիբանանի գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը չէին ապահովում բնակչության անհրաժեշտ պահանջարկը: Այդ պատճառով արտաքին առևտուրը զգալի դեր էր խաղում տեղական ձեռնարկություններին հումքով, իսկ բնակչությանը սպառման ապրանքներով ապահովելու գործում:

Ուսումնասիրվող շրջանում Լիբանանին բնորոշ էր առևտրի հաշվեկշռի չափազանց մեծ դեֆիցիտը, որն ուներ երեք հիմնական բացատրություն.

1. Ինչպես արդեն նշել ենք, Լիբանանի տնտեսության մեջ առանցքային դեր էր կատարում ծառայությունների ոլորտը.
2. Գյուղատնտեսության ոլորտի սահմանափակ հնարավորությունները Լիբանանին ստիպում էին ներմուծել բնակչության անհրաժեշտ սննդի զգալի մասը, որի պատճառով առևտրի հաշվեկշռի դեֆիցիտը մեծանում էր.
3. Հակառակ իշխանությունների արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված ջանքերին՝ այնուամենայնիվ այս ոլորտը դեռևս անկարող էր փոխարինել ներմուծումներին ու ձեռք բերել արտահանման իրական հնարավորություններ[75].

1970թ. տվյալների համաձայն՝ Լիբանանը ներմուծել էր 1179.3 մլն լիբ. լիրա, իսկ արտահանել՝ 323.4 մլն լիբ. լիրա արժողության տարբեր ապրանքներ[76]:

Առևտրի հաշվեկշռի դեֆիցիտը Լիբանանը հիմնականում փակում էր տրամադրվող ծառայությունների միջոցով՝ տարանցիկ առևտրից, ապրանքների վերաարտահանումից, զբոսաշրջիկությունից և մաքսատուրքերից ստացվող եկամուտներից:

1970-ականների սկզբին աստիճանաբար սկսեց կրճատվել Լիբանանով տարանցիկ ձևով դեպի Սիրիա, Հորդանան, Իրաք և այլ

---

[75] Վ. Ջիջիյան, Հայաստանը և Միջին Արևելքը, Տնտեսական համագործակցության հեռանկարներ Սիրիայի և Լիբանանի հետ, էջ 44:

[76] "Le Commerce du Levant", Beyrouth, 21 Novembre, 1971.

մերձավորարևելյան երկրներ անցնող բեռնափոխադրման ծավալները: Սիրիան արտահանման և ներմուծման նպատակով լայնորեն սկսեց օգտագործել Լաթաքիայի, իսկ Հորդանանը՝ Աքաբայի նավահանգիստները:

1964թ. Լիբանանի առևտրի հաշվեկշռի բացասական սալդոն կազմում էր 979 մլն լիբ. լիրա. ներմուծում՝ 1195 մլն լիբ. լիրա և արտահանում՝ 216 մլն լիրա[77]: Դեֆիցիտի ավելացման հարցում կարևոր դեր էին կատարում ներմուծման մեծ ծավալները, իսկ կրճատման հարցում՝ զուտ մասնավոր տրանսֆերները, որոնք պայմանավորված էին արտասահմանում աշխատող լիբանանցիների դրամական փոխանցումների աճով:

1970-ականների սկզբին Լիբանանի առևտրում ներմուծման և արտահանման ցուցանիշները համապատասխանաբար կազմում էին. արաբական երկրներ՝ 18,3% և 58,8%, Արևմտյան Եվրոպայի երկրներ՝ 56,4% և 20,5%, Հյուսիսային Աֆրիկայի երկրներ՝ 12,7% և 4,4%, խորհրդային դաշինքի երկրներ՝ 6,9% և 8,5%[78]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում լիբանանյան ապրանքների հիմնական գնորդները արաբական երկրներն էին, որտեղ Լիբանանն արտահանում էր ցիտրուսներ և այլ մրգեր, քիմիական արտադրության ապրանքատեսակներ, բուսական ծագման արտադրանք և կաշվե իրեր, կոշկեղեն, փայտե և մետաղներից պատրաստված առարկաներ: Արաբական երկրներից Լիբանանը ներմուծում էր միս, բրինձ, բամբակ, բուրդ, ցորեն և այլն:

1960-ականների վերջին Լիբանանը ձգտում էր ընդլայնել առևտուրն «Ընդհանուր շուկայի» երկրների հետ: Լիբանանն այդ երկրներից գնում էր չուգուն, պողպատ, տրանսպորտային սարքավորումներ, տեքստիլ ապրանքներ և պատրաստի հագուստեղեն, քիմիական ապրանքներ, իսկ արտահանում էր մանածագործական, պլաստմասսայե և կաշվե իրեր, ինչպես նաև կոշկեղեն, թանկարժեք քարերից և մետաղներից պատրաստված իրեր, ձիթապտուղ և ձիթապտղի ձեթ[79]:

---

[77] Économie du Monde Arabe et Musulman, Paris, 1980, p. 149.
[78] "Le Soir", Beyrouth, 11 Septembre, 1971.
[79] "Le Commerce du Levant", Beyrouth, 11 Septembre, 1971.

Պարենամթերքների ներմուծման ցուցակը գլխավորում էին հացահատիկային այլ կուլտուրաներն ու անասնապահական մթերքները՝ միս, կաթնամթերք և այլն: 1960-ականներին Լիբանանը Սիրիայից, Արգենտինայից և Ֆինլանդիայից ներմուծում էր 190.000 տոննա ցորեն[80]:

1961թ. Լիբանանի կառավարության հանձնարարականով Բելգիայում Լիբանանի դեսպանը բանակցություններ սկսեց վարել Եվրոպական տնտեսական միության անդամ երկրների հետ, որի նպատակն էր հիմք նախապատրաստել միության անդամ երկրների հետ երկկողմ համաձայնագրերի ստորագրման համար: Բանակցությունների ընթացքում շոշափվում էին հետևյալ հարցերը՝ Եվրոպական տնտեսական միության կողմից Լիբանանին բազմակողմանի օգնության տրամադրում, որոշակի միջոցառումների իրականացում, որոնց արդյունքում կընդլայնվեր լիբանանյան արտահանվող ապրանքների քանակն ու լիբանանյան ապրանքներ ներմուծող երկրների թիվը:

Բանակցությունների առաջին փուլում Լիբանանին չհաջողվեց որևէ համաձայնագիր կնքել, որի պատճառով էլ երկիրը ժամանակավորապես դադարեցրեց Եվրոպական տնտեսական միության անդամ երկրներից ապրանքների ներմուծումը[81]: Այս միջոցառումը ստիպեց եվրոպական գործընկերներին որոշակի զիջումների գնալ: 1965թ. Եվրոպական տնտեսական միության նախարարների խորհրդի մարտի նստաշրջանում որոշում ընդունվեց Լիբանանին տրամադրել «առավել արտոնյալ պետության» կարգավիճակ: 1965թ. ապրիլի 13-ի նստաշրջանում Լիբանանին խոստացվեց տեխնիկական օգնություն, որը մինչ այդ տրամադրում էր միայն Ֆրանսիան[82]:

Փաստենք, որ Լիբանան ներմուծված ապրանքների որոշ մասը վերաարտահանվում էր հարևան երկրներ. հիմնականում Սիրիա, Հորդանան, Եգիպտոս և Ծոցի երկրներ:

1960-ականներին և 1970-ականների առաջին կեսին Լիբանանն ամեն կերպ փորձում էր պահպանել Մերձավոր Արևելքում իր տարածքային երկրի դերը:

---

[80] "Le Commerce du Levant", Beyrouth, 15 Octobre, 1971.

[81] Նույն տեղում:

[82] "Le Soir", Beyrouth, 15 Avril, 1965, "L'Economie Libanaise Arabe", Beyrouth, 21 Decembre, 1965.

5. Ֆինանսները, պետական բյուջեն, բանկային համակարգը, զբոսաշրջիկությունը և տրանսպորտը

Լիբանանի ֆինանսական դրությունը, ինչպես և ողջ տնտեսությունն ուղղակի կախվածություն ուներ արտաքին առևտրից և ծառայություններից, որոնք ֆինանսական աղբյուրների ստացման հիմնական միջոցներն էին: Առևտրաշրջանառության ցանկացած կրճատում, Բեյրութի նավահանգստում տարանցիկ առևտրային գործարքների ցանկացած նվազում հանգեցնում էր պետական եկամուտների կրճատմանը:

Լիբանանի բյուջեի հիմնական ծախսերը կազմում էին ընդհանուր կառավարման, ինչպես նաև կրթության, առողջապահության համակարգերին ու ազգային տնտեսության զարգացման ծրագրերի իրականացմանն ուղղված հատկացումները, ինչպես նաև ներքին և արտաքին պարտքերի վճարման համար նախատեսված միջոցները[83]:

Անկախության ձեռքբերումից հետո Լիբանանի բյուջեի հատկացումների զգալի մասն ուղղված էր պաշտպանության և ազգային անվտանգության ֆինանսավորմանը, որոնք կազմում էին բյուջեի մոտ 26%: Առողջապահության ոլորտին բաժին էր ընկնում ծախսերի 3%-ը, սոցիալական ապահովությանը՝ 3,8%-ը[84]:

1960-ականներին և 1970-ականների սկզբին լիբանանյան կառավարությունն իրականացնում էր վարկավորման որոշ միջոցառումներ, որոնք նպատակ էին հետապնդում օժանդակել տեղական ձեռներեցությանը: Տնտեսության հիմնական ոլորտներին՝ արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը, բաժին էր ընկնում բյուջետային ծախսերի միայն 11%-ը:

1960-ականներին և 1970-ականների առաջին կեսին երկրի բյուջեում պետական պարտքի սպասարկմանն ուղղված հատկացումներն անընդհատ ավելանում էին՝ կապված պարտատոմսերի մարման ժամկետները լրանալու հետ: Ընդհանուր առմամբ երկրի բյու-

---

[83] The Middle East and North Africa, 1973-1974, London 1974, p. 442.
[84] "L'Orient", Beyrouth, 15 Juin, 1965.

ջեի ծախսերում ամեն տարի մինչև 50 մլն լիբ. լիրա հատկացված էր ներքին և արտաքին պարտքերի մարմանը[85]:

Պետական բյուջեի եկամուտների հիմնական մասը հարկային և մաքսային մուտքերն էին, որոնք կազմում էին բյուջետային եկամուտների մոտ 90%-ը:

Լիբանանում, ինչպես և զարգացող գրեթե բոլոր երկրներում, անուղղակի հարկերից ստացվող եկամուտները գերազանցում էին ուղղակի հարկերից ստացվող եկամուտները: Օրինակ՝ 1970թ. Լիբանանում հարկերից մուտքագրված գումարների ընդհանուր քանակի 50%-ը կազմում էին անուղղակի հարկերը և միայն 20%՝ ուղղակի հարկերը: 1969-1971թթ. հարկերը ավելացել էին 26,7 մլն լիբ. լիրայով, այդ թվում անուղղակի հարկերը՝ 20 մլն լիբ. լիրայով[86]:

Ուղղակի հարկերից հիմնականը եկամտահարկն էր, որը դրված էր արդյունաբերական, առևտրական և ոչ առևտրական գործառույթյունից ստացվող շահույթների, աշխատավարձերի և կենսաթոշակների վրա: Ուղղակի հարկերի տարատեսակներ էին նաև հողային հարկը, գույքահարկը և այլ հարկեր, որոնցից ստացվող եկամուտները մեծ չէին[87], ինչը բացատրվում էր այն հանգամանքով, որ շահութահարկը, ինչպես նաև հողային հարկը բարձր չէին:

Անուղղակի հարկերը, որոնք դրվում էին սննդամթերքի, ծխախոտի, խմիչքների, ցեմենտի, վառելանյութի և այլնի վրա, կազմում էին բյուջեի բոլոր մուտքերի մոտ 50%-ը[88]:

1964թ. որոշում ընդունվեց ստեղծել հատուկ ծառայություն՝ պետական եկամուտների վարչություն, որի նպատակն էր ճշտել տարբեր ձեռնարկությունների եկամուտները և սահմանել վճարվող հարկերի չափը:

Լիբանանում գործող հարկերի մասին օրենքը սահմանում էր առավելագույն չափ, որից բարձր եկամուտները, ինչպիսին էլ որ լի-

---

[85] "Le Soir", Beyrouth, 12 Novembre, 1970.
[86] Е. Мельников, նշվ. աշխ, էջ 14:
[87] R. Himadeh, The Fiscal System of Lebanon, Beirut, 1961, p. 23.
[88] "L'Economie Libanaise Arabe", Beyrouth, 18 Juin, 1970.

նեին նրանց չափերը, ենթակա չէին հարկման[89]: Այլ խոսքով Լիբանանում չէր գործում եկամուտի և շահույթի հարկման «առաջադիմական սանդղակը», ինչը հնարավորություն էր տալիս խոշոր առևտրականներին, բանկիրներին և ձեռներեցներին խուսափել ուղղակի հարկերի վճարումից:

Լիբանան ներմուծվում էին զգալի չափերի հասնող օտարերկրյա ապրանքներ, իսկ գոյություն ունեցող մաքսային օրենսդրությունը չէր պաշտպանում երիտասարդ արդյունաբերական արտադրությունն օտարերկրյա մրցակցությունից: Այս հանգամանքն ավելի շատ ազդում էր մասնավոր ոլորտի մանր և միջին ձեռնարկությունների վրա, որոնց արտադրանքը չէր դիմանում օտարերկրյա ապրանքների մրցակցությանը:

Լիբանանի մաքսային կանոնադրության համաձայն՝ երկրում գործում էին երկու տիպի մաքսատուրքեր.

1. Նվազագույն մաքսատուրքեր, որոնք սահմանվել էին Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) անդամ երկրների համար.
2. Ընդհանուր մաքսատուրքեր, որոնք սահմանվել էին մյուս բոլոր երկրների համար՝ ներմուծվող ապրանքի ընդհանուր արժեքի մինչև 45%-ի չափով[90].

Լիբանանյան կառավարությունն ուսումնասիրվող ժամանակաշրջանում չէր նախատեսում որևէ լուրջ փոփոխության իրականացում հարկային քաղաքականության ոլորտում, ինչը հնարավորություն կտար կրճատել անուղղակի հարկերը: Ընդհակառակը, այն շահագրգռված էր գոյություն ունեցող հարկային համակարգի պահպանման գործում:

Լիբանանի ֆինանսական աղբյուրների մոբիլիզացման գործում կարևոր դեր էին խաղում արտաքին աղբյուրները: Անկախության ձեռքբերման առաջին տարիներին, երկրի ծանր ֆինանսական դրությունը հաճախ ստիպում էր լիբանանյան կառավարությանը ֆինանսական օգնություն ստանալու նպատակով դիմել օտարերկր-

---

[89] G.Grassmuck, K. Salibi, A Manual of Lebanese Administration, Beirut, 1970, p. 33.

[90] Republic of Lebanon, Ministry of General Planning, The Six Year Development Plan (1967-1972), Beirut, 1967, p. 43.

յա պետություններին, մասնավորապես ԱՄՆ-ին: 1946-1966թթ. Լիբանանին ԱՄՆ-ը տրամադրել էր 88,7 մլն ԱՄՆ-ը դոլար, այդ թվում տնտեսական օգնություն՝ 80,1 մլն և ռազմական՝ 8,6 մլն դոլար[91]:

1950-ականներին Բեյրութում գործում էին 9 համաշխարհային հայտնի բանկերի մասնաճյուղեր՝ «Մերձավոր Արևելքի բրիտանական բանկը», «Արևելյան բանկը», ԽՍՀՄ «Նարոդնի բանկը» և մի շարք այլ ամերիկյան և արևմտաեվրոպական բանկեր[92]:

Եթե Լիբանանի անկախացումից հետո՝ հետագա մի քանի տարիների ընթացքում, երկրում գերիշխող էին ֆրանսիական, անգլիական և իտալական կապիտալ ունեցող բանկերը, ապա ավելի ուշ սկսեց գերիշխել ամերիկյան կապիտալը: 1960-ականներից սկսած՝ լիբանանյան բանակային համակարգ մուտք գործեց նաև արևմտագերմանական և ճապոնական կապիտալը:

1962թ. Լիբանանում արդեն գործում էր մոտ 60 բանկ: Դրանցից միայն 33-ում էր, որ պաշտոնական տվյալների համաձայն՝ գերիշխում էր ազգային կապիտալը: Մնացածը օտարերկրյա բանկերի մասնաճյուղեր էին: 1965թ. տվյալներով՝ Լիբանանում գործող բանկերի թիվը ավելացել էր և հասնում էր 90-ի: Լիբանանում իրենց մասնաճյուղերն ունեին աշխարհի գրեթե բոլոր հայտնի բանկերը: «Լը կոմմերս դյու լևանտ» թերթի տվյալներով՝ 1966թ. Լիբանանում կային ութ ֆրանսիական, չորս ամերիկյան, չորս հոլանդական, բելգիական, ճապոնական և այլ բանկեր[93]: Բեյրութը դարձել էր Մերձավոր և Միջին Արևելքի խոշոր ֆինանսական կենտրոն, որտեղ տեղի էր ունենում գրեթե բոլոր արժույթների փոխանակություն: Կառավարությունը բանկային բոլոր գործառությունները դիտում էր իբրև առևտրական գործարքներ և օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր ոք՝ անկախ այն բանից նա լիբանանցի էր թե ոչ, որպես առևտրական՝ իրավունք ուներ Լիբանանում բացել իր բանկը: Մինչև 1960-ականների սկիզբը երկրում դեռևս գոյություն չուներ օրենք, որը հսկողություն սահմաներ բանկային համակարգի վրա: Այդ պատճառով էլ գրեթե տվյալներ չկային տվյալ ժամանակաշրջանում բանկերի կա-

---

[91] "The Economist", 19.11.1966.

[92] "L'Economie Libanaise Arabe", 30 September, 1966.

[93] "Le Commerce du Levant", Beyrouth, 28 November, 1965.

նոնադրական կապիտալի մասին: Երկրի կառավարությունը վարում էր քաղաքականություն, որն ուղղված էր Լիբանանի՝ իբրև «մերձավորարևելյան բանկիրի», «արևելյան Շվեյցարիայի», «արաբական աշխարհի Մոնտե Կարլոյի» կերպարի (image) ձևավորմանը:

Լիբանանյան բանկեր զգալի դրամական միջոցներ էին հոսում նաև Մերձավոր և Միջին Արևելքից: Սաուդցի, հորդանանցի, քուվեյթցի, բահրեյնցի, կատարցի գործարարներն իրենց դրամական միջոցները տեղադրում էին Բեյրութի բանկերում՝ դրանք գերադասելով եվրոպական բանկերից:

Լիբանանում գործում էին ինչպես միայն օտարերկրյա, այնպես էլ խառը՝ օտարերկրյա և լիբանանյան կապիտալով բանկեր: 1961թ. Լիբանանում կազմավորվեց բանկերի ասոցիացիա, որում միավորվել էին 73 բանկեր[94]:

Լիբանանյան կառավարությունը 1960-ականների երկրորդ կեսին ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնք նպատակ էին հետապնդում որոշակի հսկողություն հաստատել և կանոնակարգել մասնավոր բանկերի գործունեությունները: Այս նպատակով դեռևս 1963թ. ընդունվեցին ֆինանսավարկային օրենսդրական ակտեր, որոնք նպատակ ունեին պետական վերահսկողություն հաստատել վարկերի տրամադրման և դրամաշրջանառության ոլորտում: Դրանք ամբողջությամբ հաշվի էին առնում «լիբանանյան ֆենոմենի»՝ Լիբանանի, իբրև Մերձավոր և Միջին Արևելքի բանկային խոշոր կենտրոն լինելու պարագան[95]:

1964թ. ապրիլին Լիբանանում կազմավորվեց Կենտրոնական բանկը[96]: Մինչ այդ Լիբանանում դրամաշրջանառությունը կազմակերպում էր ֆրանսիական «Սիրիայի և Լիբանանի բանկը»:

Կենտրոնական բանկի կազմավորումը հնարավորություն տվեց լիբանանյան կառավարությանը մեծ աջակցություն ցույց տալ Լիբանանի տնտեսության բոլոր ոլորտների զարգացմանը: Առաջին լուրջ խնդիրը, որ կանգնած էր բանկի առջև, Լիբանանում բանկերի

---

[94] الأخبار, «Ալ-ախբար», 27.06.1961.

[95] Н.Лифанов, Ливан, с. 45.

[96] "Le Soir", Beyrouth, 28 Avril, 1964.

«բազմացման», նրանց թվաքանակի ավելացման նկատմամբ վերահսկողության հաստատումն էր: Կենտրոնական բանկի գործառույթների մեջ մտնում էր նաև ազգային տնտեսության կայունացման օժանդակությունն ու բոլոր ոլորտներին հավասար աջակցությունը, դրամաշրջանառության ապահովումը, պետական ներդրումների բաշխումը և այլն: Կենտրոնական բանկի նախագահին նշանակում էր կառավարությունը 6 տարի ժամկետով: Կենտրոնական բանկը լիբանանյան կառավարության տնտեսական և ֆինանսական քաղաքականության իրականացման հարցերով հիմնական խորհրդատվական մարմինն էր[97]:

1966թ. սկզբին կառավարությունը ներկայացրեց նոր բանկային օրենսդրություն, որի հիմնական նպատակն էր կանոնակարգել երկրում նոր բանկերի հիմնումը: Համաձայն այդ օրենսդրության՝ նոր բացվող բանկերը պետք է ունենային նվազագույնը 3 մլն. լիրա բանկային կապիտալ: Նոր բանկերի բացումն իրականացվում էր միայն Կենտրոնական բանկի թույլտվությամբ[98]:

1960-ականների երկրորդ կեսին Լիբանանում գործող բանկերի թիվը սկսեց կրճատվել: Ընթանում էր բանկերի խոշորացման բնականոն գործընթաց, ինչը դրական նշանակություն ունեցավ երկրի համար:

1970թ. Լիբանանում գործում էր մոտ 70 բանկ, որից 30-ը օտարերկրյա բանկերի մասնաճյուղեր էին: Երկրում գործող բոլոր բանկերի 10%-ը, որոնք օտարերկրյա բանկեր էին, տնօրինում էին ողջ բանկային կապիտալի 50%-ից ավելին[99]: Այս բանկերից յուրաքանչյուրի տրամադրության տակ գտնվող կապիտալը կազմում էր 152-200 մլն լիբ. լիրա, մինչդեռ մյուս բանկերից յուրաքանչյուրն ուներ մինչև 25 մլն լիբ. լիրա կապիտալ[100]:

Մեծ էր նաև ապահովագրական ընկերությունների թիվը: 1972թ. միայն Բեյրութում գործում էին 103 ապահովագրական ընկերություններ:

---

[97] "L'Orient", Beyrouth, 26.04.1964.
[98] The Middle East and North Africa, 1969-1970, London, p. 438.
[99] Е. Мельников, նշվ. աշխ., էջ 8:
[100] G.Hakim, The Economic Basic of Lebanese Polity, New-York, 1975, p. 58.

Այսպիսով՝ 1960-ականներից սկսած Լիբանանը՝ իբրև Մերձավոր Արևելքի կարևոր բանկային կենտրոն, բուռն զարգացում էր ապրում՝ լուրջ մարտահրավեր նետելով տարածաշրջանային այլ բանակային կենտրոններին:

* * *

Լիբանանյան ծառայությունների ոլորտում հատուկ տեղ է զբաղեցնում զբոսաշրջիկությունը: Այն իր զգալի ներդրումն ունի Լիբանանի առևտրի հաշվեկշռի դեֆիցիտի փակման գործում:

1970թ. պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ Լիբանանում կար շուրջ 800 հյուրանոց, 3000 ռեստորան, մեկ խաղատուն և ժամանցի բազմաթիվ հաստատություններ: Նույն տվյալների համաձայն՝ Լիբանան այցելել էր շուրջ 700.000 զբոսաշրջիկ և 812.000 սիրիացի (սիրիացիները Լիբանան այցելում էին առանց վիզաների՝ վճարելով միայն 5 լիբ. լիրա)[101]:

Օտարերկրյա զբոսաշրջիների թիվը մինչև 1975թ., երբ Լիբանանում սկսվեց երկարատև քաղաքացիական պատերազմ, շարունակվում էր ավելանալ: 1972 թ. Լիբանան այցելել էր շուրջ 1.5 մլն, իսկ 1973թ.՝ 1.7 մլն օտարերկրացի[102]:

1970թ. տվյալների համաձայն՝ զբոսաշրջիկությունից ստացվող եկամուտը կազմում էր 450 մլն լիբ. լիրա՝ ազգային եկամտի 20%-ը: Նման պարագայում զգալի չափերի էր հասնում զբոսաշրջիկների սպասարկման ոլորտում զբաղվածների թիվը, որը 1972թ. կազմում էր 80-85.000 մարդ՝ ներառյալ նաև տրանսպորտային ոլորտում զբաղվածները[103]:

Լիբանանի աշխարհագրական դիրքը բարենպաստ պայմաններ է ստեղծել նրա՝ տարածաշրջանային տարանցիկ երկիր,

---

[101] Republic of Lebanon, Council for Development and Reconstruction, Progress Report, Beirut, 1994, p. 35.
[102] "Le Commerce du Levant", Beiruth, 14 October, 1974.
[103] Л. Дадиани, նշվ. աշխ., էջ 8:

կարևոր միջազգային նավահանգիստ և օդային հաղորդակցության կենտրոն լինելու համար:

Բեյրութի նավահանգիստը մինչև 1960թ. տնօրինում էր ֆրանսիական բաժնետիրական մի ընկերություն: 1960-ականների կեսին Բեյրութի նավահանգստի բաժնետոմսերի զգալի մասը գնեց պետությունը և լիբանանյան մասնավոր ոլորտը[104]:

1966թ. Բեյրութի, Տրիպոլիի և Սիդոնի նավահանգիստներով անցնում էր ընդհանուր քանակությամբ 40 մլն տոննա բեռ, այդ թվում Սիդոնով և Տրիպոլիով արտահանվում էր մոտ 36.5 մլն տոննա նավթ, որը նավթամուղերով գալիս էր Իրաքից և Սաուդյան Արաբիայից: Նույն թվականին Բեյրութի նավահանգստի ապրանքաշրջառությունը կազմում էր 2.3 մլն տոննա, այդ թվում արտահանվող բեռները՝ 463.000 տոննա[105]:

Լիբանանի տնտեսության համար զգալի նշանակություն ուներ Բեյրութի նավահանգստում գործող ազատ գոտին, որն օգտագործելու նպատակով Լիբանանը համաձայնագիր էր կնքել մի շարք երկրների՝ Պակիստանի, Աֆղանստանի, Բրազիլիայի, Գանայի հետ: 1960-ականներին վերջին ազատ գոտով անցնում էր մոտ 404.000 տոննա բեռ[106]:

1960-ականներին Լիբանանն ուներ մի քանի տասնյակ ոչ նեծ բեռնանավեր և լաստանավեր: Սակայն լիբանանյան դրոշի ներքո գրանցված էին 169 օտարերկյա առևտրային նավեր՝ 1.5 մլն տոննա ջրատարությամբ, ինչից Լիբանանը ստանում էր որոշակի եկամուտներ: Օտարերկյա նավերն իր դրոշի ներքո գրանցելու համար Լիբանանը ստանում էր 0.5 մլն լիբ. լիրա եկամուտ, բացի այդ ավելի քան 300 լիբանանցի ընդգրկված էր այդ նավերի անձնակազմերում[107]:

1968թ. պաշտոնական տվյալների համաձայն՝ երկրում երկաթուղու ընդհանուր երկարությունը կազմում էր 373 կմ: 1960թ. սկսած՝ բոլոր

---

[104] Republic of Lebanon, Council for Development and Reconstruction, Progress Report, Beirut, 1994, p. 33.
[105] Н. Серегин, С. Петров, նշվ. աշխ., էջ 48:
[106] The Middle East and North Africa, 1970-1971, London, 1971, p. 442.
[107] Н. Серегин, С. Петров, նշվ. աշխ., էջ 48:

երկաթուղիները վերահսկվում էր պետությունը[108]: 1970թ. տվյալների համաձայն՝ երկաթուղով տեղափոխվել էր 80.000 ուղևոր և ավելի քան 0.5 մլն տոննա բեռ:

1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին Լիբանանն արդեն ուներ միջազգային չափանիշներին համապատասխանող շուրջ 6000 կմ երկարությամբ ավտոճանապարհային ցանց[109], այդ թվում նաև երկու հիմնական ավտոճանապարհները, որոնցից մեկն անցնում է Միջերկրական ծովափի երկայնքով՝ Լիբանանի հարավից՝ Ալ-Նակուրից մինչև հյուսիս՝ Սիրիայի հետ սահմանը, իսկ մյուսը Բեյրութ-Դամասկոս ավտոճանապարհն էր[110]: Այս բարձրակարգ ավտոճանապարհների կողքին շատ լիբանանյան ծայրամասային շրջաններ, հատկապես երկրի հարավը, ընդհանրապես զուրկ էին բարեկարգ ճանապարհներից, իսկ գոյություն ունեցող ճանապարհներն էլ կարիք ունեին լուրջ վերակառուցման: Լիբանանյան կառավարությունը հատուկ ուշադրություն էր հատկացնում Լիբանանում ճանապարհների վերակառուցմանը և երկրի հետագա զարգացման բոլոր ծրագրերում այդ նպատակով զգալի միջոցներ էր հատկացվում: Միայն 1965թ. ճանապարհների բարեկարգման նպատակով կառավարությունը ծախսեց 6 մլն լիբ. լիրա:

Բեյրութը նաև Մերձավոր Արևելքում շատ կարևոր օդային հաղորդակցության կենտրոն է: 1970-ականների սկզբին Բեյրութն արդեն ուներ միջազգային բոլոր չափանիշներին համապատասխանող օդանավակայան, որը կարող էր ընդունել ցանկացած տիպի օդանավ: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Բեյրութի միջազգային օդանավակայանի ծառայություններից օգտվում էին ավելի քան 50 օտարերկրյա և տեղական ավիաընկերություններ: 1970թ. Բեյրութի միջազգային օդանավակայանով անցել էր շուրջ 40.581 ինքնաթիռ՝ 34.668 տոննա բեռով և 1.366.000 ուղևորով[111]:

---

[108] The Middle East and North Africa, 1970-1971, London, 1971, p. 442.
[109] Н. Лифанов, նշվ. աշխ, էջ 70:
[110] Նույն տեղում, էջ 71:
[111] The Middle East and North Africa, 1970-1971, London, 1971, p. 444.

Բեյրութ ժամանող զբոսաշրջիկների մի մասն էլ Լիբանանն օգտագործում էր որպես «տարանցիկ կանգառ»՝ Բեթղեհեմ և Երուսաղեմ այցելելու համար:

Այսպիսով՝ մինչև 1975թ. երկրում սկսվեց երկրորդ քաղաքացիական պատերազմը, Լիբանանի՝ որպես Մերձավոր Արևելքի կարևոր զբոսաշրջիկության կենտրոններից մեկի, կարևորությունը շարունակում էր անընդհատ աճել:

7. Տնտեսական զարգացման ծրագրերը

Լիբանանի տնտեսական զարգացման ծրագրերը մշտապես գտնվում էին լիբանանյան կառավարության հատուկ ուշադրության կենտրոնում: Դեռևս 1954թ. Լիբանանում կազմավորվեց ծրագրավորման և զարգացման նախարարություն և համապատասխան խորհուրդ, որոնք իրենց գործունեությամբ պետք է նպաստեին երկրի սոցիալական և տնտեսական առաջընթացին: Այս խորհրդի և նախարարության գործառույթը երկրի տնտեսական զարգացման գործընթացը զարգացնելու նպատակով պետության և մասնավոր ոլորտի գործունեության համակարգումն էր:

Լիբանանի տնտեսության զարգացման համար զգալի նշանակություն ունեին տնտեսական զարգացման չորս ծրագրերը, որոնց հիմքում ընկած էր տնտեսության ազատականացման ու տնտեսական հարաբերությունների ընդլայնման և պետության կողմից այդ հարաբերություններն օրենսդրական ճանապարհով վերահսկելու սկզբունքը: Այդ ծրագրերի հիմնական նպատակն էր նպաստել երկրի տնտեսության արագ զարգացմանը, ՀՆԱ-ի ավելացմանը, տնտեսության տարբեր ոլորտների միջև եղած հավասարակշռության խախտման կրճատմանը, գործազրկության չափերի սահմանափակմանն ու երկրի տարբեր շրջանների միջև առկա տնտեսական անհամաչափության նվազեցմանը:

Լիբանանի տնտեսական զարգացման ծրագրերը ընդգրկում էին հետևյալ չորս փուլերը՝ 1953-1958թթ., 1962-1967թթ., 1967-1972թթ., 1972-1977թթ: Այս ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները հիմնականում պետական միջոցներն էին, Զարգացման և վերակառուցման միջազգային բանկի տրամադրած վարկերը, ՄԱԿ-ի աջակցության հատուկ հիմնադրամի միջոցները և օտարերկրյա օգնությունները[112]:

Լիբանանի տնտեսական զարգացման ծրագրերում հատուկ տեղ էր հատկացվում գյուղատնտեսության ոլորտում որոշակի միջոցառումների իրականացմանը, ինչն ուղղված էր արտահանվող ապրանքների ավելացմանը, ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավմանը:

Լիբանանի տնտեսական զարգացման առաջին երկու ծրագրերում, առավել շատ դրամական հատկացումներ նախատեսված էին հիդրոէներգետիկայի ոլորտին: Առաջին վեցամյա ծրագրում (1953-1958թթ.) այս ոլորտին հատկացված էր 158,5 մլն լիբ. լիրա: Հիդրոշինարարության հիմնական ծրագիրը «Լիտանիի» նախագիծն էր, որի իրականացումը սկսվել էր դեռևս 1956թ. և նախատեսվում էր այն ավարտել 20-25 տարիների ընթացքում: Նախագծի արժեքը սկզբնական շրջանում կազմում էր 341,9 մլն լիբ. լիրա, որից 250,9 մլն լիբ. լիրա նախատեսված էր էներգետիկայի և 91 մլն լիբ. լիրա ոռոգման համակարգի համար[113]: «Լիտանիի» նախագծի առաջին փուլում նախատեսված էր հիդրոէներգետիկ համակարգում մի քանի միջոցառումների իրականացում, որոնց արդյունքում նախատեսվում էր տարեկան 500 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիայի արտադրում: Առաջին փուլի արժեքը կազմում էր 40 մլն ԱՄՆ-ը դոլար, որից 27 մլն - վարկերի տեսքով տրամադրեց Զարգացման և վերակառուցման միջազգային բանկը:

1966թ. Քուվեյթի տնտեսական զարգացման հիմնադրամը Լիբանանին տրամադրեց 2,4 մլն. քուվեյթյան դինարի վարկ՝ «Լիտանիի» նախագծի ֆինանսավորման համար[114]: Ծրագրի ֆինանսավո-

---

[112] United Nations, Studies on Selected Development in Various Countries of the Middle East, UN Publications, No. 70, IV. 11.1970, p. 2.

[113] Նույն տեղում:

[114] Industrial Development in the Arab Countries, UN Publication, 1969, p. 110.

րումն իրականացվում էր երկու փուլով: Առաջին փուլը նախատեսում էր Կարաունի ջրամբարի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում, որը պետք է ունենար 47մ բարձրություն, Սահմորում հիդրոէլեկտրակայանի, Բիսրի թունելի և երկու խումբ էլեկտրակայանների կառուցում, ինչպես նաև Բեքաայի հովտում ոռոգվող հողերի մինչև 15,7.000 հեկտար ընդլայնում: Առաջին փուլի աշխատանքներն իրականացնում էր «Աստոլդի» իտալական ֆիրման: Երկրորդ փուլը նախատեսում էր բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի կառուցում (1964-1970թթ.), Կարաունի (1961-1968թթ.) և Հարդալի ջրամբարների ու մի քանի ավազանների շահագործում (1962-1966թթ.), Հարուբի և Նաբաթիայի շրջանների ամբողջական ոռոգում[115]:

Շինարարական աշխատանքների մեջ ներգրավված էին հարավսլավական «Յուգոնվեստ» ընկերությունը, ամերիկյան, ավստրիական, ֆրանսիական և հունգարական մի շարք այլ ընկերություններ: Շինարարությունը ֆինանսավորվում էր նաև «Լիտանիի» նախագծի իրականացման պետական վարչությունը [116]:

«Լիտանիի» նախագծի առաջին փուլը պետք է ավարտվեր 1962թ., սակայն 1958թ. բռնկված քաղաքացիական առաջին պատերազմն, ինչպես նաև նախագծերում որոշ սխալ հաշվարկները, որոնք մշակել էին ամերիկացի և ֆրանսիացի մասնագետները, երկրաբանական ոչ ճիշտ նախագծերը, աշխատանքների ավարտը հետաձգեցին մինչև 1964թ., իսկ ծախսերը 150 մլն լիբ. լիրայից ավելացան մինչև 300 մլն լիբ. լիրա[117]:

«Լիտանիի նախագծի» երկրորդ փուլի աշխատանքները, որոնք ընդգրկում էին 1964-1970թթ., նույնպես ձգձգվեցին: Այդ նախագծի երկրորդ փուլը նախատեսում էր նաև հացահատիկային կուլտուրաների արտադրության զարգացում, որը հնարավորության կտար կրճատել ներմուծման չափերը: Այդ նպատակով նախատեսվում էր

---

[115] "Le Commerce du Levant", Beyrouth, 3 Novembre, 1966.
[116] UN Economic Developments in the Middle East, 1962-1967, New York, 1962, p. 176.
[117] Նույն տեղում:

շրջանառության մեջ մտցնել չմշակվող հողերը, որոնք պատկանում էին մասնավոր սեփականատերերին:

Նախագծում կարևոր տեղ էր հատկացվում բնակչությանը խմելու ջրով ապահովմանը: Դեռևս 1956թ. ընդունվեց 10-ամյա ծրագիր, որը հնարավորություն կտար Լիբանանն ապահովել խմելու ջրով: Այս նախագիծը ֆինանսավորվում էր բյուջեից: Այն իրականացնելու համար ծրագրված էր 1956-1962թթ. հատկացնել 43,4 մլն լիբ.լիրա, մնացած գումարը տրամադրվելու էր հետագա 3 տարիների՝ 1963-1965թթ. ընթացքում[118]:

1961թ. օգոստոսի 7-ին Լիբանանի կառավարությունը հաստատեց Լիբանանի զարգացման երկրորդ վեցամյա ծրագիրը (1962-1967թթ.): Նախատեսվում էր հինգ տարիների ընթացքում տնտեսության մեջ ներդնել 450 մլն լիբ. լիրա: Համաձայն այդ ծրագրի արդյունաբերության համար հատկացված էր 72 մլն լիբ. լիրա, որը նախատեսված էր ծախսել հիդրոէներգետիկ ոլորտի զարգացման համար, 64 մլն լիբ. լիրա՝ ոռոգման ոլորտի, 124 մլն լիբ. լիրա՝ ճանապարհաշինության, 20 մլն լիբ. լիրա՝ շինարարության, 75 մլն լիբ. լիրա ենթակառուցվածքների վերկառուցման, մասնավորապես Բեյրութի և Տրիպոլիի նավահանգիստների և Բեյրութի միջազգային օդանավակայանի վերակառուցման համար[119]:

1962-1967թթ. նախատեսվում էր իրականացնել որոշակի ծրագրեր նաև սոցիալական, կրթական և մշակութային ոլորտներում: ՄԱԿ-ը լրջորեն ուսումնասիրում էր Լիբանանի առողջապահության, կրթության և բնակշինարարության համակարգերը և այս ուսումնասիրությունների տվյալներն օգտագործվում էին որոշ սոցիալական ծրագրերում:

Կրթական համակարգում նախատեսվում էր կառուցել մի շարք միջնակարգ դպրոցներ: Այս ոլորտում իրականացվելիք նախագծերի համար հատկացվել էր 20 մլն լիբ. լիրա: 1960թ. ՄԱԿ-ը Լիբանանին հատկացրեց 723.000 ԱՄՆ դոլար, որը նախատեսված էր տեխնիկական ուղղվածության կրթական կենտրոն ստեղծելու նպատա-

---

[118] "Le Commerce du Levant", Beyrouth, 3 Marc, 1966.

[119] Republic of Lebanon, Ministery of General Planning, The Six Year Development Plan (1962-1967), Beirut, 1961, p. 25.

կով[120]: 1961թ. ՅՈՒՆԵՍԿՈ-ն Լիբանանին տրամադրեց 160.000 լիբ. լիրա՝ մանկավարժական կադրեր պատրաստող կենտրոն ստեղծելու համար[121]: Այս հաստատությունը մանկավարժական կադրեր էր պատրաստելու ոչ միայն Լիբանանի, այլ նաև ողջ տարածաշրջանի համար:

Քաղաքաշինության ոլորտում նախատեսվում էր ներդնել 25 մլն լիբ. լիրա՝ Բեյրութի հատակագծի բարելավման և հյուրանոցային համալիրների կառուցման համար, ինչը պետք է նպաստեր զբոսաշրջիկության զարգացմանը:

Լիբանանի տնտեսական զարգացման ծրագրերի մշակման համար Լիբանան հրավիրվեցին ֆրանսիացի մասնագետներ, որոնք 1959թ. սկսած կատարում էին Լիբանանի տնտեսության, նրա տնտեսական և տեխնիկական աճի հեռանկարների հետազոտություններ: Այդ հետազոտությունների հիման վրա պատրաստվել էր շուրջ 20 նախագիծ, որոնք ընկած էին տնտեսական զարգացման վերոնշյալ չորս ծրագրերի հիմքում:

Տնտեսական զարգացման երրորդ (1967-1972թթ.) ծրագրով նախատեսվում էր ներդնել 1.080 մլն լիբ. լիրա, որից 155 մլն լիբ. լիրա-հատկացված էր ճանապարհաշինության, 123 մլն լիբ. լիրա՝ ոռոգման, 72 մլն լիբ. լիրա՝ գյուղատնտեսության և 49 մլն լիբ. լիրա՝ կրթության համակարգի համար: Տնտեսական զարգացման այս ծրագրերի իրականացման համար Լիբանանը դրամաշնորհներ և երկարաժամկետ վարկեր ստացավ ԱՄՆ-ից՝ 887 մլն լիբ. լիրա: 1967թ. Լիբանանին երկարաժամկետ վարկ տրամադրեց նաև Քուվեյթը՝ մոտ 5 մլն քուվեյթյան դինար[122]:

Ինչպես առաջին և երկրորդ վեցամյա ծրագրերում, այստեղ ևս առաջնային տեղ էր հատկացված ենթակառուցվածքների զարգացմանը՝ ոռոգմանը, էլեկտրաէներգիայի արտադրությանը, տրանսպորտին: Վերոնշյալ նպատակներով հատկացված էր 482,3 մլն լիբ. լիրա՝ տրամադրված ողջ գումարի 37%-ը: Մի շարք հատուկ ծրագ-

---

[120] UN Economic Developments in the Middle East, 1962-1967, New York, 1962, p. 183.
[121] Նույն տեղում:
[122] The Middle East and North Africa 1970-1971, London, 1971, p. 438-439.

րերի իրականացման համար նախատեսված էր 338,2 մլն լիբ. լիրա՝ 37%, գյուղատնտեսության, արդյունաբերության և զբոսաշրջիկության զարգացման համար նախատեսված էր նվազ քանակությամբ միջոցներ՝ 100,6 մլն լիբ. լիրա՝ մոտ 11%[123]:

1969թ. ՄԱԿ-ի տարեկան տեղեկագրումբերված տվյալների համաձայն՝ Լիբանանը համարվել էր տարածաշրջանի ամենաարագ զարգացող երկրներից մեկը: 1957-1965թթ. Լիբանանում գրանցվել էր ՀՆԱ-ի տարեկան 7% աճ, իսկ մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արտադրանքն ավելացել էր 4.3%-ով[124], ինչը վկայում էր տնտեսության մեջ տեղի ունեցող դրական տեղաշարժերի մասին:

Լիբանանի տնտեսական զարգացման չորրորդ ծրագիրը (1972-1977թթ.) նախատեսում էր լուծել 5 հիմնական խնդիրներ.

1. ՀՆԱ-ի ավելացում տարեկան 9% -ով և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ- ի աճ 4.5%-ով.
2. Տնտեսության տարբեր ոլորտների միջև առկա հավասարակշռության խախտման կրճատում, հատկապես գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներին համեմատաբար ավելի շատ օժանդակության ցուցաբերում.
3. Աշխատատեղերի ավելացում.
4. Լիբանանին մշտապես բնորոշ պետական բյուջեի դեֆիցիտի կրճատում.
5. Հասարակության տարբեր շերտերի միջև սոցիալական բևեռացման նվազեցում[125].

Այս ծրագրի իրականացման համար պահանջվում էր 7,200 մլն - լիբ. լիրա (մոտ 2,667 մլն ԱՄՆ-ը դոլար), որից 5.640 մլն լիբ. լիրա պետք է ներդներ մասնավոր ոլորտը, իսկ մնացած գումարը՝ 1.740 մլն լիբ. լիրա, կազմում էին պետական ներդրումները: Այս գումարից 1.250 մլն լիբ. լիրա տրամադրվելու էր բյուջեից, իսկ 490 մլն լիբ. լիրա՝ ենթակառուցվածքների՝ կապի, հաղորդակցության, էներգետի-

---

[123] "L' Orient", Beyrouth, 25 Octobre, 1960.

[124] United Nations, Studies on Selected Development in Various Countries of the Middle East, UN Publications, No. 70, IV. 11.1970, p. 3.

[125] Republic of Lebanon, Ministery of General Planning, The Six Year Development Plan (1972-1977), Beirut, 1971, p. 31.

կայի ոլորտներում գործող պետական ընկերությունների կողմից: Վերջիններիս տրամադրած 490 մլն լիբ. լիրա գումարը բաշխվում էր հետևյալ կերպ. էներգետիկայի ոլորտին՝ 180 մլն լիբ. լիրա, հեռահաղորդակցության ոլորտին՝ 134 մլն լիբ. լիրա, տեղական ինքնակառավարման մարմիններին՝ 155 մլն լիբ. լիրա, Բեյրութի ջրամատակարարման համակարգին՝ 10 մլն լիբ. լիրա, այլ ծախսեր՝ 11 մլն լիբ. լիրա[126]:

1960-ականների և 1970-ականների կեսին տարածաշրջանում իրավիճակի ցանկացած սրում՝ 1967թ. և 1973թ. արաբ-իսրայելյան պատերազմները, միջարաբական հակասություններում լարվածությունն, իրենց ազդեցությունն էին ունենում Լիբանանի ներքաղաքական կյանքում՝ աննախադեպ սրելով գոյություն ունեցող սոցիալական, քաղաքական և տնտեսական հակասությունները: Այս ամենը մեծապես ազդում էր երկրի տնտեսական զարգացման ընթացքի վրա, առաջ բերում բացասական հետևանքներ, որոնց արդյունքում դանդաղում էր երկրի տնտեսության զարգացումը, իսկ տնտեսական զարգացման ծրագրերը հաճախ մնում էին կիսատ և չէին հասցվում իրենց ավարտին:

---

[126] Նույն տեղում, էջ 24-31:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿՐՈՆԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (1958-1975ԹԹ.)

Լիբանանի սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ երկրում օրենսդիր իշխանությունը պատկանում է խորհրդարանին, որը բաղկացած է մեկ պալատից՝ պատգամավորների պալատից: Գործադիր իշխանությունը պատկանում է նախագահին և կառավարությանը: Նախագահն ունի նաև օրենսդրական նախաձեռնության իրավունք: Սահմանադրության 53-րդ հոդվածի համաձայն՝ նախարարներին նշանակում և ազատում է նախագահը: Վերջինս նշանակում է նաև երկրի վարչապետին[127]: Լիբանանի կառավարությունը, սակայն, վստահության քվե պետք է ստանա խորհրդարանից[128]:

Լիբանանում՝ հակառակ սահմանադրության մեջ արձանագրված բազմաթիվ ժողովրդավարական հոդվածների, գոյություն ուներ յուրահատուկ նախագահական կառավարման համակարգ:

Լիբանանի պետական կառուցվածքի մյուս առանձնահատկությունն այն է, որ նրա հիմքում ընկած է կրոնադավանական սկզբունքը:

Լիբանանը բաղկացած է մի շարք քրիստոնյա և իսլամադավան համայնքներից՝ մարոնիներ, հույն ուղղափառներ, հույն կաթոլիկներ, կաթոլիկներ, հայ առաքելականներ, հայ կաթոլիկներ, բողոքականներ, սուննիներ, շիաներ, դրուզներ և այլ համայնքներ: Բնակչության կեսից ավելին դավանում է իսլամ, իսկ մյուս կեսը՝ քրիստոնեություն: Կրոնական տարբեր դավանանքներ այս կամ այն չափով

---

[127] Конституция Ливанской Республики, - в. кн. Конституции государств Ближнего и Среднего Востока, М., 1956, с. 215.
[128] Е. Мельников, նշվ. աշխ., էջ 126:

գոյություն ունեն գրեթե բոլոր երկրներում: Սակայն այնտեղ դա այդքան սկզբունքային դեր չի խաղում որքան Լիբանանում, քանի որ պետական համակարգի և ներկայացուցչական հիմնարկների կառուցման հիմքում չի դրվում կրոնական հատկանիշը: Մինչդեռ այս հատկանիշը կարևոր և մեծ դեր է խաղում Լիբանանի սոցիալ-քաղաքական կյանքում:

Լիբանանի անկախացումից հետո երկրի ամենաազդեցիկ քրիստոնյա համայնքի՝ մարոնի ղեկավար Բիշարա Ալ-Խուրին (որը դարձավ անկախ Լիբանանի առաջին նախագահը) և ամենաազդեցիկ իսլամադավան սուննի համայնքի ղեկավար Ռիադ Ալ-Սոլհը (որը ստանձնեց երկրի վարչապետի պաշտոնը), դեռևս 1943թ. կնքեցին այսպես կոչված չգրված «ջենտլմենական» համաձայնագիր՝ «Ազգային դաշինք» (National pact), որը որոշում էր Լիբանանի տարբեր կրոնական համայնքների և ազգային փոքրամասնությունների փոխհարաբերությունները, ինչպես նաև երկրի արտաքին քաղաքականությունը: Համաձայն «Ազգային դաշինքի»՝ հանրապետության նախագահը պետք է լինի մարոնի, վարչապետը՝ սուննի, խորհրդարանի նախագահը՝ շիա[129]: Այս սկզբունքն ընկած է նաև խորհրդարանում պատգամավորական տեղերի բաժանման և վարչական մարմիններում պաշտոնների նշանակման հիմքում: Սա արձանագրված է հանրապետության սահմանադրության մեջ, որի 95-րդ հոդվածում ասված է. «Իբրև ժամանակավոր միջոցառում և հանուն արդարության և համերաշխության՝ համայնքները պիտի հավասարապես ներկայացվեն հասարակական ծառայության և կառավարության կազմավորման մեջ»[130]: Փաստ է, որ պաշտոնյաների ընտրության հարցում առաջնահերթ էր կրոնական պատկանելությունը:

Ելնելով կրոնական սկզբունքից՝ ընդունվեց մի կարևոր որոշում ևս. Լիբանանի խորհրդարանում իսլամադավան յուրաքանչյուր 5 պատգամավորի դիմաց ընտրվում էին 6 քրիստոնյա պատ-


---

[129] The Middle East Journal, Lebanese Democracy in Its International Setting, Vol. 17, Autumn, 1963, pp. 487-506.

[130] Конституция Ливанской Республики, - в. кн. Конституции государств Ближнего и Среднего Востока, с. 222.

ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ*

(1975թ. տվյալների համաձայն)



* Աղբյուրը՝ E. Picard, Lebanon A Shattered Country. Myths and Realities of the Wars in Lebanon, New York, 1993, p. 57.

գամավորներ, որով ապահովվում էր քրիստոնյա պատգամավորների թվային առավելությունը երկրի բարձրագույն օրենսդիր մարմնում, իսկ քրիստոնյա պատգամավորների մեջ՝ մարոնիներինը[131]:

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա «Ազգային դաշինքով» սահմանվեց, որ այն պետք է հիմնվի դրական չեզոքության սկզբունքի վրա: Համաձայն «Ազգային դաշինքի»՝ լիբանանյան քրիստոնյաները չպետք է փնտրեն Ֆրանսիայի կամ արևմտյան որևէ այլ պետության հովանավորությունը, իսկ լիբանանյան իսլամադավան բնակչությունը չպետք է փորձի Լիբանանը միավորել Սիրիայի կամ որևէ այլ արաբական պետության հետ: Երկու կողմերը համաձայնության եկան, որ Լիբանանը համագործակցելու է արաբական բոլոր պետությունների հետ և պետք է դառնա արաբական ընտանիքի («ումմա արաբիյա») անդամը, սակայն նա չպետք է խզի իր մշակութային և հոգևոր կապերը Արևմուտքի հետ: «Ազգային դաշինքը», Լիբանանը համարելով արաբական երկիր, միաժամանակ ընդգծում է նրա հատուկ քրիստոնեական բնույթը[132]:

Լիբանանում բնակչության պաշտոնական մարդահամար կատարվել էր 1930-ականների սկզբին: Սակայն ժամանակ առ ժամանակ տպագրվում էին ոչ պաշտոնական տվյալներ:

«Վաշինգտոն փոստ» թերթն այս կապակցությամբ գրել է. «Պաշտոնական տվյալների բացակայության պատճառով ոչ ոք հստակորեն չի կարող ասել, թե ինչպիսին է Լիբանանում քրիստոնյաների և իսլամադավանների թվաքանակը: Սա շատ նուրբ հարց է, որը հազվադեպ է քննարկվում հասարակայնորեն, քանի որ այն կարող է սրել միջհամայնքային հակասությունները»[133]:

---

[131] П. Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Книга 1, М., 2000, с. 503. Այս սկզբունքը վերանայվեց 1989թ. Տաիֆի համաձայնագրով, երբ երկրի խորհրդարանում քրիստոնյաների և իսլամադավանների ներկայությունը հավասարեցվեց 5:5:

[132] J. Hurewitz, Confessional Democracy, Lebanon, Middle East Politics: The Military Dimension, New York, 1969, p. 381.

[133] " Washington Post", 22.03.1972.

Իրականում պետական մարդահամարի իրականացմանը խոչընդոտում էին լիբանանյան քրիստոնյաները, մասնավորապես մարոնիները: Նրանք երկյուղում էին, որ ժողովրդագրական տվյալներում լիբանանյան իսլամադավանների թվաքանակի ավելացման պաշտոնական հրապարակումը կարող էր սպառնալիք հանդիսանալ իրենց գերիշխող դիրքերի պահպանման համար:

1977թ. ֆրանսիական մի կազմակերպության կատարած ժողովրդագրական ուսումնասիրություններն ի հայտ բերեցին այսպիսի իրողություններ: Համաձայն այդ ուսումնասիրությունների, երկրում շիաների[134] թիվը կազմում էր 850-900.000 (28%), մարոնիներ՝ 750-800.000 (24%), սուննիներ՝ 600.000 (19%), դրուզներ[135] 250.000 (8%), հույն ուղղափառներ՝ 300.000 (9%), հայ առաքելականներ՝ 250.000 (8%), հույն կաթոլիկներ՝ 200.000 (6%)[136]: Արդեն 1960-ականներին Լիբանանի իսլամադավանները երկրի բնակչության կեսից ավելին էին, թեև 1943թ. «Ազգային դաշինքի» ստորագրման պահին նրանք կազմում էին բնակչության 47%-ը: Հետագա տարիներին Լիբանանում իսլամադավան բնակչության թվաքանակի կտրուկ աճը ենթադրում էր կրոնադավանական համակարգում որոշակի բարեփոխումների իրականացում, որին, սակայն, կտրականապես դեմ էր մարոնի վերնախավը:

Լիբանանի ամենաազդեցիկ քրիստոնեական համայնքը լիբանանյան մարոնիների համայնքն է: Թեև Լիբանանը մարոնի կրոնական ուսմունքի բնօրրանը չէ, սակայն այն եղել է հյուրընկալ ապաստան մարոնիների համար, և վերջիններս Լիբանանը համարում են իրենց հայրենիքը: Ավանդության համաձայն համայնքն իր

---

[134] Շիականությունն իսլամի երկու հիմնական ուղղություններից մեկն է, որ կապված է Մուհամմադի հորեղբորորդի և չորրորդ խալիֆա Ալիի անվան հետ: Շիաներն Ալիին համարում են Մուհամմադ մարգարեի միակ օրինական ժառանգորդը և գտնում են, որ իմամները՝ ումմայի քաղաքական և կրոնական բարձրագույն ղեկավարները, պետք է լինեն նրա ուղղակի ժառանգորդները:

[135] Դրուզները հիմնականում բնակվում են Լիբանանի և Սիրիայի լեռնային շրջաններում, ինչպես նաև Իսրայելում և ներկայացնում են շիական աղանդներից մեկը:

[136] "За рубежом", No. 14, 1984.

անունը ստացել է Որոնտես (Ալ-Ասի) գետի ափին, Հոմսի (Եմեսայի) շրջանում IV դարի վերջին և V դարի սկզբին ապրած սուրբ Մարոնի անունից: Մարոնի հետևորդները Համայում հիմնում են վանք, սակայն բախվում են սուրբ Հակոբ Բարատեուսի հետևորդների հետ և պարտություն կրելուց հետո VII դարում ստիպված են լինում ապաստան գտնել Լիբանան լեռան վրա: Մարոնիները միակամության (մոնոֆելիտ) ուսմունքի հետևորդներ են, որի համաձայն Քրիստոսը պահպանում էր իր երկու՝ աստվածային և մարդկային հավասարազոր բնությունները, սակայն դրանք բևեռացվում էին մեկ ու միակ կամքի մեջ[137]: Մարոնական ուսմունքի առանձնահատկությունը նրանում է, որ լինելով արևելյան քրիստոնեական ճյուղ՝ XVII դարում այն միություն կազմեց Հռոմի կոթոլիկ եկեղեցու հետ՝ ճանաչելով Հռոմի պապի գերակայությունը[138]: Սակայն մարոնիները պահպանեցին հատուկ արևելյան ծիսակարգը, իրենց եկեղեցու ավանդական կառուցվածքը և ունեն պատրիարք, որը տնօրինում է եկեղեցու ներքին գործերը:

1943թ. մարոնի ղեկավարներն ակտիվորեն մասնակցում էին «Ազգային դաշինքի» մշակմանը, քանի որ արդեն այն ժամանակ Լիբանանյան մարոնիները բավական կշիռ ունեին երկրի ներքաղաքական կյանքում: Մարոնի ղեկավարները մշտապես աչքի էին ընկնում իրենց արևմտամետ հայացքներով:

Մարոնի քրիստոնյաների մոտ կեսը բնակվում էին Լեռնային Լիբանանում, մոտ 25%-ը՝ Հյուսիսային Լիբանանում, իսկ 5%-ը՝ Բեյրութում: Մարոնիների պատրիարքը բավական ազդեցիկ դիրքեր ուներ համայնքի ներսում: Վերջինիս նստավայրը գտնվում էր Քբերքում՝ Լեռնային Լիբանանում[139]:

Լիբանանում քրիստոնյա համայնքների մեջ իր ուրույն տեղն ունի հայ համայնքը: Լիբանանի խորհրդարանում հայերը ներկայացված էին 5-ից 7 պատգամավորներով, իսկ երկրի կառավարության

---

[137] Ե. Նաջարյան, Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին, Երևան, 1985, էջ 23-24:
[138] М. Родионов, Мароните. из этно-конфессиональной истории восточного средиземноморья, М., 1982, сс. 27-28.
[139] J. Nantet, Histoire du Liban, Paris, 1963, p. 43.

կազմում նախարարի մեկ պաշտոնը պատկանում էր հայ համայնքի ներկայացուցչին[140]: Լիբանանի հայ համայնքը ներկայացված է երեք ավանդական կուսակցություններով «Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ), «Ռամկավար Ազատական կուսակցություն» (ՌԱԿ), «Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն» (ՍԴՀԿ), որոնք՝ ըստ իրենց քաղաքական կողմնորոշման, համագործակցում էին լիբանանյան համապատասխան կուսակցությունների հետ[141]:

Լիբանանյան իսլամադավան համայնքների շարքում առավել նախապատվելի դիրքեր ունի սուննի համայնքը: Երկրի վարչապետները նշանակվում են հենց այս համայնքից: Լիբանանի իսլամադավանները հաճախ սուննի ազդեցիկ ղեկավարներին մեղադրում էին այն բանում, որ վերջիններս համագործակցում էին մարոնիների՝ մասնավորապես փաղանգավորների հետ: Սուննիները, որոնք՝ որպես ազդեցիկ համայնք ներկայացնում էին Լիբանանի ողջ իսլամադավանների շահերը, չէին կարող ռազմավարական դաշինքի մեջ չլինել երկրի նախագահի հետ, որն էլ իր հերթին չուներ իրական իշխանություն՝ առանց իսլամադավան ղեկավարների հետ համագործակցության: Սուննիները մեծ մասամբ բնակվում էին Հյուսիսային

---

[140] Լ. Հարությունյան, Լիբանանի կրոնահամայնքային համակարգը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, (XIX), Երևան, 2000, էջ 91:

[141] Լիբանանի հայ համայնքի մասին մանրամասն տե՛ս Հ. Խ. Թոփուզյան, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986, էջ 202-233, Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982, էջ 34-50, նույնի Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում 1939-1958թթ, էջ 271-276, Հ. Աղպաշեան, Արաբական ազգային-ազատագրական զարթոնքը, Բեյրութ, 1959, էջ 50-55, Համառոտ պատկեր լիբանանահայության տագնապին և վերականգնումի կամքին ու ջանքին, Անթիլիաս, 1978, էջ 5-10, Ս. Վարժապետյան, Հայերը Լիբանանի մեջ. Հանրագիտարան լիբանանահայ գաղութի (1920-1980թթ.), հ. գ, Պէյրութ, 1981, Ն. Չալըմյան, Լիբանանի հայ համայնքը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում, Երևան, 2002, էջ 23-52, Մ. Էպլիղաթեան, Գաղթականականէն խորհրդարան..., հ.ա, Հալէպ, 1998, էջ 202-349:

Լիբանանում՝ 40%, Բեյրութում և նրա արվարձաններում՝ 25% և Լեռնային Լիբանանում և Բեքաայի հովտում՝ 10-12%[142]:

1950-ականներին լիբանանյան քաղաքական սուննիների շրջանում լայն տարածում ունեին Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդ Ալ-Նասերի արաբական ազգայնական գաղափարները: Շուրջ երկու տասնամյակ նասերական գաղափարներով տոգորված սուննի ազգայնականների նորաստեղծ խմբավորումները պայքարում էին ավանդական ղեկավարների դեմ՝ համայնքում իրենց ազդեցությունը հաստատելու նպատակով: Սակայն, մինչև 1975թ. ավանդական սուննի «գվարդիան» կարողանում էր ամուր կերպով իր ձեռքում պահել համայնքի կառավարումը և ձևավորել համայնքային համընդհանուր կարծիք՝ հիմնվելով սուննի 6 ազդեցիկ ընտանիքների վրա: Նրանց ներկայացուցիչները միմյանց փոխարինում էին Լիբանանի վարչապետի պաշտոնում[143]:

Լիբանանյան հաջորդ իսլամադավան համայնքը լիբանանյան շիաների համայնքն է: 1970-ականների սկզբին թեև շիաները կազմում էին Լիբանանի ողջ բնակչության 28%-ը (մոտ 1մլն. մարդ)[144] և, փաստորեն, արդեն ամենախոշոր կրոնական համայնքն էին, նրանք, այնուամենայնիվ, շարունակում էին մնալ համեմատաբար ամենաշրջանցվածը: Շիաների մոտ 60%-ը բնակվում էր Հարավային Լիբանանում, 25%-ը՝ Բեքաայի հովտում և 10%-ը՝ Լեռնային Լիբանանում[145]:

1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին մեծ թվով շիաներ հարավային Լիբանանում Իսրայելի իրականացրած բազմաթիվ հարձակումների արդյունքում զրկվելով իրենց բնակարաններից՝ ստիպված էին հաստատվել Բեյրութում: Շիաները Բեյրութում էժան աշխատուժ էին և զբաղված էին հիմնականում շինարա-

---

[142] M. Johnson, Class and Client in Beirit: The Sunni Muslim Community 1840-1985, London, 1986, p. 93.

[143] "Foreign Policy", No. 54, Spring, 1974, pp. 102-103.

[144] H. Cobban, "Lebanese Confessional Political System", Foreign Policy, No. 2, May, Washington, 1984, pp. 222-223.

[145] A. Nizar Hamzeh, R. Hrair Dekmejian, A Sufi Response to Political Islamism: Al-Ahbash of Lebanon, The Middle East Journal, 28, 1996, No. 2, May, pp. 217-229.

րական աշխատանքներում: Շիական ետնախորշերը Բեյրութի մի քանի թաղամասերում «չքավորության գոտիներ» էին:

Մինչև 1970-ական թվականները շիաների ղեկավարությունն իրականացնում էին մի քանի ավանդական ընտանիքներ: Սակայն 1960-ականների վերջին երիտասարդ շիա քարոզիչ իմամ Մուսա Ալ-Սադրը սկսեց իր շուրջը համախմբել շիա երիտասարդության ու մի շարք առաջնորդների: Նա հանդես էր գալիս սոցիալական բարեփոխումների իրականացման ծրագրով, ինչը պետք է նպաստեր շիա բնակչության սոցիալական իրավիճակի բարելավմանը[146]:

1970-ականների սկզբին արդեն միանգամայն վստահ կարելի էր ասել, որ Լիբանանի կառավարման ոլորտներում պետք է ակտիվանար շիաների դերը, ինչը կդիտարկվեր իբրև ոչ միայն շիաների թվաքանակի կտրուկ աճի, այլ նաև նրանց քաղաքական և գաղափարական նոր վերելքի հետևանք: Շիաները միանգամայն արդարացիորեն պահանջում էին առավել լայն քաղաքական ներկայացուցչություն Լիբանանի կառավարման մարմիններում: Պատմականորեն այնպես է դասավորվել, որ Լիբանանում շիաներով բնակեցված շրջանները տնտեսապես ամենաթույլ զարգացածն էին: Շիաների առաջնային նպատակներից էր բոլոր միջոցներով նպաստել շիական գյուղական համայնքներին կառավարության տրամադրած դրամական հատկացումների զգալի ավելացմանը[147]:

Մուսա Ալ-Սադրը զգալի աջակցություն էր ստանում 1974թ. շիական համայնքում կազմավորված «Կեղեքվածների շարժում» (արաբերեն՝ «Հարաքաթ ալ-մահրումին») կազմակերպությունից[148], որի հիմքի վրա 1975թ. գարնանը ձևավորվեցին կիսառազմական ջոկատներ՝ «Լիբանանյան դիմադրության գումարտակներ» (արաբերեն՝ «Աֆուաջ ալ-մուկաուամա ալ-լուբնանիյա»՝ «Ա-

---

[146] F. Griblat, La Communauté Libanaise et le Mouvement National Palestinien 1967-1986, Paris, 1988, p. 74.

[147] J. Cole and N. R. Keddie, Shi'ism and Social Protest, London, 1986, p. 144.

[148] Նույն տեղում:

մալ»)[149]: Վերջինս շատ կարճ ժամանակաշրջանում դարձավ շիա համայնքի նոր քաղաքականության ձևավորողն ու իրականացնողը: «Ամալում» ընդգրկվեցին Բեյրութի արվարձաններում ապրող մեծ թվով կրթված, երիտասարդ շիաներ, որոնք պայքարում էին Լիբանանում շիաների ընդհանուր վիճակի բարելավման համար: «Ամալի» նախաձեռնությամբ Լիբանանի հարավային շրջաններում ձևավորվեցին նաև մի քանի շիական ռազմականացված ճամբարներ[150]: «Ամալը» շատ կարճ ժամանակաշրջանում դարձավ շիա համայնքի նոր քաղաքականության ձևավորողն ու իրականացնողը[151]:

«Ամալը» դրամական զգալի միջոցներ էր ստանում Սիրիայից և լիբանանյան շիաների մեծաքանակ սփյուռքից, որը հաստատվել էր Աֆրիկայի ֆրանսալեզու արաբական երկրներում: Արտերկրի շիաների զգալի դրամական փոխանցումները նպաստում էին արևմտյան Բեյրութում շիաների կողմից իրականացվող մեծ թափի հասնող շինարարության իրագործմանը, ինչպես նաև մի շարք բացառապես շիական կապիտալ ունեցող բանկերի կազմավորմանը[152]:

Լիբանանյան իսլամադավան համայնքների շարքում էական դեր էր խաղում լիբանանյան դրուզների համայնքը: Նշենք, որ 1950-60-ականներին Լիբանանում տեղի ունեցած սոցիալական փոփոխությունները ակտիվացրեցին նաև դրուզներին, որոնք Քամալ Ջումբլաթի գլխավորությամբ սկսեցին բողոքել երկրի քաղաքական բաժանվածության դեմ՝ պահանջելով իրենց համայնքի համար էլ ավելի մեծ մասնաբաժին[153]:

---

[149] D. Hiro , նշվ. աշխ., էջ 22, A. Norton, "Making Enemies in South Lebanon: Harakat Amal, the IDF and South Lebanon", Middle East Insight, Washington, D. C., 3, No. 3, January-Fabruary, 1984, p, 19.

[150] A. Norton, Amal and the Shia: Struggle for the Soul of Lebanon, New York, 1987, p. 144.

[151] Մանրամասն տե՛ս Арабский мир. Три десятилетие независимого развития, М., 1990, с. 191.

[152] النهار, «Ալ-նահար», Բեյրութ, 07.12.1973:

[153] Ռ. Կարապետյան, Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996, Երևան, 2000, էջ 70:

Դրուզների մոտ 70%-ը բնակվում էր Լիբանանի լեռնային Շուֆ շրջանում: Այս կրոնական աղանդը ծնունդ է առել Եգիպտոսում X-XI դարերում: Համայնքի անվանումը սերվում է XI դարի քարոզիչ Մուհամմադ Իբն Իսմայիլ Ալ-Դարազիի անունից, որը հետագայում տեղափոխվեց Հարավային Լիբանան[154]: Դրուզների համայնքում գոյություն ուներ անընդհատ շարունակվող հակամարտություն մի քանի առավել ազդեցիկ արիստոկրատական ընտանիքների, հատկապես Ջումբլաթների և Արսլանամիների միջև:

Լիբանանյան դրուզների համայնքը երկար տարիների ընթացքում էականորեն չէր փոփոխվել, համեմատած լիբանանյան այլ համայնքների հետ: Այդ համայնքը ամենաներփակված լիբանանյան համայնքն էր:

Լիբանանի անկախացումից հետո դրուզները սկսեցին էական դեր խաղալ երկրի ներքաղաքական կյանքում, և սա հիմնականում կապված էր դրուզների հանգուցյալ ղեկավար Քամալ Ջումբլաթի անվան հետ:

Հիմնականում դրուզներից էր կազմված «Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը», որի ղեկավար՝ Քամալ Ջումբլաթը գտնում էր, որ Լիբանանում խաղաղության հաստատմանն ու պահպանմանը կարող էր նպաստել կրոնադավանական սկզբունքից հրաժարումը: Այն հնարավորություն կտար բոլոր լիբանանյան համայնքներին հանդես գալ միևնույն հարթության վրա:

Լիբանանի հասարակական-քաղաքական կյանքում զգալի դեր էին խաղում քաղաքական կուսակցությունները: Սակայն դրանցից ոչ բոլորն էին լիարժեք կուսակցություններ: Նրանց մի մասը քաղաքական խմբեր էին, որոնք իրենց շարքերում ընդգրկում էին երբեմն մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր մարդ: Բացի այդ նրանց մի մասն առաջանում էր քաղաքական որևէ ընտրարշավի կամ խորհրդարանական ընտրությունների ժամանակ և այդ ընտրարշավից հետո կազմալուծվում և հեռանում էր քաղաքական բեմից:

---

[154] R. Brenton Betts, The Druze, Yale University, 1988, p. 20.

1960-ականներին Լիբանանում դեռ շարունակվում էին պահպանվել կիսաավատատիրական և նույնիսկ ավատատիրական հարաբերությունները: Երկրում զգալի դեր էին խաղում տեղական կրոնատոհմային առաջնորդները՝ զաիմները, որով և պայմանավորված էր Լիբանանում «քաղաքական ավատատիրության» գոյությունը: Այն մենաշնորհ էր հաստատել խորհրդարանում և ամուր դիրք ուներ երկրի վարչական մարմիններում:

Լիբանանյան կուսակցությունների մեծ մասին բնորոշ էր ոչ այնքան նվիրվածությունը կոնկրետ սկզբունքներին և ծրագրին ու համախոհությունը, որքան անվերապահ հավատարմությունն ու նվիրվածությունը ղեկավարներին:

Լիբանանյան քաղաքական կուսակցությունների մեծ մասը հիմնված էր կրոնադավանական սկզբունքի վրա: Քաղաքական ուժերի համախմբումը կրոնական պատկանելիության սկզբունքի հիման վրա նպաստում էր լիբանանյան հասարակության պառակտմանը և տարբեր կրոնական համայնքների միջև հակասությունների սրմանը:

Լիբանանի կուսակցական համակարգը ևս արտացոլում էր լիբանանյան հասարակության բարդ կրոնադավանական կառուցվածքը:

Լիբանանում ամենաազդեցիկ մարոնի քաղաքական կուսակցությունը «Լիբանանյան փաղանգներ» (արաբերեն՝ «Հիզբ ալ-քաթաիբ ալ-լուբնանի») կուսակցություն է, որը 1936թ. կազմավորել էր Շեյխ Պիեր Ժմայելը: Թեև կուսակցության շարքերում միավորվել էին գլխավորապես մարոնի համայնքի մանր բուրժուազիայի ներկայացուցիչները, սակայն այն արտահայտում էր նաև այդ համայնքի առևտրաֆինանսական, արդյունաբերական և ավատատիրական վերնախավի շահերը: Լիբանանյան փաղանգավորները սերտ կապեր ունեին Վատիկանի, ԱՄՆ-ում բնակվող լիբանանյան սփյուռքի հետ և, ընդհանուր առմամբ, աչքի էին ընկնում արևմտամետ հայացքներով: «Քոլորին հայտնի է փաղանգավորների և Քեյրութում ամերիկյան դեսպանատան միջև գոյություն ունեցող սերտ կապերի մասին: «Քաթաիբ» կուսակցության անդամները սերտորեն համագործակցում են ամե-

րիկյան դեսպանատան հետ և գտնվում են նրա (ամերիկյան դեսպանատան-Լ.Հ.) ուղղակի ազդեցության տակ»,- գրում էր «Ալ-մուհարիր» լիբանանյան թերթը[155]:

Կազմակերպչական առումով կուսակցությունը հիմնված է զինվորական սկզբունքի վրա: Կուսակցության անդամները, որոնք նույնիսկ խաղաղ տարիներին ցույցերի և տոնակատարությունների ժամանակ կրում էին զինվորական համազգեստ, բաժանվում էին էսկադաների՝ 250-ական մարդ և փաղանգների՝ 125-ական մարդ: Այստեղից էլ՝ կուսակցության անվանումը: Կուսակցությունն իր շարքերում համախմբում էր հիմնականում քրիստոնյա մարոնիներին, որոնք կազմում էին անդամների 83%, քրիստոնյա մյուս համայնքների ներկայացուցիչներ՝ 13% և շիաներ (համաձայն պաշտոնական տվյալների) 4%[156]:

Այս կուսակցության գործունեությունը հաճախ նպաստում էր լիբանանյան քրիստոնյաների և իսլամադավանների միջև հակասությունների ուժեղացմանը և լիբանանյան հասարակության պառակտման խորացմանը: Փաղանգավորները զարգացնում էին այն տեսակետը, որ Լիբանանի բնակչությունն ունի ուրույն մշակույթ և տարբեր հիմք, ինչը պետք է հաշվի առնել արաբական այլ երկրների հետ հարաբերություններում[157]:

1964-1968թթ. «Քաթաիբ» կուսակցությունը Լիբանանի խորհրդարանում ուներ 4, իսկ 1968-72թթ.՝ 9 պատգամավորական տեղ: Լիբանանյան փաղանգավորներն ավելի ամուր դիրքեր ունեին Բեյրութում և Լեռնային Լիբանանում: Փաղանգավորները լիբանանյան աջ ուժերի հիմնական սյուներից էին[158]:

Լիբանանին բնորոշ էր այն իրողությունը, որ ինչպես փաղանգավորները, այնպես էլ լիբանանյան հիմնական քաղաքական կուսակցությունների զգալի մասն ունեին զինված ջոկատներ, որոնք

---

[155] ألمهارير, «Ալ-մուհարիր», Բեյրութ, 26.07.1970:

[156] P. Gemayel, Conaissance de Kataeb, 1960, Beyrouth, p. 49.

[157] M. Hudson, "The Electoral Process and Political Development in Lebanon", Middle East Journal, 20 Spring, 1966, p. 174.

[158] International Journal of Middle East Studies, Vol. 8, No 1, January 1977, New York, p. 506.

անգլերենով անվանվում են “militias”, արաբերենով՝ «միլիշիաներ», իսկ արևմտահայերենով՝ «միլիսներ»: Մենք նպատակահարմար ենք գտնում լիբանանյան կուսակցությունների զինված ջոկատներին անվանել «միլիսներ», քանի որ «միլիցիա» եզրի օգտագործումը կարող է թյուրըմբռնման պատճառ դառնալ:

Լիբանանյան հաջորդ քաղաքական կուսակցությունն «Ազգային լիբերալ» կուսակցությունն է (արաբերեն՝ «Հիզբ ալ-կաումի ալ-ահրար»), որն, ինչպես արդեն նշել ենք, 1958թ. կազմավորեց Լիբանանի նախագահ Քամիլ Շամունը: Այդ պատճառով էլ կուսակցության անդամները շատ հաճախ կոչվում էին շամունականներ: Կուսակցությունն արտահայտում էր մարոնի համայնքի խոշոր առևտրական և ֆինանսական բուրժուազիայի և ավատատիրական շրջանակների շահերը: Այս կուսակցությունը ևս հիմնականում կազմված էր քրիստոնյա մարոնիներից: Սակայն կուսակցության շարքերում (ոչ մեծ քանակությամբ) կային նաև իսլամադավաններ[159]: 1968-1972թթ. այս կուսակցությունը երկրի խորհրդարանում ուներ 11 պատգամավորական տեղ: Այն սերտորեն համագործակցում էր Քաթաիբ կուսակցության հետ և նույնպես լիբանանյան աջ ուժերի հինական կորիզն էր:

«Ազգային դաշինք» կուսակցությունը (արաբերեն՝ «Ալ-քութլա ալ-վատանիյա») 1934թ. հիմնադրել էր Էմիլ Էդդեն: Նրա մահից հետո «Դաշինքը» ղեկավարում էին նրա որդիներ՝ Ռայմոն և Պիեր Էդդեները: «Ազգային դաշինքը» Լիբանանի առևտրաֆինանսական բուրժուազիայի կուսակցությունն էր: Նրա գործունեության մեջ մեծ դեր էր խաղում մարոնի հոգևորականությունը: Կուսակցությունը սերտորեն կապված էր Լիբանանի ֆինանսական շրջանակների հետ: Նրա ղեկավարներից մեկը՝ Պիեր Էդդեն, Լիբանանի բանկերի ասոցիացիայի նախագահն էր: 1964-1968թթ. լիբանանյան խորհրդարանում կուսակցությունն ուներ 3 պատգամավորական տեղ, իսկ 1968-1972թթ.՝ 6 տեղ: Այն ուներ մոտ 12.000 անդամ: «Ազգային դաշինքի» անդամներն ամուր դիրքեր ունեին Լեռնային Լիբանանում և Բեյրութում: Կուսակցությունը կողմնակից էր

---

[159] L. Binder, Politics in Lebanon, John Wiley and Sons, 1966, p. 313.

Արևմուտքի հետ հարաբերությունների սերտացմանը: Նրա ծրագրի հիմնական դրույթը «լիբանանյան ազգայանական» գաղափարախոսությունն էր:

Մինչ 1952թ. Լիբանանում գործում էր «Սահմանադրական դաշինք» կուսակցությունը (արաբերեն՝ «Ալ-քութլա ալ-դուսթուրիյա»), սակայն 1952թ. այն տարրալուծվեց, և նրա հիմքի վրա 1954թ. հիմնադրվեց «Սահմանադրական միություն» կուսակցությունը, որի ղեկավարը մինչև 1964թ. Լիբանանի առաջին նախագահ Բիշարա Ալ-Խուրին էր: Նրա մահից հետո կուսակցությունը գլխավորեց նրա որդին՝ Խալիլ Ալ-Խուրին: Կուսակցությունն արտահայտում էր խոշոր բուրժուազիայի և հողատերերի շահերը: Այն կազմված էր հիմնականում առևտրականներից, կալվածատերերից, փաստաբաններից, պետական պաշտոնյաներից և այլն: Ի տարբերություն «Ազգային դաշինքի»՝ «Սահմանադրական միություն» կուսակցությունը վարում էր ավելի ճկուն քաղաքականություն: Այն կողմնակից էր ինչպես Արևմուտքի, այնպես էլ արաբական աշխարհի հետ հարաբերությունների սերտացմանը: Կուսակցության անդամները հիմնականում մարոնիներ էին, սակայն կային նաև ոչ մեծ թվով իսլամադավան կրոնական համայնքների ներկայացուցիչներ: 1958թ. ապստամբության ընթացքում կուսակցությունը գտնվում էր ընդդիմության շարքերում, սակայն զինված պայքարին կուսակցության անդամները նախընտրեցին չմասնակցել[160]:

Լիբանանի նախագահներ Ֆուադ Շիհաբը (1958-1964թթ.) և Շարլ Հելուն (1964-1970թթ.) սերտորեն համագործակցում էին «Սահմանադրական միություն» կուսակցության ղեկավար գործիչների հետ:

Հաջորդ կուսակցությունը 1932թ. Անտուն Սաադեի կազմավորած «Սիրիական Ազգային սոցիալական» կուսակցություն է (արաբերեն՝ «Հիզբ ալ-կաումի ալ-իջթիրաքի»), որի հիմնական ծրագրային պահանջը «Մեծ Սիրիա» նախագծի իրականացումն էր: Նախագիծն ընդգրկում էր Սուեզի ջրանցքի գոտուց մինչև Տավրոսի լեռներն ընկած տարածքը՝ ներառելով ներկայիս Սիրիան, Իրաքը, Լի-

---

[160] J. C. Randal, Going all the Way: Christian War Lords Israeli Adventures and the War in Lebanon, New York, 19.

բանաձը, Հորդանանը և Պաղեստինը[161]: Կուսակցությունը՝ հակառակ իր անվանմանը, լինելով լիբանանյան կուսակցություն, իր շարքերում համախմբում էր գլխավորապես ուղղափառ քրիստոնյաներին[162]: Սկզբնական շրջանում այն հայտնի էր իտալական և գերմանական ֆաշիստների հետ ունեցած իր կապերով: Պատահական չէ, որ այդ կուսակցության խորհրդանիշը սվաստիկան էր[163]: Անտուն Սաադեն Բեյրութի ամերիկյան համալսարանի նախկին դասախոսն էր, որն անձնական կապեր ուներ Մուսոլինիի հետ: Մինչ 1958թ. այս կուսակցությունը կոչվում էր «Սիրիական ազգային» կուսակցություն: 1961թ. դեկտեմբերի 31-ին կուսակցությունը պետական հեղաշրջման անհաջող փորձ ձեռնարկեց Լիբանանում, որը պետք է լիներ առաջին քայլը «Մեծ Սիրիա» ստեղծելու ծրագրի իրականացման ճանապարհին: Սակայն հեղաշրջումը ձախողվեց: Անտուն Սաադեն ձերբակալվեց և գնդակահարվեց, իսկ կուսակցությունը պաշտոնապես արգելվեց[164]:

Հակադրվելով արաբական ազգայնական գաղափարներին՝ այս կուսակցությունն առաջ էր քաշում սիրիացիների ազգային միասնության՝ «սիրիական ոսսայի» գաղափարը, որը կուսակցության ղեկավարների կարծիքով կարող էր հաղթահարել տեղական անջատողականությունն ու կրոնական տարաձայնությունները:

1958թ. այս կուսակցությունը գտնվում էր կիսաօրինական վիճակում, սակայն Քամիլ Շամունը, նախքան իր պաշտոնից հեռանալը, պաշտոնապես օրինականացրեց վերջինիս գործունեությունը: Այն կոչվեց «Ազգային սոցիալական» կուսակցություն:

1966թ. հուլիսին բացահայտվեց այս կուսակցության կազմակերպած ևս մեկ անհաջող հեղաշրջման փորձ:

«Ազգային սոցիալական» կուսակցությունն իր գործունեության մեջ, հատկապես սկզբնական շրջանում, մեծ տեղ էր հատկացնում

---

[161] Э. Тума, Национально-освободительное движение и проблема арабского единства, М., 1977, с. 265.

[162] Մանրամասն տե՛ս انطون سعاده،في اوضاع سورية (1921-1949)،بيروت، ١٩٩٢

[163] E. Abouchdid, 30 Years of Lebanon and Syria, Beirut, 1948, p. 80.

[164] «Ազդակ», Բեյրութ, 27.06.1962:

ահաբեկչական քաղաքականությանը, դիմում էր սպառնալիքների և սպանությունների (այս կուսակցության անդամներից մեկը 1951թ. սպանեց Լիբանանի վարչապետ Ռիադ Ալ-Սոլհին)[165]:

Փաստենք, որ 1975թ. Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմի տարիներին «Սիրիական ազգային սոցիալական» կուսակցությունը հանդես էր գալիս «Ազգային ճակատում», ուր համախմբվել էին լիբանանյան ձախ ուժերը: Այս հանգամանքը կապված էր կուսակցության ղեկավարության շարքերում հայացքների և տրամադրությունների փոփոխման, ինչպես նաև լիբանանյան աջ ուժերի՝ հիմնականում «Քաթաիբ» և «Ազգային լիբերալ» կուսակցությունների ղեկավարների հետ որոշակի տարաձայնությունների առկայությամբ:

Ոչ միայն վերոնշյալ կուսակցությանը, այլ նաև լիբանանյան քաղաքական կուսակցությունների ու խմբավորումների զգալի մասին բնորոշ էր այն, որ քաղաքական որոշակի զարգացումներից կախված նրանք կարող էր հայտնվել ցանկացած դաշինքում՝ համագործակցելով նույնիսկ հակադիր ճամբարի ուժերի հետ:

Լիբանանյան ձախ ուժերի շարքում առաջնային դեր էր խաղում Լիբանանի «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցությունը՝ (արաբերեն՝ «Հիզբ ալ-թակադդումի ալ-իշթիրաքի»): Այն 1948թ. հիմնադրեց Քամալ Ջումբլաթը: Այս կուսակցությունը մանր բուրժուական սոցիալիստական կուսակցություն էր:

Կուսակցությունը հիմնականում կազմված էր դրուզներից: Հետագայում կուսակցությունը հրաժարվեց կրոնադավանական սկզբունքից և նրա կազմը համալրվեց այլ կրոնական համայնքների անդամներով[166]: Կուսակցության տպագրական մարմինը «Ալ-անբա» թերթն է: 1968-72թթ. Լիբանանի խորհրդարանում «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցությունն ուներ 7 պատգամավորական տեղ: Ներքաղաքական ասպարեզում այն հանդես էր գալիս երկրի տնտեսության մեջ պետության դերի ուժեղացման կոչերով: Պահանջում էր արդյունաբերական կարևոր որոշ ճյուղերի ազգայ-

---

[165] Е. Мельников, նշվ. աշխ., էջ 45:

[166] K. Joumblatt, Democratic Nouvelle, Beyrouth, 1987, p. 10.

նացում: Կտրուկ դեմ էր կրոնադավանական համակարգի պահպանմանը: Հանդես էր գալիս այդ համակարգի վերացման օգտին:

Արտաքին քաղաքականության ասպարեզում պաշտպանում էր Լիբանանի դրական չեզոքության պահպանումը և արաբական երկրների հետ համագործակցության ամրապնդումը: Այն ուներ մոտ 10.000 անդամ: Կուսակցություն առավել ազդեցիկ դիրքեր ուներ Բեքաայում, Լեռնային և Հարավային Լիբանանում: Կուսակցության կարգախոսն էր «Ազատություն, սոցիալիզմ, արաբիզմ»: Կուսակցությունը պահանջում էր երկրի նախագահի իշխանության սահմանափակում, երկրի հասարակական-քաղաքական կյանքում բանակի դերի նվազեցում և մի շարք տնտեսական ու սոցիալական բարեփոխումների իրականացում: Այն կտրականապես մերժում էր որևէ արևմտյան միջամտություն Լիբանանի ներքին գործերին: Կուսակցության ղեկավարների (հատկապես Քամալ Ջումբլաթի) կարծիքի հետ ստիպված էին հաշվի նստել ինչպես կառավարության անդամները, այնպես էլ ազդեցիկ քաղաքական կուսակցությունների ղեկավարները: 1968-1972թթ. կուսակցությունը խորհրդարանում ներկայացված էր 12 պատգամավորներով: 1977թ. մարտին Քամալ Ջումբլաթի սպանությունից հետո կուսակցության ղեկավարությունը ստանձնեց նրա որդին՝ Վալիդ Ջումբլաթը:

Լիբանանյան ձախ ուժերի հաջորդ անդամը «Լիբանանի կոմունիստական» կուսակցությունն էր, որը կազմավորվեց 1924թ.: Այդ թվականից Լիբանանի կոմկուսն աշխատանքներ էր տանում աշխատավորական լայն շրջանակների շրջանում, կազմակերպում թերթերի և թռուցիկների հրատարակում և այլն: Լիբանանի կոմկուսի շարքերը սկսեցին ընդլայնվել հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1943թ. սկսած: Կոմկուսն իր կազմակերպություններն ուներ Բեյրութում, Տրիպոլիում, Զահլեյում, Ակկարում, Ջեբել Դրուզում, Բեքաայում և այլ վայրերում:

Կուսակցության շարքերում համախմբվել էին ինչպես քրիստոնյաներ, այդ թվում նաև հայեր[167], որոնք զգալի դերակատարություն

---

[167] «Լիբանանի կոմունիստական» կուսակցությունում հայերի դերակատարության մասին մանրամասն տե՛ս Г. Косач, Красный флаг над Ближним Востоком?, М., 2001, сс. 309-322.

են ունեցել «Լիբանանի կոմունիստական» կուսակցության կայացման գործում, այնպես էլ իսլամադավաններ: Մինչև 1943թ. «Լիբանանի կոմունիստական» կուսակցությունը միավորված էր «Սիրիայի կոմունիստական» կուսակցության հետ և կոչվում էր «Սիրիայի և Լիբանանի կոմունիստական» կուսակցություն[168]: 1943թ. հունվարի 2-ին կազմավորվեցին Լիբանանի և Սիրիայի առանձին կոմունիստական կուսակցությունները: Յուրաքանչյուրն ուներ իր կենտրոնական կոմիտեն և ղեկավար այլ մարմինները: 1948թ. Սիրիայի և Լիբանանի կոմկուսները նորից միավորվեցին, իսկ 1958թ.՝ Սիրիայի և Եգիպտոսի միավորումից և Արաբական Միացյալ Հանրապետության (ԱՄՀ) կազմավորումից հետո, Լիբանանի կոմկուսը վերջնականապես առանձնացավ: Լիբանանի կոմկուսի գործունեությունը պաշտոնապես օրինականացվեց միայն 1970թ.[169]:

Արտաքին քաղաքական ոլորտում Լիբանանի կոմկուսը հանդես էր գալիս չեզոքության քաղաքականության, արաբական աշխարհի հետ սերտ համագործակցության օգտին:

1965թ. Լիբանանում ստեղծվեց կուսակցությունների, կազմակերպությունների, անհատների ազգային կոնգրես, որի կազմի մեջ մտան «Լիբանանի կոմունիստական» կուսակցությունը, «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցությունը, «Արաբական վերածննդի Բաաս» կուսակցության լիբանանյան մասնաճյուղը, «Լիբանանյան նասերականները», սուննիական «Մուրաբիտուն» կազմակերպությունը, և այլն: 1966թ. ապրիլին կազմավորվեց լիբանանյան ձախ ուժերի ճակատը, որի մեջ միավորվեցին վերը նշված բոլոր կուսակցությունները, իսկ ճակատը գլխավորեց «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցության ղեկավար Քամալ Ջումբլաթը[170]: Այս ճակատի մեջ մտնող նասերականների ամենաազդեցիկ կազմակերպություններից էր Ֆարուք Ալ-Մուկադամի ղեկավարած «Հոկտեմբերի 24-ի» շարժումը (արաբերեն՝ «Հարաքաթ արբաա ուա

---

[168] С. Иванов, Межарабская политика Сирии, том I, 1986, с. 85.

[169] E. Rabbath, La Formation Historique du Liban Politique et Constitutionnel, Beyrouth, 1986, p. 402.

[170] كمال ألصليبي،تاريخ لبنان ألحديث،بيروت، ١٩٧٢،ص ٢٢٥.

իշրին թիշրին»), որը գործում էր հիմնականում Տրիպոլի քաղաքում: Այս շարժումն իր անվանումը ստացել էր 1969թ. հոկտեմբերի դեպքերից հետո, երբ Լիբանանում արյունալի բախումներ տեղի ունեցան լիբանանյան բանակի և պաղեստինյան խմբավորումների միջև: Նասերական հաջորդ ազդեցիկ շարժումը Իբրահիմ Քուլայլաթի ղեկավարած «Անկախ նասերականների» (արաբերեն՝ «Հարաքաթ ան-նասիրիին ալ-մուսթակիլիին») շարժումն էր, որն ակտիվ գործունեություն էր ծավալում հիմնականում Բեյրութում[171]:

Կիսառազմական, երիտասարդական մանրբուրժուական կուսակցություն էր «Նաջադեն», որը ներկայացնում էր միայն իսլամադավան երիտասարդությանը: Այն ստեղծվեց 1934թ.՝ ի հակակշիռ լիբանանյան փաղանգավորների: Այս կուսակցության անդամները կոչվում էին նաև իսլամադավան սկաուտներ: «Նաջադե» և «Լիբանանյան փաղանգներ» կուսակցությունների միջև գոյություն ուներ ուժեղ ատելություն ու պայքար: Եթե փաղանգավորները կողմնակից էին արևմտյան պետությունների հետ Լիբանանի սերտ դաշինքին և Արևմուտքի ազդեցության հիմնական ջատագովներն էին, ապա «Նաջադեն» բացահայտորեն դեմ էր հանդես գալիս փաղանգավորների քաղաքական հայացքներին և, ընդհակառակը, կողմնակից էր Լիբանանի մերձեցմանն արաբական աշխարհի հետ: «Նաջադեն» վստահորեն հավատում էր արաբական երկրների քաղաքական ու տնտեսական բացարձակ միասնությանը[172]:

Արտացոլելով Լիբանանի իսլամադավան բնակչության տրամադրությունները՝ կուսակցությունը պահանջում էր 1943թ. «Ազգային դաշինքի» վերացում կամ նրանում որոշակի փոփոխությունների իրականացում և երկրի իսլամադավանների ավելի լայն մասնակցություն երկրի պետական կառավարական մարմիններում:

«Արաբական ազգայնականների շարժում» կուսակցությունը ձևավորել էին արաբական միասնության և սոցիալ-տնտեսական վերափոխումների կողմնակիցները: Այս արաբական ազգայնական քաղաքական շարժումը Լիբանանում կազմավորվել էր 1950թ.: Կուսակցության

---

[171] A Al-Azmeh, The Progressive Forces, Essays on the Crisis in Lebanon, London, 1976, p. 71.

[172] F. Qubain, Crisis in Lebanon, Washington, 1961, p. 165.

կարգախոսն էր «Մարքսիզմի համատեղում արաբական ազգայնական գաղափարախոսության հետ»: Կուսակցությունը հիմնականում մեծ թվով համախոհներ ուներ համալսարանական շրջանակներում՝ Սիդոնում, Սուրում (Տիր կամ Տյուրոս), Տրիպոլիում: Հիմնական անդամները պալեստինցի ուսանողներ և մտավորականներ էին:

«Արաբական սոցիալիստական վերածննդի Բաաս» կուսակցության լիբանանյան մասնաճյուղը, որը ստեղծվեց 1956թ., իր շարքերում համախմբել էր ինչպես իսլամադավանների, այնպես էլ քրիստոնյաների: Կուսակցությունն ուներ շուրջ 7000 անդամ, որոնց մեծ մասը տրիպոլցիներ էին[173]:

1966թ. հոկտեմբերին կազմավորվեց «Ազգային գործողության շարժում» կուսակցությունը, որը հանդես էր գալիս սահմանադրական բարեփոխումների իրականացման և ընտրական օրենքի փոփոխման պահանջներով, «ինչը կնպաստեր երկրի խորհրդարանում տարբեր կրոնական համայնքների արդարացի ներկայացուցչության ապահովմանը»[174]:

Լիբանանում կրոնադավանական հիմքի վրա էր հիմնված նաև «Ազգային միասնություն» կուսակցությունը, որը կազմավորվեց 1951թ.: Այն արտահայտում էր հիմնականում սուննիների շահերը և կազմված էր հենց այդ համայնքի ներկայացուցիչներից: Միավորում էր շուրջ հազար մարդ, որոնք ներկայացնում էին սուննի համայնքը: Կուսակցության անդամները նախկին և ապագա վարչապետներ էին: Այս կուսակցությունը հանդես է գալիս սահմանադրական փոփոխություններ իրականացնելու առաջարկություններով: Կուսակցությունն իր դժգոհությունն էր հայտնում այն փաստի նկատմամբ, որ նախագահի պաշտոնը մշտապես զբաղեցնում է քրիստոնյա մարոնի համայնքի ներկայացուցիչը, իսկ երկրի վարչապետը, որը սուննի է, չէր օգտվում իրական իշխանությունից: Կուսակցության անդամները մշտապես ձգտում էին, որ երկրի վարչապետը լիներ ազդեցիկ բեյրութցի սուննի ղեկավար[175]:

---

[173] A. Al-Azmeh, The Progressive Forces, Essays on the Crisis in Lebanon, London, Ithaca Press, 1976, p. 65.
[174] Նույն տեղում:
[175] F. Qubain, նշվ. աշխ., էջ 164:

Լիբանանում քաղաքական կուսակցությունների կողքին գոյություն ունեին նաև բավական կայուն քաղաքական խմբեր, որոնք համախմբվում էին առանձին ղեկավարների շուրջ: Այսպես, օրինակ՝ 1966թ. երկրում ստեղծվեց «Դեմոկրատական խորհրդարանական ճակատ» խմբավորումը, որը ղեկավարում էր այն ժամանակ երկրի վարչապետ Ռաշիդ Քարամեն: Այս խմբավորման մեջ, որը «Շիհաբական ճակատի»[176] հիմնական օղակն էր, 1968թ. խորհրդարանական ընտրություններից հետո համախմբվել էր 27 պատգամավոր: Հետագայում այս խումբն անվանվեց «Լիբանանյան դեմոկրատական միություն»:

1972թ. խորհրդարանական ընտրություններից առաջ «Լիբանանի դեմոկրատական միությունը» պառակտվեց և խորհրդարանում պահպանվեց Ռաշիդ Քարամեի գլխավորած խումբը՝ 7 պատգամավորներով: Մի շարք հարցերում այս խմբի հետ համագործակցում էին նաև ազդեցիկ իսլամադավան ղեկավարներ Համադեի և Արսլանի խմբավորումները՝ 10 պատգամավորով, ինչպես նաև մի շարք անկախ պատգամավորներ[177]:

Լիբանանի հասարակական–քաղաքական կյանքում զգալի դեր էր խաղում «Կենտրոնամետ դաշինք» խմբավորումը, որը ղեկավարում էր պահպանողական իսլամադավան շրջանակները ներկայացնող Սաիբ Սալամը: Հարավային Լիբանանի իսլամադավան պատգամավորների խումբը, որը ղեկավարում էր խոշոր հողատեր և լիբանանյան խորհրդարանի նախագահ, շիական համայնքը ներկայացնող Քամալ Ասադը և մի շարք այլ խմբավորումներ, համակայացնող Քամալ Ասադը և մի շարք այլ խմբավորումներ, համագործակցում էին «Կենտրոնամետ դաշինքի» հետ: Ընդհանուր առմամբ՝ կենտրոնամետ խմբավորումներում ընդգրկված էր մոտ 30 լիբանանցի պատգամավոր[178]:

---

[176] Այս մասին մանրամասն տե՛ս III գլխի II ենթաբաժնում:
[177] A. Al-Azmeh, The Progressive Forces, Essays on the Crisis in Lebanon, p. 62.
[178] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1958-1967ԹԹ.)

1. Քաղաքական իրադրությունը 1958թ. քաղաքացիական պատերազմից հետո

1943թ. անկախության ձեռբերումից հետո Լիբանանի զարգացումը չունեցավ խաղաղ ընթացք: Լիբանանյան հասարակությունը, այնուամենայնիվ, բախվում էր լուրջ քաղաքական, սոցիալ-տնտեսական խնդիրների հետ, որոնք այդպես էլ վերջնական լուծում չէին ստանում: Դրան գումարվում էր նաև այն հանգամանքը, որ արտաքին հարաբերություններում Լիբանանի կառավարությունը մեծ մասամբ վարում էր արևմտամետ քաղաքականություն, որն առաջացնում էր լիբանանյան հասարակության որոշ շրջանակների դժգոհությունը: Ուստի 1946-1958թթ. Լիբանանի պատմությանը բնորոշ էին ներքաղաքական սուր պայքարն ու քաղաքական ընդհանուր անկայուն վիճակը: Այդպիսի ժառանգությամբ Լիբանանը 1958թ. կանգնեց առաջին քաղաքացիական պատերազմի շեմին:

Դրանում իր դերն ունեցան 1953-1954թթ. Եգիպտոսում ծավալվող չափազանց կարևոր իրադարձությունները: Եգիպտոսի փաստացի ղեկավար Գամալ Աբդ Ալ-Նասերը և նրա արաբական ազգայնականության գաղափարները մեծ ժողովրդականություն էին վայելում Լիբանանի իսլամադավանների շրջանում: Վերջիններս գնալով ավելի էին համոզվում, որ երկրի նախագահ Շամունի (1952-1958թթ.) քաղաքականության նպատակն է նվազեցնել իսլամադավանների դերը լիբանանյան պետության կառավարման գործում: Այս հանգամանքն արտացոլվեց 1953թ. անգլերեն լույս տեսած «Ի-

լամադավան Լիբանանն այսօր» գրքույկում, որտեղ իսլամադավանները ներկայացված էին իբրև կեղեքված մեծամասնություն[179]:

1954թ. հետո լիբանանյան իսլամադավան շրջանակներում, հատկապես սուննի[180] համայնքի ներսում, ավելի ակներև էր դառնում նասերականության ազդեցությունը: Հանճին Նասերի՝ նրանք տեսնում էին այն առաջնորդին, ով կարող էր միավորել արաբական աշխարհը և պաշտպանել Լիբանանում մահմեդականների իրավունքները[181]: Այդ պատճառով էլ որոշ լիբանանյան իսլամադավան ղեկավարներ սկսեցին ամրապնդել իրենց կապերը Եգիպտոսի և նրա նախագահի հետ՝ հույս ունենալով, որ այդ հանգամանքը կօգնի նրանց պահպանել իրենց դիրքերը Լիբանանի քաղաքական կյանքում: 1956թ. հուլիսին՝ Նասերի կողմից Սուեզի ջրանցքի ազգայնացումից հետո, սուննի ազդեցիկ ղեկավարներ Աբդալլահ Յաֆին, Սաիբ Սալամը և Ռաշիդ Քարամեն իրենց աջակցությունը հայտնեցին Նասերի գործողություններին[182]:

Իսլամական քաղաքական շրջանակներում, սակայն, կային նաև ղեկավարներ, որոնք սուննի ղեկավար Սամի Ալ-Սոլհի գլխավորությամբ, սերտորեն համագործակցում էին Լիբանանի նախագահ Շամունի հետ և իրենց հեռու էին պահում Եգիպտոսի և նրա նախագահի հետ կապերի մերձեցումից:

1956թ. նոյեմբերին, երբ սկսվեց Սուեզի ճգնաժամն Աբդալլահ Յաֆին զբաղեցնում էր երկրի վարչապետի պաշտոնը, իսկ Սաիբ Սալամը նախարար էր: Այս երկու մահմեդական ղեկավարները նախագահ Շամունից պահանջեցին խզել դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ, որոնք Սուեզի ճգնաժամի ընթացքում աջակցում էին Իսրայելին[183]: Սակայն Լիբանանի քրիստոնյաների համար այդպիսի քաղաքականություն անընդու-

---

[179] К. Салиби, Очерки по истории Ливана, М., 1969, с. 284.

[180] Սուննիականությունն իսլամի երկու հիմնական ուղղություններից մեկն է: Սուննիների պատկերացմամբ իրենք են Մուհամմադ մարգարեի ուսմունքի և թողած ավանդությունների անաղարտ հետևորդները՝ շիաներին համարելով մարգարեի ուսմունքի խեղաթյուրողներ:

[181] Նույն տեղում:

[182] S. Mackey, Lebanon: Death of a Nation, New York, 1991, p. 122.

[183] Middle East and North Africa 1968-1969, London, 1969, p. 423.

նելի էր և Շամունն անմիջապես մերժեց այդ առաջարկը: Յաֆին և Սալամն, ի նշան բողոքի, հրաժարական տվեցին: Սակայն Շամունն առանց լուրջ դժվարությունների հաջողեցրեց նոր կառավարության ձևավորումը, որում սուննի իր գլխավոր դաշնակից Սամի Ալ-Սոլհը զբաղեցրեց վարչապետի, գեներալ Ֆուադ Շիհաբը՝ պաշտպանության նախարարի, իսկ Շարլ Մալեքն՝ արտաքին գործերի նախարարի պաշտոնը[184]:

Շարլ Մալեքի նոր կառավարության կազմում ընդգրկումը լուրջ քաղաքական քայլ էր: Նա երկար տարիներ եղել էր Վաշինգտոնում Լիբանանի դեսպանն ու ՄԱԿ-ում երկրի ներկայացուցիչը և հայտնի էր իր արևմտամետ կողմնորոշմամբ[185]: Մալեքի՝ արտաքին գործերի նախարարի պաշտոնում նշանակումը խորհրդանշում էր այն քաղաքականությունը, որին հակված էր հետևել Քամիլ Շամունը: Լիբանանի նախագահի կարծիքով՝ եգիպտամետ քարոզչությունը, որ իրականացվում էր տարբեր արաբական պետություններում, սպառնում էր Լիբանանի անկախությանը: Իր երկիրը եգիպտական ազդեցությունից «պաշտպանելու» նպատակով Լիբանանի նախագահը ցանկանում էր երաշխիքներ ստանալ արևմտյան պետություններից՝ մանավորապես ԱՄՆ-ից[186]: Բնական էր, որ լիբանանյան հասարակության որոշ շրջանակներ չէին կարող համաձայնել այդպիսի քաղաքականության հետ: Սակայն 1957թ. մարտին, հակառակ երկրում առկա ընդդիմությանը, լիբանանյան կառավարությունն, այնուամենայնիվ, ընդունեց «Էյզենհաուերի դոկտրինան»[187]:

---

[184] К. Салиби, նշվ. աշխ., էջ 284:

[185] G. Naccache, Un Rêve Libanais 1943-1972, Paris, 1983, p. 171.

[186] T. Petran, The Struggle over Lebanon, New York, 1987, p. 48.

[187] Սուեզի ճգնաժամից հետո օգտվելով Մերձավոր Արևելքում Անգլիայի և Ֆրանսիայի դիրքերի թուլացումից ԱՄՆ-ն առաջ քաշեց «վակուումի» և «կոմունիստական սպառնալիքի» տեսությունը, որի համաձայն՝ տարածաշրջանում առաջացել էր ազատ տարածք, և նոր անկախացած երկրների գոյությանը սպառնում էին ԽՍՀՄ-ն ու «միջազգային կոմունիզմը»: 1957թ. հունվարի 5-ին ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը հանդես եկավ ուղերձով, որտեղ շարադրված էին Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի քաղաքական հիմնական նպատակները: 1957թ. մարտի 5-ին և 7-ին ԱՄՆ-ի կոնգրեսը վերոնշյալ ուղերձի հիման վրա ընդունեց մի բանաձև, որը մարտի 9-ին

Այս փաստը Եգիպտոսն ընկալեց իբրև մարտահրավեր: Արդեն 1957թ. գարնանը սրվեցին հարաբերությունները Շամունի կառավարության և Եգիպտոսի միջև: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ Շամունը, թեև չմիացավ «Բաղդադի դաշինքին»[188], սակայն սերտ հարաբերությունների մեջ էր Իրաքի հետ, որը 1955թ. սկսած

ստորագրեց նախագահը: Բանաձևը, որ կոչվում էր «Միջին Արևելքի դրության մասին», հայտնի է «Էյզենհաուերի դոկտրինա» անվամբ: Կոնգրեսի բանաձևը նախագահին իրավունք էր տալիս, ըստ իր հայեցողության, ԱՄՆ-ի ռազմական ուժերն օգտագործել այս կամ այն երկրի «անկախությունն ու տարածքային ամբողջականությունն ապահովելու» համար: Կոնգրեսը հատկացրեց նաև 200 մլն դոլար՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին ռազմական և տնտեսական օգնություն ցույց տալու նպատակով: Մանրամասն տե՛ս D. Hiro, The Essential Middle East: A Comprehensive Guide, New York, 2003, p. 131, А. Кунина, Доктрина Эйзенхауэра, М., 1957, с. 47, История дипломатии, Том V, Книга I, М., 1974, с. 562-563, О. Туганова, Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1960, с. 97, А. Саид, Восстания арабов в XX веке, М., 1964, J. Banerji, The Middle East in World Politics, Calcuta, 1960, p. 307, J. Marlowe, Arab Nationalism and British Imperialism, London, 1961, p. 148.

[188] 1955թ. փետրվարին Բաղդադում ստորագրվեց իրաքաթուրքական ռազմական պայմանագիրը, որը և դարձավ «Բաղդադի դաշինք» կոչված ռազմական խմբավորման հիմքը: Նույն թվականին դաշինքին միացան նաև Պակիստանը, Իրանն ու Մեծ Բրիտանիան: «Կոմունիստական ագրեսիայի պայմաններում» դաշինքը երաշխավորում էր անդամ երկրներին ռազմական օժանդակության տրամադրումը: Հորդանանին, Լիբանանին և Սիրիային «Բաղդադի դաշինքի» մեջ ներքաշելու Արևմուտքի ճնշումներն այդ երկրներում առաջ բերեցին հասարակության լայն շերտերի շրջանում արաբական ազգայնական զգացմունքների սրում: 1958թ. հուլիսի 14-ին Իրաքում հակամիապետական հեղափոխության հետևանքով հանրապետության հռչակումից հետո, այդ երկիրը դուրս եկավ Բաղդադի դաշինքից: Մանրամասն տե՛ս J. Campbell, Defense of the Middle East. Problems of American Policy, New York, 1958, p. 50, Ю. Маргунов, Ю. Потемкин, Арабо-турецкие отношения на современном этапе, 1946-1960, М., 1961, с. 40., Э. Пир-Будагова, Сирия в борьбе за упрочение национальной независимости (1945-1966), М., 1978, с.76-84, Политика Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1966, с. 203-213, А. Федченко, Ирак в борьбе за независимость (1917-1969), М., 1970, с. 178-190.

ամդամակցում էր այդ դաշինքին և արաբական երկրների շարքում Եգիպտոսի գլխավոր մրցակիցն էր:

Լիբանանի «Էյզենհաուերի դոկտրինային» միանալուց հետո ծայրահեղորեն սրվեցին լիբանանաեգիպտական հարաբերությունները:

1957թ. հունիսին Լիբանանում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Այդ ընտրությունների նախօրեին Շամունին ընդդիմադիր ուժերը համախմբվեցին «Ազգային ճակատում», որի մեջ մտնում էին «Առաջադիմական սոցիալիստական», «Նաջադե», «Արաբական սոցիալիստական վերածննդի Բաաս» կուսակցության լիբանանյան մասնաճյուղը, «Ազգային կոչ» (որում համախմբվել էին արաբ ազգայնականներ), «Սահմանադրական դաշինք» (որում համագործակցում էին Բիշարա Ալ-Խուրիի մարոնի հետևորդները) կուսակցությունները: Առանձին ընդդիմադիր խումբ կազմավորվեց Տրիպոլիում, որը ղեկավարում էր Ռաշիդ Քարամեն: Այդ խումբը չէր մտնում «Ազգային ճակատի» մեջ, թեև պաշտպանում էր նրա ծրագիրը[189]:

Խորհրդարանական ընտրություններում «Ազգային ճակատին» և նրա հետ համագործակցող ուժերին ընդդիմանում էին Լիբանանի արևմտամետ ուժերը, որոնք պաշտպանում էին Քամիլ Շամունի քաղաքականությունը: Դրանք «Լիբանանյան փաղանգներ» (արաբերեն՝ «Հիզբ ալ-քաթաիբ ալ-լուբնանի»), «Սիրիական ազգային սոցիալական» և «ՀՅԴ» կուսակցություններն էին[190]:

1957թ. ամռանը կայացած խորհրդարանական ընտրություններում Շամունի կողմակիցները հաղթանակ տարան՝ խորհրդարանում ստանալով ձայների մեծամասնություն: Ընտրություններում պարտություն կրեցին այնպիսի ընդդիմադիր քաղաքական գործիչներ, ինչպիսիք էին Քամալ Ջումբլաթը, Աբդալլահ Յաֆին, Սաիբ Սալամը և շիա ղեկավար Ահմադ Ալ-Սաղրը[191]: Շամունին, որը մտադրություն ուներ երկրորդ անգամ վերընտրվել նախագահի

---

[189] F. Qubain, Crisis in Lebanon, Washington, 1961, p. 50.

[190] L. Meo, Lebanon Improbable Nation, Indiana University Press, 1965, pp. 169-170.

[191] K. Salibi, The Modern History of Lebanon, London, 1965, p. 200.

պաշտոնում, անմիջապես մեղադրեցին ընտրությունները կեղծելու մեջ: Մտավախություններ կային, որ նոր խորհրդարանը շտապելու էր փոփոխություն իրականացնել սահմանադրության մեջ, ինչը հնարավորություն կտար Շամունին վերընտրվել նախագահի պաշտոնում[192]:

Խորհրդարանական ընտրություններում պարտություն կրելուց հետո «Ազգային ճակատը» ելույթներ կազմակերպեց Լիբանանի մի շարք շրջաններում: Շուֆում և Բեյրութում Քամալ Ջումբլաթի համախոհները կազմակերպեցին մի քանի պայթյուններ: Այս ամենի հետևանքով Լիբանանում ստեղծվել էր անկայուն վիճակ: Սակայն երկրի կառավարությունը որևէ կերպ չէր արձագանքում այդ դեպքերին, իսկ արտաքին քաղաքականության ասպարեզում «քաղաքավարի» հարաբերություններ էր պաշտպանում Եգիպտոսի և Սիրիայի հետ[193]: 1958թ. փետրվարի 22-ին, երբ Եգիպտոսն ու Սիրիան միավորվեցին Արաբական Միացյալ Հանրապետության կազմում[194], Լիբանանի կառավարությունը շնորհավորեց Նասերին այդ կապակցությամբ:

Սակայն ԱՄՀ-ի կազմավորման արդյունքում Լիբանանում ներքին իրավիճակն էլ ավելի բարդացավ: Ահաբեկչական որոշ գործողություններին զուգահեռ՝ երկրում ավելի հաճախակի էին դառնում ցույցերն ու հուզումները, որոնք տեղի էին ունենում Նասերի արաբական ազգայնական գաղափարների կարգախոսերով: Այդ դժգոհությունները հաճախ շատ բուռն ընթացք էին ստանում: Յուցարար իսլամադավանները պահանջում էին Լիբանանի միացում ԱՄՀ-ին[195]:

1958թ. սկսված քաղաքացիական պատերազմն ուներ նաև ներքին պատճառներ, որոնք հիմնականում կապված էին Շամունի վարած ներքին քաղաքականության արդյունքում միջհամայնքա-

---

[192] E. Rabbath, La Formation Historique du Liban Politique et Constitutionnel, Beyrouth, 1986, p. 565.
[193] K. Salibi, The Modern History of Lebanon, p. 201.
[194] ԱՄՀ-ի կազմավորման հոչակագիրը տե՛ս Объединенная Арабская республика (справочник), М., 1968, с. 128.
[195] S. Mackey, Lebanon: Death of the Nation, p. 123.

յին հարաբերություններում լարվածության ուժեղացման ու երկրի սահմանադրության մեջ փոփոխություն կատարելու և երկրորդ անգամ նախագահի պաշտոնում վերընտրվելու նրա մտադրության հետ[196]:

Քամիլ Շամունին ընդդիմադիր ուժերը միատարր չէին: Երկրում առաջացել էին մի քանի տարբեր խմբավորումներ: Նախ, ինչպես արդեն նշել ենք, կազմավորվեց ընդդիմադիր «Ազգային ճակատը» և նրա հետ սերտորեն համագործակցող Ռաշիդ Քարամեի խմբավորումը: Հաջորդ ընդդիմադիր խումբը «Քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների և անձնավորությունների» համագումարն էր, որը ղեկավարում էր Լիբանանի նախկին վարչապետ Հուսեյն Վեյնին:

Վերջին ընդդիմադիր խումբը «Երրորդ ուժն» էր, որում համախմբվել էին Լիբանանի ազդեցիկ քաղաքական մի շարք գործիչներ Հանրի Ֆարաոնը, Գաբրիել Մուրը, Ժորժ Նակկաշը, Յուսուֆ Սալեմը, Հասան Թուեյնին, Շարլ Հելուն, Յուսուֆ Հիթթին և ուրիշներ: Այս խումբն արտահայտում էր բուրժուազիայի այն շրջանակների շահերն ու քաղաքական տրամադրությունները, որոնք սկզբունքորեն դեմ չէին Արևմուտքի հետ Լիբանանի մերձեցմանը, սակայն դեմ էին Շամունի կառավարության վարած ոչ ճկուն ներքին քաղաքականությանը, ինչի արդյունքում Լիբանանում սրվել էին միջհամայնքային հակասությունները[197]:

Երկրում առանց այն էլ բարդ իրավիճակն ավելի սրվեց, երբ ընդդիմադիր ուժերի մտավախությունը հաստատվեց և հայտնի դարձավ, որ Քամիլ Շամունն, այնուամենայնիվ, պատրաստվում էր փոփոխություն կատարել երկրի սահմանադրության մեջ՝ երկրորդ անգամ նախագահի ընտրվելու իրավունք ձեռքբերելու նպատակով:

Քամիլ Շամունի սահմանադրության մեջ փոփոխություն մտցնելու դեմ հանդես եկան ընդդիմադիր բոլոր ուժերն, ինչպես նաև լիբանանյան երկու կարևոր համայնքերի՝ քրիստոնյա մարոնիների և իս-

---

[196]Լիբանանի սահմանադրությունն արգելում էր նախագահի անընդմեջ ընտրությունները երկու ժամանակաշրջանի համար:

[197] L. Meo, Lebanon Improbable Nation, Indiana University Press, 1965, pp. 165-188.

լամադավան սուննիների հոգևոր առաջնորդները՝ պատրիարք Մեուշին և Լիբանանի մուֆթի՝ շեյխ Մուհամմադ Ալայան[198]:

Քանի որ մայիսին տեղի էր ունենալու խորհրդարանի նիստը, որտեղ քննարկվելու էր Շամունի վերընտրման հարցը, ընդդիմությունն անցավ կտրուկ գործողությունների:

1958թ. մայիսի 7-ին Շամունի կողմակիցները սպանեցին «Ալ-թելեգրաֆ» թերթի խմբագիր և տնօրեն, Լիբանանի հասարակական և ազգային ականավոր գործիչ Նասիբ Մեթնին, որը բազմիցս քննադատում էր Շամունի վարչակարգը և նրա վարած բացահայտ արևմտամետ քաղաքականությունը[199]: Մեթնիի սպանությունն էլ ավելի համախմբեց երկրի ընդդիմադիր ուժերին: Նրա հուղարկավորությունը, որը տեղի ունեցավ 1958թ. մայիսի 9-ին, վերածեց քաղաքական ելույթի, որին մասնակցում էր ավելի քան 50.000 մարդ[200]:

Մայիսի 9-ին Լիբանանի «Ազգային ճակատն» ամբողջ երկրով մեկ հայտարարեց ընդհանուր գործադուլ՝ պահանջելով Քամիլ Շամունի անհապաղ հրաժարականը[201]: Երկրում բռնկվեց ապստամբություն:

Նույն օրը Տրիպոլիում մոտ 1.500 մարդ իշխանությունների դեմ կազմակերպեց բողոքի ցույց: Ցույցերը ճնշելու նպատակով Շամունն օգտագործեց երկրի անվտանգության ուժերը: Տեղի ունեցան բախումներ, որոնց ընթացքում վիրավորվեց մոտ 40 մարդ: Տրիպոլիում ապստամբությունը ղեկավորում էր Ռաշիդ Քարամեն, որի նախաձեռնությամբ ստեղծվեց 8 հոգուց բաղկացած կենտրոնական հրամանատարություն: Տրիպոլիում, իսկ հետագայում նաև Լիբանանի այլ շրջաններում, որոնք անցնում էին ապստամբների վե-

---

198 E. Rabbath, La Formation Historique du Liban Politique et Constitutionnel, Beyrouth, 1986, p. 565.

199 Справка отдела стран Ближнего Востока МИД СССР о положении в Ливане, 14.06.1958, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 206.

200 А. Саид, Восстания арабов в XX в., М., 1964, с. 165.

201 Справка отдела стран Ближнего Востока МИД СССР о положении в Ливане, 14.06.1958, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 206.

ռահսկողության ներքո, ստեղծվում էին նոր կառավարական և պետական մարմիններ[202]:

Քամիլ Շամունի կողմնակիցները հիմնականում փաղանգավորներն էին, «Սիրիական ազգային սոցիալական» կուսակցությունն ու դաշնակցականները՝ իրենց միլիսներով, ինչպես նաև երկրի ժանդարմերիան և ոստիկանությունը:

Տրիպոլիում ապստամբությունը ճնշելու նպատակով կառավորությունը ներգրավեց ռազմական ուժերի, այդ թվում՝ տանկեր և ինքնաթիռներ: Կառավարական զորքերը պաշարեցին Տրիպոլին և մայիսի 9-ից մինչև հունիսի սկիզբ մի քանի անգամ փորձեցին ապարդյուն մտնել քաղաք:

Մայիսի 12-ին հուզումներ սկսվեցին նաև Բեյրութում, որոնք այնուհետև վերածվեցին զինված ապստամբության: Մայրաքաղաքում այն գլխավորում էր Սաիբ Սալամը: Առաջին զինված բախումը բեյրութցի ապստամբների և կառավարական ուժերի միջև տեղի ունեցավ մայիսի 12-ին, որի ընթացքում զոհվեց 10 մարդ: Քաղաքում դաժան մարտեր տեղի ունեցան նաև մայիսի 16-ին, երբ ապստամբները հարձակվեցին Ռաս Բեյրութի և ժանդարմերիայի զորանոցների վրա: Ապստամբներին զգալի օգնություն էր ցույց տալիս Քամալ Ջումբլաթը, որը Շուֆից նրանց մատակարարում էր զենք և զինամթերք[203]:

Կառավարական ուժերի և Բեյրութի ապստամբների միջև կատաղի մարտեր ընթացան հունիսի 14-15-ին: Ապստամբները ոչ միայն կարողացան հետ մղել կառավարական ուժերի գրոհները (որոնք օգտագործեցին նաև տանկեր), այլ նաև անցան հակահարձակման, գնդակոծեցին նախագահական նստավայրը, Բեյրութի բանտերից մեկը և այլն: Վերոնշյալը նոր թափ հաղորդեց ապստամբների շարժմանը[204]:

Նույն օրը, երբ Բեյրութում սկսվեց ապստամբությունը, լիբանանյան սահմանային պահակակետերից մեկի վրա հարձակում

---

[202] Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. III, Երևան, 2006, էջ 620:
[203] F. Qubain, նշվ. աշխ., էջ 74:
[204] Նույն տեղում:

իրականացրին, ամենայն հավանականությամբ Սիրիայից սահմանն անցած զինված ջոկատներն, ինչի արդյունքում սպանվեցին 5 քրիստոնյա սահմանապահներ[205]: Լուրեր էին պտտվում, որ ապստամբները զենք և զինամթերք էին ստանում Սիրիայից:

Շուտով լիբանանյան կառավարությունը, փաստորեն, կորցրեց իր սահմանների վերահսկողությունը և ապստամբությունն ընդգրկեց երկրի այլ շրջանները՝ այդ թվում հիմնականում դրուզներով բնակեցված Շուֆի շրջանը: Այստեղ պայքարը գլխավորում էր Քամալ Ջումբլաթը: Նա կազմավորեց իր ռազմական ուժերը, արդարադատության և վարչական այլ մարմինները: Վերջինիս միլիսները Շուֆի շրջանում իրենց դիրքերն ամրապնդելուց հետո փորձեցին վերահսկողություն սահմանել Բեյրութի միջազգային օդանավակայանի նկատմամբ: Քամալ Ջումբլաթի մտադրությունը կանխելու նպատակով, կառավարական ուժերը, այդ թվում՝ 1.200 ոստիկաններ, 20 հրետանի, մեծ քանակությամբ զրահապատ մեքենաներ և տանկեր, որոնք պաշտպանում էին 6 ռազմական ինքնաթիռներ, անցան հարձակման: Հուլիսի 2-ից 4 օր մարտեր էին տեղի ունենում Այնաբ գյուղի շրջանում: Ի վերջո կառավարական ուժերին հաջողվեց ստիպել Ջումբլաթի զորքերին նահանջել: Այս մարտում կառավարական ուժերն ունեցան 300 սպանված և վիրավոր[206]:

Ապստամբությունն ընդգրկեց նաև Սուրը, Բաալբեքը, Զողրթան և երկրի այլ շրջանները: Ապստամբների թիվը Բեյրութում կազմում էր 600 մարդ, Հյուսիսային Լիբանանում՝ 2.300 (այդ թվում Տրիպոլիում՝ 1.500 մարդ), Շուֆում՝ 2.500 մարդ, Բաալբեքի շրջանում՝ 2.000 մարդ, Հարավային Լիբանանում՝ 300 մարդ: Հունիսի 12-ի տվյալներով՝ ապստամբների թիվն արդեն 15.000 էր[207]:

Լիբանանի բանակը գրավեց չեզոք դիրք և չմիացավ ինչպես ապստամբներին, այնպես էլ չպաշտպանեց Շամունին և նրա կողմնակիցներին: Բանակի հրամանատար գեներալ Ֆուադ Շիհաբը

---

[205] К. Салиби, Очерки по истории Ливана, с. 285.

[206] Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. III, էջ 622:

[207] Справка отдела стран Ближнего Востока МИД СССР о положении в Ливане, 14.06.1958, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 206.

հայտարարեց, որ բանակը կոչված է պաշտպանել Լիբանանն արտաքին հարձակումներից, իսկ ներկա ապստամբությունը ներքին քաղաքական վեճ է և բանակի խնդրի մեջ չի մտնում պաշտպանել կողմերից որևէ մեկին[208]:

Քամիլ Շամունը և նրա կողմնակիցներն օգնություն էին ստանում Արևմուտքից, մասնավորապես ԱՄՆ-ից: Մայիսի 24-ին Անգլիան Լիբանանին տրամադրեց 4 ռմբակոծիչ: Լիբանանում ԽՍՀՄ դեսպանատան տվյալներով՝ ապստամբության սկզբից մինչև հունիսի 6-ն ընկած ժամանակաշրջանում ԱՄՆ-ը Լիբանանին տրամադրել էր 20 տանկ, 300 գնդացիր և 2.000 հրաձիգ[209]: Այս կապակցությամբ ԱՄՆ-ի պետքարտուղարի ներկայացուցիչ Ջոզեֆ Ռիփը հայտարարեց, որ զենքի տրամադրումը և ընդհանրապես ամերիկա-լիբանանյան համագործակցությունը կատարվում էր «Էյզենհաուերի դոկտրինայի» շրջանակներում[210]:

ԱՄՀ-ն, իր հերթին, ապստամբներին զինամթերք էր մատակարարում լիբանանասիրիական սահմանով: Սիրիայից գաղտնի Լիբանան մտցվեցին քաղաքացիական հագուստով կամավորների մի քանի խմբեր: Լիբանանասիրիական սահմանային շրջանում ստեղծվեց հանձնախումբ, որ պետք է զենք և զինամթերք մատակարարեր լիբանանյան ապստամբներին[211]:

Բացի ամերիկյան ռազմական ու քաղաքական օգնությունից Շամունը և լիբանանյան կառավարությունն օգնություն էին ստանում նաև Իրաքից և Հորդանանից: Այդ երկրներում տեղի էր ունենում այսպես կոչված «կամավորների» հավաքագրում, որոնք այնուհետև ուղարկվում էին Լիբանան: Իրաքն ու Հորդանանը Շամունին օգնություն էին ցույց տալիս նաև զենքով և դրամով[212]:

---

[208] E. Lengyel, The Changing Middle East, New York, 1960, p. 191.

[209] Справка отдела стран Ближнего Востока МИД СССР о положении в Ливане, 14.06.1958, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 198-199.

[210] M. Hudson, The Precarious Republic: Political Modernization in Lebanon, New York, 1985, p. 299.

[211] Նույն տեղում:

[212] Политика США на Арабском Востоке, М., 1961, с. 187.

Չնայած արտաքին աջակցությանը՝ արդեն 1958թ. կեսերին ապստամբները վերահսկում էին երկրի տարածքի 2/3-ը, իսկ նրանց զինված ուժերի թիվը տարբեր տվյալներով 10-12.000 էր[213]:

Նախագահ Շամունն անընդհատ տեսակցություններ էր ունենում ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանների հետ: Վերոհիշյալ երկրների կառավարությունները բազմիցս հայտարարեցին, որ իրենք պատրաստ էին ռազմական օժանդակություն ցույց տալ Շամունին: ԱՄՆ-ի պետքարտուղար Դալեսը 1958թ. մայիսի 15-ին Սենատի առջև հայտարարեց, որ Միացյալ Նահանգները «պատրաստ են ամերիկյան ռազմական ուժեր մտցնել Լիբանան»[214]: Սակայն այդպիսի բացահայտ միջամտության համար հարկավոր էր թեկուզև որևէ ձևական պատրվակ: Եվ Շամունն, օգտագործելով Լիբանանի սահմանային պահակակետի վրա վերոնշյալ հարձակման փաստը, 1958թ. մայիսի 22-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին (ԱԽ) դիմեց բողոքով՝ ԱՄՀ-ին մեղադրելով Լիբանանի ներքին գործերին միջամտելու, ինչպես նաև ներքաղաքական պայքար հրահրելու մեջ[215]:

Այս քայլով Շամունը նպատակ ուներ Լիբանանում տեղի ունեցող իրադարձություններին հաղորդել միջազգային բնույթ և դրանով իսկ հնարավորություն ընձեռել ԱՄՆ-ին և այլ արևմտյան պետություններին՝ միջամտել Լիբանանի ներքին գործերին:

Այս կապակցությամբ նշենք, որ 1958թ. մայիսի 23-ին Լիբանանի արտաքին գործերի նախարար Մալիքը երկրում խորհրդային դեսպան Ս. Պ. Կիկտևին տեղեկացրեց, որ լիբանանյան կառավարությունը մայիսի 22-ին ԱՄՀ-ի Լիբանանի ներքին գործերին խառնվելու կապակցությամբ բողոքով դիմել էր ՄԱԿ-ի ԱԽ: Մալիքը նշեց նաև, որ լիբանանյան կառավարությունը ԱԽ-ում իր բողոքի քննարկման համար չի պահանջել կոնկրետ ժամկետ, քանի որ մայիսի 24-ին միևնույն դժգոհությամբ դիմել էր նաև Արաբական պետությունների լիգա (ԱՊԼ) և ցանկանում էր, որ այդ խնդիրն առաջի-

---

[213] Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. III, էջ 623:

[214] Выступление представителя СССР А. Соболева в Совете Безопасности ООН по вопросу о событиях в Ливане, տե՛ս СССР и Арабские страны, М., 1961, с. 502.

[215] К. Салиби, Очерки по истории Ливана, с. 285.

ը քննարկ[illegible] ԱՊԼ-ում: ԱԽ-ում լիբանանյան դիմումը քննարկվելու էր մայիսի 28-ին, եթե մինչ այդ միջազգային իրավիճակը կտրուկ փոփոխության չենթարկվեր[216]: Մալիքը նշեց նաև Սիրիայի տարածքից զինված խմբավորումների Լիբանանի տարածք անցնելու փաստերի մասին՝ շեշտելով, որ դրականորեն է վերաբերվում Արևմուտքի հնարավոր ռազմական միջամտությանը լիբանանյան գործերին: Լիբանանյան կառավարությունը նպատակ է հետապնդում «պաշտպանել Լիբանանի անկախությունը», սակայն «չի ցանկանում սրել միջազգային իրավիճակը»[217]:

Լիբանանի կառավարության այս քայլը դատապարտեցին Լիբանանի ընդդիմադիր ուժերը: Նրանք հերքում էին ԱՄՀ-ի կողմից Լիբանանի ներքին գործերին միջամտելու վերաբերյալ կառավարության մեղադրանքը: Նույնիսկ 1958թ. մայիսի 30-ին մարոնիների պատրիարք Մեուշին հայտարարեց, որ ԱՄՀ-ը չի միջամտել Լիբանանի ներքին գործերին: Նա դատապարտեց Լիբանանի ԱԽ-ին ներկայացրած բողոքը, նշեց, որ ներկա իրավիճակի պատասխանատուն լիբանանյան կառավարությունն է և նրա վարած քաղաքականությունը:

Լիբանանյան ճգնաժամի հենց սկզբից ԽՍՀՄ-ը նույնպես հատուկ ուշադրությամբ հետևում էր Լիբանանում դեպքերի զարգացմանը: 1958թ. մայիսի 18-ին ՏԱՍՍ-ը հանդես եկավ հայտարարությամբ, որում ասվում էր, որ «ԽՍՀՄ-ը գտնում է, որ բոլոր հարցերը, որոնք վերաբերում են Լիբանանի Հանրապետությանը, Լիբանանի ներքին խնդիրներն են և որևէ այլ պետություն իրավունք չունի միջամտել նրա ներքին գործերին»[218]:

Իսրայելը ևս փորձում էր անուղղակիորեն ապահովել լիբանանյան ընտրություններում Շամունի հաղթանակը: Հունիսի կեսին իսրայելական սահմանապահ զորամիավորումները լիբանանյան իշ-

---

[216] Телеграмма посла СССР в Ливане С.П. Киктева в МИД СССР, 23.04.1958, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с.198-199.

[217] Նույն տեղում:

[218] الدكتور رزق رزق،لبنان و بلادالسوفيات(١٩١٧-١٩٨٧)،الفارابي،١٩٨٧،ص١٣١.

խաւնութիւններին փոխանցեցին Իսրայելում ձերբակալված լիբանանցիների, որոնք Սիրիայից զենք էին տեղափոխում Լիբանան: Հուլիսի սկզբին Իսրայելը Լիբանանին տեղեկացրեց, որ վերջինս կարող է իսրայելալիբանանյան սահմանի իր գորքերն օգտագործել ապստամբների դեմ պայքարում: Միաժամանակ իսրայելական կառավարությունը ՄԱԿ-ում տեղեկացրեց, որ եթե անհրաժեշտություն լինի Ղազայում տեղակայված ՄԱԿ-ի ուժերը տեղափոխել Լիբանան, Իսրայելը պատրաստ է տրամադրել իր տարածքը[219]:

ՄԱԿ-ի ԱԽ-ում ԽՍՀՄ-ի ներկայացուցիչ Ա.Ա. Սոբոլևը նշեց, որ Լիբանանի կառավարությունն ի վիճակի չլինելով իր սեփական ուժերով հաղթահարել ներքին ճգնաժամը, ԱԽ-ին դիմելով փորձում է այդ հարցին տալ միջազգային բնույթ և ձեռք բերել արևմտյան որոշ պետությունների օժանդակությունը[220]:

ԱԽ 1958թ. հունիսի 11-ի նիստում շվեդական պատվիրակության առաջարկությամբ որոշում ընդունվեց՝ Լիբանան ուղարկել ՄԱԿ-ի դիտորդների մի խումբ և հանձնարարել գլխավոր քարտուղարին՝ այդ ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր:

1958թ. հուլիսի 3-ին ՄԱԿ-ի դիտորդների խումբը Լիբանան այցելությունից հետո ներկայացրեց իր զեկուցագիրը, որում նշվում էր, որ Լիբանանում ստեղծված այս իրավիճակն ունի ներքին պատճառներ և ԱՄՀ-ը որևէ միջամտություն չի ցուցաբերել[221]:

Երբ ԱԽ որոշումը և ՄԱԿ-ի դիտորդների զեկուցագիրը չբավարեցին Շամունին, արևմտյան պետությունները որոշեցին, որ առավել նպատակահարմար կլիներ, եթե Լիբանանում ռազմական միջամտությունը իրականացներ ռազմական դաշինքների մեջ մտնող մերձավորարևելյան որևէ պետություն: Այդ առաքելությունը

---

[219] Записка посла СССР в Израиле М.Ф. Бодрова министру иностранных дел СССР А.А. Громико, 31.07.1958, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 225.

[220] Заявление ТАСС об угрозе вмешательства США и других западных держав во внутренние дела Ливана, տե՛ս СССР и Арабские страны, с. 499.

[221] Запись беседы заведующего отделом стран Ближнего Востока МИД СССР Г.Т. Зайцева с послом ОАР в СССР М. Аль-Куни, 13.06.1958, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 204.

դրվեց Իրաքի վրա: 1958թ. հուլիսի 14-ին Ստամբուլում նշանակվեց «Բաղդադի դաշինքի» նիստ, որը պաշտոնապես պետք է Իրաքին լիազորեր՝ օգնություն ցույց տալ Լիբանանի կառավարությանը:

Սակայն «Բաղդադի դաշինքի» հուլիսի 14-ի նշանակված նիստն այդպես էլ տեղի չունեցավ: Այդ օրն Իրաքում տեղի ունեցավ հեղափոխություն, որի արդյունքում տապալվեց միապետությունը և երկրում հաստատվեց հանրապետություն: Իրաքյան հեղափոխությունն ուներ համաարաբական նշանակություն: Պատահական չէ, որ Արևմուտքն անհանգստացած էր ինչպես իրաքյան հեղափոխությունից հետո արաբական աշխարհում հնարավոր «շղթայական ռեակցիայից»՝ այդ թվում նաև Լիբանանում, այնպես էլ Իրաքի և նասերական Եգիպտոսի հնարավոր մերձեցման հեռանկարից, որի մասին ակնարկում էին իրաքյան նոր իշխանությունները[222]:

Ստեղծված պայմաններում հուլիսի 14-ին Քամիլ Շամունը հանդիպեց ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանների հետ և պահանջեց անհապաղ ռազմական միջամտություն: Նա պնդում էր, որ այդ միջամտությունը պետք է տեղի ունենա առաջիկա 48 ժամվա ընթացքում, հակառակ դեպքում կտապալվի իր արևմտամետ վարչակարգը և Լիբանանը կդառնա «Եգիպտոսի արբանյակը»[223]: Քամիլ Շամունի պահանջին հետևեցին ԱՄՆ-ի վճռական գործողությունները: 1958թ. հուլիսի 15-ին ամերիկյան ծովային հետևակն ափ իջավ Բեյրութում: Ամերիկյան կառավարությունն իր ռազմական միջամտությունը փորձում էր արդարացնել նրանով, որ իրեն օգնության պահանջով դիմել էր Լիբանանի նախագահ Քամիլ Շամունը: Հուլիսի 15-ին Սպիտակ տունը հրապարակեց հայտարարություն, ուր նշված էր, որ Միացյալ Նահանգներն իր զորքերը Լիբանան է ուղարկել ամերիկյան քաղաքացիների կյանքը պաշտպանելու և Լիբանանի կառավարությանն աջակցելու նպատակով[224]: Հայտարա-

---

[222] Е. Примаков, Ближний Восток на сцене и за кулисами, М., 2006, с. 51.

[223] F. Qubain, Crisis in Lebanon, p. 115.

[224] Запись беседы заведующего отделом стран Ближнего Востока МИД СССР Г. Зайцева с послом ОАР в СССР М. Аль-Куни, 13.06.1958, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 205.

րության մեջ նշվում էր նաև, որ «այդ զորքերի ուղարկումը պատերազմական գործողություն չէ: Այդ ուժերը ցույց են տալիս Միացյալ Նահանգների հոգատարությունը Լիբանանի անկախության և ամբողջականության նկատմամբ, որը մենք (ամերիկացիները-Լ.Հ.) համարում ենք կենսականորեն կարևոր մեր երկրի շահերի և ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման համար»[225]:

ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը, որ Մերձավոր Արևելքում ընթացող զարգացումների նկատմամբ իր ածող անհանգստությունը հիմնավորում էր կոմունիստական սպառնալիքով, իրականում ամերիկյան շահերի համար լուրջ սպառնալիք էր համարում արաբական ազգայնական գաղափարների գերիշխանության հաստատումը, ինչն էլ պայմանավորեց ԱՄՆ-ի Լիբանան ներխուժումն ու ռազմական ուժ կիրառելու պատրաստակամությունը[226]:

Ամերիկյան ռազմական միջամտությունն աննախադեպ վրդովմունք առաջացրեց Լիբանանում: Ապստամբության ղեկավարներ Սաիբ Սալամը և Ռաշիդ Քարամեն անմիջապես հանդես եկան հայտարարությամբ, որով իրենց բողոքն էին հայտնում ԱՄՆ-ի ռազմական միջամտության դեմ: Բեյրութում ամերիկյան դեսպանին իր բողոքը հայտնեց Լիբանանի զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ֆուադ Շիհաբը[227]: «Ալ-թելեգրաֆ» թերթի հաղորդմամբ՝ նա ԱՄՆ-ից պահանջեց իր զորքերը դուրս բերել Լիբանանից 24 ժամվա ընթացքում[228]:

1958թ. հուլիսի 31-ին Շիհաբը Լիբանանում ԽՍՀՄ դեսպան Ս.Պ. Կիկտևի հետ զրույցում համոզմունք հայտնեց, որ ապստամբները նախատեսում էին դադարեցնել պայքարը, քանի որ արդեն

---

[225] Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում 1939-1958թթ., Երևան, 1967, էջ 282-283:

[226] С.Амброз, Эизенауэр. Солдат и президент, М., 1993, с. 436.

[227] Запись беседы посла СССР в Ливане С.П. Киктева с генералом Ф. Шехабом, 31.07.1958, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 224.

[228] نقولا ي هوفهانيسيان،ألنضال ألتحرّري ألوطني في لبنان(١٩٣٩–١٩٥٨)،بيروت،١٩٧٤،ص ١٧٤

որոշում էին կայացրել նախագահի պաշտոնում իր թեկնածությունը պաշտպանելու վերաբերյալ: Գեներալը նշեց նաև, որ լիբանանյան բանակի համար ցանկալի կլիներ, եթե ամերիկացիները երկրի զինված ուժերին թողնեին որոշակի քանակությամբ զինամթերք և ռադիոլոկացիոն սարքեր, եթե դրանք տեխնիկապես հարմար լինեն լիբանանյան բանակին[229]:

Բեյրութի, Տրիպոլիի և Լիբանանի այլ վայրերում բնակչությունը բողոքի ցույցեր էր կազմակերպում և պահանջում Լիբանանից ամերիկյան զորքերի դուրս բերումը:

Լիբանանում ամերիկյան ներկայության նկատմամբ ստեղծվել էր անհանդուրժողականության մթնոլորտ:

Ամերիկյան ռազմական միջամտությունը խստագույնս դատապարտեց ԽՍՀՄ-ը: Հուլիսի 18-ին հրավիրվեց ՄԱԿ-ի ԱԽ և հետաքրքրական էր, որ նիստը հրավիրվեց հենց ԱՄՆ-ի պահանջով: Ամերիկացիները Խորհրդի անդամներին «տեղեկացրեցին», որ Լիբանանի կառավարության խնդրանքով ամերիկյան կառավարությունը զորքեր է ուղարկել Լիբանան:

Բնականաբար ամերիկյան նախաձեռնության դեմ ընդվզեց ԽՍՀՄ-ը, որի ներկայացուցիչ Ա.Ա. Սոբոլևը նշեց, որ ԱՄՆ-ը դիմել էր բացահայտ ագրեսիայի, ինչը չէր կարող արդարացվել նույնիսկ Լիբանանի նախագահ Շամունի հատուկ խնդրանքով: Իր ելույթում Սոբոլևն ընդգծեց, որ Շամունի խնդրանքը հրահրել էր հենց ԱՄՆ-ը, ինչն ուղղակի ՄԱԿ-ի կանոնադրության խախտում էր, որն արգելում է իբրև արտաքին քաղաքականության իրականացման միջոց ռազմական ուժի կիրառումը[230]:

Հուլիսի 16-ին հրապարակվեց խորհրդային կառավարության հայտարարությունը Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան ռազմական ներխուժման հետևանքով ստեղծված դրության մասին:

---

[229] Запись беседы посла СССР в Ливане С. Киктева с генералом Ф. Шехабом, 31.07.1958, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 224.

[230] Заявление Советского правительства в связи с агрессией США и Великобритании на Ближнем и Среднем Востоке, տե՛ս СССР и Арабские страны,с. 514.

Այդ հայտարարության մեջ ասված էր. «Մենք (ԽՍՀՄ կառավարությունը- Լ.Հ.) գտնում ենք, որ ԱՄՆ-ը պետք է իր զորքերը դուրս բերի Լիբանանից: ԽՍՀՄ-ը չի կարող անտարբերություն դրսևորել իր սահմանների մոտ ստեղծված պատերազմի վտանգի հանդեպ և իրեն իրավունք է վերապահում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել Մերձավոր Արևելքում խաղաղության և անվտանգության վերահաստատման համար[231]»:

ԽՍՀՄ-ը, երկար տարիներ, ամերիկյան զորքերի մտցումը Լիբանան որակավորում էր իբրև ագրեսիա: Այսօր վերանայելով այդ փաստը՝ կարող ենք նշել, որ ՄԱԿ-ի 51-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած երկիր ունի ինքնապաշտպանության իրավունք: Փաստ է, որ Լիբանանի նախագահ Քամիլ Շամունը դեռևս 1957թ. ընդունած «Էյզենհաուերի դոկտրինայի» շրջանակներում կարող էր դիմել ԱՄՆ-ի ռազմական օգնությանը: Այլ բան է, որ քաղաքական առումով Լիբանան ամերիկյան զորքերի մտցումը ձեռնտու էր ԱՄՆ-ին և բնավ չէր համապատասխանում տարածաշրջանում ԽՍՀՄ-ի ռազմավարական շահերին:

ԱԽ-ում Լիբանանի հարցի քննարկումը տևեց մինչև հուլիսի 18-ը: Այդ օրը տեղի ունեցավ խորհրդային բանաձևի քվեարկումը: ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և խորհրդի մյուս 5 անդամները քվեարկեցին ԽՍՀՄ-ի առաջարկած բանաձևի դեմ, իսկ Ճապոնիան և Շվեդիան ձեռնպահ մնացին: Այսպիսով ԱԽ-ը մերժեց խորհրդային բանաձևը, որն առաջարկում էր դադարեցնել միջամտությունն արաբական երկրների ներքին գործերին և ամերիկյան զորքերն անհապաղ դուրս բերել Լիբանանից[232]:

ԽՍՀՄ-ի առաջարկությամբ 1958թ. օգոստոսի 8-ին հրավիրվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի (ԳԱ) արտակարգ նիստ, որը պետք է քննարկեր Լիբանանից ամերիկյան զորքերի դուրս բերման հարցը: Այս նիստում իրար հակադրվեցին երկու խմբավորումներ: Մի կողմում՝ ԽՍՀՄ-ի, Խորհրդային դաշինքի, ինչպես նաև Ասիայի և Աֆրիկայի երկրներն էին, իսկ մյուս կողմում՝ արևմտյան տերությունները: Առաջիններն պահանջում էին ամերիկյան զորքերի ան-

---

[231] Նույն տեղում, էջ 520:

[232] Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 288:

հապաղ դուրս բերում Լիբանանից, իսկ ԱՄՆ-ը և Անգլիան, չցանկանալով բացահայտ դեմ հանդես գալ այդ պահանջին, առաջարկեցին «Միջին Արևելքում խաղաղության պահպանման համար կազմավորել ՄԱԿ-ի զորքեր»: Սակայն ՄԱԿ-ի անդամ երկրների մեծ մասը, այդ թվում արաբական երկրներն ու ԽՍՀՄ-ը դեմ քվեարկեցին այս առաջարկությանը: Արաբական 10 պետություններ ներկայացրին բանաձևի իրենց նախագիծը, որը պահանջում էր հրաժարվել ներխուժումից, չմիջամտել այլ երկրների ներքին գործերին և ամերիկյան զորքերը դուրս բերել Լիբանանից: Բանաձևը հանձնարարում էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին՝ հետևել այս որոշման կատարմանը և մինչև սեպտեմբերի 30-ը զեկուցագիր ներկայացնել այս կապակցությամբ[233]:

1958թ. օգոստոսի 21-ին ՄԱԿ-ի Գ.Ա արտակարգ նստաշրջանն ընդունեց արաբական 10 պետությունների բանաձևը:

Լիբանանի ընդդիմադիր ուժերի կարևոր պահանջներից էր երկրի նախագահ Քամիլ Շամունի հրաժարականը: Սեպտեմբերի 23-ին լրանում էր նրա լիազորությունների ժամկետը:

Նախագահի նոր թեկնածուի հարցը դարձել էր ներքաղաքական հանգուցային հարցերից մեկը: Կառավարամետ ուժերը ձգտում էին թույլ չտալ այդ պաշտոնում ընդդիմության որևէ ներկայացուցչի ընտրվելը: Նրանք աշխատում էին, որ նախագահի պաշտոնը զբաղեցներ քաղաքական գործիչ, որն ընդունելի լիներ իրենց համար և հիմնականում հարազատ մնար նախկին քաղաքականությանը: Այդ հարցում շահագրգռություն էր ցուցաբերում նաև Արևմուտքը: Այս ուղղությամբ զգալի աշխատանք ծավալեց ամերիկյան դեսպան Մաքկլինտոկը, որը բացահայտ միջամտում էր Լիբանանի ներքին գործերին: Այս ուժերը կանգ առան Ռայմոն Էդդեի թեկնածության վրա, որը ապստամբության ընթացքում գրավել էր «հաշտվողական դիրք»:

Ինչ վերաբերում է ընդդիմադիր ուժերին, ապա վերջիններս դեմ էին այդ թեկնածությանը: Նրանք պաշտպանում էին բանակի գլխավոր հրամանատար Ֆուադ Շիհաբի թեկնածությունը:

---

[233] Նույն տեղում, էջ 289:

Լիբանանի խորհրդարանը 1958թ. հուլիսի 31-ին 48 ձայնով ընդդեմ 7-ի՝ հանրապետության նախագահ ընտրեց Ֆուադ Շիհաբին[234]:

Նոր նախագահի ընտրության կապակցությամբ «Ազգային ճակատը» հրապարակեց հայտարարություն, որտեղ ողջունելով գեներալ Ֆուադ Շիհաբի ընտրությունը՝ այն առաջադրեց հետևյալ պահանջները՝

1. Ամերիկյան զորքերի անհապաղ և առանց պայմանների հեռացում Լիբանանի տարածքից.
2. Գեներալ Ֆուադ Շիհաբի անմիջապես նախագահի պաշտոնի ստանձնում.

Այս կետն առաջադրվեց, քանի որ հուլիսի 31-ին՝ Շիհաբի նախագահի ընտրվելուց հետո, Քամիլ Շամունը հայտարարեց, որ չի հեռանա իր պաշտոնից և սահմանադրության համաձայն վայր կդնի նաև իր լիազորությունները միայն սեպտեմբերի 23-ին: Նա նախագահի իր լիազորությունները միայն սեպտեմբերի 23-ին: Նա նպատակ ուներ ժամանակ շահել և ամրապնդել իր և իր համախոհների դիրքերը: Մինչ այդ երկրի վարչապետ Սամի Ալ-Սոլհը հանդես եկավ հայտարարությամբ, որում՝ հակառակ սուննի համայնքի պահանջին, պաշտպանեց Շամունի այդ դիրքորոշումը և պահանջեց երկրի սահմանադրության պահպանում[235]:

3. «Ազգային ճակատը» պահանջում էր նաև կազմավորել ազգային կառավարություն, որը կհետևեր 1943թ. «Ազգային դաշինքին», կվերականգներ Լիբանանի ավանդական դրական չեզոքության քաղաքականությունն ու կձերբազատվեր «Էյզենհաուերի դոկտրինայից»[236].

Այս սկզբունքներն ընդունելի էին նաև նորընտիր նախագահ Ֆուադ Շիհաբի համար: Այս կապակցությամբ Շիհաբը հայտարարեց, որ պայքարելու է ազգային միասնականությունը վերականգնելու և անկախ արաբական քաղաքականություն վարելու համար:

---

[234] W. Goria, Sovereigty and Leadership in Lebanon 1943-1976, Ithaca Press, 1985, p. 58.

[235] K. Salibi, The Modern History of Lebanon, p. 203.

[236] Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 291:

Նա իր կարևոր խնդիրներից մեկը համարեց ամերիկյան զորքերի դուրս բերումը Լիբանանից:

Ազգային այս կարևոր խնդիրների կենսագործմանը խանգարում էին Շամունի կողմնակիցները: Շամունականներն ավելի ակտիվացան, երբ պարզ դարձավ, որ Շիհաբը մտադիր էր նոր կառավարության ձևավորումը հանձնարարել Լիբանանի 1958թ. ապստամբության ականավոր ղեկավարներից մեկին՝ Ռաշիդ Քարամեին: Շամունականներն ամեն կերպ փորձում էին թույլ չտալ, որ Ռաշիդ Քարամեն ստանձներ վարչապետի պաշտոնը, իսկ ծայրահեղ դեպքում այդ կառավարության կազմում նրանք բավարար ներկայացուցչություն ունենային:

1958թ. սեպտեմբերի 17-ին՝ Շամունի նախագահական լիազորությունների ավարտից ընդամենը 6 օր առաջ, Լիբանանում բացահայտվեց շամունականների կազմակերպած մի դավադրություն, որի նպատակն էր ձերբակալել Ֆուադ Շիհաբին և «Ազգային ճակատի» մի շարք ղեկավարների և նույնիսկ սպանել մի քանիսին: Դրանից հետո Շամունի իշխանությունը կամ պետք է երկարաձգվեր կամ նախագահի լիազորությունները պետք է հանձնվեին դավադրության անմիջական իրականացնող գնդապետ Ֆուադ Լահուդի եղբորը՝ Սելիմ Լահուդին: Գնդապետ Ֆուադ Լահուդը ձերբակալվեց: Նա խոստովանեց, որ դավադրությունը նախապատրաստելու նպատակով ինքը Լիբանանում և արտասահմանում բազմաթիվ տեսակցություններ է ունեցել տարբեր զինվորական և քաղաքական գործիչների, այդ թվում Սամի Ալ-Սոլհի կողմնակից Մուհամմադ Մադանիի և Շամունի կողմնակից Ադիլ Համադանիի հետ: Ցուցմունքներից պարզ դարձավ, որ իրենց դավադրությանն օգնություն էր խոստացել ամերիկյան կառավարությունը: Խոստացվել էր դավադրությունից անմիջապես հետո ճանաչել նոր իշխանությունը[237]:

1958թ. սեպտեմբերի 23-ն նախագահի պաշտոնը ստանձնեց Ֆուադ Շիհաբը: Մեկ օր անց՝ սեպտեմբերի 24-ին, Ռաշիդ Քարամեն կազմեց իր նոր կառավարությունը: Ռաշիդ Քարամեի առաջին

---

[237] Նույն տեղում, էջ 293:

կառավարության կազմում չմտան ապստամբության մասնակից այլ ղեկավարներ: Կառավարությունը կազմված էր 7 նախարարից, որոնցից 4-ը պատկանում էին համաձայնողականներին, իսկ 3-ը՝ ընդդիմության այն շրջանակներին, որոնք դեմ էին Շամունի վարչակարգին, սակայն նրա դեմ մղվող պայքարում ակտիվ մասնակցություն չէին բերել: Բայց, այնուամենայնիվ, թե՛ նախկին նախագահի համախոհների և թե՛ Արևմուտքի համար Ռաշիդ Քարամեի կառավարությունը, նույնիսկ այսպիսի կազմով, անընդունելի էր: Ֆուադ Շիհաբի և Ռաշիդ Քարամեի հայտարարություններից նրանց համար պարզ դարձավ, որ Լիբանանի կառավարությունը հրաժարվում էր իր նախորդի քաղաքականությունից և վարելու էր դրական չեզոքության քաղաքականություն: Շամունի կողմնակիցներն ամերիկյան աջակցությամբ սկսեցին բացահայտ ճնշումներ գործադրել Ռաշիդ Քարամեի վրա՝ նպատակ ունենալով ստիպել նրան հրաժարական տալ, կամ նվազագույնը՝ նրա կառավարության կազմի մեջ մտցնել Շամունի կողմնակիցներին:

Ստեղծված իրավիճակում, ինչպես միշտ, փորձեց միջամտել ամերիկյան դեսպան Մաքկլինտոկը: Նա 1958թ. սեպտեմբերի 30-ին ամերիկյան դեսպանատուն հրավիրեց Ռաշիդ Քարամեին և փաստաղթավորների ղեկավար Պիեր Ժմայելին՝ առաջարկելով իր «ծառայությունները»: Մաքկլինտոկը նշեց, որ համաձայնվում էր ճանապարհել Ռաշիդ Քարամեի կառավարությունը, պայմանով, որ նրա մեջ մտնեն նաև Շամունի և փաղանգավորների ներկայացուցիչները[238]: Ռաշիդ Քարամեն մերժեց և չգնաց ամերիկյան դեսպանատուն:

Լիբանանյան կառավարությունը, մամուլը, «Ազգային ճակատն» իր պաշտոնական հայտարարություններում ամերիկյան դեսպանի գործողությունները համարում էին ուղղակի միջամտություն Լիբանանի ներքին գործերին:

1958թ հոկտեմբերի 5-7-ը զինված ընդհարումներ տեղի ունեցան Քամիլ Շամունի նույն թվականին կազմավորած «Ազգային լիբերալ» («Ազատ հայրենասերներ», «Շամունականներ»)՝ (արաբերեն՝ «Հիզբ ալ-կաումի ալ-ահրար») կուսակցության զինված ջոկատների

---

[238] Политика США на Арабском Востоке, с. 192.

և բանակի զինվորների միջև: Ներքին կարգ ու կանոնը պահպանելու և լարվածությունը թուլացնելու պատրվակով հոկտեմբերի 9-ին ամերիկյան զորքերը կրկին մտան Բեյրութ:

Այս ներքին և արտաքին ճնշումների արդյունքում Ռաշիդ Քարամեի առաջին կառավարությունը հոկտեմբերի 9-ին ստիպված էր հրաժարական տալ: Ռաշիդ Քարամեն հոկտեմբերի 15-ին կազմեց նոր կառավորություն, որն ուներ հետևյալ կազմը. Ռաշիդ Քարամե՝ վարչապետ, ազգային պաշտպանության, ազգային տնտեսության, ֆինանսների և տեղեկատվության նախարար, Հուսեյն Ուեյնի՝ արտաքին գործերի, արդարադատության և ծրագրավորման նախարար, Պիեր Ժմայել՝ փոխվարչապետ, հանրային շինարարության, կրթության, առողջապահության և գյուղատնտեսության նախարար և Ռայմոն Էդդե ներքին գործերի, սոցիալական ապահովության և փոստի նախարար: Այս կառավարությունը ստացավ «հարկադրական փոխզիջման կառավարություն» անվանումը: Քամիլ Շամունի կողմնակիցներն ու Արևմուտքը հասան զգալի դիրքերի[239]:

1958թ. հոկտեմբերի սկզբներին Ֆուադ Շիհաբը հանդիպեց ամերիկյան դեսպանի հետ և պահանջեց ամերիկյան զորքերի հեռացում Լիբանանի տարածքից: Վերջապես 1958թ. հոկտեմբերի 25-ին ամերիկյան զինվորները, որոնց թիվը տարբեր տվյալներով կազմում էր 10.000-ից 17.000, 102 օր Լիբանանում մնալուց հետո դուրս բերվեցին երկրից[240]:

Լիբանանի նոր կառավարությունն առաջին հերթին շտապեց հրաժարվել «Էյզենհաուերի դոկտրինայից», ապա նաև կատարեց հաջորդ քայլը և հրաժարվեց դաշինքներին միանալու քաղաքականությունից: Լիբանանը վերադարձավ դրական չեզոքության քաղաքականությանը[241]: Այն բարելավեց իր հարաբերությունները ԱՄՀ-ի և ընդհանրապես արաբական աշխարհի հետ, որն իր հերթին բարե-

---

239 نقولا ي هوفهانيسيان،ألنضال ألتحرّري ألوطني في لبنان(١٩٣٩–١٩٥٨)،بيروت،١٩٧٤،ص١٨٣

240 T. Petran, The Struggle over Lebanon, p. 52.

241 Политика США на Арабском Востоке, с. 192.

րար ազդեցություն ունեցավ արաբական արևելքում դրության ընդհանուր կայունացման վրա[242]:

Ապստամբությունը լուծեց իր առջև դրված հիմնական խնդիրները: Քամիլ Շամունը հեռացվեց իշխանությունից: Նորընտիր նախագահ Ֆուադ Շիհաբը ձեռնամուխ եղավ կրոնադավանական համակարգի խախտված հավասարակշռության վերականգնմանը: Միաժամանակ արտաքին քաղաքականության ասպարեզում նա հրաժարվեց «Էյզենհաուերի դոկտրինայից» և վերադարձավ Լիբանանի համար արդեն ավանդական դարձած դրական չեզոքության քաղաքականությանը: Իբրև փոխզիջումային միտումների լավագույն արտահայտություն՝ Ֆուադ Շիհաբը և այլ քաղաքական գործիչներ հայտարարեցին «Ոչ հաղթող և ոչ պարտվող» (արաբերեն՝ «Լա ղալիբ ուա լա մաղլուբ») կարգախոսը[243]: Այս ամենը նպաստեց Լիբանանում ներքին կայունության հաստատմանը և արաբական երկրների հետ հարաբերությունների բնականոնացմանը:

2. Ֆուադ Շիհաբի նախագահության տարիները (1958-1964թթ.): Հարաբերական կայունության շրջան՝ հին խնդիրներ, նոր մոտեցումներ. շինաբականություն

1958թ. 6 ամիս տևած քաղաքական ճգնաժամը ավարտված էր: 1958թ. սեպտեմբերի 23-ին Լիբանանի նոր նախագահ ընտրված բանակի նախկին գլխավոր հրամանատար գեներալ Ֆուադ Շիհաբի և վարչապետ Ռաշիդ Քարամեի առջև դրված էին մի շարք խնդիրներ:

---

[242] Նույն տեղում:

[243] Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 296, Новейшая история арабских стран Азии, с. 120, K. Salibi, The Modern History of Lebanon, p. 204.

Նախ ներքին ասպարեզում անհրաժեշտ էր վարել ճկուն և խոհեմ քաղաքականություն, ինչը հնարավորություն կտար հավասարակշռություն պահպանել Լիբանանյան բոլոր քաղաքական ուժերի և կրոնական համայնքների միջև, իսկ արտաքին ասպարեզում հավասարակշռել հարաբերությունները մի կողմից՝ արաբական աշխարհի, իսկ մյուս կողմից՝ Արևմուտքի հետ: Դրան զուգահեռ՝ Լիբանանը կարիք ուներ լուրջ սոցիալական և տնտեսական բարեփոխումների, որոնք կնպաստեին երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը:

Նոր նախագահն իր կառավարման վեց տարիների ընթացքում պատրաստակամորեն համագործակցում էր Լիբանանյան բոլոր կրոնական, այդ թվում՝ իսլամադավան համայնքների հետ՝ առավել ակտիվորեն ընդգրկելով նրանց վարչական կառույցներում և ընդլայնելով վերջիններիս ներկայությունը երկրի կառավարման մարմիններում: Ֆուադ Շիհաբ-Ռաշիդ Քարամե քաղաքական կոալիցիան առաջ քաշեց երեք հիմնական սկզբունքներ, որոնց վրա պետք է հիմնվեր գործող կառավարության ներքին քաղաքականությունը՝

1. Վարել ճկուն քաղաքականություն՝ հավասարակշռելով Լիբանանի քրիստոնյա և իսլամադավան բոլոր համայնքները.
2. Լիբանանի առողջացման գործընթացի մեջ ներգրավել լիբանանյան իսլամադավան, հատկապես ամենաշրջանցված շիական համայնքն ու սուննի համայնքի անապահով խավերին, ինչը կնպաստեր Լիբանանյան հասարակության սոցիալական և տնտեսական բևեռացման նվազեցմանը և Լիբանանի ընդհանուր տնտեսական վիճակի բարելավմանը.
3. Հատուկ ուշադրություն պետք է դարձվեր Լիբանանում կրոնական, տոհմա-կլանային՝ զուամայի ինստիտուտի վերացմանը: Ֆուադ Շիհաբը գտնում էր, որ Լիբանանը կարող էր հաղթահարել բոլոր դժվարությունները, եթե հաղթահարվեր կրոնադավանական, ընտանեկան, տոհմային շահերի առաջնայնությունը և ամրապնդվեր իրական, մեկ միասնական լիբանանյան ազգի գիտակցումը[244]:

---

[244] S. Mackey, նշվ. աշխ., էջ 133:

Արտաքին քաղաքականության ասպարեզում Լիբանանը վերադառնում էր դրական չեզոքության և ռազմական դաշինքներից չմիանալու քաղաքականությանը: Ֆուադ Շիհաբը գտնում էր, որ Լիբանանը պետք է դառնար այն «նուրբ թելը», որ ընկած էր Արևմուտքի և արաբական աշխարհի միջև[245]: Նոր նախագահը մի կողմից ներտացնում էր իր հարաբերությունները Արաբական Միացյալ Հանրապետության և նրա նախագահ Նասերի հետ՝ հավանություն տալով նրա արաբական ազգայնական գաղափարներին, իսկ մյուս կողմից կարողանում էր լիբանանյան տնտեսության մեջ ներգրավել հակառասերական տրամադրություններ ունեցող արևմտյան երկրների, Ծոցի արաբական պետությունների և Սաուդյան Արաբիայի կապիտալը: Վերոնշյալ երկրներին նախագահը վստահեցնում էր, որ նրանց շահերն ամբողջությամբ պահպանված էին Լիբանանում և որ Լիբանանը պատրաստ էր իր տնտեսական կապերը պահպանել և նույնիսկ ամրապնդել թե՛ Արևմուտքի և թե՛ արաբական աշխարհի հետ: Ֆուադ Շիհաբը բազմիցս հայտարարում էր. «Լիբանանը հյուրընկալ է բոլոր գործարարների համար՝ Կալիֆոռնիայից մինչև Քուվեյթ»[246]:

Նոր նախագահի քաղաքականությունն ամրապնդվեց 1960թ. ամռանը տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններով: Խորհրդարանում մեծամասնություն կազմեցին նոր նախագահի համախոհները, որոնք կողմնակից էին դրական չեզոքության քաղաքականությանը և Արաբական աշխարհի ու հատկապես՝ ԱՄՀ-ի հետ հարաբերությունների ներտացմանը: Սակայն լիբանանյան խորհրդարանում պատգամավորական տեղեր ստացան նաև նախկին նախագահ Քամիլ Շամունի համախոհները, որոնք ընդդիմություն էին գործող նախագահին և նրա վարած ներքին և արտաքին քաղաքականությանը: Այս շրջանակները հայտարարում էին, որ «Լիբանանը գլուխ է խոնարհում ԱՄՀ-ի և նրա ղեկավար Նասերի առջև»[247]:

Ի տարբերություն Շամունի և նրա կողմնակիցների, «Լիբանանյան փաղանգներ» կուսակցությունը, որը 1958թ. ապստամբության

---

[245] Նույն տեղում:
[246] Նույն տեղում:
[247] K. Salibi, Cross Roads to Civil War, p. 3.

ընթացքում Շամուն հիմնական հենարանն էր, ստանձնել էր նոր նախագահի քաղաքական գծի պաշտպանությունը[248]:

Ինչ վերաբերում էր նոր կառավարության իրականացրած տնտեսական քաղաքականությանը, ապա ազատ տնտեսության և տնտեսական հարաբերությունների սկզբունքը մնում էր անփոփոխ: Ֆուադ Շիհաբի նախագահության տարիներին իրականացվեցին մի քանի միջոցառումներ, որոնք ուղղված էին ազգային տնտեսության զարգացմանը[249]:

Նախագահի իրականացրած ծրագրերում առաջնային տեղ էր հատկացված նաև սոցիալական ոլորտին: Այս ոլորտում Ֆուադ Շիհաբի ամենազգալի նվաճումը համարվում էր սոցիալական ապահովագրության մասին օրենքի ընդունումն, ինչը շիհաբական թիմի գլխավոր ձեռքբերումն էր: Ամբողջությամբ վերցված, սակայն, Ֆուադ Շիհաբի ձեռնարկած սոցիալական ծրագրերն իրագործվում էին շատ դանդաղ: Նրանց իրականացմանը խոչընդոտում էր պետական համակարգում առկա կոռուպցիան: Այս ուղղությամբ նախագահը նա ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, սակայն նրան այդպես էլ չհաջողվեց արմատախիլ անել պետական մարմիններում տիրող այդ արատը :

Ֆուադ Շիհաբն իր նախագահության հենց առաջին տարիներից ամեն կերպ փորձում էր ամրապնդել Լիբանանում առանց այդ էլ ամուր դիրքեր ունեցող նախագահական ինստիտուտը և որքան հնարավոր էր այն հեռու պահել լիբանանյան ավանդական կլանային քաղաքական գործիչների ազդեցությունից:

Նախագահն իրականացնում էր մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին «լիբանանյան պետության արդիականացմանն ու ռացիոնալիզացմանը»: Նախագահի այս քաղաքականությունը ստացավ «շիհաբականություն» անվանումը: Այն արտահայտվեց այսպես կոչված «վարչական բարեփոխումներում», որոնք սկսվեցին իրականացվել 1959 թվականից[250]: Բարեփոխման նպատակն էր՝ զտել պետական ապարատը «ոչ պիտանի, կոռումպացված»

---

[248] Նույն տեղում:

[249] Մանրամասն տե՛ս I գլուխում:

[250] Ch. Rizk, Le Régime Politique Libanais, Paris, 1966, p. 164.

մարդկանցից: Ստեղծվեցին կառավարական հանձնաժողովներ: Այդ թվում նաև քաղաքական կուսակցությունների գործունեությունը վերահսկող և թերթերի եկամուտները վերստուգող հանձնաժողովներ: Պետական ապարատի զտումը կատարվում էր Շիհաբի նախագահության ողջ ընթացքում: Նախագահն այդ գործում ստիպված էր ցուցաբերել զգոնություն և ճկունություն, որպեսզի չխախտեր կրոնդավանական համակարգն ու չսրեր միջհամայնքային հակասություններն ու դժգոհությունները:

Ֆուադ Շիհաբի իշխանության տարիներին զգալի ակտիվացավ լիբանանյան բանակի հակահետախուզական վարչության՝ Երկրորդ գրասենյակի (Deuxième Bureau) գործունեությունը: Նախագահը կազմավորեց, այսպես կոչված, «Միացյալ մարմին» (արաբերեն՝ «Ալ-ջիհազ ալ-մուշթարաք»), որի մեջ միավորվեցին ներքին անվտանգության ուժերը, անվտանգության ընդհանուր ուժերն ու բանակի հակահետախուզական վարչությունը: Այս ուժերը համախմբվեցին Երկրորդ գրասենյակի ղեկավարության շուրջ: Ներքին անվտանգության խնդիրների լուծման գործում առաջնային դեր էր հատկացվում Զինվորական հետախուզությանը[251]:

Ֆուադ Շիհաբի ներքին քաղաքականությունն ընդդիմադիր ուժերը որակեցին իբրև «ոչ ժողովրդավարական միլիտարիզմ», որը գլխավորապես հիմնված էր լիբանանյան բանակի վրա: Ֆուադ Շիհաբի քաղաքական համախոհները համախմբվել էին «Ալ-նահջ» խմբավորման մեջ: Նրանում միավորվել էին այն իսլամադավան և քրիստոնյա ղեկավարները, որոնք կողմ էին Լիբանանում չափավոր բարեփոխումների իրականացմանը, դրական չեզոքության քաղաքականությանը և արաբական աշխարհի հետ հարաբերությունների սերտացմանը[252]: Ներքաղաքական ասպարեզում «Ալ-նահջը» կողմնակից էր երկրի հասարակական-քաղաքական կյանքում բանակի դերի մեծացմանը և վերջինիս կողմից վերահսկողության ուժեղացմանը: Ֆուադ Շիհաբի քաղաքական թիմում տեղ էին գտել խորհրդականներ, որոնք հիմնականում լիբանանյան բանակի

---

[251] T. Petran, The Struggle over Lebanon, New York, 1987, p. 58.
[252] B. Odeh, Lebanon: Dynamics of Conflict, A Modern Political History, London, 1985, p. 8.

նախկին սպաներ և ռազմաստիճան զինվորականներ էին: Նախագահի ողջ քաղաքական թիմն ու նրա համախոհները ստացել էին «շիհաբականներ» անվանումը:

Ֆուադ Շիհաբն իր շրջապատից ամեն կերպ փորձում էր հեռու պահել քաղաքական այն «վարկաբեկված» ավանդական գործիչներին, որոնց նա անվանում էր «պանրակերներ» (fromagistes)[253]: Դրանք հիմնականում շամունականների թևին հարող ուժերն էին: Հենց այս քաղաքական գործիչներն էլ, տեղ չգտնելով շիհաբական իշխանության շրջանակներում, ձևավորեցին հակաշիհաբական ճակատ, որի մեջ մտան Լիբանանի նախկին նախագահ Քամիլ Շամունը և վերջինիս ղեկավարած «Ազգային լիբերալ» կուսակցության անդամները, Ռայմոն Էդդեն և նրա գլխավորած «Ազգային դաշինք» կուսակցությունը: «Ազգային դաշինքի» և «Շամունականների» միջև համագործակցությունը սկսվեց 1960թ.: Ի տարբերություն Քամիլ Շամունի, որը ոչ մի կերպ չէր համակերպվում 1958թ. իր կրած պարտության հետ, Ռայմոն Էդդեի և Ֆուադ Շիհաբի միջև հակասությունները կապված էին նախագահի վարած քաղաքականության մեթոդների հետ: Ռայմոն Էդդեն մեղադրում էր Ֆուադ Շիհաբին «ոչ ժողովրդական միլիտարիզմի» մեջ: Մինչև 1960թ. վերջինս մշտապես զբաղեցնում էր նախարարական պաշտոններ, սակայն 1960թ. սկսած նա անցավ ընդդիմության շարքերը: Էդդեն քննադատում էր նախագահի քաղաքականությունը, որը ըստ նրա չափից ավելի էր հիմնվում բանակի և հատուկ ծառայությունների վրա:

Ֆուադ Շիհաբն իր իշխանությունն ամրապնդելու նպատակով ամուր կապեր էր հաստատել մի քանի սուննի ազդեցիկ քաղաքական ղեկավարների հետ, որոնք զգալի դեր էին խաղացել 1958թ. ապստամբության ընթացքում: Մասնավորապես այդ սուննի ղեկավարները կապեր էին պաշտպանում Երկրորդ գրասենյակի հետ, որը համարվում էր նախագահի հիմնական հենարանը: Երկրորդ գրասենյակը ձգտում էր թույլ չտալ համայնքի ներսում ընդդիմադիր ուժերի համախմբում սուննի ազդեցիկ ղեկավարներից մեկի՝ Սաիբ Սալամի շուրջ, որը թեև մինչև 1961թ. սերտորեն համագործակցում

---

[253]K. Salibi, Cross Roads to Civil War, p. 19.

էր նախագահի հետ, սակայն, 1961թ. հետո նրանց միջև հակասությունները սրվեցին[254]: Սա կապված էր այն հանգամանքի հետ, որ 1961թ. հոկտեմբերին նախագահը Սաիբ Սալամին հեռացրեց վարչապետի պաշտոնից և նոր կառավարությունը գլխավորեց Ռաշիդ Քարամեն: Նոր կառավարությունում Սաիբ Սալամն այդպես էլ չներգրավվեց:

Ֆուադ Շիհաբի արտաքին դրական չեզոքության քաղաքականությունը, որի արդյունքում Լիբանանը բարելավեց իր հարաբերությունները արաբական աշխարհի հետ, մեծ աջակցություն էր գտնում լիբանանյան իսլամադավանների շրջանում: Հակառակ սրան՝ լիբանանյան քրիստոնեական շրջանակներում զգալի դժգոհություններ էին նկատվում, որոնք հիմնականում վերաբերում էին Արևմուտքի հետ հարաբերությունների թուլացմանը, Լիբանանի ռազմական դաշինքներին չմիանալու քաղաքականության ու արաբական աշխարհի հետ հարաբերությունների սերտացմանը:

Դրանով էր բացատրվում այն ճնշումը, որ գործադրում էին լիբանանյան ներքին ընդդիմադիր ուժերը և օտարերկրյա պետությունները Ֆուադ Շիհաբի իշխանության վրա՝ ձգտելով փոփոխություն մտցնել նրա վարած արտաքին քաղաքականության ուղղում: Գոյություն ունեցող ճնշման լավագույն ապացույցը 1961թ. դեկտեմբերի 31-ին Լիբանանում տեղի ունեցած պետական հեղաշրջման անհաջող փորձն էր: «Սիրիական ազգային սոցիալական» կուսակցության անդամները, համագործակցելով լիբանանյան բանակի փոքրաթիվ ուժերի հետ, փորձեցին գրավել պաշտպանության նախարարության շենքը, ռադիոն, հեռահաղորդակցությունն ու մի շարք ռազմավարական կարևոր կետեր: Սակայն նրանք ոչ մի հաջողություն չունեցան: Լիբանանյան բանակը հավատարիմ մնաց կառավարությանը և այդ դավադրությունը հեշտությամբ ճնշեց[255]:

Այս հեղաշրջման թեկուզև անհաջող փորձը ստիպեց նախագահ Ֆուադ Շիհաբին, իր իշխանությունն ամրապնդելու նպատակով, սերտացնել համագործակցությունն այնպիսի ազդեցիկ ղեկավարների հետ, ինչպիսիք էին «Քաթաիբ» կուսակցության ղեկավար

---

[254] T. Petran, նշվ. աշխ., էջ 58:
[255] «Սեր նշանաբանն է հառաջ », Բեյրութ, 31.05.1962:

Պիեր Ժմայելը, «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցության ղեկավար Քամալ Ջումբլաթը և Ռաշիդ Քարամեն՝ սուննի ազդեցիկ քաղաքական գործիչ, որը պարբերաբար զբաղեցնում էր Լիբանանի վարչապետի պաշտոնը:

Լիբանանյան կառավարություններն ընդհանրապես աչքի էին ընկնում իրենց կարճաժամկետ գոյությամբ: Լիբանանին բնորոշ էր երկրի մարոնի նախագահի և սուննի վարչապետի միջև տարաձայնությունների առկայությունը: Սովորաբար լիբանանյան կառավարություններն արագ փոփոխվում էին՝ գոյություն ունենալով միայն 6-8 ամիս: Այս տեսանկյունից բացառություն էին կազմում Ռաշիդ Քարամեի գլխավորած կառավարությունները, որոնք համեմատաբար երկար էին գործում: Օրինակ՝ վերջինիս ղեկավարած կառավարություններից մեկը գոյություն ունեցավ 1961թ. հոկտեմբեր 31-ից մինչև 1964թ. փետրվարի 20-ը:

Լիբանանում քաղաքական ճնշման ձևերից մեկն էլ նախագահի հրաժարականի սպառնալիքն էր: Օրինակ՝ 1960թ. նախագահ Ֆուադ Շիհաբը դիմեց այդ քայլին և սպառնաց հրաժարական տալ, որը պայմանավորված էր այն հանգամանքով, որ քաղաքական իշխող շրջանակները երկար ժամանակ չէին կարողանում պայմանավորվել նոր կառավարության կազմի վերաբերյալ: Ստեղծված իրավիճակում խորհրդարանի նախագահը դիմեց նախագահին և խնդրեց ետ վերցնել իր հրաժարականի դիմումը[256]: Այս խուսանավումը հնարավորություն տվեց նախագահին ավելի ամրապնդել իր իշխանությունը: Հետագայում՝ հակառակ այն բոլոր հակասությունների, որ գոյություն ունեին տարբեր կրոնական համայնքների և քաղաքական ուժերի միջև, նախագահի ցուցումները՝ կապված կառավարության ձևավորման և նրա կազմի հետ, արդեն չէին վիճարկվում:

Լիբանանում մարոնի նախագահի և սուննի վարչապետի միջև հաջող համագործակցության օրինակ էր Ֆուադ Շիհաբի և Ռաշիդ Քարամեի համագործակցությունը: Ռաշիդ Քարամեն հարգում էր նախագահի լիազորությունները, բայց և որպես վարչապետ՝ լիովին օգտվում էր իր բոլոր իրավունքներից, իսկ Ֆուադ Շիհաբն, իր հեր-

---

[256] A. Ismail, Le Liban. Histoire d'un Peuple, Beyrouth, 1965, p. 213.

քին, պատրաստակամորեն թույլ էր տալիս Քարամեին իր գործողություններում ցուցաբերել որոշակի ազատություն, որի արդյունքում լիբանանյան իսլամադավանների շրջանում բարձրանում էր վերջինիս վարկանիշը: Ռաշիդ Քարամեն կարողանում էր իր ազդեցությամբ և հեղինակությամբ վերահսկողություն սահմանել երկրի իսլամադավան համայնքների վրա և ժամանակին սաստել նրանց դժգոհությունները:

Շիհաբական «Ալ-նահջի» վարած քաղաքականության ակտիվ մասնակիցներից էր նաև Իլիաս Սարգիսը, որը զբաղեցնում էր նախագահի գրասենյակի ղեկավարի պաշտոնը[257]:

Ֆուադ Շիհաբի ներքին և արտաքին քաղաքականությունը մեծ աջակցություն էր գտնում լիբանանյան իսլամադավանների շրջանում, ինչին հակառակ քրիստոնեական, մասնավորապես՝ մարոնական շրջանակներում ձևավորվում էր լուրջ ընդդիմություն գործող նախագահի նկատմամբ: Այս գործընթացի ապացույցն էր այն, որ թեև «Քաթաիբ» կուսակցության ղեկավար Պիեր Ժմայելը համագործակցում էր Ֆուադ Շիհաբի հետ, այդուհանդերձ, մեծ թվով փաստաթղթեր, դժգոհ նախագահի, հատկապես, արտաքին քաղաքականությունից՝ արաբական աշխարհի և մասնավորապես Եգիպտոսի ու նրա նախագահ Նասերի հետ հարաբերությունների մերձեցումից, լքեցին կուսակցության շարքերն ու միացան ընդդիմադիր շամունականներին[258]:

Լիբանանի համար գնալով ավելի դժվարանում էր դրական չեզոքություն պահպանելն ու որևէ ռազմական դաշինքի չմիանալը: Սա կապված էր արտաքին մի շարք գործոնների հետ:

Տարածաշրջանում գնալով սրվող ամերիկա-խորհրդային հարաբերությունների պայմաններում Խորհրդային Միությունը բավարար ակտիվորեն համագործակցում էր լիբանանյան ձախ ուժերի հետ: Նասերի արաբական ազգայնական գաղափարները մեծ ժողովրդականություն էին վայելում լիբանանյան իսլամադավանների շրջանում: ԽՍՀՄ-ի և Եգիպտոսի միջև հարաբերությունների էլ ավե-

---

257 M. Hudson, The Precarious Republic: Political Modernization in Lebanon, New York, 1985, p. 309.

258 K. Salibi, Cross Roads to Civil War, p. 20.

լի սերտացումը զուգորդվում էր ԱՄՆ-ի և Եգիպտոսի միջև արդեն իսկ առկա սառնության մեծացմամբ: Բնական էր, որ այս պայմաններում՝ հակառակ լիբանանյան իսլամադավանների ազգայնական տրամադրություններին, Լիբանանին հարկավոր էր որևէ արևմտյան պետության հետ հարաբերությունների սերտացում: Ստեղծված պայմաններում նախագահը հրաժարվեց ԱՄՆ-ի կամ Անգլիայի հետ հարաբերություններին առաջնայնություն տալուց և նախընտրեց Ֆրանսիային, որը համարվում էր լիբանանյան քրիստոնյաների վաղեմի գործընկերը[259]: Ֆուադ Շիհաբի կարծիքով Ֆրանսիան այն «ոսկե միջինն էր», որի հետ հարաբերությունների սերտացումը տվյալ փուլում անհրաժեշտություն էր Լիբանանի համար[260]:

Ստեղծված իրավիճակում ԱՄՆ-ը, որը վախենում էր թուլացնել իր ազդեցությունը Մերձավոր Արևելքում իր ռազմավարական հենակետերից մեկում՝ Լիբանանում, ի հակակշիռ Ֆրանսիայի աճող ազդեցության, որոշեց ակտիվացնել իր գործողությունները և վերսկսեց աջակցության և օժանդակության տրամադրումն իր վաղեմի դաշնակցին՝ Քամիլ Շամունին և նրա ղեկավարած հակաշիհաբական ճակատին, որն իր ձևավորման գործընթացում էր:

Բավական ակտիվացել էին Նասերի արաբական ազգայնական գաղափարներից ոգևորված լիբանանյան իսլամադավանները: Այս ուղղությամբ ակտիվորեն աշխատանք էր տանում Բեյրութում ԱՄՀ-ի դեսպան՝ Աբդ Ալ-Համիդ Գանիբը, որը բավական ակտիվորեն միջամտում էր Լիբանանի ներքին գործերին, փորձում իր ազդեցության տակ պահել նասերական տրամադրություններ ունեցող լիբանանյան իսլամադավաններին և ամեն բան անում էր լիբանանաեգիպտական հարաբերություններն էլ ավելի սերտացնելու նպատակով[261]: Այս փաստն անհանգստացնում էր մարոնի վերնախավին, որը համխմբվում էր Քամիլ Շամունի և նրա ղեկավարած հակաշիհաբական ճակատի շուրջ:

Այդուհանդերձ, Ֆուադ Շիհաբի նախագահության տարիները, որոշ թերություններով հանդերձ, ամենահաջողվածն էին տարբեր

---

[259] M. Hudson, նշվ. աշխ., էջ 304:
[260] "Le Soir", Beyrouth, 14 Novembre, 1961.
[261] Նույն տեղում:

կրոնական համայնքների միջև՝ «Ազգային դաշինքով» հաստատված քաղաքական և վարչական հավասարակշռության պահպանման առումով:

Թեև նախագահն իր իշխանության առաջին տարիներին հերքում էր որևէ համագործակցություն «պանրակերների» դասին պատկանող քաղաքական ղեկավարների հետ, այդուհանդերձ նախագահության վերջին տարիներին, արդեն ձևավորվող ընդդիմության շարքերում որոշակի տարաձայնություններ առաջացնելու նպատակով՝ նախագահը գնաց որոշ զիջումների: Ավանդական կլանային գործիչների հետ համագործակցությունը գրեթե անհնար էր դարձնում «անկախ և ոչ կոռուպացված պետություն» ստեղծելու գաղափարը, որը նախագահը համարում էր իր հիմնական նպատակը: «Պանրակերների»՝ ավանդական կլանային ղեկավարների հետ հարաբերությունների սերտացման ու համագործակցության արդյունքում շիհաբականների մի մասը՝ հիմնականում բանակային նախկին սպաներ, նույնպես ընդգրկվեցին կլանային տարբեր խմբավորումների մեջ, որոնք ակտիվ շփումներ ունեին «պանրակերների» հետ[262]:

Ֆուադ Շիհաբի իշխանության վերջին տարիներին՝ 1962-1964թթ., շիհաբական «Ալ-նահջն» աստիճանաբար անկում էր ապրում: Կրկին երկրորդական էին դարձել համազգային և առաջնահերթ՝ կլանային շահերը: Հակառակ նախագահի ձեռնարկած բոլոր միջոցառումներին՝ լիբանանյան հասարակության լայն շրջանում ի հայտ էին գալիս լուրջ դժգոհություններ և անբավարարվածության դրսևորումներ: Ֆուադ Շիհաբին ընդդիմադիր ճակատը փորձում էր օգտվել այդ գործընթացից:

1963թ. լիբանանյան իշխող շրջանակներում լուրեր էին տարածվում, որ Ֆուադ Շիհաբը մտադրություն ուներ փոփոխություն կատարել Լիբանանի սահմանադրության մեջ և երկրորդ անգամ ընտրվել նախագահի պաշտոնում: Լիբանանում իրավիճակը գնալով շիկանում էր: Իրադարձությունների նման ընթացքը կարող էր հանգեցնել 1958թ. դեպքերի կրկնությանը: Միայն այն տարբերությամբ,

---

[262] K. Salibi, Lebanon under Fuad Chehab 1958-1964, Middle Eastern Studies, No. 2, April, 1966, p. 219.

որ այս անգամ վերընտրվող նախագահի կարգավիճակում հանդես էր գալիս Ֆուադ Շիհաբը, իսկ ընդդիմադիր ճակատը գլխավորում էր Քամիլ Շամունը: Փոխվել էին միայն դերակատարների տեղերը:

Հակաշիհաբական ճակատին միացել էր նաև Սաիբ Սալամը, որը 1958թ. Քամիլ Շամունի դեմ ապստամբության ակտիվ մասնակիցներից էր: Սակայն, մոռացության տալով իր վաղեմի թշնամանքը, Սալամը համագործակցում էր Քամիլ Շամունի հետ հակաշիհաբական դաշինքում: Այս ճակատին ակտիվ աջակցություն էր ցույց տալիս նաև «Ալ-նահար» լիբանանյան օրաթերթի խմբագիր Հասան Ալ-Թուայնին, որը հակաշիհաբական ճակատի «խոսափողն» էր: Դաշինքին իր ուղղակի աջակցությունն էր ցույց տալիս նաև մարոնի պատրիարք Մեուշին[263]: Շիհաբի նախագահության առաջին տարիներին Մեուշին աջակցում և օժանդակություն էր ցույց տալիս նախագահին, սակայն 1961թ. հետո վերջինս բացահայտ քննադատում էր Ֆուադ Շիհաբի և նրա համախոհների իրականացրած քաղաքականությունը: Ֆուադ Շիհաբը չէր խորհրդակցում Մեուշի հետ, ինչն առաջ էր բերում մարոնի պատրիարքի դժգոհությունը, ով կորցրել էր նախագահի վրա ազդելու իր լծակները: Լիբանանի նախագահի և մարոնիների պատրիարքի միջև հարաբերությունների խզումը զուգորդվում էր սուննի ազդեցիկ ղեկավար Սաիբ Սալամի և Մեուշի միջև հարաբերությունների սերտացմամբ[264]:

Շիհաբի վերընտրման մասին լուրերը ձեռնտու էին Շամուն-Էդդե-Մեուշի դաշինքին և այս փաստն առավելագույնս օգտագործվում էր հակաշիհաբական քարոզչության մեջ:

1964թ. խորհրդարանական ընտրություններում հակաշիհաբական դաշինքին հաջողվեց հաղթանակ տանել մի քանի ընտրատարածքներում: Սակայն այդ հանգամանքն էականորեն չազդեց ընտրությունների արդյունքների վրա և շիհաբական թևը հաղթանակ տարավ՝ մեծամասնություն կազմելով լիբանանյան խորհրդարանում: Այս պայմաններում, եթե նախագահը որոշեր սահմանադրության մեջ փոփոխություն մտցնել և երկրորդ անգամ վերընտրվել, խորհրդարանը պատրաստ էր աջակցել նրան:

---

[263] Նույն տեղում, էջ 220:
[264] Նույն տեղում, էջ 223:

Սակայն Լիբանանում իրավիճակի հետագա սրումը կանխելու և 1958թ. դեպքերի կրկնությունը թույլ չտալու նպատակով՝ Ֆուադ Շիհաբը՝ որպես խոհեմ քաղաքական գործիչ, նախընտրեց չխախտել սահմանադրությունը, հրաժարվեց երկրորդ անգամ իր թեկնածությունը նախագահի պաշտոնում առաջադրելուց և որոշեց իր քաղաքական հետևորդին նախագահի պաշտոնում ընտրելով, փորձել շարունակել իր քաղաքական գիծը[265]:

1964թ. նախագահական ընտրությունների ընթացքում Լիբանանում բախվեցին երկու հակադիր ուժեր: Մի կողմից լիբանանյան աջ շրջանակները՝ հակաշիհաբական ճակատը՝ Քամիլ Շամունի գլխավորությամբ, որը ձգտում էր, որ նոր նախագահի պաշտոնը զբաղեցներ այնպիսի քաղաքական գործիչ, որը արմատապես փոխեր Լիբանանի արտաքին քաղաքականությունը և վերադառնար այն քաղաքակությանը, որը վարվում էր մինչև 1958թ. ապստամբությունը, իսկ մյուս կողմից՝ շիհաբական «Ալ-նահջն» ու լիբանանյան ձախ շրջանակները, որոնք ձգտում էին պահպանել ներքին ասպարեզում այդքան դժվարությամբ հաստատված հավասարակշռություն ու արտաքին ասպարեզում Լիբանանի դրական չեզոքության քաղաքականություն ու կայուն հարաբերություններն ինչպես Արևմուտքի, այնպես էլ՝ արաբական աշխարհի հետ:

Հակաշիհաբական ճակատը, որը փոքրաթիվ ներկայացուցչություն ուներ լիբանանյան խորհրդարանում, փորձում էր օգտագործել այս հանգամանքը և ապահովել իր մարոնի անդամներից մեկի ընտրությունը նախագահի պաշտոնում: Սակայն շիհաբական թևը խորհրդարանում մեծամասնություն էր կազմում և այս տեսանկյունից ոչ՛ Քամիլ Շամունը և ոչ՛ էլ Ռայմոն Էդդեն որևէ հույս չէին կանխատեսում ունենալ խորհրդարանում ձայների մեծամասնություն ստանալու և նախագահի պաշտոնում ընտրվելու հարցում:

Նման պայմաններում նախագահական ընտրություններում առաջադրվեց Շարլ Հելուն, որի թեկնածությունը պաշտպանեց լիբանանյան ազդեցիկ շրջանակների բացարձակ մեծամասնությունը:

---

[265] H. Cobban, The Making of Modern Lebanon, London, 1985, p. 92.

1964թ. նախագահական ընտրություններում 92 ձայնով՝ ընդդեմ 7-ի, հանրապետության նախագահ ընտրվեց Շարլ Հելուն[266]: Լիբանանում նախագահական ընտրություններում առաջադրվում էր երկու թեկնածու, ինչը, սակայն, հիմնականում ձևական բնույթ էր կրում՝ ցույց տալու, որ նախագահական ընտրություններում առկա էր «ժողովրդավարական պայքար»: Այս ընտրություններում նախագահի պաշտոնի երկրորդ թեկնածուն «Քաթաիբ» կուսակցության ղեկավար Պիեր Ժմայելն էր, որը ստացավ միայն 5 ձայն:

Լիբանանում նախագահական ընտրությունների նախօրեին չափազանց սրվում էր ներքաղաքական իրավիճակը: Այս իրավիճակին հատկապես նպաստում էր այն, որ գրեթե բոլոր շահագրգռված կողմերը, այդ թվում նաև Արևմուտքը, հատկապես՝ ԱՄՆ-ը, փորձում էին տարբեր մեթոդներով ազդել նախագահական ընտրությունների վրա՝ նախագահի պաշտոնում գերադասելով այն մարդուն, որի արտաքին քաղաքականությունը կհամապատասխաներ իրենց սեփական շահերին: Հետաքրքրական էր, որ 1964թ. հունիսին Հռոմում տեղի ունեցած ամերիկյան դեսպանների գաղտնի խորհրդակցության ընթացքում քննարկվել էին Լիբանանում կայանալիք նախագահական ընտրություններին վերաբերող հարցեր: Այս կապակցությամբ մեծ ակտիվություն էր ցուցաբերում Բեյրութում ամերիկյան դեսպանը, որի գործունեությունը բազմիցս քննադատում էին լիբանանյան թերթերը[267]: ԱՄՆ-ը նախագահական ընտրություններում փորձում էր ապահովել և նպաստել հակաշիհաբական աջ ուժերի ղեկավարներից մեկի ընտրությանը, ինչը սակայն չհաջողվեց: Շիհաբական «Ալ-նահջը» հաղթանակ տարավ և նոր նախագահ ընտրված Շարլ Հելուն հայտարարեց, որ հակված է շարունակել իր նախորդի՝ Ֆուադ Շիհաբի քաղաքականությունը:

---

[266] Е. Мельников, նշվ. աշխ., էջ 115:
[267] Там же, с. 116.

3. Շարլ Հելուի նախագահության առաջին տարիները (1964-1967թթ.): Հարաբերական կայունության շրջանի ավարտը

Լիբանանի նոր նախագահ Շարլ Հելուն (1964-1970թթ.) իր գործունեությունը սկսել էր «Լը ժուր» լիբանանյան թերթում, որտեղ նա զբաղեցրել էր թերթի խմբագրի պաշտոնը: 1947թ. Հելուն դեսպան նշանակվեց Վատիկանում, ապա 1954թ. սեպտեմբերից մինչև 1955թ. մայիս ամիսը նա զբաղեցնում էր առողջապահության նախարարի, իսկ 1964թ. փետրվար-սեպտեմբեր ամիսներին՝ կրթության նախարարի պաշտոնները[268]: Հելուն սերտ կապեր ուներ «Սահմանադրական դաշինք» կուսակցության ղեկավարության հետ, ինչպես նաև ակտիվորեն համագործակցում էր շիհաբական «Ալ-նահջ» խմբավորման հետ[269]:

Լիբանանյան հակաշիհաբական շրջանակները, որոնք պարտություն էին կրել 1964թ. նախագահական ընտրություններում, հենց սկզբից քննադատում էին նորընտիր նախագահին և նրա աքիլեսյան գարշապարը համարում այն, որ նա նորեկ էր քաղաքականության ոլորտում, չուներ քաղաքական համախոհներ, և հստակ ծրագիր, մեծապես կախում ուներ երկրի նախկին նախագահից և շիհաբական «Ալ-նահջից»[270]:

Ստանձնելով նախագահի պաշտոնը՝ Շարլ Հելուն հայտարարեց, որ շարունակելու էր Ֆուադ Շիհաբի վարած քաղաքական ուղեգիծը, հարազատ է մնալու դրական չեզոքության քաղաքականությանն ու ավարտին է հասցնելու իր նախորդի սկսած սոցիալ-տնտեսական բարեփոխումները[271]:

Հակաշիհաբական ճակատը, որն ընդդիմադիր էր նորընտիր նախագահին հայտարարում էր, որ Երկրորդ գրասենյակի ղեկավարության հովանավորությամբ շիհաբականները փորձում էին քաղա-

---

[268] Middle East and North Africa 1969-1970, London, 1970, p. 906.
[269] S. Mackey, նշվ. աշխ., էջ 136:
[270] K. Salibi, նշվ. աշխ., էջ 23:
[271] Middle East and North Africa 1969-1970, p. 434.

քականապես թույլ նախագահի միջոցով շարունակել իրենց քաղաքական նպատակների իրականացումը: Այս առիթով «Ալ-նահար» լիբանանյան օրաթերթը գրում է. «Շարլ Հելուն պարզապես անօգնական տիկնիկ է շիհաբական ուժերի ձեռքին, որն ամբողջությամբ կախման մեջ է նրանցից: Շիհաբական թևի ներկայացուցիչը պաշտոնական մակարդակում նախագահի գրասենյակի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող Իլիաս Սարգիսն է, որի ղեկավարությամբ ուղղակիորեն մշակվում և իրականացվում է նոր նախագահի քաղաքականությունը»[272]:

Սակայն փաստենք, որ իրականում դա այդքան էլ այդպես չէր: Շարլ Հելուն, հայտնվելով երկու հակադիր ուժերի միջև, մի կողմից՝ շիհաբական «Ալ-նահջ», իսկ մյուս կողմից՝ հակաշիհաբական ճակատ՝ սկսել էր հմտորեն խուսանավել: Նա մի կողմից ոգևորում էր հակաշիհաբական ուժերին, հաճախակի հանդիպումներ ունենալով այդ ուժերի ղեկավարների հետ, ովքեր հաստատուն կերպով ամրապնդում էին իրենց դիրքերը, իսկ մյուս կողմից ակտիվորեն շարունակում էր համագործակցել և խորհրդակցել շիհաբական թևի հետ և զուգահեռաբար սրում էր այս երկու հակադիր ուժերի միջև եղած հակասությունները:

Նախագահի այս գործելակերպը դժգոհություններ էր առաջացնում «Ալ-նահջի» ղեկավարների շրջանում, ովքեր օգտագործում էին խորհրդարանում իրենց մեծամասնություն լինելու փաստը և փորձում էին նաև այդ ճանապարհով իրենց ազդեցության ոլորտում պահել նախագահին: Սակայն վերջինս ցանկանում էր որքան հնարավոր է հեռու մնալ այդ ազդեցություններից և ավելորդ անգամ չներքաշվել շիհաբականների և հակաշիհաբականների միջև գոյություն ունեցող հակամարտության մեջ:

Շարունակելով դեռևս Ֆուադ Շիհաբի նախագահության տարիների սկսված պետական համակարգի առողջացման նպատակով իրականացվող «վարչական բարեփոխումների» ծրագիրը, ինչը ենթադրում էր պետական համակարգի զտում և վերակառուցում, նոր նախագահը բախվեց մի շարք դժվարությունների հետ: 1966թ. այս

---

[272] ألنهار, «Ալ-նահար», Բեյրութ, 28.09.1964:

«զտման» արդյունքում աշխատանքից հեռացվեցին մի քանի պաշտոնյաներ, որի հետևանքով սկսվեցին վեճեր, ինչը կապված էր պետական պաշտոնյաների նշանակման հարցում կրոնադավանական սկզբունքի խախտման հետ: Այս վեճերի նպատակն այն էր, որ ազատված պաշտոնները նորից զբաղեցնեին նույն համայնքի ներկայացուցիչները:

Մինչև 1967թ. Շարլ Հելուին հաջողվում էր արտաքին քաղաքականության ոլորտում պահպանել դրական չեզոքության սկզբունքը, ինչպես Արևմուտքի, այնպես էլ արաբական աշխարհի հետ հարաբերություններում:

Շարլ Հելուի նախագահության առաջին տարիներին նա հաջողությամբ համագործակցում էր երկրի սունիի վարչապետների հետ: 1964թ. սեպտեմբերից մինչև 1965թ. հուլիս ամիսները Լիբանանի վարչապետի պաշտոնը զբաղեցնում էր Հուսեյն Վեյնին, 1965թ. օգոստոսից մինչև 1966թ. մարտ ամիսները՝ Ռաշիդ Քարամեն, իսկ 1966թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին երկրի վարչապետն էր Աբդուլլահ Յաֆին, որին 1966թ. դեկտեմբերին փոխարինեց Ռաշիդ Քարամեն: Վերջինս պաշտոնավարեց մինչև 1968թ. փետրվար ամիսը[273]:

Շարլ Հելուի նախագահության ողջ շրջանը և հատկապես վերջին տարիները, համընկան տարածաշրջանում նոր և լուրջ քաղաքական զարգացումների հետ: Այս զարգացումներին զուգահեռ լարվում էին լիբանանյան տարբեր քաղաքական ուժերի միջև հարաբերությունները՝ մի կողմից լիբանանյան ձախ ուժեր՝ «Առաջադիմական սոցիալիստական կուսակցություն», «Լիբանանի կոմունիստական կուսակցություն», «Լիբանանյան նասերականներ», «Արաբական վերածննդի Բաաս» կուսակցության լիբանանյան մասնաճյուղ և այլն, իսկ մյուս կողմից՝ լիբանանյան աջեր, հիմնականում հակաշիհաբական ուժեր՝ «Շամունականներ» և «Ազգային դաշինք»:

Դեռևս Ֆուհադ Շիհաբի նախագահության վերջին երկու տարիներին և ապա Լիբանանի հաջորդ նախագահ Շարլ Հելուի նախագահության ողջ ընթացքում, երբ պաղեստինցիների ակտիվացման և

---

[273] Е. Мельников, նշվ.աշխ., էջ 143:

նրանց պայքարի առավել կազմակերպվածության արդյունքում խիստ սրվեց և նոր թափ ստացավ արաբ-իսրայելյան հակամարտությունը, Լիբանանը, որի տարածքում արդեն 1964թ. ապաստան էին գտել տարբեր տվյալներով 400.000-ից-450.000 պաղեստինցի փախստականներ, չէր կարող անմասն մնալ տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներից:

1963թ. վերջին խիստ սրվեցին արաբ-իսրայելյան հարաբերությունները, ինչը կապված էր Հորդանան գետի ջրերը միակողմանիորեն օգտագործելու մասին Իսրայելի մտադրության հետ:

Դեռևս 1953թ. ԱՄՆ նախագահ Էյզենհաուերը, հաշվի առնելով Մերձավոր Արևելքում ջրի շուրջ վեճերի՝ զինված հակամարտության վերաճելու վտանգը, տարածաշրջան ուղարկեց Էրիկ Ջոնսթոնին, որը պետք է բանակցություններ միջոցով Հորդանան գետի մերձափնյա երկրներին համոզեր ստորագրել ընդհանուր համաձայնագիր՝ Հորդանան գետի վրա համատեղ ջրային ծրագրեր իրականացնելու վերաբերյալ[274]: Ջոնսթոնի ծրագրի համաձայն՝ Հորդանան գետի ջրերը նախատեսվում էր բաժանել հետևյալ կերպ՝ Հորդանան՝ 480.000մ^3, Սիրիա՝ 144.000մ^3, Լիբանան՝ 34.000մ^3 և Իսրայել՝ 300.000մ^3 ջուր[275]: 1955թ. Իսրայելը՝ որոշ վերապահումներով, ընդունեց Ջոնսթոնի ծրագիրը, սակայն ԱՊԼ խորհուրդը մերժեց՝ այն համարելով «սիոնիստական էքսպանսիայի փորձ արաբական հողում»: Ի պատասխան Իսրայելը սկսեց իրականացնել «Ազգային ջրատարի» (The National Water Carrier) ծրագիրը, որը Տիբերիասի (Տիբերիադ, Տիբերյան) լճից ջուրը տեղափոխելու էր երկրի հարավ–արևմուտք: Այս ծրագիրը հիմնականում ավարտվեց 1964թ.[276]:

1964թ. հունվարին Եգիպտոսի նախագահ Նասերը հրավիրեց արաբական երկրների ղեկավարների 1-ին գագաթաժողովը, որին իրենց մասնակցությունը բերեցին 13 արաբական պետություններ,

---

[274] J. Bulloch and A. Darwish, Water Wars: Coming Conflicts in the Middle East, Victor Gollantz Publishers, London, 1993, pp. 33-40.

[275] Запись беседы заведующего отделом стран Ближнего Востока МИД СССР А. Шиборина с послом Государство Израиль И. Текоа, 21.02.1964, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 417.

[276] J. Bulloch and A. Darwish, նշվ.աշխ., էջ 33-40:

որոնց թվում էր նաև Լիբանանը: Արաբական երկրները որոշում ընդունեցին՝ որպես ի պատասխան Իսրայելի ջրային քաղաքականության՝ ջուրն իբրև զենք նրա դեմ օգտագործելու վերաբերյալ: Որոշվեց նաև կազմավորել Միացյալ արաբական հրամանատարություն, որն Իսրայելի վերոհիշյալ ծրագիրը ռազմական միջամտությամբ խանգարելու դեպքում պետք է դիմեր համապատասխան քայլերի[277]: Սիրիայի, Լիբանանի և Հորդանանի զինված ուժերի ամրապնդման նպատակով վերջիններիս տրամադրվելու էր 15 մլն ֆունտ, որի հիմնական մասը հատկացնելու էր Քուվեյթը՝ 6 մլն և Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան՝ 3-ական մլն[278]:

Նույն թվականի սեպտեմբերին Նասերը հրավիրեց 2-րդ գագաթաժողովը, որը հավանություն տվեց Հորդանան գետը խոտորելու ծրագրին: Մասնավորապես որոշվեց Հորդանան գետի հյուսիսային վտակների՝ Ալ-Հասբանիի և Ալ-Բանիասի, ինչպես նաև Հորդանանում՝ Յարմուք գետի վրա կառուցել ամբարտակներ[279]: Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան պատրաստակամություն հայտնեցին ֆինանսավորել և աջակցել աշխատանքների իրականացմանը: Գագաթաժողովի եզրափակիչ հայտարարությունում՝ ի թիվս Իսրայելի դեմ ձեռնարկվելիք այլ միջոցառումների, խոսվում էր այն մասին, որ տեխնիկական առումով Իսրայելի դեմ պետք է օգտագործել Հորդանան գետի վրա կառուցվելիք ջրային կառույցները:

1965թ. իսրայելական բանակը հարձակվեց Սիրիայում արդեն իսկ կառուցվող ջրային կառույցների վրա: Այս հարձակումներին հետևած իրադարձությունների շղթան ի վերջո հանգեցրեց 1967թ. արաբ–իսրայելյան պատերազմին[280]:

1964թ. հունվարի Կահիրեի գագաթաժողովում Լիբանանի կառավարությունը լուրջ մտավախություն ուներ և վարանում էր միա-

---

[277] Ա. Հովհաննիսյան, ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելապաղեստինյան հակամարտության հանդեպ, Երևան, 2001, էջ 15:
[278] Телеграмма посла СССР в ОАР В. Ерофеева в МИД СССР, 22.01.1964, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 409.
[279] Телеграмма посла СССР в ОАР В. Ерофеева в МИД СССР, 13.09.1964, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 439.
[280] J. Bulloch and A. Darwish, նշվ. աշխ., էջ 40-58:

նալ Իսրայելին դիմակայող արաբական երկրների ճակատին: Երկրի իշխանություններն անհանգստանում էին, որ այդ հանգամանքը կարող էր սրել լիբանանաիսրայելյան հարաբերությունները՝ դրանից բխող բոլոր աղետալի հետևանքներով: Այս կապակցությամբ Ֆուադ Շիհաբը նշեց, որ Լիբանանը չէր ցանկանում միայնակ վճարել ոչ հավասարակշռված առաջարկությունների համար: Նույնիսկ եթե Իսրայելի հնարավոր հարձակման դեպքում լիբանանցիներին խոստացվի «ռազմական հովանոց»՝ միացյալ արաբական զինված ուժերի տեսքով, Լիբանանը չի համաձայնվի դառնալ «քավության նոխազ»[281]: Նման պարագայում օգտվելով ստեղծված առիթից՝ Եգիպտոսն ու Սիրիան առաջարկեցին Լիբանանում տեղակայել իրենց ռազմական ուժերը՝ Իսրայելի անսպասելի ներխուժման դեպքում Լիբանանին օժանդակություն ցույց տալու նպատակով: Սակայն Լիբանանի նախագահ Ֆուադ Շիհաբը և լիբանանյան կառավարությունը կտրականապես մերժեցին այս առաջարկությունը հայտարարելով, որ միայն լիբանանյան բանակը կարող է պաշտպանել Լիբանանն ու լիբանանցիներին[282]: Իբրև պատասխան առաջարկություն՝ Ֆուադ Շիհաբը Եգիպտոսին և Սիրիային առաջարկեց օժանդակել, որպեսզի ԱՊԼ-ն նյութական միջոցներ հատկացներ Լիբանանին՝ իր բանակի ամրապնդման, վերազինման և վերջինիս մարտունակության բարձրացման նպատակով: Արդյունքում Լիբանանը սեփական ուժերով կկարողանար դիմագրավել իսրայելյան ցանկացած հնարավոր հարձակմանը[283]: Այս հարցը շարունակում էր մնալ ԱՊԼ-ի օրակարգում, երբ Լիբանանում նոր նախագահ ընտրվեց Շարլ Հելուն[284]:

---

[281] Запись беседы посла СССР в Ливане Д.С. Никифорова с президентом Ливанской Республики Ф. Шехабом, 08.09.1964, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., с. 437.

[282] M. Suleiman,The Middle East Journal, "Crisis in Lebanon", Summer 1971, p. 14.

[283] E. Sulem, The Middle East Joutnal, "Cabinet Politics in Lebanon", Autumn, 1967, p. 488.

[284] ألنهار, «Ալ-նահար», Բեյրութ, 30.10.1964:

1964թ. Կահիրեի և Ալեքսանդրիայի գագաթաժողովները շրջադարձային էին Լիբանանի համար: Սկսված էր արաբ-իսրայելյան հակամարտության մեջ Լիբանանի ներքաշման գործընթացը: Ակնհայտ էր, որ արաբական երկրները Լիբանանին ևս Իսրայելին դիմակայող արաբական երկրների ճակատում ընդգրկելու լուրջ մտադրություն ունեին: Մի կողմից արաբական երկրների որոշակի ճնշման, իսկ մյուս կողմից այն մերժելու պարագայում երկրի ներսում հնարավոր պայթյունավտանգ զարգացումների իրական լինելու պատճառով, Լիբանանը ստիպված եղավ միանալ այդ ճակատին[285]: Լիբանանը մտավ նաև Միացյալ արաբական հրամանատարության կազմի մեջ, որի նպատակն էր իսրայելյան հնարավոր հարձակումներից պաշտպանել Իսրայելին սահմանակից արաբական պետությունները՝ Եգիպտոսը, Հորդանանը, Սիրիան և Լիբանանը, պայմանով, որ եգիպտական, հորդանանյան և սիրիական ուժեր չմտցվեին Լիբանան՝ առանց Բեյրութի պաշտոնական իսնդրանքի[286]:

Մինչ այդ 1964թ. մայիսի 28-ից հունիսի 2-ը Երուսաղեմի արաբական հատվածում ԱՊԼ հովանու ներքո տեղի ունեցավ Պաղեստինի Ազգային խորհրդի առաջին նստաշրջանը, որը որոշում ընդունեց «Պաղեստինի ազատագրության կազմակերպության» (ՊԱԿ) ստեղծման մասին և հաստատեց «Ազգային դաշինքը», որը «բոլոր պաղեստինցիներին հայտարարեց ՊԱԿ-ի անդամներ»[287]:

Շարլ Հելուն, 1964թ. արաբական երկրների այս համաժողովում ճանաչելով ՊԱԿ-ին, որպես Պաղեստինի ժողովրդի շահերի պաշտպան, միաժամանակ ընդգծեց, որ ՊԱԿ-ը և նրա զինված միավորումները չպետք է ռազմական ճամբարներ ունենան Լիբանանի տարածքում և, եթե որևէ պաղեստինցի ցանկություն կհայտներ միանալ «Պաղեստինյան դիմադրության շարժմանը» (ՊԴՇ), ապա

---

[285] W. Goria, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, London, 1985, p. 76.

[286] ألنهار, «Ալ-նահար», Բեյրութ, 25.12.1970.

[287] Շ.Կարամանուկյան, Արաբական պետությունների լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988, էջ 160:

ազատ էր այդ հարցում, միայն նա պարտավոր էր լքել Լիբանանի տարածքը[288]:

Պաղեստինցիների առաջին զանգվածային ներհոսքը Լիբանան տեղի էր ունեցել 1948թ. պաղեստինաիսրայելյան առաջին պատերազմից հետո: Լիբանանի տարածքում գտնվում էին պաղեստինցի փախստականների մոտ 15 ճամբարներ, որոնցից Թել-Զաաթարը, Բուրջ Բարաջնան, Սաբրան, Շաթիլան գտնվում էին Բեյրութի արվարձաններում, Այն Ալ-հիլուեն՝ հարավլիբանանյան Սիդոն քաղաքի մոտ, Ռաշիդիյան՝ Տիր (Սուր) քաղաքի մոտ, Նահր Ալ-բարիդը՝ Տրիպոլիից 17կմ հեռավորության վրա և այլն: Այս ճամբարները գտնվում են ՄԱԿ-ի օգնության և հասարակական աշխատանքների գործակալության վերահսկողության տակ (UNRWA)[289]:

Պաղեստինցիների ներկայությունը Լիբանանում չէր սահմանափակվում միայն փախստականների սոսկ առկայությամբ: Արդեն 1964թ. երկրի տարածքում գործում էին մի քանի պաղեստինյան զինված ջոկատներ, որոնք մտադրություն ունեին Լիբանանի տարածքը՝ մասնավորապես երկրի հարավը, որը սահմանակից էր Իսրայելին, օգտագործել վերջինիս դեմ պայքարում[290]:

Իսրայելին սահմանակից չորս արաբական երկրներից Լիբանանը Հորդանանից հետո երկրորդն էր իր տարածքում հաստատված պաղեստինցիների թվաքանակով: Բնական է, որ 1964թ. ձևավորված ՊԱԿ-ը մտադրված էր Իսրայելի դեմ ուղղված իր գործողությունների զգալի մասն իրականացնել Լիբանանի տարածքից: Թեև ՊԱԿ-ի ղեկավարության պաշտոնական նստավայրը գտնվում էր Կահիրեում, սակայն մինչև 1967թ. ՊԱԿ-ը ղեկավարող Ահմադ Ալ-Շուքայրին ապրում էր Լիբանանում: Շիական Քայֆուն գյուղի մոտ գտնվող իր ամառանոցը նա դարձրել էր ռազմական ճամբար,

---

[288] ألمعلومات,«Մալումաթ», Բեյրութ, 15.02.1995.

[289] R. Sayigh, Najida Newsletter "Palestinians in Lebanon: Waiting", Vol. 35, No. 4, Summer, 1995, p. 2.

[290] سيرة ذاتية،ألمارونية السياسية،١٩٧٥،ص٩٧.

որտեղ զինվորական պատրաստություն էին անցնում պաղեստինցի մարտիկները[291]:

Ինչպես Ֆուադ Շիհաբը, այնպես էլ Շարլ Հելուն, հատուկ ուշադրություն էր ցույցաբերում Լիբանանում պաղեստինցիների ներկայությանը: Այս կապակցությամբ Երկրորդ գրասենյակին հանձնարարվել էր Լիբանանում պաղեստինցի փախստականների ճամբարների վերահսկումը[292]:

Լիբանանում պաղեստինյան զինված խմբավորումների հետ կապված լուրջ խնդիրներն առաջացան 1965թ., երբ պաղեստինյան զինված մարտիկների մի ջոկատ, Լիբանանի հարավից անցնելով Իսրայելի հետ սահմանը, հարձակման ենթարկեց Իսրայելի հյուսիսային մի քանի բնակավայրեր: Ի պատասխան պաղեստինցիների այս գործողության՝ Երկրորդ գրասենյակն ավելի ուժեղացրեց իր հսկողությունը պաղեստինցիների հանդեպ: Այդ գրասենյակի կողմից ձերբակալվեցին և բանտարկվեցին մի քանի պաղեստինցի զինված մարտիկներ, այդ թվում նաև Սիդոնի մոտ գտնվող Այն Ալ-հիլուե պաղեստինցի փախստականների ճամբարի ղեկավար Ջալալ Քաուաշը, որը ձերբակալությունից քիչ անց կտտանքների արդյունքում մահացավ լիբանանյան բանտերից մեկում[293]:

Այս առնչությամբ դժգոհություն հանդես բերեցին երկրի ձախ ուժերը, որոնք պաղեստինցիների հետ միասին կազմակերպեցին մի շարք ցույցեր: Այս հանգամանքը հմտորեն օգտագործեցին նաև հակաշիհաբական աջ ուժերը, որոնք առիթը բաց չթողնելով, կտրուկ քննադատության ենթարկեցին նախագահ Շարլ Հելուի՝ պաղեստինցիների նկատմամբ վարվող քաղաքականությունն ու շիհաբական ուժերի ղեկավարած Երկրորդ գրասենյակի պաղեստինցիների գործողությունները վերահսկելու ուղղությամբ տարվող աշխատանքները[294]:

---

[291] K. Salibi, Cross roads to Civil War, p. 26

[292] ألمعلومات,«Մալումաթ», Բեյրութ, 15.02.1995.

[293] S. Mackey, Lebanon: Death of a Nation, New York, 1991, p. 136.

[294] E. Rabbath, La formation historique du Liban politique et constitutional, p. 573.

Պաղեստինյան զինված ջոկատների Իսրայելի հյուսիսային բնակավայրերի դեմ իրականացված այդ հարձակման և Ջալալ Քաուաշի մահվան հետ կապված այդ աղմուկի արդյունքը եղավ այն, որ Երկրորդ գրասենյակը 1965թ. ուժեղացրեց իր հսկողությունը Լիբանանում պաղեստինյան ներկայության նկատմամբ, ինչի հետևանքով առաջիկա մեկ-երկու տարիների ընթացքում Իսրայելի դեմ Լիբանանի տարածքից պաղեստինցիների գործողությունները ժամանակավորապես դադարեցին[295]:

Նշենք մի կարևոր հանգամանք ևս. պաղեստինցիների ներկայությունը Լիբանանում չէր սահմանափակվում միայն պաղեստինցի փախստականների և պաղեստինյան զինված խմբավորումների առկայությամբ: Կրթված և նյութական միջոցներով ապահովված պաղեստինցիների մի ստվար խումբ՝ հակառակ լիբանանյան առևտրաֆինանսական բուրժուազիայի ոչ բարեհաճ վերաբերմունքին, ստացավ Լիբանանի քաղաքացիություն և հմտորեն ներգրավվեց լիբանանյան առևտրաֆինանսական շրջանակներում: Այս պաղեստինցիները հիմնականում հաջողությունների էին հասել առևտրի, սպասարկությունների և բանկային ծառայությունների ոլորտներում, և իրենք իրենց հերթին մեծ ներդրում ունեին Լիբանանի ազգային տնտեսության մեջ:

Լիբանանյան ազգային տնտեսության մեջ պաղեստինյան փոքրաթիվ բուրժուազիան իր ամենախոշոր ներդրումն ու խորհրդանիշը համարում էր «Ինտրա» (“International Tradesmen’s bank” (“Intra”)) բանկը, որը դրամի փոխանակման մի փոքր գրասենյակից դարձավ Բեյրութի առաջնակարգ բանկերից մեկը: Այն մասնաճյուղեր ուներ մի շարք արաբական երկրներում, Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում: Այս բանկի հաջողությունները հիմնականում կապված էին բանկի հիմնադիր, պաղեստինցի քրիստոնյա Յուսուֆ Բահդասի և նրա օգնական, իսլամադավան պաղեստինցի Բադր Ալ-Ջահումի համատեղ հաջող աշխատանքի հետ[296]: «Ինտրա» բանկը Լիբանա-

---

[295] نقولا نصر، حرب لبنان و مداها،لبنان ،١٩٧٧،ص٩.

[296] The Middle East and North Africa 1965-1966, London, 1966, p. 357.

նում պաղեստինյան համայնքի ամենազգալի տնտեսական ձեռքբերումն էր:

«Ինտրա» բանկի հաջողություններն անհանգստացնում էին լիբանանյան առևտրաֆինանսական բուրժուազիայի քրիստոնեական, մասնավորապես մարոնի շրջանակներին: 1966թ. հոկտեմբերին հենց այս շրջանակների լավ կազմակերպված դավադրության արդյունքում «Ինտրա» բանկը շատ անսպասելի սնանկացավ[297]: Բանկի ղեկավարության այն կանխելու բոլոր ջանքերն անցան ապարդյուն: Այս հանգամանքը մեկ անգամ ևս ցուցադրում էր այն թշնամական վերաբերմունքը, որ տածում էր մարոնի վերնախավը Լիբանանում պաղեստինցիների որևէ ներկայության նկատմամբ:

Այն օրերին, երբ Լիբանանի տնտեսությունը որոշակի ցնցումներ էր ապրում՝ կապված «Ինտրա» բանկի սնանկացման հետ, լիբանանյան աջ ուժերը փորձում էին օգտվել ստեղծված ճգնաժամային իրավիճակից և ստիպել Աբդալլահ Յաֆիի կառավարությանը հրաժարական տալ[298]: Նրանց նպատակն էր կազմավորել «ազգային փրկության կառավարություն», որում զգալիորեն ներկայացված կլինեին լիբանանյան աջ քաղաքական գործիչները: Ներքին ճնշման հետևանքով Աբդալլահ Յաֆիի կառավարությունը հրաժարական տվեց: Նոր կառավարությունը գլխավորեց Ռաշիդ Քարամեն, որն իր ծրագրում հաստատեց Լիբանանի արտաքին քաղաքականության անփոփոխ ուղղվածությունը՝ դրական չեզոքության քաղաքականություն և համագործակցության ամրապնդում արաբական պետությունների հետ:

Մինչ այդ, պայմանավորված Լիբանանում պաղեստինցիների ակտիվացմամբ և Լիբանանի Միացյալ արաբական հրամանատարության կազմի մեջ մտնելու փաստով, Լիբանանում կտրուկ սրվել էին մի կողմից ընդդիմադիր հակաշիհաբական աջ ճակատի և իշխանությունների՝ հիմնականում շիհաբական «Ալ-նահջի», իսկ մյուս կողմից՝ ձախ ուժերի և լիբանանյան աջերի միջև հարաբերություն-

---

297 "Le Monde", Octobre 26, 1966.

298 الاحرار, «Ալ-ահրար», Բեյրութ, 25.10,1966:

ները: Հակաշիհաբական ճակատն ավելի ու ավելի էր ամրապնդում իր դիրքերը: Այս ճակատին միացել էր նաև «Քաթաիբ» կուսակցությունը, որը Ֆուադ Շիհաբի նախագահության տարիներին համագործակցում էր շիհաբական թևի հետ, սակայն դժգոհ լինելով Շարլ Հելուի պաղեստինցիների նկատմամբ վարվող մեղմ քաղաքականությունից և Լիբանանի Միացյալ արաբական հրամանատարության կազմում ընդգրկվելուց՝ ևս միացավ հակաշիհաբական ճակատին:

Վերը նշված իրադարձությունները դարձան հարաբերական կայունության շրջանի ավարտի կանխանշանները: Այն ընդգրկում էր Ֆուադ Շիհաբի նախագահության ողջ շրջանն ու Շարլ Հելուի նախագահության առաջին տարիները: Ոչ բարենպաստ փոփոխություններն ավելի մեծ թափ առան 1967թ. արաբ-իսրայելյան 6 օրյա պատերազմից հետո, որը, ուղղակիորեն չառնչվելով Լիբանանի հետ, լուրջ հետևանքներ ունեցավ վերջինիս համար:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1967-1975ԹԹ.)

1. Շարլ Հելուի նախագահության վերջին տարիները: Պաղեստինյան գործոնը Լիբանանի ներքաղաքական կյանքում (1967-1970թթ.)

1967թ. հունիսի 5-ին սկսվեց արաբ-իսրայելյան վեցօրյա պատերազմը, որի ընթացքում Իսրայելը գրավեց Սինայի թերակղզին և Ղազայի հատվածը, Հորդանան գետի արևմտյան ափը, Գոլանյան բարձունքներն ու Արևելյան Երուսաղեմը[299]:

Իսրայելին սահմանակից չորս արաբական պետություններից, որոնք մտնում էին Իսրայելին դիմակայող Միացյալ արաբական հրամանատարության կազմի մեջ, միայն Լիբանանն էր, որ չմասնակցեց այդ պատերազմին: Սակայն վեցօրյա պատերազմի և մերձավորարևելյան ճգնաժամի հետագա խորացման արդյունքում Լիբանանը նույնպես ակամայից էլ ավելի ներքաշվեց այդ հակամարտության մեջ: Դրան զուգահեռ լիբանանյան հասարակության մեջ խորանում էին ներքին սոցիալ-տնտեսական և քաղաքական հակասությունները:

1967թ. հունիսյան պատերազմից հետո մերձավորարևելյան և լիբանանյան քաղաքական ասպարեզում ավելի ակնհայտ էր դառնում պաղեստինյան հարցի առաջնահերթ դառնալու միտումը, որը չէր կարող չանդրադառնալ պաղեստինյան մեծաքանակ փախստականներ ապաստանած Լիբանանի ներքաղաքական իրադրության վրա: Այս հանգամանքը սկսեց խարխլել Լիբանանում 1958 թվականից հետո ձևավորված փխրուն հավասարակշռությունը:

---

[299] Մարամասն տե՛ս Г. Никитина, Государство Израиль, М., 1968, с. 380-383.

Հունիսյան պատերազմից հետո Լիբանանը դարձավ ՊԴԾ-ի գլխավոր կենտրոններից մեկը: Հիմնվելով Լիբանանում հաստատված պաղեստինյան փախստականների վրա՝ ՊԴԾ-ն իր գործելակերպով նպաստեց Իսրայելի դեմ համաարաբական հակամարտության մեջ Լիբանանի ներքաշմանը: ՊԴԾ-ը վեր էր ածվում մերձավորարևելյան քաղաքականության ինքնուրույն գործոնի՝ ուղղակի ազդեցություն ունենալով ներլիբանանյան գործերում: Բացի այդ պաղեստինցիներին մեծապես աջակցում և նրանց հետ համագործակցում էին լիբանանյան ձախ ուժերը, որոնք դժգոհ էին իշխող շրջանակների և աջերի Լիբանանը մերձավորարևելյան հակամարտությունից հնարավորինս հեռու պահելու մտադրությունից[300]:

Լիբանանյան աջերը վեցօրյա պատերազմում Իսրայելի ռազմական հաջողությունն ընկալեցին իբրև Եգիպտոսի և Սիրիայի թուլության արտահայտություն, որն, անկասկած, պետք է նվազեցներ նրանց ազդեցությունը լիբանանյան գործերում[301]:

Լիբանանյան հասարակության, հիմնականում իսլամադավան չքավոր շերտերը, ՊԴԾ-ին համարում էին իրենց դաշնակիցը և դրանում մեծ դեր էր խաղում այն պարագան, որ սոցիալական տեսանկյունից այդ շերտերը գրեթե չէին տարբերվում պաղեստինյան փախստականներից: Գյուղական շրջաններից լիբանանցիների արտահոսքի հետևանքով Բեյրութի շուրջ ստեղծվել էր «չքավորության գոտի», որը գտնվում էր պաղեստինյան փախստականների Թել-Զաաթար և Բուրջ Բարաջնա ճամբարների հարևանությամբ: ՊԴԾ-ի Լիբանանի տարածքից Իսրայելի դեմ ծրագրավորվող պայքարը հնարավորություն էր տալիս լիբանանյան բնակչության այդ շերտերին արտահայտել իրենց սոցիալ-քաղաքական դժգոհությունը: ՊԴԾ-ն իր ռազմական ներուժով նպաստում էր երկրում ձախերի ակտիվացմանը:

Ինչ վերաբերում է քրիստոնեական համայնքներին, ապա նրանցում երկար տարիներ նշմարվող հակապաղեստինյան տրա-

---

[300] Новейшая история арабских стран Азии, с. 122.
[301] Там же.

մաղրությունները արտացոլվեցին նաև ՊԴԾ-ի նկատմամբ նրանց դիրքորոշման մեջ: Քրիստոնյաների զգալի մասը, աջ կուսակցությունների որոշակի ճնշմամբ, պաղեստինյան շարժումը սկսեց ընկալել որպես ապակայունացնող գործոն:

1960-ականների վերջին լիբանանյան քաղաքական կյանքում կենտրոնական տեղ սկսեց զբաղեցնել պաղեստինցիների և նրանց զինված խմբավորումների ներկայությունը: 1968թ. սկսած Հարավային Լիբանանում տեղակայված պաղեստինյան ռազմական ճամբարներում պատրաստվածություն անցած պաղեստինյան մարտիկները սկսեցին ակտիվ ռազմական գործողություններ իրականացնել Իսրայելի հյուսիսային բնակավայրերի դեմ, ինչին հետևում էին Իսրայելի պատասխան գործողությունները: Իսրայելը հարձակվում էր երկրի հարավում գտնվող պաղեստինյան ճամբարների և ՊԴԾ-ի ռազմական հենակետերի վրա:

Թել-Ավիվի զինված հարձակումներից տուժում էր նաև լիբանանյան խաղաղ բնակչությունը: Որոշ պաշտոնական տվյալների համաձայն՝ մինչև 1970թ. երկրի հարավն արդեն լքել էր մոտ 50.000 մարդ[302]: Իսրայելի այդ քաղաքականությունը նպաստակ ուներ թուլացնել Լիբանանում ՊԴԾ-ի դիրքերը, բորբոքել հակապաղեստինյան տրամադրություններ և դրդել լիբանանյան կառավարության ու աջ ուժերին որոշակի քայլեր ձեռնակել պաղեստինյան զինված ջոկատները երկրի տարածքից դուրս բերելու նպատակով: Պաղեստինյան ներկայության նկատմամբ վերաբերմունքը ջրբաժան գիծ էր դարձել լիբանանյան տարբեր քաղաքական ուժերի միջև, ինչը, փաստորեն, նպաստում էր նաև լիբանանյան հասարակության երկփեղկմանը:

Սերտ համագործակցություն էր հաստատվել լիբանանյան ձախ ուժերի և պաղեստինցիների միջև, որոնք կտրականապես դեմ էին ՊԴԾ-ի՝ Լիբանանի տարածքից դուրս բերմանը: Այս կապակցությամբ նրանք կազմակերպում էին ցույցեր և պահանջում էին իսրայելյան հարձակումների դեմ լիբանանյան բանակի կողմից պատաս-

---

[302] "Le Monde Diplomatique", Juin, 1970.

խան քայլերի ձեռնարկում և պաղեստինցիներին օժանդակության տրամադրում[303]:

Իսրայելն ակտիվորեն համագործակցում էր լիբանանյան աջ շրջանակների հետ և փորձում էր նրանցում խորացնել հակապաղեստինյան տրամադրությունները[304]: Աջ ուժերը գտնում էին, որ Լիբանանում ՊԴԾ-ի ներկայությունը սպառնում էր քրիստոնեական վերնախավի տնտեսական և քաղաքական շահերին: Այս շրջանակները բազմիցս հայտարարում էին՝

1. Լիբանանյան հասարակական-քաղաքական կյանքում պաղեստինցիների հաստատումը փոփոխություն կմտցներ ուժերի առկա վիճակի մեջ և կթուլացներ կրոնադավանական համակարգով ամրագրված քրիստոնյաների վերադաս դիքերը.
2. Նրանք երկյուղում էին, որ հակաարևմտամետ ուժերի ազդեցության ուժեղացումը կվնասեր Լիբանանի՝ կապիտալի տեղադրման հուսալի կենտրոնի վարկանիշին[305].

Լիբանանն արաբ-իսրայելյան հակամարտությունից հնարավորինս հեռու պահելու նպատակով՝ լիբանանյան աջերն առաջ քաշեցին «Լիբանանի ուժը նրա թուլության մեջ է» ամբոխավարական կարգախոսը[306]: Չսպասելով իշխանությունների ՊԴԾ-ի նկատմամբ ձեռնարկվող գործողություններին՝ աջ ուժերը, իրենց ջոկատները վերազինելուց և արտաքին որոշ ուժերից աջակցություն ստանալուց հետո, սկսեցին պատրաստվել պաղեստինցիների դեմ պայքարին[307]:

1960-ականների վերջին լիբանանյան իրականության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ պաղեստինյան հարցի շուրջ քաղաքական տարակարծությունը համընկնում էր

---

[303] K. Salibi, նշվ. աշխ., էջ 34-35:
[304] Նույն տեղում:
[305] الأخبار, «Ալ-ախբար», Բեյրութ, 15.08.1968:
[306] "L'Orient", Beyrouth, 12 Avril, 1968, Новейшая история арабских стран Азии, с. 123.
[307] ТАСС, 26.10.1968.

երկրում սոցիալական լարվածության ուժեղացման հետ, ինչը նպաստում էր լիբանանյան հասարակության բևեռացման խորացմանը[308]:

1968թ. լիբանանյան աջ շրջանակները համախմբվեցին «Եռյակ դաշինքում» (արաբերեն՝ «Ալ-հիլֆ» կամ «Ալ-հիլֆ ալ-սուլասի»): Այս դաշինքի անդամները «Ազգային լիբերալ», «Քաթաիբ» և «Ազգային դաշինք» կուսակցություններն էին[309]: Դաշինքի կազմավորման հիմնական նպատակը ՊԴԾ-ի և նրանց լիբանանյան դաշնակիցների՝ ձախ ուժերի դեմ պայքարն էր: Այս դաշինքի կազմավորումը պաղեստինյան ներկայության դեմ պայքարում քրիստոնեական վերնախավի միավորման առաջին փորձն էր: Դաշինքի ղեկավարներն առաջ քաշեցին Շվեյցարիայի կամ Ավստրիայի նման Լիբանանի «չեզոքացման» կարգախոսը[310]: «Եռյակ դաշինքին» ընդդիմանում էր շիհաբական «Ալ-նահջը»:

1968թ. մարտ-ապրիլ ամիսներին Լիբանանում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Աջ ուժերին հաջողվեց ամրապնդել իրենց դիրքերը: «Եռյակ դաշինքը» ստացավ 26 պատգամավորական տեղ՝ նախկին 14-ի փոխարեն[311]: Թեև «Ալ-նահջը» շարունակում էր մեծամասնություն կազմել լիբանանյան խորհրդարանում, սակայն որոշ շիհաբականներ ստիպված էին իրենց տեղերը զիջել նորաստեղծ դաշինքի անդամներին[312]: «Եռյակ դաշինքի» հետ սերտորեն համագործակցում էր նաև մարոնիների պատրիարք Մեուշին, որն իր հայտարարություններում նշում էր, որ պաղեստինյան զինված ջոկատների ներկայությունը սպառնում էր Լիբանանի ազգային անվտանգությանն, անկախությանն ու տարածքային ամ-

---

[308] ألمعلومات, «Ալ-մաալումաթ», Բեյրութ, 10,11.1968:

[309] "Le Soir", Beyrouth, 11 Février, 1968.

[310] W. Goria, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, London, Ithaca Press, 1985, p. 90.

[311] J. Zuwiyya, The Parliamentary Elections of Lebanon 1968, Leiden, 1972, pp. 92-100.

[312] ألأهرام, «Ալ-ահրամ», Բեյրութ, 25.04.1968:

բողջականությանը[313]: Նա նաև իր անհանգստություն էր հայտնում այն կապակցությամբ, որ պաղեստինցիների ռազմական գործողությունների հետևանքով լիբանանահսրայելյան սահմանին նկատվում էր լարվածություն, որը սպառնում էր Հարավային Լիբանան Իսրայելի հնարավոր ներխուժմամբ: Պաղեստինցիների զինված շարժումը Լիբանանում «Եռյակ դաշինքը» դիտում էր իբրև «տրոյական ձի», որը լիբանանյան ձախ ուժերը, համագործակցելով սիրիական և իրաքյան բաասականների հետ, օգտագործում էին Լիբանանը մերձավորարևելյան հակամարտության մեջ ներքաշելու նպատակով[314]:

Լիբանանում պաղեստինցիների ներկայության նկատմամբ թշնամական վերաբերմունքի պատճառով իսլամադավան ղեկավարները հիմնականում չէին պաշտպանում քրիստոնեական դաշինքը: Սուննի ղեկավարներից միայն Սաիբ Սալամն էր որոշակի կապեր պահպանում դաշինքի ղեկավարների հետ, ինչը բացատրվում էր նրա հակաշիհաբական տրամադրություններով:

1968թ. Լիբանանում խորհրդարանական ընտրություններում «Ալ-հիլֆի» հաղթանակը բացատրվում էր լիբանանյան հասարակության որոշակի շրջանակներում պաղեստինցիների ներկայության նկատմամբ առկա մտահոգությամբ, ինչպես նաև շիհաբական «Ալ-նահջի» նկատմամբ դժգոհությունների խորացմամբ:

Համաարաբական մակարդակում Հորդանանի, Սաուդյան Արաբիայի և Ծոցի երկրների պաշտոնական շրջանակները գոհունակությամբ ընդունեցին խորհրդարանական ընտրություններում «Եռյակ դաշինքի» հաղթանակը, քանի որ բաժանում էին դաշինքի ղեկավարների Լիբանանի ձախացման հեռանկարի նկատմամբ առկա անհանգստությունը[315]: Մինչդեռ Սիրիան, Իրաքն ու Եգիպտոսն իրենց մտավախություն էին հայտնում, որ խորհրդարանական

---

[313] Մարոնիների պատրիարք Մեուշի հայտարարության տեքստը տե՛ս ألتلغراف, «Ալ-թելեգրաֆ», Բեյրութ, 27.04.1968:

[314] ألنهار, «Ալ-նահար», Բեյրութ, 28.11.1968:

[315] B. Odeh, Lebanon: Dynamics of Conflict, A Modern Political History, London, 1985, p. 11.

ընտրությունների նման արդյունքն անկասկած իր ազդեցությունը կունենար Լիբանանի արտաքին քաղաքականության վրա, ինչը նշանակում էր, որ ամուր դիրքեր էին գրավում այն շրջանակները, որոնք ունեին բացահայտ արևմտամետ քաղաքական հայացքներ և, ինչպես նշում էր սիրիական «Ալ-բաաս» թերթը, «Նրանք («Եռյակ դաշինքն» ու լիբանանյան աջերը-Լ.Հ.) ամեն կերպ ցանկանում էին Լիբանանը հեռու պահել համաարաբական գործերից»[316]:

1968թ. խորհրդարանական ընտրություններից հետո Լիբանանում իրավիճակն ավելի սրվեց, երբ հոկտեմբերի 10-ին ձևավորված լիբանանյան նոր կառավարությունն՝ Աբդալլահ Յաֆիի գլխավորությամբ, բոյկոտի ենթարկեց «Եռյակ դաշինքի» ղեկավարներից մեկը՝ Քամիլ Շամունը: Աբդալլահ Յաֆիի կառավարությունը կազմված էր 8 նախարարից: Շամունը պահանջում էր, որ կառավարության կազմի մեջ անպայմանորեն ներգրավվեր «Ազգային լիբերալ» կուսակցության որևէ ներկայացուցիչ: Սակայն ձախ ուժերը՝ Քամալ Ջումբլաթի և Ռաշիդ Քարամեի գլխավորությամբ, դեմ էին Քամիլ Շամունի այդ պահանջին[317]:

Այս հերթական ճգնաժամը հարթելու նպատակով նախագահ Շարլ Հելուն սպառնաց հրաժարական տալ, եթե կառավարության կազմավորման հարցում կողմերը որևէ փոխզիջման չգնային: Նախագահը նաև առաջարկեց ձևավորել նոր կառավարություն՝ սահմանափակ կազմով, որի մեջ կներգրավվեին 2 քրիստոնյա և 2 մահմեդական ներկայացուցիչ: Սակայն այս առաջարկն աջակցություն չգտավ, և նախագահ Հելուն, այնուամենայնիվ, հրաժարականի դիմում ներկայացրեց: Միևնույն ժամանակ նա ընդունեց որոշում, որի համաձայն իր հնարավոր հրաժարականի դեպքում իշխանությունը պետք է փոխանցվեր անցումային կառավարությանը՝ լիբանանյան բանակի հրամանատար գեներալ Բուսթանիի գլխավորությամբ[318]:

Խորհրդարանի նախագահ Քամալ Ասաղի խնդրանքով նախագահը ետ վերցրեց հրաժարականի իր դիմումը և 1968թ. հոկտեմբերի

---

316 البعث, «Ալ-բաաս», Դամասկոս, 25.04.1968:

317 "L'Orient", Beyrouth, 12 Octobre, 1968.

318 Е. Мельников, նշվ. աշխ., էջ 122:

20-ին նա ստորագրեց որոշում՝ «ազգային կառավարություն» ձևավորելու մասին: Այն գլխավորեց Աբդալլահ Յաֆին: Կառավարության երկրորդ իսլամադավան անդամը Հուսեյն Վեյնին էր: Քրիստոնյա համայնքները ներկայացնում էին Պիեր Ժմայելն ու Ռայմոն Էդդեն[319]:

Այս կապակցությամբ «Ալ-մուհարիր» օրաթերթը գրեց. «Նախագահի հրաժարականի սպառնալիքը հաջող խուսափում էր, որի արդյունքում պարտություն կրեցին լիբանանյան ձախ ուժերը, քանի որ կառավարության կազմի մեջ մտան «Եռյակ դաշինքի» երկու ազդեցիկ ղեկավարներ»[320]:

Լիբանանի համար պաղեստինյան զինվորական խմբավորումների ներկայության հետ կապված առաջին լուրջ փորձությունը 1968թ. դեկտեմբերին Բեյրութի միջազգային օդանավակայանի վրա Իսրայելի հարձակումն էր:

Պաղեստինյան զինվորական խմբավորումների Իսրայելի դեմ իրականացրած ցանկացած գործողության հետևում էր Իսրայելի պատասխան հարձակումը: 1968թ. դեկտեմբերի 26-ին, երբ Աթենքի օդանավակայանում պաղեստինցիները զինված հարձակման ենթարկեցին իսրայելյան օդանավը, Իսրայելի զինվորական հրամանատարությունը կազմակերպեց պատասխան հարձակում: 1968թ. դեկտեմբերի 29-ին մի խումբ իսրայելյան զինված մարտիկներ, ուղղաթիռով իջնելով Բեյրութի միջազգային օդանավակայանում, պայթեցրին լիբանանյան 13 ուղևորատար ինքնաթիռներ[321]: Այս գրոհով Իսրայելը նպատակ ուներ վախեցնել «պաշտոնական» Լիբանանին, ամրապնդել լիբանանյան աջերի, մասնավորապես մարոնիների դիրքերը և, խորացնելով պաղեստինցիների հանդեպ լիբանանցիների հակակրանքը, նպաստել երկրի տարածքից նրանց դուրս բերմանը:

Իսրայելյան այս հարձակումն իրականացվեց այնքան արագ, որ լիբանանյան բանակը որևէ կերպ չկարողացավ արձագանքել

---

319 "Le Jour", Beyrouth, 22 Octobre, 1968.

320 ألمهارير, «Ալ-մուհարիր», Բեյրութ, 22.10.1968:

321 "Le Monde", Decembre 30, 1968.

դրան: Այս դեպքից հետո լիբանանյան ձախ ուժերը կտրուկ քննադատության ենթարկեցին լիբանանյան բանակի, հիմնականում մարոնիական հրամանատարությանը՝ մեղադրելով նրան անգործության և հիմնական պարտականության՝ Լիբանանի ազգային անվտանգության ապահովման թերացման մեջ: Լիբանանյան իսլամադավանները հայտարարեցին, որ պաղեստինցիների գործողությունները երկրում սահմանափակելու և նրանց ռազմական ներկայության դեմ պայքարելու փոխարեն լավ կլիներ, եթե լիբանանյան բանակը կատարեր իր հիմնական պարտականությունը և Լիբանանը զերծ պահեր օտարերկրյա հարձակումներից[322]:

Իբրև պատասխան՝ լիբանանյան աջերը հայտարարեցին, որ Իսրայելի հարձակումներից Լիբանանը զերծ պահելու ամենաարդյունավետ տարբերակը պաղեստինյան զինվորական խմբավորումների դուրս բերումն էր երկրից, ինչը կզրկեր Իսրայելին Լիբանանի տարածքում հարձակումներ իրականացնելու ամենահարմար պատրվակից[323]:

Բեյրութի միջազգային օդանավակայանի վրա իսրայելյան հարձակմանը հետևեցին համընդհանուր ուսանողական ցույցերն ու դասադուլները: Ցուցարարները պահանջում էին Լիբանանում քաղաքական, սոցիալական և տնտեսական բարեփոխումների իրականացում, բանակի հրամանատարության փոփոխություն, երկրի անվտանգության և պաշտպանության համակարգերի բարեփոխում, որը կնպաստեր Լիբանանի անվտանգության ու տարածքային ամբողջականության ապահովմանը: Լիբանանյան ձախ ուժերը գտնում էին, որ օդանավակայանի վրա իսրայելյան հարձակման հիմնական պատճառը լիբանանյան իշխանությունների արտաքին քշնամուն դիմակայելու անկարողությունն էր[324]:

Ի պատասխան ձախերի մեղադրանքներին՝ լիբանանյան մամուլում կարծիքներ հնչեցին, որ երկրի բանակը, մի շարք գործոններ

---

[322] الانوار, «Ալ-անուար», Բեյրութ, 10.01.1969:

[323] كمال جنبلاط،هده وصيتي،بيروت،١٩٨٧،ص ٤١١.

[324] The Middle East and North Africa 1969-1670, London, 1970, p. 435.

րով պայմանավորված, սվյալ փուլում ի վիճակի չէր լուրջ դիմադրություն ցույց տալ իսրայելյան հարձակմանը[325]:

Լիբանանյան աջ շրջանակներն ուսանողների այս շարժումը որակավորեցին իբրև «ուսանողական հեղափոխություն»: Ուսանողական այս ելույթների հետևանքով երկրի վարչապետ Աբդալլահ Յաֆին 1969թ. հունվարի 8-ին հրաժարական տվեց: Յաֆիի հրաժարականից մեկ շաբաթ անց Ռաշիդ Քարամեն ձևավորեց նոր կառավարություն[326]: Ռաշիդ Քարամեն, ինչպես և Աբդալլահ Յաֆին և մի շարք այլ սունիի ղեկավարներ, չէին թաքցնում իրենց դրական դիրքորոշումը ՊԴԾ-ի նկատմամբ: Ռաշիդ Քարամեն, խորհրդարանի առջև ներկայացնելով իր կառավարության ծրագիրը, նշեց, որ լիբանանյան կառավարությունն իր աջակցությունն էր հայտնում պաղեստինցիներին և նրանց զինված խմբավորումների գործողություններին: Քարամեն շեշտեց նաև, որ կառավարությունը պատրաստվում է մշակել պարտադիր զինվորական ծառայության մասին օրենք և ձեռնարկել մի շարք միջոցառումներ՝ ուղղված լիբանանյան բանակի ամրապնդմանն ու նրա մարտունակության բարձրացմանը[327]:

Վարչապետի պաշտոնը ստանձնելուց մի քանի ամիս անց՝ ապրիլի սկզբին, Ռաշիդ Քարամեի կառավարությունը բախվեց առաջին լուրջ դժվարությունների հետ: Պաղեստինյան զինվորական կազմակերպություններից շատերը, որոնք գործում էին Լիբանանում, Սիրիայում և Հորդանանում, ՊԱԿ-ի հովանու ներքո միավորվեցին Զինված պայքարի միացյալ հրամանատարության կազմում[328]: Նոր պաղեստինյան հրամանատարության ձևավորումը նպաստեց Լիբանանում պաղեստինյան զինված շարժման ակտիվացմանը, որի հետևանքով Հարավային Լիբանանում բազմաթիվ բախումներ տեղի ունեցան լիբանանյան բանակի և պաղեստինյան

---

[325] ألنهار, «Ալ-նահար», Բեյրութ, 09.01.1969:

[326] Նույն տեղում:

[327] ألبعث, «Ալ-բաաս», Դամասկոս, 30.01.1969:

[328] TACC, 15.04.1969.

զինված մարտիկների միջև: Ապրիլի 23-ին բախումներ գրանցվեցին լիբանանյան Սիդոն քաղաքում, որտեղ տեղի իսլամադավանները ու պաղեստինցիները՝ Քամալ Ջումբլաթի գլխավորությամբ, պաղեստինցի զինված մարտիկների զսպման նպատակով լիբանանյան բանակի ձեռնարկած գործողություններին ի պատասխան կազմակերպեցին ցույցեր: Այդ ցույցերի արդյունքում բախումներ տեղի ունեցան ցուցարարների և լիբանանյան բանակի ստորաբաժանումների միջև: Կային սպանվածներ և վիրավորներ: Սիդոնի դեպքերից անմիջապես հետո պարետային ժամ մտցվեց Բեյրութում և նրա արվարձաններում, իսկ բանակին հանձնարարվեց կարգուկանոն հաստատել երկրում[329]: Այս դեպքերի կապակցությամբ իրենց հայտարարություններում ձախ ուժերի ղեկավար Քամալ Ջումբլաթը և Բեյրութի մուֆթի Հասան Խալիդը մեղադրեցին լիբանանյան իշխանություններին և քննադատեցին Լիբանանում պաղեստինյան զինվորականների խմբավորումների և նրանց լիբանանյան դաշնակիցների նկատմամբ կառավարության դիրքորոշումը[330]:

«Եռյակ դաշինքի» և մարոնիների պատրիարք Մեուշի ուղղակի ճնշմամբ Լիբանանի նախագահ Շարլ Հելուն մայիսի 6-ին հանդես եկավ հեռուստաելույթով, որում նշեց. «Լիբանանը կարող է միայն սատարել ՊԱԿ-ի օրինական գործողությունները, բայց միևնույն ժամանակ ստիպված է սահմանափակել պաղեստինյան զինվորականների խմբավորումների գործողությունները՝ ապահովելով Լիբանանի Հանրապետության անկախությունն ու ազգային անվտանգությունը»[331]:

Երկրի վարչապետ Ռաշիդ Քարամեն, չհամաձայնելով նախագահի կեցվածքի հետ, վերոնշյալ հեռուստաելույթից մեկ շաբաթ անց՝ ի նշան բողոքի, հրաժարական տվեց: Հունիսի 23-ին Քարամեն մեն ձևավորեց նոր կառավարություն, պայմանով, որ նախագահ Շարլ Հելուի հեռուստաելույթի այն հատվածները, որոնց նկատմամբ դժգոհություններ ունեին լիբանանյան իսլամադավան ղեկա-

---

[329] Ближний Восток и Международное право, М., 1982, с. 81.
[330] «Արարատ», Բեյրութ, 26,04.1969:
[331] ألنهار, «Ալ-նահար», Բեյրութ, 07.06.1969:

վարներն՝ իբրև, այսպես կոչված, «պարտադիր քաղաքականություն», չպարտադրվեին նոր կառավարությանը[332]: Ռաշիդ Քարամեն նշեց, որ պաղեստինյան զինված ջոկատներին հնարավորություն կտրվեր շարունակել իրենց գործողությունները, եթե նրանք հարգեին Լիբանանի անկախությունն ու անվտանգությունը:

Այս կապակցությամբ Ռաշիդ Քարամեն առաջարկեց մի ծրագիր՝ «Թանսիք», որը նախատեսում էր համագործակցության հաստատում լիբանանյան բանակի և Պաղեստինյան զինված պայքարի հրամանատարության միջև[333]:

Լիբանանյան ձախ ուժերը գտնում էին, որ Քարամեի այս առաջարկը Լիբանանն այս դժվարին իրավիճակից դուրս բերելու միակ միջոցն էր: Սակայն լիբանանյան աջ շրջանակները՝ մասնավորապես «Եռյակ դաշինքի» ղեկավարները, անմիջապես առարկեցին, անվանելով այդ համագործակցությունը քաղաքական խուսավարում, որի նպատակն էր շեղել լիբանանյան քրիստոնյաների ուշադրությունը պաղեստինյան զինված ջոկատների գործողություններից:

«Եռյակ դաշինքի» ղեկավարները կտրականապես մերժեցին լիբանանյան բանակի և պաղեստինյան զինված խմբավորումների միջև հնարավոր որևէ համագործակցություն: Ռաշիդ Քարամեի այս առաջարկության նկատմամբ տարակարծությունը խոչընդոտում էր նոր կառավարության արագ կազմավորմանը: Այս փաստն օգտագործում էր լիբանանյան բանակի հրամանատարությունը, որը կարգուկանոն հաստատելու պատրվակով մի շարք միջոցառումներ էր ձեռնարկում պաղեստինյան փախստականների և զինված ջոկատների նկատմամբ:

1969թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին Լիբանանն ապրում էր ներքաղաքական լուրջ ճգնաժամ: Այդ ընթացքում պարբերաբար բախումներ էին տեղի ունենում լիբանանյան բանակի և պաղեստինյան զինվորական խմբավորումների միջև: Միայն հոկտեմբերին բախումների հետևանքով զոհվել էր 150 մարդ[334]: Այդ բախումները հիմ-

---

[332] "Washington Post", June 16, 1969.

[333] السفير, «Ալ-սաֆիր», 10.06.1969:

[334] W. Goria, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, p. 117.

նականում գրանցվում էին լիբանանահսրայելյան սահմանին, որտեղ հաստատվել էին պաղեստինյան զինված ջոկատներն ու նրանց ռազմական ճամբարները[335]:

Որոշ պաշտոնական տվյալների համաձայն՝ արդեն 1969թ. Լիբանանում պաղեստինյան զինված մարտիկների թիվը հասնում էր 5.000-ի: Այս մարտիկները ներկայացնում էին ՊԱԿ-ի մեջ մտնող տարբեր կազմակերպությունները՝ «Ֆաթհը» (արաբերեն՝ «Հարաքաթ ալ-թահրիր ալ-ուատանի ալ-ֆիլաստինի»), Սիրիայի հովանավորյալ «Ալ-սաիկան», «Պաղեստինի ազատագրության արաբական ճակատը», «Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատը» և «Պաղեստինի ազատագրության դեմոկրատական ճակատը»[336]: Ե. Պրիմակովը նշում էր. «Պաղեստինյան կազմակերպություններից շատերը (այդ թվում նաև ամենախոշոր կազմակերպությունները՝ բացառությամբ «Ֆաթհից») առաջացել են տարբեր արաբական երկրներում քաղաքական կուսակցությունների և խմբավորումների հիմքի վրա[337]: Օրինակ՝ Սիրիայի «Բաաս» կուսակցության համաարաբական IX արտահերթ համաժողովի որոշմամբ՝ 1967թ. սեպտեմբերին կազմավորվեց ռազմականացված «Ալ-սաիկա» կազմակերպությունը, որը գործում էր սիրիական բանակի վերահսկողության ներքո: Նրա քաղաքական դրույթները վերցվել էին «Բաաս» կուսակցության ծրագրային դրույթներից: Իրաքյան բաասականները կազմավորեցին «իրենց» կազմակերպությունը՝ «Պաղեստինի ազատագրության արաբական ճակատը» և այլն»[338]:

Լիբանանում հաստատված պաղեստինյան զինված խմբավորումները հիմնականում կենտրոնացել էին լիբանանահսրայելյան սահմանի մոտ՝ Հերմոն լեռանը հարակից խիտ բուսականություն ունեցող շրջաններում, որը հրաշալի թաքստոց և ռազմական ճամբարներ հիմնելու հարմար վայր էր: Այս շրջանը բնակեցված էր հիմնականում իսլամադավան շիաներով, ինչը հնարավորություն էր

---

[335] TACC, 26,08,1969.

[336] Մանրամասն տե՛ս Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1986, с. 74-75.

[337] А. Иванов, Межарабская политика Сирии, с. 73.

[338] Նույն տեղում:

տալիս պաղեստինցիներին ազատ գործել Հարավային Լիբանանի այս շրջանում[339]:

Փաստենք, որ բանակի հիմնականում շիհաբական ղեկավարությունը մտահոգված էր քաղաքական մակարդակում և խորհրդարանական ընտրություններում «Եռյակ դաշինքի» հաղթանակով: Բանակի հրամանատարությունն ամեն կերպ ձգտում էր ապացուցել, որ ի վիճակի էր ապահովել Լիբանանի անվտանգությունը և վերահսկել երկրի տարածքում պաղեստինցիների գործողությունները:

Սիրիան, Եգիպտոսն ու Իրաքը մեծ աջակցություն էին ցույց տալիս Լիբանանում հաստատված պաղեստինցիներին և քննադատում էին լիբանանյան բանակի՝ վերջիններիս դեմ ձեռնարկվող գործողությունները, թեև իրենք իրենց սեփական երկրներում ամեն բան անում էին պաղեստինցիներին վերահսկողության ներքո պահելու համար: Նույնիսկ Սաուդյան Արաբիան և Ծոցի երկրները, որոնք սերտորեն համագործակցում էին լիբանանյան աջ ուժերի հետ, ՊԱԿ-ի կողմից որոշակի ճնշումների արդյունքում հանդես եկան Լիբանանում պաղեստինցիների և վերջիններիս զինված խմբավորումների և Իսրայելի դեմ նրանց ձեռնարկած գործողությունների պաշտպանությամբ: Նրանք կոչ արեցին լիբանանյան բանակի հրամանատարությանը՝ դադարեցնել պաղեստինյան զինված խմբավորումների հետ բախումները՝ նշելով, որ Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքն է պայքարել իր հայրենիքի ազատագրման համար, և յուրաքանչյուր արաբական պետության պարտքն է այս հարցում սատարել պաղեստինցիներին[340]:

1969թ. աշնանը վարչապետ Ռաշիդ Քարամեն ստիպված էր կրկին հարաժարական տալ[341]: Նա հայտարարեց, որ չի կարող համաձայնել պաղեստինյան զինվորական խմբավորումները Լիբանանի տարածքից դուրս բերելու քաղաքականության հետ: Ռաշիդ Քարամեի հրաժարականից հետո ոչ մի սունցի ղեկավար չէր ցանկանում ստանձնել վարչապետի պաշտոնը, քանի դեռ բախումները լիբանանյան բանակի և պաղեստինցիների միջև չէին դադարել:

---

339 "Washington Post", August 11, 1969.
340 "Le Jour", Octobre 20, 1969.
341 ТАСС, 30.09.1969.

Պաղեստինյան զինված մարտիկների և լիբանանյան բանակի միջև բախումների արդյունքում, որոնք որոշ ընդհատումներով ձգձգվեցին 1969թ. մայիսից մինչև հոկտեմբեր, չափազանց լարվեցին Սիրիայի և Լիբանանի միջև հարաբերությունները: Սիրիան նույնիսկ փակեց Լիբանանի հետ իր սահմանը: Նույն թվականի հոկտեմբերի 22-ին հրապարակվեց «Բաաս» կուսակցության ղեկավարության հայտարարությունը, որը դատապարտում էր «Լիբանանի կառավարիչների» վարքագիծը[342]: Լուրեր էին տարածվում Սիրիայի (ինչպես նաև Իրաքի) լիբանանյան ճգնաժամին հնարավոր միջամտության մասին[343]:

ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնական Ջ. Սիսկոն 1969թ. հոկտեմբերի 10-ին հայտարարեց, որ իր կառավարությունը չափազանց շահագրգռված էր Լիբանանի տարածքային ամբողջականության պահպանմամբ և երկրում խաղաղության հաստատմամբ[344]: Մի քանի օր անց Բեյրութում ամերիկյան դեսպանատունը հայտարարեց. «ԱՄՆ-ի շահերն այդ տարածաշրջանում գերազանցում են որևէ այլ պետության շահերին և այդ պատճառով ԱՄՆ-ը շահագրգռված է Լիբանանում խաղաղության հաստատմամբ»[345]:

Լիբանանում քաղաքական երկարատև ճգնաժամը ստիպեց նախագահ Շարլ Հելուին գնալ որոշակի զիջումների և համաձայնել Ռաշիդ Քարամեի համագործակցության՝ «Թանսիքի» սկզբունքի հետ:

Լիբանանյան բանակի հանձնախումբը՝ գեներալ Բուսթանիի գլխավորությամբ, մեկնեց Կահիրե, որտեղ ՊԱԿ-ի ներկայացուցիչների հետ՝ Յասիր Արաֆաթի գլխավորությամբ, 1969թ. նոյեմբերի 3-ին 7 ժամ տևողությամբ բանակցությունների արդյունքում ստորագրվեց լիբանանապաղեստինյան գաղտնի համաձայնագիրը: Այն սահմանեց պաղեստինցիների իրավունքներն ու գործողությունների բնույթը Լիբանանի տարածքում: Այդ համոդիպմանը մասնակ-

---

342 А. Иванов, նշվ.աշխ., էջ 75:

343 Նույն տեղում:

344 النهار, «Ալ-նահար», Բեյրութ, 20.11.1969:

345 "L'Orient", Beyrouth, 20.10.1969.

ցում էին նաև Եգիպտոսի պաշտպանության և արտաքին գործերի նախարարները: Լիբանանում դեպքերի հետագա ոչ ցանկալի զարգացումները կանխելու նպատակով՝ որպես միջնորդ, հանդես էր գալիս Եգիպտոսի նախագահ Նասերը: Համաձայն մի շարք արաբական և արևմտյան աղբյուրների՝ ստորագրված համաձայնագրով նախատեսվում էր՝

1. Պաղեստինյան զինված խմբավորումների de jure ներկայություն Լիբանանի տարածքում.
2. Պաղեստինյան ռազմական ճամբարների առկայություն, սակայն միայն երկրի հարավում.
3. Պաղեստինցի փախստականների ճամբարները de facto պետք է անցնեին լիբանանյան իշխանությունների հսկողություն տակ.
4. Պաղեստինցի երիտասարդներին, որոնք ցանկանում էին իրենց մասնակցությունը բերել ՊԴԾ-ին, թույլատրվում էր առանց լուրջ արգելքների անցնել պաղեստինյան ռազմական ճամբարների տեղակայման շրջաններ՝ Լիբանանի հարավ.
5. Պաղեստինցիներն իրենց հերթին պարտավորվում էին հարգել Լիբանանի ազգային անվտանգությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունն ու կայունությունը[346].

Այս փաստաթուղթն առաջին համաձայնագիրն էր, որ ստորագրվեց որևէ արաբական պետության, տվյալ դեպքում Լիբանանի և Պաղեստինի Ազատագրության կազմակերպության միջև, որում ՊԱԿ-ը պետական մակարդակում հանդես էր գալիս իբրև բանակցությունների լիիրավ կողմ և հավասարազոր գործընկեր: ՊԴԾ-ի համար Կահիրեի համաձայնագրի նշանակությունն այն էր, որ առաջին անգամ պաշտոնապես արձանագրվեց վերջինիս ներկայության կարգավիճակը արաբական որևէ պետության տարածքում: ՊԴԾ-ը Լիբանանում ձեռք բերեց հստակորեն սահմանված իրա-

---

[346]Cairo Declaration տե՛ս Marie-Ange Lecerf, Comprendre le Liban, Paris, 1988, pp. 48-49, "Daily Star", Beirut, 05.11.1969, "Le Monde Diplomatique", Paris, 06.11.1969,"Washington Daily News", 05.11.1969, الأخبار, «Ալ-ախբար», Բեյրութ, 04.11. 1969,الاحرار, «Ալ-ահրար», Բեյրութ, 05.11.1969:

վունքներ: Այսպիսով համաարաբական մակարդակում սկսված էր ՊԱԿ-ի՝ որպես ինքնուրույն գործոնի ճանաչման գործընթացը:

Լիբանանյան հասարակությունը միանշանակորեն չընդունեց Կահիրեի համաձայնագիրը: Մինչ լիբանանյան ձախ ուժերը ողջունում էին այս համաձայնագրի ստորագրումը, լիբանանյան բոլոր երանգի աջերը՝ մասնավորապես մարոնի վերնախավը, թեև առերես ճանաչում էին Կահիրեի համաձայնագիրը, բայց իրականում այն համարում էին Լիբանանի համար բացահայտ զիջողական: Աջ ուժերը գտնում էին, որ այս համաձայնագիրը de jure հնարավորություն էր տալիս պաղեստինցիներին Իսրայելի դեմ պայքարում օգտագործել Լիբանանի տարածքը և հանդես գալ իբրև «պետություն պետության մեջ»: Լիբանանի հարավը արևմտյան մամուլում նույնիսկ ստացել էր «Ֆաթիի» հայրենիք» անվանումը[347]:

ՊԱԿ-ի ղեկավարությունն իր հերթին հայտարարում էր, որ ՊԴԾ-ը չի խառնվում Լիբանանի ներքին գործերին, հարգում է Լիբանանի անկախությունը, տարածքային ամբողջականությունը, անվտանգությունն ու կայունությունը:

Այդուհանդերձ, Կահիրեի համաձայնագրի ստորագրումից հետո ՊԴԾ-ն էլ ավելի ակտիվացրեց Լիբանանի հարավից Իսրայելի դեմ իրականացվող իր ռազմական գործողությունները: ՊԴԾ-ը ելնում էր այն դրույթից, որ ամբողջ արաբական ներուժը՝ ռազմական և քաղաքական, պետք է ի սպաս դրվեր Պաղեստինի ազատագրման գործին:

Կահիրեի համաձայնագրի ստորագրմամբ հնարավոր եղավ հարթել Լիբանանում տիրող երկարատև քաղաքական ճգնաժամը: 1969թ. նոյեմբերի 26-ին՝ Կահիրեի համաձայնագրի ստորագրումից հետո, Ռաշիդ Քարամեն խորհրդարանին ներկայացրեց իր նոր կառավարության կազմն ու ծրագիրը: Նոր կառավարության կազմում ձախ ուժերը ներկայացնում էր Քամալ Ջումբլաթը, իսկ աջ ուժերը՝ Պիեր Ժմայելն ու Մորիս Ժմայելը, որոնք համապատասխանաբար զբաղեցնում էին հասարակական գործերի և ծրագրավորման նախարարների պաշտոնները[348]:

---

[347] "Le Monde Diplomatique", Decembre, 1969.

[348] W. Goria, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, p. 109.

Արդեն 1970թ. մարտին Իսրայելի ռազմաօդային ուժերը մի քանի անգամ հարձակման ենթարկեցին Հարավային Լիբանանում տեղակայված պաղեստինյան ռազմական ճամբարները: Իսրայելը զգուշացրեց լիբանանյան կառավարությանը, որ կձեռնարկի ավելի խիստ միջոցառումներ, եթե այն միջոցներ չձեռնարկի պաղեստինյան զինվորական խմբավորումներն իր տարածքից դուրս բերելու ուղղությամբ[349]: Պաղեստինցիների՝ Լիբանանի հարավից Իսրայելի դեմ իրականացրած ցանկացած գործողության ի պատասխան, Իսրայելը հարձակման էր ենթարկում Լիբանանի ողջ տարածքը՝ հատկապես երկրի հարավը: Այս հարձակումներից երկյուղած և անհանգստացած աջ ուժերը պահանջում էին պաղեստինյան զինված խմբավորումների դուրս բերում Լիբանանի տարածքից:

Իսայելյան հարձակումների հիմնական տուժողները հարավում բնակվող շիաներն ու սուննիներն էին, որոնց բնակավայրերն ուղղակիորեն ավերվում էին իսրայելյան հարձակումների հետևանքով: Մեծ թվով շիաներ և սուննիներ ստիպված էին լքել իրենց տները և տեղափոխվել Բեյրութի արվարձաններ, որի արդյունքում մայրաքաղաքում զգալիորեն ավելացել էր գաղթականների առանց այն էլ զգալի քանակը[350]:

Անհանգստացած Իսրայելի իրականացրած հարձակումներից և դրանց հետ կապված հետագա զարգացումներից՝ լիբանանյան աջ ուժերը դիմեցին երկրի վարչապետ Ռաշիդ Քարամեին և ներքին գործերի նախարար Քամալ Ջումբլաթին և պահանջեցին խիստ վերահսկողություն հաստատել Լիբանանում գտնվող պաղեստինյան զինված խմբավորումների գործողությունների նկատմամբ: Իր հերթին Իսրայելը 1970թ. մարտին զգուշացրեց, որ կձեռնարկի ավելի խիստ և լուրջ միջոցառումներ Լիբանանի դեմ, եթե վերջինիս կառավարությունը միջոցներ չձեռնարկի դադարեցնելու պաղեստինցիների գործողությունները Լիբանանի տարածքից[351]:

---

[349] Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1986, с. 82.
[350] H. Cobban, The Making of Modern Lebanon, London, 1985, p. 103.
[351] Interview by Foreign Minister Eban of Israel on Arms Supply to the Middle East and on Israeli Policy Towards the Palestinians, տե՛ս International Documents on Palestine 1970, Institute for Palestine Studies, 1973, p. 76.

Լիբանանյան աջ ուժերը՝ Պիեր Ժմայելի կրտսեր որդու՝ Բաշիր Ժմայելի գլխավորությամբ, Երկրորդ գրասենյակից որոշակի աջակցություն ստանալուց հետո սկսեցին պատրաստվել պաղեստինյան զինվորական խմբավորումների հետ հակամարտությանը: Լիբանանում լարվածությունն ուժեղացավ մարտի 25-ին, երբ Բեյրութ-Դամասկոս ճանապարհին՝ Ալ-Քահալ գյուղի մոտ, փաղանգավորների և պաղեստինյան զինված մի ջոկատի միջև բախումների հետևանքով սպանվեց տասը պաղեստինցի մարտիկ: Այդ բախումներից հետո պաղեստինյան զինված խմբավորումները հարձակման ենթարկեցին «Քաթաիբ» կուսակցության հենակետեր հանդիսացող որոշ գյուղեր: Մարտի 25-ից 30-ը լիբանանյան փաղանգավորների և պաղեստինյան մարտիկների միջև անընդմեջ փողոցային մարտեր էին տեղի ունենում նաև Բեյրութում: Ամենադաժան մարտերը գրանցվեցին Բեյրութի Ալ-դիքուանա արվարձանում՝ պաղեստինյան փախստականների Թել-Զաաթար ճամբարի մոտակայքում[352]:

Մարտի 28-ին պաղեստինյան զինյալները նույնիսկ առևանգեցին Բաշիր Ժմայելին: Հարյուրավոր փաղանգավորներ՝ ի նշան բողոքի, շրջապատեցին պաղեստինցի փախստականների ճամբարները՝ պահանջելով իրենց ղեկավարի շուտափույթ ազատ արձակում: Առևանգումից ութ ժամ հետո Քամալ Ջումբլաթի և Յասիր Արաֆաթի միջև բանակցություններից հետո Բաշիր Ժմայելն ազատ արձակվեց[353]: Այս բախումների հետագա զարգացումը սպառնում էր վերածել քաղաքացիական պատերազմի:

Եգիպտոսը, Սիրիան և Իրաքը խիստ անհանգստացած էին Լիբանանում փաղանգավորների և պաղեստինյան զինված խմբավորումների միջև հակամարտության հետագա խորացման փաստով: Այս նպատակով Լիբիայի արտաքին գործերի նախարար՝ Սալիհ Բու Յասիրը, Եգիպտոսի միջնորդությամբ ժամանեց Բեյրութ: Այցի նպատակն էր նպաստել հակամարտող կողմերի միջև հաշտության կնքմանը և Լիբանանում խաղաղության վերահաստատմանը:

---

[352] Black Cross or the Files of the Plot Against Lebanon, Beirut, 1976, p. 25-30.

[353] ألنهار,«Ալ-նահար», Բեյրութ, 27.03.1970.

Լիբիայի արտաքին գործերի նախարարի ակտիվ միջնորդությամբ՝ մարտի 31-ին «Քաթաիբ» կուսակցության և ՊԴԾ-ի միջև ստորագրվեց կրակի դադարեցման մասին համաձայնագիր, որով ժամանակավոր խաղաղություն հաստատվեց Լիբանանում[354]:

1970թ. մարտի բախումներից և ստորագրված համաձայնագրից հետո լիբանանյան փաղանգավորները սկսեցին որոշակի զսպվածություն ցուցաբերել Լիբանանում պաղեստինյան զինվորական խմբավորումների ներկայության նկատմամբ: Պիեր Ժմայելն իր մի քանի ելույթներում նշում էր, որ պատրաստ էր աջակցել պաղեստինցիներին, եթե նրանք հետևեին Կահիրեի համաձայնագրով սահմանված դրույթներին և հարգեին Լիբանանի անկախությունն ու անվտանգությունը[355]:

1970թ. մայիսի 12-ին Հարավային Լիբանան իսրայելյան հերթական ներխուժումից հետո, երբ իսրայելյան զինված ուժերն այնտեղ մնացին 34 ժամ, որի հետևանքով հարավլիբանանյան մի քանի բնակավայրեր գրեթե ամբողջությամբ ավերվեցին[356], ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց 279-րդ բանաձևը, որը պահանջում էր Իսրայելից անմիջապես դուրս բերել իր զինված ուժերը Լիբանանի տարածքից[357]:

Իսրայելի Հարավային Լիբանան ներխուժումից հետո՝ 1970թ. մայիսի վերջին, Սիրիայի հովանավորությունը վայելող «Ալ–սաիկա» պաղեստինյան կազմակերպության 650 զինված մարտիկներ հաստատվեցին և ռազմական ճամբար հիմնեցին Հերմոն լեռան շրջակայքում: Նախագահ Շարլ Հելուն, երկյուղելով Սիրիայի այս քայլից, դիմեց վերջինիս նախագահին և պահանջեց հետ կանգնել Լիբանանն Իսրայելի հետ պատերազմի մեջ ներքաշելուց: 1970թ. մայիսի 30-ին Հելուն հայտարարեց, որ Լիբանանը պատրաստ չէր Իսրայելի հետ հակամարտությանը[358]:

---

[354] K. Salibi, Cross Roads to Civil War, p. 46.

[355] Նույն տեղում:

[356] "Le Monde", 2 Juin, 1970.

[357] Новейшая история арабских стран Азии, с. 126.

[358] The Text of President Helou's Declaration, 30 May 1970, տե՛ս Republic of Lebanon, Ministery of Foreign Affairs, Beirut, 1970, p. 47.

Մինչ այդ՝ 1970թ. մայիսի 22-ին, պաղեստինյան զինված մարտիկների մի խումբ, Լիբանանի տարածքից անցնելով Իսրայելի հյուսիս, պայթեցրեց դպրոցականներով լի ավտոմեքենա, որի հետևանքով զոհվեց 16 երեխա[359]: Նույն օրն Իսրայելի կառավարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որում կրկին սպառնալիք հնչեց Լիբանանի կառավարության հասցեին: Ահաբեկչական այս գործողության ողջ պատասխանատվությունն Իսրայելը դրեց Լիբանանի կառավարության վրա, որը, Իսրայելի կարծիքով, չէր կարողանում վերահսկել իր տարածքում պաղեստինցիների գործողությունները և թույլ չտալ այդպիսի ահաբեկչական գործողությունների իրականացում իր տարածքից[360]:

Իսրայելի կառավարությունը հայտարարեց, որ պատրաստվում էր պատասխան հարձակում իրականացնել Լիբանանի հարավային բնակավայրերի դեմ, որտեղից գործում էին պաղեստինյան զինված խմբավորումները: Եվ եթե Լիբանանի կառավարությունն ի վիճակի չէր սաստել պաղեստինցիներին, ապա Իսրայելն ինքը կպաշտպաներ իր սահմանները[361]:

1970թ. մայիսի 22-ին հայտարարությամբ հանդես եկավ նաև ԱՄՆ-ի պետքարտուղարությունը, որում նշված էր. «ԱՄՆ-ը մտահոգված է դպրոցականների ավտոմեքենայի վրա պաղեստինցիների իրականացրած հարձակման և դրան հետևած Հարավային Լիբանանի բնակավայրերի վրա իսրայելյան պատասխան հարձակմամբ, որի հետևանքով զոհվել են մեծ թվով խաղաղ բնակիչներ: ԱՄՆ-ը կոչ է անում պաղեստինցիներին՝ դադարեցնել իրենց գործողությունները լիբանանաիսրայելյան սահմանի վրա և դրանով իսկ չվտանգել Լիբանանի անվտանգությունը[362]»:

---

[359] Statement by Deputy Primier Allon of Israel Threatening Reprisals Against Lebanon for a Commando Attack Near the Lebanese Border, տե՛ս International Documents on Palestine, 1970, p. 150.

[360] Նույն տեղում:

[361] The Declaration of the Government of Israel, Israel Digest, XIII, 11, May 29, 1970, p. 1.

[362] U.S. State Department Statement Deploring Violence on the Israel-Lebanon Border, Department of State Bulletin, LXII, 1650, June 8, 1970, p. 713.

1970թ. մայիսի 22-ին իսրայելյան կառավարությունն իր հատուկ նիստում քննադատեց Կահիրեի համաձայնագիրը՝ կնքված պաղեստինցիների և լիբանանյան կառավարության միջև, և դպրոցականների ավտոմեքենայի վրա հարձակումը որակեց իբրև Կահիրեի համաձայնագրի ուղղակի հատնանք: Իսրայելի կառավարության կարծիքով, փաստորեն, Լիբանանի կառավարությունն իր երկրի հարավը դարձրել էր ահաբեկչական ճամբար[363]:

1970թ. հունվարից սկսած՝ Լիբանանի հարավից պաղեստինյան զինված խմբավորումներն իրականացրել էին ավելի քան 140 հարձակում, որոնց արդյունքում սպանվել էր 40 իսրայելցի և 59-ը՝ վիրավորվել:

Իսրայելյան կառավարության հայտարարության մեջ նաև ասվում էր. «Լիբանանյան դարպասների բացումը պաղեստինյան ահաբեկիչների առջև խաթարում է այն հանգստությունը, որ տիրում է իսրայելալիբանանյան սահմանում, և որը շահավետ է երկու պետությունների համար էլ: Լիբանանյան կառավարության ձեռնարկած կտրուկ միջոցառումների միջոցով է միայն հնարավոր կանխել իսրայելալիբանանյան սահմանում իրավիճակի հետագա հնարավոր սրումը: Հակառակ դեպքում Իսրայելը ստիպված կլինի ձեռնարկել մի շարք միջոցներ՝ պաշտպանելու իր քաղաքացիներին, քաղաքներն ու գյուղերը»[364]:

1970թ. մայիսի 30-ին ԽՍՀՄ-ը նույնպես հանդես եկավ հայտարարությամբ, որում մասնավորապես ասվում էր. «Երկու շաբաթ անընդմեջ Իսրայելի ռազմական մեքենան հարձակումներ է իրականացնում Հարավային Լիբանանի բնակավայրերի վրա: Մենք (ԽՍՀՄ-ի կառավարությունը –Լ.Հ.) մեր դժգոհությունն ենք արտահայտում Իսրայելի կառավարության վարած քաղաքականության նկատմամբ, մեղադրում ենք նրան այն բանում, որ վերջինս արհամարհում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումը, որը պահանջում էր զորքերի դուրս բերում 1967թ. գրավված արաբական տարածքներից: Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման

---

[363] Statement Issued by the Government of Israel on Palestinian Commando Attasks Near the Lebanese Border, "Jerusalem Post", May 24, 1970, p. 8.
[364] New Middle East, No.22, July 1970, pp. 46-49.

համար ԽՍՀՄ-ը կոչ է անում Իսրայելին դադարեցնել իր զինված պրովոկացիաները, դուրս բերել իր զորքերը գրավված արաբական տարածքներից, իրականացնել ԱԽ 1967թ. նոյեմբերին 22-ին ընդունած 242-րդ բանաձևը[365] և ՄԱԿ-ի այլ որոշումները: Ժամանակն է Իսրայելին հասկանալու, որ իրավիճակի հետագա սրումն առաջին հերթին վտանգում է հենց իր՝ Իսրայելի ազգային անվտանգությունը»[366]:

Ի պատասխան ԽՍՀՄ-ի այս հայտարարության՝ Իսրայելի արտաքին գործերի նախարարությունը հայտարարեց, որ «ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը բնորոշ է ԽՍՀՄ-ի քարոզչական քաղաքականությանը: Այն ամբողջապես անտեսում է Լիբանանի տարածքից պաղեստինյան ահաբեկիչների գործողությունները, որոնց արդյունքում սպանվում էին իսրայելցի երեխաներ և խաղաղ բնակիչներ: Իսրայելը երբեք նպատակ չի հետապնդել հարձակումներ իրականացնել Լիբանանի տարածքում և սպառնալ Լիբանանի տարածքային ամբողջականությանն ու անկախությանը: Իսրայելը բազմիցս հայտարարել է իր ցանկության մասին՝ խաղաղ գոյակցել Լիբանանի հետ, արդեն գոյություն ունեցող պետական սահմաններում: Ռուսներն իրենց հայտարարություններով «բենզին են լցնում կրակի վրա» և էլ ավելի խորացնում Իսրայելի և Լիբանանի միջև առկա

---

[365] 242-րդ բանաձևի համաձայն նախատեսվում էր՝ 1. Իսրայելական զորքերի դուրս բերում 1967թ. 6-օրյա պատերազմի ընթացքում գրավված տարածքներից. 2. Թշնամական տրամադրությունների վերացում և տարածաշրջանի ցանկացած պետության տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության, ինչպես նաև գոյության իրավունքի ճանաչում: Այդ պետությունների, ճանաչված սահմաններում, ապահովության երաշխավորում. 3. Ազատ ծովային երթևեկության ապահովում. 4. Ապառազմականացված գոտիների ստեղծման ճանապարհով երաշխավորել տարածաշրջանի բոլոր պետությունների տարածքային անձեռնմխելիությունը. Մանրամասն տե՛ս United Nations Resolutions on Palestine and the Arab-Israeli Conflict 1947-1974, Vol. 1, Washington, 1975, p. 141-143, UN Resolutions, Historical Documents տե՛ս http://www. ariga.com/.

[366] Statement Issued by U.S.S.R. News Agency TASS Commenting on Israeli raids on Lebanon, "Moscow News", June 6, 1970, տե՛ս International Documents on Palestine, 1970, p. 160.

տարածայնությունները՝ կապված Լիբանանում պաղեստինյան ներկայության հետ[367]»:

Ինչպես 1970թ. մայիսին լիբանանահսրայելյան սահմանում տեղի ունեցած դեպքերը, այնպես էլ դրանց նախորդած իրադարձությունները վկայում էին, որ 1967թ. հունիսյան պատերազմից հետո Լիբանանը մինչ այդ չտեսնված քայլերով ներքաշվում էր արաբ-իսրայելյան հակամարտության մեջ, որն իր հերթին ապակայունացրեց Լիբանանի առանց այդ էլ բարդ ներքաղաքական իրավիճակը:

1970թ. Լիբանանում նախագահական ընտրությունների տարի էր: Նախագահի հնարավոր թեկնածուները երեքն էին: «Ալ-նահջ» խմբավորումն առաջադրելու էր Ֆուադ Շիհաբի, իսկ «Եռյակ դաշինքը»՝ կա՛մ Քամիլ Շամունի, կա՛մ Սուլեյման Ֆրանջիեի թեկնածությունները: Վերջինս Հյուսիսային Լիբանանի՝ Զողրթայի ազդեցիկ ղեկավարներից էր:

Ֆրանջիեների ընտանիքը լիբանանյան ազդեցիկ մարոնի ընտանիքներից էր: 1958թ. ապստամբության ընթացքում Սուլեյման Ֆրանջիեն համագործակցում էր հակաշամունական ճակատի հետ: 1960թ. նա առաջին անգամ պատգամավոր ընտրվեց լիբանանյան խորհրդարանում: Ֆուադ Շիհաբի նախագահության տարիներին Սուլեյման Ֆրանջիեն, պայմանավորված այն հանգամանքով, որ նախագահը ջերմ հարաբերությունների մեջ էր Ֆրանջիեների մրցակից Մուաուադների ընտանիքի հետ և մեծ աջակցություն էր ցույց տալիս նրանց, Սուլեյման Ֆրանջիեն միացավ հակաշիհաբական ճակատին և բարելավեց իր հարաբերությունները նախկին նախագահ Քամիլ Շամունի հետ:

Հակառակ Սուլեյման Ֆրանջիեի և Քամիլ Շամունի միջև հարաբերությունների բարելավմանը՝ Ֆրանջիեն նախընտրեց չանդամակցել «Եռյակ դաշինքին»: Սակայն նա միացավ մեկ այլ դաշինքի, որի կազմի մեջ մտնում էին Սաիբ Սալամն ու Քամիլ Ասադը՝ Հարավային Լիբանանի ազդեցիկ շիա ղեկավարներից, որը մի քանի անգամ զբաղեցրել էր Լիբանանի խորհրդարանի նախագահի պաշտո-

---

[367] Statement by an Israeli Foreign Ministry Spokesman Denying U.S.S.R.. Charges Concerning Israeli Raids on Lebanon, տե՛ս International Documents on Palestine, 1970, p. 161.

նը: Այս դաշինքը նույնպես ուներ հակաշիիաբական ուղղվածություն և կոչվում էր «Կենտրոնական դաշինք» (արաբերեն՝ «Թակադուլ ալ-ուասատ»): Իր ձևավորման հենց սկզբից՝ 1969 թվականից սկսած սերտ համագործակցություն էր հաստատվել «Կենտրոնական դաշինքի» և «Եռյակ դաշինքի» միջև[368]:

Լիբանանյան աջ ուժերի շրջանում Սուլեյման Ֆրանժիեի հեղինակությունը բարձրացավ 1969թ. գարնանը, երբ պաղեստինյան զինված խմբավորումների և լիբանանյան բանակի միջև բախումներից հետո, լիբանանյան «Ալ-նահար» օրաթերթում նա հանդես եկավ հոդվածով, որը կրում էր «Իմ երկիրը մշտապես ճիշտ է» վերնագիրը: Այդ հոդվածում Ֆրանժիեն կտրուկ քննադատության էր ենթարկում նախագահ Շարլ Հելուի՝ Լիբանանում պաղեստինյան զինված խմբավորումների նկատմամբ վարվող «մեղմ» քաղաքականությունն ու մեղադրում էր պաղեստինցիներին Լիբանանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու մեջ[369]: Ի պատասխան այս հոդվածի՝ նախագահ Հելուն 1969թ. դեկտեմբերին, Սուլեյման Ֆրանժիեին իր հսկողության տակ պահելու նպատակով, վերջինիս շրջանակեց ազգային էկոնոմիկայի նախարարի պաշտոնում՝ Կահիրեի համաձայնագրի ստորագրումից հետո Ռաշիդ Քարամեի ձևավորած նոր կառավարության կազմում[370]:

1970թ. մարտին՝ պաղեստինցիների և լիբանանյան բանակի միջև տեղի ունեցած բախումներից հետո, Սուլեյման Ֆրանժիեն ձեռնամուխ եղավ սեփական միլիսների ձևավորմանը, որոնք կազմված էին բացառապես զորբացի քրիստոնյաներից: Դրանց կազմավորման հիմնական նպատակն էր պայքարել Տրիպոլիում պաղեստինյան զինված խմբավորումների դեմ և թույլ չտալ նրանց և ձախերի միջև որևէ համագործակցության հաստատումը:

1970թ. նախագահական ընտրությունների նախապատրաստման փուլում «Եռյակ դաշինքը» նպատակադրվել էր ամեն գնով

---

[368] J. Bulloch, Death of a Country, The Civil War in Lebanon, London, 1977, p. 62.
[369] Text of the Faranjiya's Article տե՛ս K. Salibi, Cross Roads to Civil War, p. 49.
[370] W. Goria, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, p. 109.

թույլ չտալ Ֆուադ Շիհաբի հնարավոր վերընտրվելը նախագահի պաշտոնում, որին աջակցում էր ոչ միայն «Ալ-նահջը», այլ նաև ձախ ուժերը՝ վարչապետ Ռաշիդ Քարամեի, Քամալ Ջումբլաթի և խորհրդարանի նախագահ Համադեի գլխավորությամբ:

Սակայն նախագահական ընտրությունների նախօրեին պարզ դարձավ, որ Ֆուադ Շիհաբը չէր մանսակցելու այդ ընտրություններին: Նման պարագայում վերոնշյալ ուժերն առաջադրեցին Իլիաս Սարգիսի թեկնածությունը, որը Ֆուադ Շիհաբի համախոհներից էր և համարվում էր նրա աջ ձեռքը: Վերջինս զբաղեցրել էր նախագահի գրասենյակի ղեկավարի, ապա մաքսային վարչության պետի և Լիբանանի Կենտրոնական բանկի կառավարչի պաշտոնները:

Լիբանանյան աջ ուժերն իրենց հերթին պատրաստվում էին առաջադրել կա՛մ Քամիլ Շամունի կա՛մ Սուլեյման Ֆրանջիեի թեկնածությունը, սակայն Քամիլ Շամունը ընտրություններից առաջ հանեց իր թեկնածությունը՝ հօգուտ Սուլեյման Ֆրանջիեի:

1970թ. օգոստոսի 17-ին լիբանանյան խորհրդարանը գումարեց նիստ, որտեղ տեղի ունեցավ նախագահական ընտրությունների առաջին փուլը: Այս փուլում Սուլեյման Ֆրանջիեն ստացավ 38, իսկ Իլիաս Սարգիսը՝ 49 ձայն: Ընտրությունների երկրորդ փուլում Քամալ Ջումբլաթի խորհրդարանական խմբակցության 8 անդամներից 4-ը, գաղտնի համաձայնության գալով «Եռյակ դաշինքի» ղեկավարների հետ, քվեարկեցին հօգուտ Սուլեյման Ֆրանջիեի, ինչն էլ որոշեց պայքարի ելքը[371]: Սուլեյման Ֆրանջիեն ստացավ 50, իսկ Իլիաս Սարգիսը՝ 49 ձայն: Միայն մեկ ձայնի առավելությամբ հաղթանակ տարավ «Կերտրոնական դաշինքի» և «Եռյակ դաշինքի» համատեղ թեկնածու Սուլեյման Ֆրանջիեն[372]:

Հատկանշական էր, որ Սուլեյման Ֆրանջիեի ընտրությունից հետո Քամիլ Շամունը հայտարարեց, որ նա դիտում էր Ֆրանջիեի հաղթանակը «իբրև իր սեփական հաղթանակ»[373]: Լիբանանյան աջ ուժերը ցնծության մեջ էին, երբ խորհրդարանի նախագահ Համի-

---

[371] Е. Мельников, նշվ. աշխ., էջ 116:

[372] "L'Orient", Beyrouth, 18.08.1970.

[373] ألنهار, «Ալ-նահար», Բեյրութ, 21.08.1970:

դեն, որը պաշտպանում էր Իլիաս Սարգիսի թեկնածությունը, հայտարարեց, որ ընտրություններում հաղթանակ է տարել Սուլեյման Ֆրանժիեն:

Ինչպես միշտ, նախագահական ընտրությունների նախօրեին ակտիվացել էին արևմտյան տերությունները, հատկապես ԱՄՆ-ը: Այս ընտրություններում ևս ԱՄՆ-ը փորձում էր Լիբանանի նախագահի պաշտոնում տեսնել իր համար ձեռնտու թեկնածուի: Այս տեսանկյունից հետաքրքրական էր, որ ընտրությունների նախօրեին հայտնի դարձավ, որ լիբանանյան իշխանություններին խոստացվել էր 50 մլն դոլարի վարկի տրամադրում, եթե նախագահ ընտրվեր «արևմտամետ գործիչ»[374]. տվյալ դեպքում Սուլեյման Ֆրանժիեն:

Արաբական աշխարհը միանշանակ չընդունեց Սուլեյման Ֆրանժիեի ընտրությունը: Սաուդյան Արաբիան և Ծոցի արաբական երկրները ողջունում էին նրա ընտրությունն ու կիսում լիբանանյան աջերի ոգևորությունը: Թեև վերջիններս ֆինանսական մեծ աջակցություն էին ցույց տալիս ՊԱԿ-ին, սակայն, հատկապես վերջին շրջանում, գնալով ավելի էին երկյուղում արաբական աշխարհում ձախ ուժերի պայքարի վերելքից, ինչպես նաև այդ ուժերի և պաղեստինցիների միջև հաստատվող սերտ համագործակցությունից: Սաուդյան Արաբիան և Ծոցի երկրներն այս կապակցությամբ իրենց անհանգստությունը հիմնավորում էին այն փաստարկով, որ պաղեստինյան զինված շարժումը ներկայացնում էին իբրև «խորհրդային հովանավորություն վայելող ծայրահեղականության տեգ, որը նետվել էր արաբական աշխարհ և ծառայում էր խորհրդային ազդեցության հաստատմանն ու պահպանմանը Մերձավոր Արևելքում»[375]:

Այս տեսանկյունից նրանք չէին թաքցնում իրենց գոհունակությունը, որ նախագահ էր ընտրվել բավական ազդեցիկ ղեկավար, որը կկարողանար կարգուկանոն հաստատել Լիբանանում:

Սուլեյման Ֆրանժիեի նախագահի պաշտոնում ընտրությանը որոշակի վերապահումով մոտեցան Սիրիան, Եգիպտոսն ու մա-

---

374 "Правда", 08.08.1970.

375 K. Salibi, Cross Roads to Civil War, p. 51.

սամբ նաև Իրաքը[376]: Նրանք գտնում էին, որ Ֆրանժիեի իշխանության գալը, որն աջ ուժերի հաղթանակի հետևանք էր, կարող էր նշանակել լիբանանյան աջերի, բանակի և պաղեստինյան զինված խմբավորումների միջև առկա հակասությունների հետագա սրում, սոցիալական և տնտեսական ոլորտում ճգնաժամի խորացում, իսկ արտաքին քաղաքականության ոլորտում՝ Արևմուտքի հետ մերձեցում ու նրա ազդեցության ուժեղացում Լիբանանում:

2. Պաղեստինյան ռազմաքաղաքական ներկայությունը որպես լիբանանյան հասարակության երկփեղկման և լիբանանյան ճգնաժամի խորացման պատճառ (1970-1973թթ.)

Սուլեյման Ֆրանժիեի՝ նախագահի պաշտոնում ընտրվելը համընկավ Մերձավոր Արևելքում դրամատիկ իրադարձությունների՝ 1970թ. Հորդանանում «սև սեպտեմբերի» դեպքերի հետ, երբ բախումներ տեղի ունեցան հորդանանյան բանակի և պաղեստինյան զինված խմբավորումների միջև:

1970թ. սկզբին Հորդանանում ստեղծվել էր բարդ իրավիճակ, երբ պետական պաշտոնական իշխանության հետ զուգահեռ՝ ՊԴԾ-ը, փաստորեն, սկսեց ներկայանալ իբրև իրական իշխանություն[377]:

---

[376] Նույն տեղում, էջ 51-52:

[377] Մանրամասն տե՛ս Olivier Carre, Septembre Noir: Refus Arabe de la Resistance Palestinienne, Bruxelles, 1980, pp. 18-32, Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1986, с. 80, Его же Палестинский узел, М., 1978, с. 77., Н. Оганесян, Отнашения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985, с. 74, Ռ. Կարապետյան, Սիրիա-ամերիկայն հարաբերությունները 1967-1996թթ., Երևան, 2000, էջ 47, Դ. Վիրաբյան, 1973թ. արաբ-իսրայելյան պատերազմը և Հորդանանի դիրքորոշումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 19, Երևան, 2000, էջ 112:

Սակայն Հորդանանում քաղաքական ու հասարակական կյանքում բարձր դիրք ու ազդեցություն ունեցող պաղեստինյան ազատագրական խմբավորումներից շատերը որոշ հարցերի նկատմամբ չունեին միասնական դիրքորոշում[378]:

Սեպտեմբերի 3-ին Հորդանանում սկսվեց քաղաքացիական պատերազմ: Սիրիան՝ ՊԴԾ-ին աջակցելու նպատակով, մարտական պատրաստության բերեց իր զորքերը: Սիրիայի գործողությունները անհանգստություն առաջ բերեցին ԱՄՆ-ում: ԱՄՆ-ի կարծիքով՝ Հորդանանում ՊԴԾ-ի ջախջախումն ավելի քան ցանկալի է: Սակայն ԱՄՆ-ը ձգտում է այն բանին, որ պաղեստինցիների սպանդը դուրս չգար Հորդանանի շրջանակներից[379]: Իսկ Սիրիայի գործողությունները ոչ միայն բարդացնում են այդ ծրագրի իրականացումն, այլև իրադարձությունների որոշակի զարգացման դեպքում կարող են հանգեցնել հորդանանյան վարչակարգի անկմանը[380]:

ԱՄՆ-ի նախագահ Նիքսոնը նաև հայտարարեց, որ «ԱՄՆ-ը կամ Իսրայելը պետք է զինված միջամտություն կատարեն Հորդանանում, եթե Սիրիան կամ Իրաքն օգնություն ցույց տան պաղեստինյան պարտիզաններին»[381]: Իսրայելի վարչապետ Գ. Մեիրը 1970թ. սեպտեմբերին Վաշինգտոն կատարած իր այցելությունից հետո հայտարարեց, որ Իսրայելը պատրաստ է ներխուժել Հորդանան և միաժամանակ հարվածել Սիրիային ու տապալել սիրիական կառավարությունը[382]: Նախագահ Նիքսոնի ցուցումով սեպտեմբերի 19-ին Արևմտյան Գերմանիայում տեղակայված ԱՄՆ-ի զորքերը բերվեցին մարտական պատրաստականության, իսկ 6-րդ նավատորմը սկսեց շարժվել դեպի Միջերկրականի արևելյան ափերը: Հուսեյն թագավորը դիմեց ամերիկյան դեսպան Դեն Բրաունին՝

---

[378] P. Seale, Asad. The Struggle for the Middle East, London, 1988, p. 157.

[379] Հ.Գրիգորյան, Սիրիայի ձախբասական ղեկավարության դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h. 14, Երևան, 1995, էջ 67:

[380] I. Rabinovich, H. Shaked, From June to October, The Middle East between 1967 and 1973, New Jersey, 1978, p. 239.

[381] Նույն տեղում:

[382] Г. Концельман, Ясир Арафат: От террориста к человеку мира, Ростов-На-Дону, 1997, с. 169.

խնդրելով անհապաղ միջոցառումներ ձեռնարկել սիրիացիների դեմ: Սեպտեմբերի 20-ին Պաղեստինի ազատագրության բանակի զինանշաններով սիրիական 200 տանկեր մտան Հորդանան և գրավեցին հորդանանյան Իրբիդ քաղաքը[383]:

Հորդանանապաղեստինյան հակամարտության սրման առաջին իսկ օրվանից, հատկապես այն բանից հետո, երբ ԱՄՆ-ի պետական քարտուղարը հայտարարեց, որ Հորդանանում հաշիմյան գահին իրական սպառնալիքի դեպքում ամերիկյան ուժերը կտեղակայվեին Հորդանանում, Եգիպտոսի նախագահ Նասերը Կահիրեում հրավիրեց արաբական պետությունների վեհաժողով: Առողջական վիճակի վատթարացման պարագայում, ձգտելով հանել արաբական աշխարհը ստեղծված ճգնաժամից, Նասերը հասավ կրակի դադարեցման մասին հորդանանապաղեստինյան համաձայնությանը, որի ստորագրման հաջորդ օրը նա մահացավ[384]:

Ռազմական գործողությունների ընդլայնմանը զուգահեռ ուժեղանում էին նաև ԱՄՆ-ի ջանքերը, որոնք նպատակ էին հետապնդում քաղաքական, դիվանագիտական խոսավարմամբ և միջարաբական հակասություններից օգտվելով, պառակտում մտցնել արաբների շարքերում: Սեպտեմբերի 27-ին Նասերի միջնորդությամբ Հուսեյն թագավորի և ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթի ստորագրած զինադադարին հոկտեմբերի 10-ին հաջորդեց նոր համաձայնագրի կնքումը, որով պաղեստինցի զինյալները հեռանալու էին հորդանանյան քաղաքներից:

Հորդանանում այս հակամարտության արդյունքում ջախջախվեց պաղեստինյան ջոկատների զգալի մասը: Ազատագրական կազմակերպությունները, տալով շուրջ 5.000 զոհ, վտարվեցին երկրից[385]: «Սև սեպտեմբերի» իրադարձություններից հետո մեծաքանակ պաղեստինյան զինյալներ և փախստականներ, ՊԱԿ-ը՝ Յասիր Արաֆաթի

---

[383] P. Seale, նշվ. աշխ., էջ 157:

[384] И. Беляев, Е. Примаков, Египет: время президента Насера, М., 1974, с. 39.

[385] Այլ աղբյուրների համաձայն՝ այդ օրերին զոհվել էր 15.000 պաղեստինցի: Մանրամասն տե՛ս Inter-Arab Agreement (the Cairo Agreement). Effecting a Cease-Fire Between Jordan Government Forces and the Palestinian Resistance, International Documents on Palestine, 1970, p. 930, Е. Дмитриев, Палестинская трагедия, с. 80.

գլխավորությամբ, իր ղեկավար մարմիններով ու ռազմական հրամանատարությամբ, հաստատվեցին Լիբանանում:

1970թ. մյուս կարևոր իրադարձությունը Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդ Ալ-Նասերի մահն էր (1970թ. սեպտեմբերի 28-ին), որին փոխարինեց Անվար Սադաթը: Նա աստիճանաբար հրաժարվեց իր նախորդի քաղաքական ժառանգությունից և սկսեց վերանայել մերձավորարևելյան հակամարտության նկատմամբ Եգիպտոսի քաղաքականությունը[386]:

1970թ. նշանավորվեց ևս մեկ կարևոր իրադարձությամբ: 1970թ. Հորդանանում «սև սեպտեմբերի» դեպքերից և Սիրիայի անհաջող միջամտությունից հետո սրվեց նաև քաղաքական իրավիճակը Սիրիայի ներսում: Դեպքերի որոշակի զարգացման արդյունքում Սիրիայում իշխանության եկավ Հաֆեզ Ասադը: Սիրիայի Արաբական Հանրապետության համար այս նշանակալից իրադարձությունը, որը ստացավ «1970թ. նոյեմբերի 16-ի ուղղիչ շարժում»[387] անվանումը, 1968-1970թթ. «Բասաս» կուսակցության ներսում զգալի հակասությունների սրման հետևանք էր: Հորդանանյան դեպքերին Սիրիայի անհաջող միջամտությունը հարմար պատրվակ էր Սիրիայում իշխանափոխության համար[388]:

Հաֆեզ Ասադի իշխանության գալուց հետո Սիրիայի և Լիբանանի միջև հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ: Հաֆեզ Ասադի իշխանության գալուց հետո հանվեցին սիրիական քաղաքացիների Լիբանան մեկնելու սահմանափակումները, ինչպես նաև հանվեցին որոշ քվոտաներ, որոնք վերաբերում էին ապրանքաշրջանառության ու առևտրական որոշ գործառություններին: 1970թ. դեկտեմբերի 22-ին կազմավորվեց երկկողմ հանձնաժողով, որի նպատակն էր կանոնակարգել երկու երկրների՝ Լիբանանի և Սիրիայի միջև հարաբերությունները և կնքել մի շարք համաձայնագրեր: Սի-

---

[386] Е. Примаков, История одного сговора, М., 1985, с. 12-13.
[387] Մանրամասն տե՛ս С. Иванов, նշվ. աշխ., էջ 79-80, International Documents on Palestine, 1970, p. 930, Հ.Գրիգորյան, Սիրիայի ձախբասասական ղեկավարության դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ, էջ 70:
[388] С. Иванов, նշվ.աշխ., էջ 79-80:

րիական կառավարությունը հույս հայտնեց, որ դրանց կյանքի կոչելը բարենպաստ ազդեցություն կունենա ինչպես Լիբանանի, այնպես էլ Սիրիայի տնտեսության վրա[389]:

Լիբանանի նորընտիր նախագահ Սուլեյման Ֆրանժիեն սերտ անձնական կապեր հաստատեց Հաֆեզ Ասադի հետ: Լիբանանյան վարչապետներն ու արտաքին գործերի նախարարները բազմիցս այցելում էին Սիրիա: Այս շրջանում ակտիվացավ նաև «Բաաս» կուսակցության և Լիբանանի «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցության միջև միջկուսակցական համագործակցությունը[390]:

* * *

Նորընտիր նախագահ Սուլեյման Ֆրանժիեն իր պաշտոնը ստանձնեց 1970թ. սեպտեմբերի 23-ին: Նախագահի առաջին քայլը երկրի վարչապետի պաշտոնում «Կենտրոնական դաշինքից» իր հիմնական դաշնակցի՝ Սաիբ Սալամի նշանակումն էր, որն անմիջապես ստանձնեց նոր կառավարության ձևավորումը: 1970թ. հոկտեբերին կազմավորված նոր կառավորությունը կազմված էր, այսպես կոչված, «նոր դեմքերից», հիմնականում՝ երիտասարդ գործարարներից, և այն ստացավ «Երիտասարդ կառավարություն» անվանումը[391]: Այս կառավարության քաղաքական ծրագրի մշակումը հանձնարարվեց «Ալ-նահար» օրաթերթի խմբագիր Հասան Ալ-Թուայնիին: Դեռ նոր էր այս կառավարությունը սկսել իրականացնել իր քաղաքական ծրագիրը, երբ բախվեց առաջին խոչընդոտների հետ:

Հասարակական առողջապահության նախարար նշանակվեց Էմիլ Բիթարը, որն անմիջապես ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին Լիբանանում դեղամիջոցների գների իջեց-

---

389 Նույն տեղում, էջ 104:

390 Նույն տեղում:

391 Policy Statement by the Government of Saeb Salam, The New Prime Minister of Lebanon, National News Agency Bulletin, Beirut, October 17, 1970.

մանը: Այս հանգամանքը, սակայն, մեծ դժգոհություն առաջացրեց դեղամիջոցների վաճառքի շուկայում հաստատված մենաշնորհային ընկերությունների շրջանում, որոնց ղեկավարները նախագահի մտերիմ մի քանի ընկերներն էին: Այս շրջանակների պատասխան գործողությունների արդյունքում մի քանի առաջին անհրաժեշտ դեղամիջոցներ արհեստականորեն անհետացան շուկայից: Ստեղծված իրավիճակում, երբ սրվել էին առողջապահության նախարարի և դեղամիջոցների վաճառքով զբաղվող ընկերությունների ու նրանց ղեկավարների միջև հարաբերությունները, 1971թ. փետրվարին Էմիլ Բիթարը ցուցաղրաբար հրաժարական տվեց, այն բանից հետո, երբ կառավարությունն ու նախագահը որևէ միջոց չձեռնարկեցին աջակցելու առողջապահության նախարարի իրականացրած քաղաքականությանը[392]:

Կրթության նախարարի պաշտոնը նոր կառավարության կազմում զբաղեցրեց «Ալ-նահար» օրաթերթի խմբագիր Հասան Ալ-Թուայնին, որը կառավարությանը ներկայացրեց կրթական համակարգում բարեփոխումների իրականացման իր ծրագիրը: Սակայն այն հավանության չարժանացավ: Իր պաշտոնավարման 15-րդ շաբաթը դեռ չլրացած՝ Ալ-Թուայնին հրաժարական տվեց: Իշխանությունների հետ հակասությունների առկայության հետևանքով հրաժարական տվեցին նաև հաջորդ երկու կրթության նախարարներ՝ Հենրի Էդդեն և Նաջիբ Աբու Հայդարը, ինչը կապված էր այդ ընթացքում Լիբանանում ծավալված ուսանողական բուռն շարժման հետ, որը կազմակերպել էին ձախ ուժերը:

Ազգային էկոնոմիկայի նախարարի պաշտոնը ստանձնեց Իլիաս Սաբան, որը նույնպես նախագահի մտերիմներից էր: Նա մշակեց և ներկայացրեց Լիբանանի տնտեսական զարգացման 6-ամյա ծրագիրը, որը ներառում էր մաքսային համակարգում բարեփոխումների իրականացում[393]: Մասնավորապես նախատեսվում էր բարձրացնել ներմուծվող որոշ ապրանքների մաքսատուրքերը: Սա-

---

[392] K. Salibi, Cross Roads to Civil war, p. 56.
[393] G. Naccache, Un Rêve Libanais 1943-1972, Ficher du Monde Arabe, 1983, p. 234.

կայն այս ծրագիրը ևս առաջ բերեց Լիբանանում ամուր դիրքեր ունեցող առևտրականների և օտարերկրյա ընկերությունների դժգոհություն ու այդպես էլ մնաց թղթի վրա:

Լիբանանյան այս կառավարության մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին Լիբանանում գների աճի նվազեցմանը, նույնպես որևէ դրական արդյունք չտվեցին: Երկրում նկատվում էր առաջին անհրաժեշտության ապրանքների և բնակարանային կոմունալ ծախսերի գների արագ բարձրացում, ինչը խորացնում էր լիբանանյան հասարակության բևեռացումը: Այս հողի վրա երկրում դրսևորվում էին խիստ դժգոհություններ, կազմակերպվում էին ցույցեր: Նման իրավիճակն անհանգստացնում էր ոչ միայն լիբանանյան ձախ ուժերին, այլ նաև առևտրաֆինանսական, արդյունաբերական շրջանակների մի շարք ներկայացուցիչների: Ցուցարարները պահանջում էին սոցիալ-քաղաքական ոլորտում որոշակի փոփոխությունների իրականացում, ինչը փոփոխություն կմտցներ ստեղծված իրավիճակում:

Խոսելով բարեփոխումների մասին՝ փաստենք, որ դրանք հիմնականում վերաբերում էին կրոնադավանական համակարգում որոշակի փոփոխություններին, ինչն անմիջականորեն կապվում էր պետության կառավարման գործում քրիստոնյա մարոնի վերնախավի մենաշնորհի վերանայման հետ: Այս պահանջները, որոնք լիովին համապատասխանում էին Լիբանանի համընդհանուր շահերին, հստակորեն ի հայտ եկան 1960-ականների վերջին և մեծ հետևողականությամբ առաջադրվեցին 1970-ականների սկզբներին:

Սակայն քրիստոնյա մարոնի վերնախավին և լիբանանյան աջ շրջանակներին ձեռնտու չէր երկրի պետական և սոցիալ-քաղաքական կառուցվածքներում որևէ փոփոխության իրականացում: Այդ շրջանակներն ամեն կերպ ձգտում էին պահպանել գոյություն ունեցող համակարգը, որի շրջանակներում ինքնաբերաբար կապահովվեր վերջիններիս տիրապետող, մենաշնորհային դիրքերը Լիբանանում: Դրանով իսկ քրիստոնյա մարոնի համայնքի վերնախավն իրեն հակադրում էր լիբանանյան թե՛ իսլամադավան և թե՛ մյուս բոլոր քրիստոնեական համայնքներին: Եվ այս հանգամանքի խորա-

ցումն ու սրումը դարձավ լիբանանյան ճգնաժամի առաջացման հիմնական պատճառներից մեկը[394]:

1972թ. մայիսին, երբ Լիբանանը պատրաստվում էր խորհրդարանական ընտրությունների, Սաիբ Սալամի ղեկավարած «Երիտասարդ կառավարությունը» պարտություն կրեց և հրաժարական տվեց[395]: Լիբանանի կրոնադավանական և կլանային համակարգն ու իշխող շրջանակները որևէ կերպ չաջակցեցին այդ կառավարության առաջ քաշած ծրագրերի իրականացմանը, այլ ընդհակառակը, ամեն կերպ խոչընդոտեցին դրանց իրագործումը, քանի որ վախենում էին դրանով իսկ հարվածի տակ դնել սեփական վերադաս դիրքերը:

Դեռևս Սաիբ Սալամի «Երիտասարդ կառավարության» ժամանակաշրջանում նոր իշխանությունները ձեռնարկեցին բանակում և վարչական մարմիններում, այսպես կոչված, «շիահական տարրերից զտման» գործընթացը, ինչը սկսվեց Երկրորդ գրասենյակից, որի հակահետախուզական աշխատանքը վստահվեց բանակային տեղ սպաների մի նոր խմբի, որը բավական անփորձ էր այս ոլորտում: Այս խումբը նույնպես ընդգրկում էր նախագահի համախոհների շրջանակը[396]:

«Ապաշիահաբացման» այս գործընթացը նկատելի էր նաև լիբանանյան բանակում: Բանակի նոր հրամանատար նշանակվեց Սուլեյման Ֆրանժիեի մտերիմներից գեներալ Իսքանդար Ջանիմը[397]: Նոր էր սկսվել լիբանանյան բանակի և անվտանգության ուժերի կազմում «ապաշիահաբականացման» գործընթացը, երբ մի քանի խորհրդավոր պայթյուններ տեղի ունեցան Բեյրութում: Պայթեցվեց նաև «Քաթաիբ» կուսակցության ղեկավար Պիեր Ժմայելին պատկանող դեղատունը: Այս պայթյունների մեղավորներն այդպես էլ չբացահայտվեցին և չպատժվեցին: Այս հանգամանքը վկայում էր այն մասին, որ լիբանանյան անվտանգության ուժերն ի վիճակի

---

394 Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամն ու Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, էջ 11:

395 The Middle East Journal, Vol 26, No. 3, Summer 1972, pp. 64-65.

396 K. Salibi, Cross Roads to Civil War, p. 57.

397 R. Owen, Essays on the Crisis in Lebanon, London, 1976, p. 80.

չէին ապահովել երկրի անվտանգությունն ու իրենց քաղաքացիների ապահովությունը: Իսկ անվտանգության ուժերում կադրային փոփոխություններն արվում էին ոչ թե դրանք ամրապնդելու և արհեստավարժներով համալրելու նպատակով, այլ նախագահը փորձում էր հանգուցային պաշտոններում նշանակել իր համախոհներին և շրջապատել իրեն հավատարիմ մարդկանցով: Փաստորեն, անվտանգության համակարգն ի զորու չէր կանխել երկրում տեղի ունեցող ահաբեկչական գործողություններն ու պայթյունները: «Ապաշիիաբականացման» գործընթացն ընթանում էր նաև վարչական մարմիններում: Շիհաբական թևից իր պաշտոնը պահպանեց միայն Կենտրոնական բանկի կառավարիչ, նախագահական ընտրությունների նախկին թեկնածու Իլիաս Սարգիսը: Վարչական մարմիններում մեծ թվով շիհաբականներ փոխարինվեցին նախագահի համախոհներով, որոնց զգալի մասը զորթացիներ էին: Այս պայմաններում նոր թափ ստացավ վարչական մարմիններում տիրող կոռուպցիան և կաշառակերությունը, ինչը վարկաբեկում էր լիբանանյան նոր իշխանություններին: Լիբանանը կարիք ուներ լուրջ բարեփոխումների, սակայն այս իշխանությունները նաև պաշտպանում էին իրենց համայնքային, անձնական և նեղ կլանային շահերը:

1972թ. մայիսի վերջին Լիբանանում կայացան խորհրդարանական ընտրություններ[398]: Նոր խորհրդարանում ներկայացված պատգամավորներից 39-ն առաջին անգամ էին խորհրդարանական տեղեր ստանում երկրի օրենդիր մարմնում[399]: Հակառակ լիբանանյան աջ շրջանակների բոլոր ջանքերին՝ ձախ ուժերն ընդլայնեցին իրենց ներկայացչությունը երկրի խորհրդարանում: «Ազգային ճակատը», որը գլխավորում էր Քամալ Ջումբլաթը, ստացավ 10 պատգամավորական տեղ նախկին 7-ի փոխարեն: Մեկական տե-

---

[398] 1975թ. Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմի պատճառով Լիբանանում խորհրդարանական ընտրություններ չէին անցկացվում, իսկ 1972թ. ընտրված խորհրդարանի կազմի լիազորությունները երկարաձգվում էին: Միայն 1992թ. երկարատև պատերազմից հետո առաջին անգամ տեղի ունեցան խորհրդարանական նոր ընտրություններ:

[399] Новейшая история арабских стран Азии, с. 127.

ղեր առաջին անգամ ստացան «Արաբական սոցիալիստական վերածննդի Բասաս» կուսակցությունը, որը ներկայացնում էր Աբդ Ալ-Մաջիդ Ալ-Ռաֆին և լիբանանյան նասերականները, որոնց ներկայացուցիչը Նաջահ Վաքիմն էր: Վեց պատգամավորական տեղ ստացավ Ռաշիդ Քարամեի ղեկավարած «Դեմոկրատական խորհրդարանական ճակատը», որը նույնպես հանդես էր գալիս ձախ դիրքերում[400]:

Այս խորհրդարանական ընտրություններից հետո լիբանանյան օրենսդիր մարմնի նախագահ ընտրվեց Սուլեյման Ֆրանժիեի շիա հիմնական դաշնակից Քամիլ Ալ-Ասադը, իսկ Զողրթայից պատգամավոր դարձավ նախագահի որդին՝ Թոնի Ֆրանժիեն: Վերջինս անմիջապես ձեռնամուխ եղավ խորհրդարանական նոր խմբակցության ձևավորմանը, որը պետք է դառնար խորհրդարանում նախագահի հիմնական հենարանը: Այս խմբակցությունը ստացավ «Նոր կենտրոնական դաշինք» (արաբերեն՝ «Թակադդուլ ալ-ուսասատ ալ-Ջադիդ») անվանումը[401]:

1960-ականների վերջին և 1970-ականներ սկզբին բավական ակտիվացավ լիբանանյան շիաների համայնքը, որը թեև ամենամեծաքանակ կրոնական համայնքն էր, սակայն շարունակում էր ամենաչհաշրջանցվածը լինել երկրի հիմնական համայնքների շարքում: Լիբանանյան շիաների քաղաքական կազմակերպվածության դրսևորման վառ արտահայտություն էր 1969թ. «Բարձրագույն շիական խորհրդի» ձևավորումը, որի նախագահ ընտրվեց իմամ Մուսա Ալ-Սադրը[402]: Լիբանանի սունների ղեկավարները սկզբնական շրջանում վրդովված էին վերոնշյալ հանգամանքով: Նորաստեղծ «Շիական խորհրդը» գործում էր անջատ և ինքնուրույն էր արդեն իսկ գործունեություն ծավալող «Բարձրագույն իսլամական խորհրդից», որում գերիշխող դիրքեր ունեին լիբանանյան սուննիները: «Շիական

---

[400] Նույն տեղում:

[401] W. Goria, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, London, Ithaca Press, 1985, p. 126.

[402] F. Ajami, The Vanished Imam Musa al Sadr and the Shia of Lebanon, Cornell University, 1986, p. 24.

խորհրդում» ներկայացված էին ինչպես շիաներ, այնպես էլ՝ սուննիներ ու դրուզներ[403]:

Ստանձնելով «Բարձրագույն շիական խորհրդի» նախագահի պաշտոնը՝ Ալ-Սադրը ցուցաբերեց սուննիների և դրուզների հետ համագործակցելու այնպիսի պատրաստակամություն, որ շատ շուտով Խորհրդի ձևավորման հետ կապված այդ համայնքների ղեկավարների դժգոհությունները մոռացության տրվեցին:

«Շիական բարձրագույն խորհրդի» ձևավորումից որոշ ժամանակ անց լիբանանյան կառավարության որոշմամբ ձևավորվեց նաև «Լիբանանի հարավի խորհուրդը» (արաբերեն՝ «Մաջլիս ալ-ջանուբ»), որը գլխավորեց ազդեցիկ շիա ղեկավար Քամիլ Ալ-Ասադը[404]: Խորհրդին տրամադրվեց 30 մլն լիբ. լիրա, որը պետք է ներդրվեր Հարավային Լիբանանի հետամնաց շրջանների զարգացման ծրագրերում[405]: Սակայն վերոնշյալ խորհուրդը կարճ ժամանակ անց վերածվեց կոռուպացված մի մարմնի, որի գործունեությունը որևէ կերպ չէր նպաստում երկրի հարավի զարգացման ծրագրերի իրականացմանը:

1970-ականների սկզբին, երբ Իսրայելը սկսեց պարբերական հարձակումներ իրականացնել Հարավային Լիբանանում, Մուսա Ալ-Սադրը Բեյրութում կազմակերպեց շիաների մասնակցությամբ գործադուլ: Ալ-Սադրը լիբանանյան իշխանություններից պահանջում էր դիմել պատասխան ռազմական գործողությունների և պաշտպանել Հարավային Լիբանանի շիական բնակավայրերը, որոնք իսրայելյան հարձակումների հիմնական տուժողներն էին[406]: Սակայն Մուսա Ալ-Սադրի պահանջներին լիբանանյան իշխանությունները որևէ կերպ չարձագանքին:

---

[403] A. Norton, Amal and the Shi'a. Struggle for the Soul of Lebanon, USA, 1987, p. 45.

[404] D. Audrey, C. Smock, The Politics of Pluralism: A Comparative Study of Lebanon and Ghana, New York, 1975, p. 141.

[405] Th. Sicking, Sh. Khairallah, The Shi'a Awakening in Lebanon: A Search for Radical Change in a Traditional Way, Vision and Revision in Arab Society, CEMAM Reports, Vol. 2, Beirut, 1975, p. 110.

[406] J. Cole, M. Keddie, Shi'ism and Social Protest, London, 1986, p. 145.

Փաստենք, որ Լիբանանն այդ փուլում, իրոք, պատրաստ չէր Իսրայելի հետ լայնածավալ հակամարտությանը: Սկսվել էր լիբանանյան բանակի կազմալուծման գործընթացը:

Այս պայմաններում շիական բնակավայրերի պաշտպանությունը կազմակերպելու գործում Մուսա Ալ-Սադրին իրենց աջակցությունը հայտնեցին պաղեստինյան զինվորական խմբավորումներն ու նրանց կողքին Իսրայելի հարձակումներին դիմակայող ձախ ուժերը: Սա արդեն նշանակում էր համագործակցության հաստատում լիբանանյան ձախերի, պաղեստինցիների և շիաների միջև:

Մինչ այդ շիական ավանդական ղեկավարներից Քամիլ Ալ-Ասադը սկսեց անհանգստության նշաններ ցուցաբերել շիական համայնքի ներսում Մուսա Ալ-Սադրի հեղինակության բարձրացման նկատմամբ, ինչը Քամիլ Ալ-Ասադը դիտում էր իբրև իր սեփական դիրքերի և հեղինակության անկման սպառնալիք: Շիական համայնքի ներսում մեծ թվով ազդեցիկ շիաներ արդեն սկսել էին համախմբվել Մուսա Ալ-Սադրի շուրջ:

1972թ. մայիսի խորհրդարանական ընտրություններից հետո Սաիբ Սալամը ստանձնեց նոր կառավարության ձևավորումը: Կառավարությունը բաղկացած էր 16 անդամներից, որոնք բացառապես «ավանդական վետերան» քաղաքական գործիչներ էին: Նոր կառավարության կազմում բավական ամուր դիրքեր ունեին լիբանանյան աջերը:

1972թ. Լիբանանում արտակարգ սուր էր դրված իսրայելյան պարբերական հարձակումներից պետական սահմանների պաշտպանության հարցը: Ողղակի հարձակումների քաղաքականությունն Իսրայելը համատեղում էր Լիբանանում մի շարք ահաբեկչական գործողությունների իրականացմամբ, որոնք ուղղված էին «սեպտեմբերից» հետո Լիբանանում հաստատված ՊԱԿ-ի ղեկավարության դեմ: 1972թ. հուլիսին Բեյրութում իսրայելցիները կազմակերպեցին «Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատի» պաշտոնական ներկայացուցիչ, «Ալ-հադաֆ» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հասան Կանաֆանիի սպանությունը: Ծանր վիրավորվեցին նաև ՊԱԿ-ի հետազոտությունների կենտրոնի ղեկա-

վար՝ Անիս Սայղը և «Ալ-հադաֆ» շաբաթաթերթի խմբագիր Բասըմ Աբու Շիրիֆը[407]:

Փաստենք մի կարևոր հանգամանք ևս. Լիբանանում և Հորդանանում պաղեստինյան զինված խմբավորումների ներկայության հետևանքով ստեղծված իրավիճակները մի շարք հարցերում տարբերվում էին միմյանցից: Հորդանանում Հաշիմյան թագավորության հիմնական հենարանը հորդանանյան բանակն ու նրա բեդվինական զորամիավորումներն էին: Երկրում պաղեստինյան զինվորական խմբավորումների թվաքանակի աճը հորդանանյան բանակում առաջացրել էր ուժեղ հակապաղեստինյան տրամադրություններ: Հենց սա էր այն հիմնական պատճառը, որ հորդանանյան բանակն ակտիվորեն մասնակցեց պաղեստինյան զինվորական խմբավորումների Հորդանանի տարածքից դուրս բերմանը:

Լիբանանում իրավիճակն անհամեմատ ավելի բարդ էր: Ի տարբերություն Հորդանանի թագավորության՝ Լիբանանի քրիստոնյա և իսլամադավան համայնքներից յուրաքանչյուրն ունի իր ուրույն տեսակետն այս կամ այն հարցի վերաբերյալ: Ինչ վերաբերում է լիբանանյան բանակին, ապա այն նույնպես հիմնված էր կրոնադավանական սկզբունքի վրա: Բանակի հրամանատարությունը քրիստոնեական էր՝ գլխավորապես մարոնիական, մինչդեռ զինվորների մեծ մասը և ընդհանրապես բանակի կորիզը կազմում էին իսլամադավանները, որոնց ներկայացուցչությունը գնալով ավելանում էր:

Ընդհանուր զինապարտության մասին օրենքի բացակայության պայմաններում լիբանանյան բանակը հիմնականում համալրվում էր կամավորներով: Քանի որ երկրի քրիստոնեական բնակչությունը սոցիալապես ավելի ապահովված էր, քան իսլամադավանը և տնտեսապես առավել հավակնոտ, բնական է, որ բանակում քրիստոնյաներն իրենց թվաքանակով զգալիորեն գիջում էին իսլամադավաններին: Այս միտումն ամեն տարի ավելի էր ընդգծվում, ինչը նաև կապված էր երկրում իսլամադավան բնակչության թվաքանակի ավելացման հետ[408]:

---

[407] Новейшая история арабских стран Азии, с. 128.

[408] السفير, «Ալ-սաֆիր», Բեյրութ, 11.07.1970:

Դեռևս 1969թ. պաղեստինյան զինված խմբավորումների հետ բախումներում բանակը ցուցաբերեց միասնականություն և համախմբվածություն, բայց այդ ժամանակ արդեն որոշակի մտավախություններ կային, որ դրանց խորացման պարագայում լիբանանյան ռազմական մեքենան հնարավոր է, որ կորցներ իր միասնականությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրի իսլամադավան բնակչության լայն շերտերը սերտորեն համագործակցում էին պաղեստինցիների հետ, ապա հազիվ թե լիբանանյան բանակն անհրաժեշտության դեպքում հետևեր հորդանանյան բանակի օրինակին և մասնակցեր լիբանանյան իշխանությունների պաղեստինյան զինված խմբավորումները երկրի տարածքից դուրս բերման գործընթացին:

Լիբանանում պաղեստինցիների կարգավիճակը տարբերվում էր Հորդանանից, որտեղ նրանց տրվել էր քաղաքացիություն: Լիբանանում պաղեստինցիները համարվում էին «ոչ քաղաքացիներ» (non nationals)[409]: Սա նպատակ ուներ մեկուսացնել պաղեստինցիներին Լիբանանի քաղաքական կյանքին մասնակցությունից և նրանց թողնել միայն փախստականի կարգավիճակում: Պաղեստինցիների մեծ մասը, հիմնականում նրանք, ովքեր ապաստան էին գտել փախստականների ճամբարներում և գտնվում էին սոցիալական շատ ծանր պայմաններում, չէին ստացել ո՛չ Լիբանանի քաղաքացիություն, ո՛չ էլ լիբանանյան անձնագիր: Որպես «ոչ քաղաքացիներ»՝ պաղեստինցիները Լիբանանում չէին կարող աշխատել պետական մարմիններում: Պաղեստինցի երեխաները չէին հաճախում Լիբանանի պետական դպրոցներ և ուսումնական հաստատություններ: Նրանք հիմնականում ուսանում էին Միացյալ ազգերի օգնության և հասարակական աշխատանքների գործակալության հսկողության տակ գտնվող դպրոցներում[410]: Իսկ այն պաղեստինցի երե-

---

[409] Լիբանանում քաղաքացիություն ստանալը բավական բարդ խնդիր էր ոչ միայն պաղեստինցիների, այլև ազգային այլ փոքրամասնությունների համար: Այդ խնդիրը մասամբ միայն հնարավոր եղավ լուծել 1989թ. Տաիֆի համաձայնագրի ստորագրմամբ:

[410] Позиция Ливана в улегулировании палестинской проблемы на современном этапе. Справка посольства СССР в Ливане, 24.03.0964, տե՛ս Ближневосточный конфликт 1957-1967гг., сс. 419-420.

խաները, որոնց ծ[illegible]ողները վճարունակ էին, հաճախում էին մասնավոր դպրոցներ: Պաղեստինցիների մեծ մասը կամ գործազուրկ էր կամ իբրև էժան աշխատուժ զբաղված էր հիմնականում շինարարական աշխատանքներում[411]:

Դեռ չէր լրացել Սուլեյման Ֆրանժիեի պաշտոնավարման երրորդ շաբաթը, երբ իրաքյան մի օդանավ պաղեստինյան զինված մարտիկներով վայրէջք կատարեց Բեյրութի միջազգային օդանավակայանում: Այդ մարտիկները ներկայացնում էին Իրաքի հովանավորյալ «Պաղեստինի ազատագրության արաբական ճակատը» (արաբերեն՝ «Ջաբհաթ ալ-թահրիր ալ-արաբիա ալ-ֆիլաստինիյա»)[412]:

Կահիրեի համաձայնագրով պաղեստինյան զինված խմբավորումներն իրավունք էին ստացել օգտագործել Լիբանանի ցամաքային ուղիները՝ Սիրիայի հետ մատակարարման գիծը պահպանելու նպատակով: Սակայն նրանք իրավունք չունեին օգտվել Լիբանանի օդանավակայանից ու օդային ուղիներից: 17 ժամ Բեյրութի օդանավակայանում մնալուց հետո Իրաքից ժամանած ինքնաթիռը՝ Լիբանանի նախագահ Սուլեյման Ֆրանժիեի հրամանով ստիպված էր վերադառնալ Բաղդադ[413]: Այս որոշումը լիբանանյան աջերը համարեցին նախագահ Ֆրանժիեի իշխանության առաջին լուրջ փորձությունը, որի հաղթահարումը հույս էր ներշնչում, որ նախագահը վճռական է տրամադրված պաղեստինյան զինվորական խմբավորումները Լիբանանի տարածքից դուրս բերելու հարցում:

Քանի դեռ պաղեստինյան ղեկավար մարմինները գտնվում էին Հորդանանում, լիբանանյան իշխանությունները դեռ հույսեր էին փայփայում, որ Լիբանանը զերծ կմնար պաղեստինյան զինվորական խմբավորումների և նրանց ղեկավար մարմինների

---

[411] Najada Newsletter, Rosemary Sayigh Palestinians in Lebanon: Waiting, vol. 35, No. 4,Summer, 1995, p. 3.

[412] B. Hamizrachi, The Emergence of the South Lebanon Security Belt: Major Haddad and the Ties with Israel, New York, 1988, p. 33.

[413] الثورة, «Ալ-սաուրա», Բաղդադ, 15.10.1970.

նստավայրը դառնալուց: Սակայն 1970թ. «սև սեպտեմբերի» իրադարձություններից հետո դեպքերը միանգամայն այլ ընթացք ստացան[414]:

Նորընտիր նախագահը կանգնած էր երկրում պաղեստինցիների ներկայության հետ կապված լուրջ խնդիրների առջև: Պաղեստինցիների աճող ազդեցությունն ու նրանց ռազմական ուժի ներկայությունն անհանգստացնում էր թե՛ լիբանանյան աջ ուժերին և թե՛ Իսրայելին: Որոշակի շփումներ էին նկատվում լիբանանյան աջերի և Իսրայելի միջև: Լիբանանի նախագահ Սուլեյման Ֆրանջիեն լուրջ հիմքեր ուներ անհանգստանալու, որ Իսրայելը կարող էր գրավել Լիբանանի հարավը՝ մինչև Լիտանի գետն ընկած տարածքը՝ ի պատասխան պաղեստինյան զինվորական խմբավորումների հարձակումների, որոնք գնալով ավելի հաճախակի էին դառնում[415]: Քրիստոնեական հրամանատարություն ունեցող լիբանանյան բանակը մի շարք փորձեր կատարեց Լիբանանում պաղեստինցիների գործողությունները սաստելու և նրանց նկատմամբ որոշակի հսկողություն հաստատելու ուղղությամբ, ինչը, սակայն, առաջացրեց լիբանանյան բանակի հիմնականում իսլամադավան միջին և կրտսեր սպայական անձնակազմի և լիբանանյան ձախ ուժերի դիմադրությունը:

1972թ. ողջ ընթացքում Իսրայելը Լիբանանի տարածքում իրականացնում էր բազմաթիվ հարձակումներ, որոնց հիմնական նպատակն էր՝ Լիբանանի բնակչությանը տրամադրել ՊԴԾ-ի դեմ և դրանով իսկ ավելի սրել ներքին ճգնաժամն ու քաղաքական անկայուն իրավիճակը:

1972թ. մայիսի 29-ին «Ֆաթհը», համագործակցելով ճապոնական «Կարմիր բրիգադ» ահաբեկչական խմբավորման հետ, ռազմական գործողություն իրականացրեց Թել-Ավիվի «Լիդդա» օդանավակայանում, որի սրահներից մեկում պայթյունի հետևանքով զոհ-

---

[414] ألمعلومات,«Ալ-մաալումաթ», Բեյրութ, 15.02.1995:

[415] Statement by Foreign Minister Abu-Hamad of Lebanon on Alleged Talks Between Lebanon and Israel, տե՛ս International Documents on Palestine, 1970, p. 998.

վեց 26 և վիրավորվեց 8 մարդ[416]: Դրանից հետո Կնեսետում իր ելույթում Իսրայելի վարչապետ Մեիրը հայտարարեց, որ Լիբանանը, որի տարածքում ապաստանել էին մեծաքանակ պաղեստինցի ահաբեկիչներ, ստիպված կլինի փոխհատուցել վերջիններիս գործողությունների համար[417]:

Իբրև պատասխան քայլ՝ Իսրայելն անմիջապես ռմբակոծեց Լիբանանի հարավում գտնվող պաղեստինյան փախստականների ճամբարները: Իսրայելի չորսօրյա անընդմեջ ռմբակոծության արդյունքում սպանվեցին 50 պաղեստինցի մարտիկներ և 100 լիբանանցի խաղաղ բնակիչներ[418]:

1972թ. սկսած Իսրայելը վարում էր «չհայտարարված պատերազմ» Լիբանանի հարավային շրջանների դեմ: Իսրայելը նպատակադրվել էր՝ հենվելով լիբանանյան քրիստոնյաների վրա, Լիբանանից դուրս բերել պաղեստինցիներին և ոչնչացնել ՊԱԿ-ն ու նրա ղեկավարությանը, ինչը ձեռնտու էր նաև լիբանանյան աջերին: Իսրայելի օժանդակությամբ և աջակցությամբ կազմավորվեց «Լիբանանի հարավի ազատագրման բանակը», որի կորիզը կազմում էին կազմալուծվող լիբանանյան բանակի քրիստոնյա զինվորները, որոնք Իսրայելի դրդմամբ հարավում պատերազմում էին պաղեստինյան զինված միավորումների դեմ[419]:

1972թ. սեպտեմբերին կրկին հրթիռային ռմբակոծման ենթարկվեցին Լիբանանում գտնվող պաղեստինյան փախստականների ճամբարները, իսրայելյան 15.000-ոց բանակը ներխուժեց Հարավային Լիբանան: Գրավելով մի քանի ոչ մեծ բնակավայրեր, մոտ 20 գյուղեր՝ իսրայելյան զորքերը մեկուկես օրվա ընթացքում բռնություններ և կամայականություններ էին իրականացնում Լիբանանի հարավում: Իսրայելյան բանակի գլխավոր սպայակույտի պետ Դավիթ Էլիազարը հայտարարեց. «Այս գործողությունների նպատակն էր ստիպել Լիբանանին հարվածել և ոչնչացնել Լիբանանի հարա-

---

[416] "Daily Star", Beirut, 03.06.1972.
[417] Israeli's Prim Minister Meir's Speech 3 June 1972, տե՛ս State of Israel, Ministry of Foreign Affairs, Jerusalem, p. 25.
[418] "Daily Star", Beirut, 30.05.1972.
[419] Ближний Восток и Международное право, с. 83.

վում գտնվող պաղեստինյան ռազմական ճամբարները»: Այս հայտարարությանը հաջորդեց նաև Իսրայելի արտաքին գործերի նախարար Էբանի հայտարարությունը, որում ասվում էր. «Մենք պահանջում ենք, որ Լիբանանը հետևի Հուսեյն թագավորի օրինակին»[420]:

Իսրայելի՝ Լիբանանի հարավ ներխուժումից հետո ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քվեարկության դրեց մի բանաձև, որը դատապարտում էր իսրայելյան վերոնշյալ ներխուժումն ու օդային պարբերական հարձակումները Լիբանանի տարածքում, սակայն ԱՄՆ-ի ներկայացուցիչն օգտագործեց վետոյի իր իրավունքը և այդ բանաձևն այդպես էլ չընդունվեց[421]:

1972թ. նոյեմբերին Բեյրութում լիբանանյան ձախերը գումարեցին Համաարաբական ժողովրդական համաժողով, որում որոշում ընդունվեց կազմավորել Պաղեստինյան հեղափոխության աջակցության արաբական ճակատ: Համաժողովն ընտրեց Գլխավոր խորհուրդ, որի կազմում էին 14 արաբական պետությունների ներկայացուցիչներ: Այս ճակատի գլխավոր քարտուղար ընտրվեց Քամալ Ջունբլաթը[422]:

1972թ. ողջ ընթացքում Լիբանանում տեղի էին ունենում ուսանողական ցույցեր և դասադուլներ: Ձախ ուժերը պայքարներ էին կազմակերպում Բեյրութի Ամերիկյան համալսարանի տարածքում, որը նրանք ընկալում էին իբրև օտարամոլության, մասնավորապես ամերիկամոլության խորհրդանիշ: 1967թ. արաբ-իսրայելյան պատերազմի երրորդ տարելիցի նախօրեին պայթյուն տեղի ունեցավ նաև Բեյրութի Ամերիկյան համալսարանի ռեկտորի տան բակում[423]:

Ներքին այս հակասությունները զուգորդվում էին արտաքին հարձակումներով և սադրանքներով: Մասնավորապես 1972թ. սեպտեմբերին, երբ Մյունխենի օլիմպիական խաղերի ժամանակ պա-

---

[420] А. Агарышев, Ближный Восток: Терроризм и его покровители, М., 1986, с. 6.
[421] "Daily Star", Beirut, 28.09.1972.
[422] Новейшая история арабских стран Азии, с. 128.
[423] H.Barakat, Lebanon in Strife: Student Preludes to the Civil War, New York, 1977, p. 11.

ղեստինյան «Սև սեպտեմբեր» ահաբեկչական խմբավորումը իրականացրեց իսրայելցի հինը մարզիկների և նրանց մարզչի սպանությունը, երկու օր անընդմեջ իսրայելյան օդային ուժերը Միջերկրական ծովի ողջ երկայնքով ռմբակոծում էին Լիբանանի տարածքը՝ պատճառելով մեծ մարդկային կորուստներ և ավերածություններ: Շուրջ 400 մարդ սպանվեց[424]:

Մի շարք պայթյուններ տեղի ունեցան Բեյրութի Համրա փողոցում, որտեղ գտնվում էին «Ֆաթհի» մի քանի ղեկավարների բնակարաններ: Փողոցային բախումներ էին տեղի ունենում «Քաթաիբ» կուսակցության միլիսների և պաղեստինյան զինված խմբավորումների միջև: Ստեղծված իրավիճակում, երբ Իսրայելը սպառնում էր կրկին օդային հարձակման ենթարկել Բեյրութի միջազգային օդանավակայանը, Լիբանանի ազգային փոխադրող՝ «Մերձավոր-արևելյան ավիաուղիներն» իրենց պատկանող օդանավերը փոխադրեցին Կիպրոս[425]:

1973թ. ապրիլի 10-ին իսրայելյան հատուկ ծառայությունները Բեյրութում իրականացրեցին մի շարք ահաբեկչական գործողություններ: Այդ թվում Բեյրութի Վերդեն փողոցում կազմակերպվեցին ՊԴԾ-ի ականավոր գործիչներ Մուհամմադ Նաջարի, Ջամալ Նասերի և Ադվանի սպանությունները[426]:

«Ազգային ճակատում» համախմբված ձախ ուժերի և ՊԴԾ-ի միջև հաստատված համագործակցությունը գնալով ավելի էր ամրապնդվում: Վերոնշյալ ուժերի դեմ պայքարն իր հերթին համախմբում էր լիբանանյան աջերին՝ հիմնականում «Քաթաիբ» և «Ազգային լիբերալ» կուսակցություններին, որոնք փորձում էին պաղեստինցիների և լիբանանյան ձախ ուժերի դեմ պայքարի մեջ ներքաշել նաև լիբանանյան բանակին:

1973թ. մայիսին ձախողվեց լիբանանյան աջ ուժերի և բանակային որոշ ստորաբաժանումների ՊԴԾ-ը Լիբանանի տարածքից

---

[424] S. Mackey, Lebanon: Death of a Nation, New York, 1991, p. 150.
[425] B. Hamizrachi, The Emergence of the South Lebanon Security Belt, p. 36.
[426] Լ. Հարությունյան, Սիրիայի և Իսրայելի գործոնը լիբանանյան ճգնաժամում (1970-1990), Արևելք, Երևան, 2001, էջ 78, М. Хазанов, ООН и Ближневосточный кризис, М., 1983, с. 116.

զինված բախումների ճանապարհով դուրս բերելու ևս մեկ փորձ: Այս բախումները հնարավոր եղավ դադարեցնել միայն 1973թ. մայիսի 18-ին, երբ նախագահ Սուլեյման Ֆրանջիեի ուղղակի միջամտությամբ կնքվեց հաշտության հերթական համաձայնագիրը՝ լիբանանյան իշխանությունների և ՊԴԾ-ի միջև[427]: Այս համաձայնագրի ստորագրմանը զուգահեռ որոշում ընդունվեց նաև ձևավորել Միացյալ բարձրագույն հանձնաժողով, որը կազմված էր լինելու լիբանանյան բանակի ներկայացուցիչներից և ՊԴԾ-ն հրամատարության անդամներից: Այս հանձնաժողովի ստեղծման նպատակն էր հարթել լիբանանյան իշխանությունների և պաղեստինյան զինվորական խմբավորումների միջև առկա խնդիրները[428]: Սակայն, ինչպես Կահիրեի համաձայնագիրը, այնպես էլ այս հանձնաժողովի կազմավորումը որևէ կերպ չնպաստեցին երկրում խաղաղության վերջնական հաստատմանը:

ՊԴԾ-ի հանդեպ լիբանանյան իշխանությունների վարած քաղաքականության պատասխանը՝ Սիրիան 1973թ. մայիսի 4-ին կրկին փակեց Լիբանանի հետ իր սահմանը, ինչի արդյունքում Լիբանանը կրեց մի քանի հարյուր մլն լիբ. լիրայի հասնող նյութական կորուստներ[429]: Ստեղծված իրավիճակում լիբանանյան աջերը ստիպված եղան նորից նահանջել, ինչի ուղղակի հետևանքը եղավ լիբանանյան կառավարության հերթական հրաժարականը:

Մինչ այդ՝ 1973թ. մարտին, արդեն սրվել էին վարչապետ Սաիբ Սալամի և նախագահ Սուլեյման Ֆրանջիեի միջև հարաբերությունները: Սա կապված էր իսրայելյան պարբերական հարձակումների, պաղեստինցիների և լիբանանյան բանակի միջև դեռևս շարունակվող բախումների և երկրում օրեցօր աճող սոցիալական և տնտեսական դժգոհությունների հետ: Լիբանանում քաղաքական ճգնաժամը հասնում էր իր գագաթնակետին:

Նման պայմաններում Սաիբ Սալամը 1973թ. ապրիլի 13-ին հրաժարական տվեց: Իբրև պատրվակ նախագահը հմտորեն օգ-

---

[427] TACC, 18.05.1973; "L'Afrique et l'Asie", 25.06.1973.
[428] Նույն տեղում:
[429] TACC, 18.05.1973.

տագործվեց վարչապետի մարտին Ալժիր կատարած իր պաշտոնական այցելության ընթացքում արած այն հայտարարությունը, որում մասնավորապես ասվում էր. «Լիբանանում գործադիր իշխանության իրական ղեկավարը վարչապետն է, իսկ նախագահը հանրապետության պաշտոնական ղեկավարն է, որն օժտված է նույնքան իշխանությամբ, որքան Անգլիայի թագուհին»[430]:

Սաիբ Սալամի հրաժարականից մեկ շաբաթ անց Սուլեյման Ֆրանժիեն նոր վարչապետ նշանակեց Ամին Ալ-Հաֆեզին, որը Ռաշիդ Քարամեի մտերիմ ընկերն էր: Ալ-Հաֆեզի հիմնական խաղաթուղթն այն էր, որ նա բավական լավ հարաբերություններ ուներ ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթի հետ և հույսեր կային, որ այդպես հնարավոր կլիներ վերջ դնել պաղեստինցիների և լիբանանյան աջերի միջև գոյություն ունեցող լարվածությանը[431]:

Ամին Ալ-Հաֆեզի նշանակումը վարչապետի պաշտոնում դժգոհություն առաջացրեց սուննի ազդեցիկ ղեկավարների շրջանում: Նոր վարչապետը քաղաքական տեսանկյունից չուներ ազդեցիկ լծակներ որպեսզի կարողանար ազդել Լիբանանում տեղի ունեցող զարգացումների վրա: Բացի այդ սուննի ղեկավարները գտնում էին, որ Ալ-Հաֆեզի նշանակմամբ՝ Սուլեյման Ֆրանժիեն նպատակ ուներ թուլացնել լիբանանյան սուննի վարչապետների ինստիտուտը և երկրի ողջ ղեկավարությունը կենտրոնացնել իր ձեռքում, ինչը նշանակում էր երկրի կառավարման գործում սուննի համայնքի, հետևաբար նաև բոլոր իսլամադավան համայնքների դիրքերի թուլացում: Ռաշիդ Քարամեն, որ սկզբնական շրջանում աջակցում էր Ալ-Հաֆեզին, հետագա զարգացումների արդյունքում, երբ վարչապետն իրոք որևէ կերպ չկարողացավ կանխել 1973թ. մայիսին Լիբանանում աննդհատ շարունակվող բախումները, նույնպես միացավ սուննի համայնքի այն ղեկավարներին, որոնք հենց սկզբից դեմ էին Ալ-Հաֆեզի վարչապետի պաշտոնում նշանակմանը և պահանջում էին վերջինիս անհապաղ հրաժարականը:

Այս ճնշումների հետևանքով Ալ-Հաֆեզը, հասկանալով ստեղծված իրավիճակի բարդությունը, հունիսին հրաժարական տվեց:

---

[430] K. Salibi, նշվ.աշխ., էջ 66:
[431] H. Cobban, The Making of Modern Lebanon, London, 1985, p. 112.

Սուլեյման Ֆրանջիեն, չցանկանալով երկրի վարչապետի պաշտոնում տեսնել ամուր դիրքեր ունեցող և լիբանանյան իսլամադավան բնակչության շրջանում մեծ հեղինակություն վայելող սուննի ղեկավարի, հրաժարվեց վարչապետի պաշտոնում նշանակել Ռաշիդ Քարամեին կամ Սաիբ Սալամին: Նախագահը նախընտրեց այդ պաշտոնում այս անգամ տեսնել մեկ այլ սուննի ղեկավարի՝ Թաքի Ալ-Դին Ալ-Սոլհին[432]:

1973թ. հուլիսի 4-ին Թաքի Ալ-Դին Ալ-Սոլհը ձևավորեց նոր կառավարություն, որի կազմում տեղ գտան 24 նախարարներ: Վերջիններս ներկայացնում էին խորհրդարանում տեղ գտած գրեթե բոլոր խմբակցություններն ու դաշինքները: Նոր կառավարության կազմում ներգրավվեց շիա համայնքը ներկայացնող Ալի Ալ-Խալիլը, որին հանձնարարվեց ուսումնասիրել երկրի վարչական մարմիններում տիրող իրավիճակը և մշակել վարչական բարեփոխումների ծրագիր ու գտնել այն իրագործելու հնարավոր ուղիները: Ալ-Խալիլը ներկայացնում էր լիբանանյան ձախ ուժերը: Այդ պաշտոնում նրա նշանակումը և այն հանձնարարությունը, որ տրվել էր նրան, որոշ հույսեր էր ներշնչում, որ երկրի նախագահը լուրջ մտադրություններ ուներ երկրում բարեփոխումների իրականացման գործում: Սակայն նոր կառավարության կազմում զգալի էր նաև այն նախարարների թիվը, որոնք ներկայացնում էին լիբանանյան աջ շրջանակները: Դրանք ավանդական կլանային, առևտրաֆինանսական շրջանակների այն ներկայացուցիչներն էին, ովքեր շահագրգռված չէին Լիբանանում որևէ բարեփոխման իրականացմամբ: Նոր կառավարության կազմում նախարարական աթոռ ստացավ նաև նախագահի որդին՝ Թոնի Ֆրանջիեն, որը ինչպես և հաջորդ երեք կառավարությունների կազմում զբաղեցրեց հաղորդակցության և կապի նախարարի պաշտոնը[433]:

Թաքի Ալ-Դին Ալ-Սոլհը, խորհրդարանում ներկայացնելով իր կառավարության ծրագիրը, նշեց, որ այս կառավարության հիմնա-

---

[432] W. Goria, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, London, Ithaca Press, 1985, p. 158.
[433] Նույն տեղում, էջ 159:

կան նպատակն էր «մաքրել» լիբանանյան քաղաքական մթնոլորտը, հարթել ներքին հակասությունները, որ գոյություն ունեին լիբանանյան աջ ուժերի և ձախերի միջև, բարելավել հարաբերությունները պաղեստինյան զինվորական խմբավորումների, նրանց ղեկավարների և Սիրիայի հետ:

3. Լիբանանը 1975թ. սկսված քաղաքացիական պատերազմի նախօրեին (1973-1975թթ.)

1970-ականների սկզբին Լիբանանում, փաստորեն, իր արտացոլումն էր գտնում մերձավորարևելյան հակամարտության ցանկացած ելևէջ՝ զուգորդվելով ներլիբանանյան զարգացումներով՝ բախումներից մինչև ներքաղաքական ճգնաժամեր և կառավարությունների փոփոխություններ: Անկայուն իրավիճակը երկրում գնալով խորանում էր:

Ակնհայտ է, որ 1973-1975թթ. Լիբանանում ներքաղաքական իրավիճակի սրումն անմիջականորեն կապված էր նաև մերձավորարևելյան հակամարտության խորացման հետ: 1973թ. հոկտեմբերին սկսվեց արաբ-իսրայելյան չորրորդ պատերազմը: Լիբանանն, ինչպես և նախորդ պատերազմներում, կրկին ուղղակի մասնակցություն չունեցավ ռազմական գործողություններին: Սակայն այն նոր իրավիճակը, որ ստեղծվեց Մերձավոր Արևելքում այդ պատերազմից հետո, լուրջ հետևանքներ ունեցավ Լիբանանի համար[434]: Եգիպտոսի նախագահ Սադաթը վերանայեց Կահիրեի քաղաքականությունը՝ շեշտը դնելով ԱՄՆ-ի միջնորդությամբ Իսրայելի հետ

---

[434] J. Chagnollaud, Israël et les Territoires Occupés: La Confrontation Silencieuse, Paris, 1985, pp. 27-28.

անջատ համաձայնագրի ստորագրման վրա: Այդ քաղաքականությանը դեմ էին Սիրիան և ՊԱԿ-ը[435]:

ԱՄՆ-ը լրջորեն անհանգստանում էր, որ համապարփակ կարգավորումը, որի կողմ էր նաև Նասերը, կարող էր վնասել Իսրայելին:

1971թ. դեկտեմբերին Իսրայելի վարչապետ Մեիրի հետ Վաշինգտոնում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ համապարփակ կարգավորման ուղիների փնտրումը կդադարեցվի և փորձ կարվի հասնել եգիպտաիսրայելյան անջատ հաշտության կնքմանը[436]:

Մինչ լիբանանյան իշխանությունները և մասնավորապես մարոնիական վերնախավը որոշակի հետաքրքրություն էին դրսևորում ԱՄՆ-ի առաջարկած մերձավորարևելյան հակամարտության կարգավորման մասնակի և փուլային տարբերակի հանդեպ, լիբանանյան ձախ ուժերը, որոնք պաղեստինցիների հետ հանդես էին գալիս միևնույն ճակատում, կտրականապես մերժում էին մերձավորարևելյան հակամարտության կարգավորման ամերիկյան այս տարբերակը՝ այն համարելով զիջողական պաղեստինցիների հասցեին:

1973թ. աշնանը Թաքի Ալ-Դինի Ալ-Սոլհի կառավարությունը բախվեց լիբանանյան հասարակության մեջ մի նոր տարակարծության հետ, որը պայմանավորված էր մերձավորարևելյան հակամարտության կարգավորման ամերիկյան տարբերակով:

1973թ. հոկտեմբերի 18-ին, երբ իսրայելյան օդային ուժերը հերթական անգամ ռմբակոծեցին լիբանանյան ծովափը, վնասվեց ծովափով անցնող հաղորդակցական մալուխը, որն ապահովում էր Լիբանանի հաղորդակցական կապը Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ: Հենց բանանի հաղորդակցական կապը Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ: Հենց նույն օրը հինգ զինված անձինք, որոնք ներկայացնում էին Լիբանանի կոմունիստական գործունեության կազմակերպությունը, իրանանի կոմունիստական գործունեության կազմակերպությունը, իրացին զինված հարձակում Լիբանանում Ամերիկյան բանկի

---

[435] Մանրամասն տե՛ս M.Kalb, B. Kalb, Kissinger, Boston-Toronto, 1974, p. 461; И. Звягельская, Роль военной верхушки в формировании государственной политики Израиля, М., 1982, с. 85; Journal of Palestine Studies, Vol. III, No. 2, 1974, p. 37.

[436] H. Kissinger, White House Years, Boston-Toronto, 1979, p. 1289.

վրա և պահանջեցին 10 մլն դոլար՝ «արաբների մղած սրբազան պատերազմի» համար: Միայն Լիբանանի անվտանգության ուժերի ձեռնարկած կտրուկ քայլերի արդյունքում Ամերիկյան բանկի վրա հարձակումը կասեցվեց. հինգ գրոհայիններից երկուսը սպանվեցին[437]:

1973թ. դեկտեմբերին՝ ԱՄՆ-ի պետքարտուղար Հ. Քիսինջերի Մերձավոր Արևելք կատարած առաջին այցելությունից հետո, Բեյրութում ուսանողական բողոքի մեծ ալիք բարձրացավ, որը կապված էր արաբ-իսրայելյան հակամարտության խաղաղ կարգավորման ԱՄՆ-ի առաջարկած տարբերակի հետ: Ուսանողական բողոքի այդ ալիքը կազմակերպել էր «Մերժման ճակատը» (արաբերեն՝ «Ջաբհաթ ալ-ռաֆդ»), որի մեջ մտնում էին «Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատը»՝ իր գլխավոր հրամանատարությամբ, «Պաղեստինի ազատագրության արաբական ճակատը» և մի շարք այլ պաղեստինյան կազմակերպություններ, որոնք կտրականապես մերժում էին ամերիկյան մասնակի կարգավորման տարբերակը[438]:

1974թ. փետրվարին Լիբանանում միաժամանակ ցույցեր տեղի ունեցան Բեյրութում, Սիդոնում և Տիրում: Ուսանողական դժգոհությունները այս անգամ կապված էին Հ. Քիսինջերի Մերձավոր Արևելք երկրորդ այցելության հետ[439]:

Լիբանանյան հասարակության տարակարծությունն արաբ-իսրայելյան հակամարտության կարգավորման ամերիկյան տարբերակի նկատմամբ երկրում ավելի սրեցին լիբանանյան ձախ ուժերի և աջերի միջև առկա հակասությունները:

1973թ. հոկտեմբերի արաբ-իսրայելյան չորրորդ պատերազմի ավարտից հետո շատ արաբական երկրներ հետաքրքրություն ցուցաբերեցին 1973թ. հոկտեմբերի 22-ի ՄԱԿ-ի ԱԽ 338-րդ բանաձևի նկատմամբ, որը նախատեսում էր. 1. կրակի անհապաղ դադարեցում. 2. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի

---

[437] K. S. Salibi, նշխ.աշխ., էջ 73:

[438] Նույն տեղում:

[439] محمد العزب موس، مزكرات كيسنجر. كيسنجر الحرب، دار المشرق العربي، ١٩٨٣، ص ١٢.

1967թ. 242-րդ բանաձևի անհապաղ իրականացում. 3. բանակցությունների սկսում շահագրգիռ կողմերի միջև[440]: Պաղեստինյան կազմակերպություններն անմիջապես շտապեցին քննադատել վերոնշյալ բանաձևը և այն որակեցին իբրև «զիջողական»:

1974թ. ողջ ընթացքում Իսրայելը համառությամբ փորձում էր զինված հակամարտություն հրահրել լիբանանյան բնակչության և պաղեստինցիների միջև, ինչն այդպես էլ հաջողություն չունեցավ: 1974թ. մայիսի 16-ին իսրայելյան օդային ուժերը ռմբակածեցին Բեյրութի արվարձաններն ու իրականացրեցին հարձակում Լիբանանի հարավային բնակավայրերի վրա: Պարբերական բնույթ էին նաև օդային հարձակումները Բեյրութի միջազգային օդանավակրում նաև օդային հարձակումները Բեյրութի միջազգային օդանավակայանի վրա: Ռմբակոծությունների հետևանքով դատարկվել էին պաղեստինյան փախստականների Այն ալ-Հիլուե, Ռաշիդիյա և Նաբաթիա ճամբարները[441]:

Միայն 1974թ. հուլիսին և օգոստոսին իսրայելյան զինված ուժերը հարյուր անգամ ռմբակոծեցին Լիբանանի տարածքը՝ պատճառելով մարդկային զգալի կորուստներ և ավերածություններ:

1973թ. հոկտեմբերի արաբ-իսրայելյան պատերազմից հետո լիբանանյան ճախ ուժերի և պաղեստինցիների միջև համագործակցություն ավելի ամրապնդվեց: Պաղեստինցիներն արդեն կազմում էին Լիբանանի բնակչության մոտ 15%-ը և լրջորեն ազդում էին երկրի ներքաղաքական կյանքի վրա: Պաղեստինցիներին գրեթե անհնար էր տարանջատել Լիբանանի ներքաղաքական զարգացումներից:

Լիբանանյան ճախ ուժերը զգալի աջակցություն էին ստանում նաև լիբանանյան այնպիսի ազդեցիկ սունկի ղեկավարներից, ինչպիսիք էին Սաիբ Սալամը և Ռաշիդ Քարամեն, որոնք մոռացության մատնելով իրենց նախկին հակասությունները ու մրցակցությունը, համագործակցում էին միմյանց հետ: Սաիբ Սալամի և Լիբանանի

---

[440] Մանրամասն տե՛ս United Nations Resolutions on Palestine and the Arab-Israeli Conflict, Washington, 1975, p. 151, UN Resolutions, Historical Documents. http://www. ariga.com/.

[441] "L'Humanité", 20.05.1974.

մուֆթի Հասան Խալիդի գլխավորությամբ ձևավորվեց մի նոր սունիական ճակատ, որը սերտ համագործակցության մեջ էր «Ազգային ճակատի» հետ և քաղաքական ասպարեզում պահանջում էր լիբանանյան իսլամադավանների առավել ակտիվ մասնակցություն երկրի կառավարման գործում[442]:

«Ազգային ճակատին» մեծապես աջակցում էր նաև իմամ Մուսա Ալ-Սադրը: 1974թ. մարտի 17-ին իմամ Մուսա Ալ-Սադրը Բաալբեքում կազմակերպեց ցույց, որին իրենց մասնակցությունը բերեցին մոտ 75.000 շիաներ: Այստեղ Ալ-Սադրը կոչ արեց բոլոր շիաներին համախմբվել և անհրաժեշտության դեպքում նույնիսկ զինված պայքար մղել շիաների իրավունքների և նրանց սոցիալական պայմանների բարելավման համար: Իմամ Ալ-Սադրը հայտարարեց, որ մտադրություն ուներ ռազմական ճամբարներ հիմնել Բաալբեքի շրջանում և Բեքաայի հովտում, որտեղ շիաները պետք է անցնեին զինվորական պատրաստություն: Իր ելույթում շիաների առաջնորդը նշեց. «Լիբանանի հարավում բնակվող շիաները պետք է համախմբվեն և պաշտպանեն իրենց գյուղերն ու տներն իսրայելյան պարբերական հարձակումներից: Եթե լիբանանյան իշխանություններն անկարող են պաշտպանել Հարավային Լիբանանն ու նրա բնակչությանը, ապա այդ գործը կստանձնեն շիաները»[443]: Այս նպատակով Բեյրութում և Տիրում Ալ-Սադրի օժանդակությամբ կազմավորվեցին շիական զինված ջոկատներ, որոնք պետք է մասնակցեին Հարավային Լիբանանի պաշտպանությանը: Իմամ Ալ-Սադրը երդվեց նաև պայքարել Լիբանանում սոցիալական անհավասարության դեմ և աջակցել լիբանանյան իսլամադավանների իրավունքների պաշտպանությանը: Նա կոչ արեց իր համախոհներին բոլոր միջոցներով պայքարել և նպաստել երկրում տիրող կաշառակերության, կոռուպցիայի և մենաշնորհների վերացմանը: Ալ-Սադրը լիբանանյան իշխանություններին մեղադրում էր երկրում տիրող ճգնաժամային իրավիճակի հանդեպ անտարբերություն դրսևորելու մեջ:

---

[442] K. Salibi, նշվ.աշխ., էջ 77:

[443] The Text of Imam Musa al-Sadr's Speech տե՛ս A. Norton, Amal and the Shi'a. Struggle for the Soul of Lebanon, USA, 1987, pp. 46-47.

Ստեղծված իրավիճակում շիական բնակավայրերի պաշտպանությունը կազմակերպելու գործում Մուսա Ալ-Սադրին իրենց աջակցությունը հայտնեցին Իսրայելի հարձակումներին դիմակայող լիբանանյան ձախ ուժերն ու պաղեստինյան զինված խմբավորումները: Սա արդեն նշանակում էր համագործակցության հաստատում լիբանանյան ձախերի, պաղեստինցիների և շիաների միջև:

1974թ. հուլիսին Բեյրութի արվարձաններից մեկում բախումներ տեղի ունեցան «Քաթաիբ» կուսակցության զինված ջոկատների և պաղեստինյան զինվորական խմբավորումների միջև: Դրանք գրանցվեցին Բեյրութի քրիստոնեական Ալ-դիքուանա արվարձանը և պաղեստինյան փախստականների Թել-Զաաթար ճամբարը կա- պող ճանապարհի վրա: Այս բախումները տևեցին երկու օր (հուլիսի 29-30-ը) և ավարտվեցին համաձայնագրի ստորագրմամբ, որի համաձայն՝ «Քաթաիբ» կուսակցության զինված ջոկատները, պաղեստինյան զինված խմբավորումներն ու լիբանանյան բանակի անվտանգության ուժերը միասնաբար պետք է կարգավորեին և տնօրինեին Ալ-դիքուանա արվարձանի և Թել-Զաաթար ճամբարի միջև ընկած տարածքը:[444]

Այս համաձայնագրի ստորագրումից մոտ մեկ ամիս անց՝ օգոստոսի 21-ին, Սիդոնի մոտ գտնվող անցագրային կետում պաղեստինյան զինված մարտիկների և լիբանանյան ոստիկանության միջև բախումներ տեղի ունեցան, որին հետևեցին պաղեստինցիների պատասխան գործողությունները: Սիդոնում պաղեստինցիները կազմակերպեցին մի շարք պայթյուններ և փակվեցին քաղաքի գլխավոր փողոցները: Այս դեպքերից հետո Լիբանանի նախագահ Սուլեյման Ֆրանժիեն անձամբ հանդիպեց Յասիր Արաֆաթին և պայմանավորվածություն ձեռք բերվեց Լիբանանում կարգ ու կանոնը վերահաստատելու մասին: Յասիր Արաֆաթը խոստացավ, որ պաղեստինյան զինված մարտիկներն այսուհետև զերծ կմնան զենքի օգտագործումից, իսկ լիբանանյան կառավարությունն իր հերթին խոստացավ, որ երկրի անվտանգության ուժերը զենք չեն կիրառի

---

[444] محسن ابرهيم، الحرب و تبرية الحركة الوطنية اللبنانية، بيروت ١٩٨٣، ص ٢٥.

քաղաքացիական հագուստ կրող պաղեստինցիների նկատմամբ[445]: Այս հերթական համաձայնությունից հետո Լիբանանում ժամանակավորապես դադարեցին ինչպես «Քաթաիբի» մարտիկների և պաղեստինյան զինված խմբավորումների, այնպես էլ երկրի անվտանգության ուժերի և պաղեստինցիների միջև բախումները: Սեպտեմբերի 22-ին, սակայն, զինված բախումներ տեղի ունեցան Թարշիշ գյուղում՝ Քամալ Ջումբլաթի զինված խմբավորման և «Քաթաիբ» կուսակցության ջոկատների միջև: Վերջիններս նշում էին կուսակցության նոր գրասենյակի բացումը: Այս բախումների հետևանքով սպանվեց երեք և վիրավորվեց երկու մարդ[446]:

Թարշիշում տեղի ունեցած դեպքերից մեկ շաբաթ անց Լիբանանում կայացավ «Քաթաիբ» կուսակցության ամենամյա համագումարը, որտեղ կուսակցությունը հայտարարեց, որ համակարծիք էր պաղեստինյան հարցի նկատմամբ համաարաբական քաղաքականության հետ[447]: «Քաթաիբի» այս համագումարից հետո կուսակցության ղեկավար Պիեր Ժմայելը, կուսակցության քաղաքական բյուրոյի ղեկավար անդամների հետ խորհրդակցելուց հետո, մի քանի պաշտոնական այցեր կատարեց Եգիպտոս, Սիրիա, Հորդանան և Սաուդյան Արաբիա: Այս այցելությունների գլխավոր նպատակն էր այդ երկրների ղեկավար շրջանակների հետ խորհրդակցություններ անցկացնել արաբ-իսրայելյան հակամարտության կարգավորման ամերիկյան տարբերակի վերաբերյալ: Այս չորս պետություններից Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան և Հորդանանը որոշակի շահագրգռվածություն էին ցուցաբերում ԱՄՆ-ի առաջարկած մասնակի կարգավորման այդ տարբերակի նկատմամբ: Ինչ վերաբերում էր Սիրիային, ապա վերջինս վերապահումով էր մոտենում ամերիկյան տարբերակին:

---

[445] Նույն տեղում, էջ 29:

[446] النهار, «Ալ-նահար», Բեյրութ, 24.09.1974:

[447] «Քաթաիբ» կուսակցության 1974թ. սեպտեմբերի համագումարի պաշտոնական հայտարարության տեքստը տե՛ս
كريم بقرادوني، السلام المفقود ١٩٧٦-١٩٧٢، بيروت، ١٩٨٤، ص ٧٥.

Լիբանանյան աջերը, հասկանալով 1973թ. արաբ-իսրայելյան պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված նոր իրավիճակը և պաղեստինյան գործոնի դերի մեծացումը, փորձում էին ցույց տալ, որ Լիբանանն արաբական աշխարհի և համաարաբական քաղաքականության բաղկացուցիչ մասն էր, իսկ լիբանանյան իշխանություններին և մասնավորապես լիբանանյան աջերին չպետք է մեղադրել բացառապես արևմտամետ կողմնորոշման և Իսրայելի հետ համագործակցության եզրեր փնտրելու մեջ:

Սիրիայի վերաբերմունքը մերձավորարևելյան հակամարտության կարգավորման ամերիկյան տարբերակի նկատմամբ նույնպես կան էր ՊԱԿ-ի ղեկավարության դիրքորոշման հետ, որը պնդում էր, որ մերձավորարևելյան հակամարտության որևէ կարգավորում ընդունելի չէր եթե այն հաշվի չէր առնում Պաղեստինի արաբ ժողովրդի ազգային շահերն ու արդարացի իրավունքները[448]: «Քաղաքական ճակատ» կուսակցության ղեկավարները, Սիրիայի և ՊԱԿ-ի հետ համակարծիք լինելով, հայտարարում էին, որ կարգավորման ցանկացած տարբերակ պետք է ամբողջությամբ հաշվի առներ Պաղեստինցած տարբերակ պետք է ամբողջությամբ հաշվի առներ Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքներն ու ձգտումները: Լիբանանյան աջերը գտնում էին, որ Պաղեստինի արաբական պետության ճանաչված սահմաններով գոյությունն անհրաժեշտ պայման էր Լիբանանում քաղաքական կայունության վերահաստատման համար:

Մերձավորարևելյան հակամարտության մեջ պաղեստինյան գործոնի գնալով ավելի կարևորվող դերի պայմաններում լիբանանյան աջերը փորձեր էին անում կարգավորել իրենց հարաբերությունները ՊԱԿ-ի ղեկավարության հետ և այդ ճանապարհով հարթել Լիբանանում ստեղծված ճգնաժամային իրավիճակը:

1974թ. սեպտեմբերին Պիեր Ժմայելը մի քանի անգամ հանդիպեց ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթի և «Ֆաթհի» որոշ ղեկավարների հետ և բազմիցս նշեց, որ լիբանանցիները, ընդհանրապես, և «Քաթաիբ» կուսակցությունը, մասնավորապես, կաատարեն պաղես-

---

[448] النهار, «Ալ-նահար», Բեյրութ, 05.10.1974:

տինցիների օրինական գործողությունները, եթե դրանք չվտանգեն արաբական որևէ պետության անվտանգությունը[449]:

1974թ. հոկտեմբերին Ռաբատում՝ արաբական պետությունների գագաթաժողովում, ՊԱԿ-ն արաբական երկրների կողմից ճանաչվեց իբրև Պաղեստինի արաբ ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ[450]: Որոշում ընդունվեց, որ Իսրայելի հետ որևէ բանակցություն կամ կարգավորման որևէ տարբերակ չէր կարող քննարկվել առանց ՊԱԿ-ի ուղղակի մասնակցության: 1974թ. հոկտեմբերից հետո ՊԴԾ-ի և լիբանանյան կառավարության միջև հարաբերություններում սկսեցին որոշ դրական տեղաշարժեր նկատվել:

1974թ. հոկտեմբերին Ռաբատում՝ տեղի ունեցած արաբական պետությունների գագաթաժողովից հետո, որտեղ նախագահում էր Լիբանանի նախագահ Սուլեյման Ֆրանիժեն, նոյեմբերին 14-ի՝ Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում պաղեստինյան հարցի քննարկման ընթացքում, համաարաբական դիրքորոշումն արաբական պետությունների անունից ներկայացրեց Լիբանանի նախագահը: Լիբանանը պաշտոնապես միջազգային հանրության առջև պարտավորվեց աջակցել Պաղեստինի արաբ ժողովրդին՝ իր օրինական իրավունքների վերականգնման համար մղվող արդարացի պայքարում: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան նույնպես ՊԱԿ-ը ճանաչեց իբրև Պաղեստինի արաբ ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ: 1974թ. սկսած ՊԱԿ-ը ՄԱԿ-ում ունի դիտորդի կարգավիճակ[451]:

ՊԱԿ-ի միջազգային հեղինակության բարձրացման և արաբական պետությունների կողմից նրան ցույց տրվող աջակցության և օժանդակության ավելացման պայմաններում Իսրայելի Լիբանանի հասցեին հնչեցրած սպառնալիքներն էլ ավելի ուժեղացան: Իսրայելը խստիվ պահանջում էր ՊԴԾ-ի դուրս բերում Լիբանանի տարածքից:

---

[449] الاحرار, «Ալ-ահրար», Բեյրութ, 25.10.1974:

[450] В. Киселев, Палестинская проблема в межарабских отношениях: региональный аспект, с. 125.

[451] Там же, с. 125.

1974թ. նոյեմբերին ՊԱԿ-ը՝ լիբանանյան կառավարության և մի քանի արաբական պետությունների ճնշմամբ, խոստացավ սառեցնել իր ռազմական գործողությունները Լիբանանի հարավում: Սակայն հակառակ այդ խոստմանը պաղեստինյան զինված մարտիկները շարունակում էին զինված հարձակումներ իրականացնել Իսրայելի հյուսիսային բնակավայրերի դեմ: Պաղեստինցիների յուրաքանչյուր այդպիսի հարձակմանը հետևում էր Իսրայելի պատասխան գործողությունը: Ստեղծված իրավիճակում ողջ պատասխանատվությունն Իսրայելը դնում էր լիբանանյան կառավարության վրա, որը թույլ էր տալիս պաղեստինցիներին օգտագործել իր երկրի տարածքը և անպատիժ գործել երկրի հարավում: 1974թ. դեկտեմբերի 10-ին Իսրայելը ռմբակոծեց Բեյրութում գտնվող ՊԱԿ-ի ներկայացուցչությունն ու ՊԱԿ-ի Հետազոտությունների կենտրոնը: Դեկտեմբերի 12-ին իսրայելյան «ֆանտոմները» ռմբակոծեցին Լիբանանի տարածքում գտնվող պաղեստինյան փախստականների ճամբարները: 1974թ. դեկտեմբերի 1-ից 15-ը Լիբանանն ավելի քան 100 անգամ ենթարկվեց հրետանային հարձակման[452]:

Թեև Լիբանանի նախագահ Սուլեյման Ֆրանժիեն 1974թ. նոյեմբերի 14-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում հայտարարեց, որ Լիբանանը հանդուրժողականության, մարդկային սինթեզների, եղբայրության և խաղաղության հող է[453], սակայն Լիբանանում տիրող ճգնաժամային իրավիճակի խորացման պայմաններում կային միանգամայն այլ տեսակետներ: Այս կապակցությամբ Բեյրութի Ամերիկյան համալսարանի պրոֆեսոր Մալքոլմ Քերրը բավական հոռետեսական էր տրամադրված և արտահայտում էր իր անհանգստությունը Լիբանանում ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Քերրը գրում էր. «Լիբանանն արդեն որևէ կերպ չի կարող խուսափել քաղաքացիական պատերազմից: Չափազանց մեծ է այն թշնամանքն ու ատելությունը, որ տածում են միմյանց նկատմամբ լիբանանյան տարբեր խմբավորումներն ու կուսակցությունները: Երկրում անընդհատ տեղի են ունենում արյունալի բախումներ: Լիբա-

---

[452] Новейшая история арабских стран Азии, с. 131.

[453] النهار, «Ալ-նահար», Բեյրութ, 15.11.1974:

ճանում տիրում է անիշխանություն, կառավարությունը կորցրել է իր վերահսկողությունը տեղի ունեցող դեպքերի նկատմամբ: Յուրաքանչյուր արյունալի մասնավոր բախում դիտվում է որպես քաղաքացիական պատերազմի հրահրման փորձ»[454]:

Այս շրջանում Լիբանանում ներքաղաքական իրավիճակի սրումն ուղեկցվում էր սոցիալական ճգնաժամի խորացման հետ: Լիբանանյան ձախերը՝ Քամալ Ջումբլաթի գլխավորությամբ, պահանջում էին երկրում իրականացնել սոցիալական, տնտեսական և քաղաքական որոշակի բարեփոխումներ, մասնավորապես վերանայել 1943թ. «Ազգային դաշինքն» ու երկրի սահմանադրությունը, խորհրդարանում պատգամավորների ընտրության և պետական պաշտոնյաների նշանակման հարցում հրաժարվել կրոնադավանական սկզբունքից և երկրի կառավարման գործում ընդլայնել իսլամադավանների մասնակցությունը: Լիբանանյան ձախերը քննադատում էին «Ազգային դաշինքը», որն այդ ուժերը, մասնավորապես՝ մարոնիները, համարում էին Լիբանանի համար «իդեալական քաղաքական բանաձև», որը հնարավորություն էր տալիս լիբանանյան տարբեր կրոնական համայնքներին գոյակցել մեկ պետության շրջանակներում: Ձախ ուժերն «Ազգային դաշինքը» որակավորում էին իբրև շղարշ, որի ետևում երկրի քրիստոնյաները, հիմնականում մարոնիները, թաքցնում էին իրենց վերադաս դիրքերը: Այդ ուժերը գտնում էին, որ իրական ազգային միասնականությունը Լիբանանում հնարավոր է միայն քաղաքական, այսպես կոչված, «վերահարմարեցման» արդյունքում, ինչը, մի կողմ թողնելով կրոնական պատկանելությունը, խորհրդարանում պատգամավորների ընտրման և պետական պաշտոնյաների նշանակման հարցում կհիմնվեր արիեստավարժության և անհատական հատկանիշների վրա: «Ազգային ճակատում» համախմբված լիբանանյան ձախ ուժերը սերտորեն համագործակցում էր սուննի համայնքի ազդեցիկ ղեկավարների հետ, որոնք նույնպես պայքարում էին երկրի կառավարման մարմիններում իսլամադավանների ավելի լայն մասնակցության համար: Լիբանանյան ձախ ուժերը, սուննի ազդեցիկ ղեկավարներ

---

[454] "New York Times", October 9, 1974.

Ռաշիդ Քարամեն, Սաիբ Սալամն ու լիբանանյան մուֆթի Հասան Խալիդը, պնդում էին, որ Լիբանանում խաղաղության վերահաստատման համար անհրաժեշտ պայմաններից էր «Ազգային դաշինքով» հաստատված դրույթների վերանայումը և իսլամադավանների քաղաքացիական իրավունքների ընդլայնումը:

Այն, որ կառավարման կրոնադավանական համակարգը ճգնաժամ էր ապրում, գիտակցում էին նաև իշխող շրջանակներն ու լիբանանյան աջերը: «Քաթաիբ» կուսակցության 1974թ. սեպտեմբերի համագումարում ընդունվեց որոշում, որով նախատեսվում էր ապահովել լիբանանյան կառավարման մարմիններում տարբեր կրոնական համայնքների հավասար ներկայացուցչությունը: Այդ ներկայացուցչությունը պետք է հիմնված լիներ ազգային և ոչ թե կրոնական հիմքի վրա[455]: Սակայն «Քաթաիբ» կուսակցության այս որոշման անորոշ բովանդակությունը վկայում էր այն մասին, որ կուսակցությունը լուրջ ցանկություն չուներ աջակցել լիբանանյան քաղաքական համակարգում որևէ բարեփոխման իրականացմանը:

Երկրում հասունացող ճգնաժամի արտահայտություններից էր նաև 1974թ. սեպտեմբերի 25-ին Թաքի Ալ-Դին Ալ-Սոլհի կառավարության հրաժարականը: Ստեղծված իրավիճակում նախագահ Սուլեյման Ֆրանջիեն նոր կառավարություն ձևավորելու նպատակով դիմեց Սաիբ Սալամին: Սակայն նախագահը Սաիբ Սալամին խոստացավ ապահովել խորհրդարանի վստահության քվեն, եթե վերջինս իր կառավարության մեջ ներգրավեր նախագահի մի քանի ազգականների, համախոհների և մտերիմների, այդ թվում նաև նրա որդուն՝ Թոնի Ֆրանջիեին: Չցանկանալով դառնալ «տիկնիկ» նախագահի ձեռքում և կազմավորել կառավարություն, որի անդամները կընտրվեին բացառապես նախագահի ցանկությամբ, Սաիբ Սալամը հրաժարվեց զբաղեցնել վարչապետի պաշտոնը: Նախագահը 1974թ. նոյեմբերի 1-ին վարչապետ նշանակեց Ռաշիդ Ալ-Սոլհին[456], որը սերտ կապեր ուներ Քամալ Ջումբլաթի հետ: Նախագահի այս

---

[455] K. Salibi, նշվ.աշխ., էջ 84:

[456] Н. Горбунова, Ливан накануне гражданской войны (1975-1976гг.), Арабские Страны: История, экономика, политика, М., 1986, с. 244.

քայլը նպատակ ուներ օգտագործելով Ռաշիդ Ալ-Սոլհի և լիբանանյան ձախ ուժերի ղեկավար Քամալ Ջումբլաթի մտերիմ հարաբերությունները՝ փորձել մեղմել «Ազգային ճակատի» ու նրա ղեկավարի և լիբանանյան իշխանությունների ու աջ ուժերի միջև առկա սրված հակասությունները:

Սուննի ազդեցիկ երկու ղեկավարներ՝ Սաիբ Սալամն ու Ռաշիդ Քարամեն անհանգստացած էին այն հանգամանքով, որ նորանշանակ վարչապետը զգալի կախում ուներ Քամալ Ջումբլաթից և նրա քաղաքական դաշնակիցն ու համախոհն էր, ինչը հակասում էր սուննի ղեկավարների այն սկզբունքին, որ վարչապետը նախ և առաջ պետք է ներկայացնի սուննի համայնքի շահերը, լինի ազդեցիկ սուննի ղեկավար և աջակցություն ու օժանդակություն ստանա առաջին հերթին սուննի համայնքից:

Պաշտոնը ստանձնելուց մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի 8-ին, Ռաշիդ Ալ-Սոլհը խորհրդարանում ներկայացրեց իր կառավարության կազմը, որը բաղկացած էր 18 նախարարից: Այս կառավարության մեջ ընդգրկվեցին նախագահի պարտադրած նախարարների թեկնածուները, այդ թվում նաև՝ Սուլեյման Ֆրանժիեի որդին՝ Թոնի Ֆրանժիեն: Կառավարության կազմում տեղ գտան «Քաթաիբ», «Ազգային լիբերալ» և «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցության անդամները[457]:

Սուննի համայնքի ղեկավարությունը կազմավորեց վարչապետ Ռաշիդ Սոլհի նկատմամբ ընդդիմադիր ճակատ, որի մեջ մտան Սաիբ Սալամը, Ռաշիդ Քարամեն և «Ազգային դաշինք» կուսակցության ղեկավար Ռայմոն Էդդեն՝ այդ շրջանում միակ մարոնի ղեկավարը, որը հակասություններ ուներ նախագահի հետ:

Դեռևս 1974թ. սկզբին Ռաշիդ Քարամեն և Ռայմոն Էդդեն փորձեցին ձևավորել գործող իշխանություններին ընդդիմադիր ճակատ և առաջարկեցին Քամալ Ջումբլաթին նույնպես միանալ այդ ճակատին, ինչը կնպաստեր այդ ճակատի և լիբանանյան ձախ ուժերի միջև համագործակցության ամրապնդմանը: Սակայն Ջումբլաթը մերժեց: Իսկ երբ 1974թ. հոկտեմբերին Սաիբ Սալամը հրաժարվեց

---

[457] W. Goria, նշխ. աշխ., էջ 168:

զբաղեցնել Լիբանանի վարչապետի պաշտոնը, վերջինս նույնպես ցանկություն հայտնեց միանալ Քարամե-Էդդե ճակատին: Նոր ձևավորված այս ճակատը անվանվեց «Եռակողմ դաշինք» (արաբերեն՝ «Ալ-թահալուֆ ալ-սուլասի)[458]:

Միայն մարոնիական կազմ ունեցող 1968թ. կազմավորված «Եռյակ դաշինքից» նոր ձևավորված «Եռակողմ դաշինքը» տարբերվում էր նրանով, որ դրանում ընդգրկված էին երկու սուննի և մեկ մարոնի ղեկավար՝ Ռայմոն Էդդեն: Վերջինս քննադատում էր երկրի նախագահ Սուլեյման Ֆրանջիեի վարած ներքին և արտաքին քաղաքամակցությունը հիմնված էր ոչ թե կրոնական, այլ որոշակի քաղաքական հիմքի վրա: Անդամակցելով «Եռակողմ դաշինքին»՝ Էդդեն նպատակ ուներ ամուր կապեր հաստատել սուննի ղեկավարների հետ և, օգտագործելով այդ հանգամանքը, 1976թ. այդ ընդդիմադիր դաշինքից առաջադրվել որպես նախագահական ընտրությունների հնարավոր թեկնածու:

1973թ. սկսած՝ Ռայմոն Էդդեն պարբերաբար քննադատում էր Լիբանանի նախագահի քաղաքականությունը: Նա տարածայնություններ ուներ նաև Թոնի Ֆրանջիեի հետ, որին Էդդեն լրջորեն մեղադրում էր կաշառակերության և կոռուպցիայի մեջ: Թոնի Ֆրանջիեն զբաղեցնում է հաղորդակցության և կապի նախարարի պաշտոնը: Այս ոլորտում հայտնաբերվել էին մի շարք խախտումներ, որոնց հետքերը տանում էին դեպի Թոնի Ֆրանջիեն[459]:

Ռայմոն Էդդեն քննադատության էր ենթարկում նաև վերջին երեք կառավարություններում ընդգրկված «Քաթաիբ» կուսակցության ներկայացնող նախարարներին՝ նրանց նույնպես մեղադրելով կաշառակերության և կոռուպցիայի մեջ[460]:

1970-ականների սկզբին Լիբանանում նաև կտրուկ սրվել էին հակասությունները տարբեր կուսակցությունների և խմբավորումնե-

---

[458] Նույն տեղում, էջ 169:

[459] الأخبار, «Ալ-ախբար», 16.03.1975:

[460] B. Korany and A. Dessouks, The Foreign Polices of Arab States, Cairo, 1984, p. 308.

րի միջև: Ինչպես արդեն նշել ենք գրեթե յուրաքանչյուր կուսակցություն և խմբավորում ուներ իր միլիսները, որոնց թիվը հասնում էր 29-ի: 1974թ. հոկտեմբերին Լիբանանն աշխարհում գրավում էր առաջին տեղը բնակչության մեկ շնչին բաժին ընկնող զենքի քանակությամբ[461]:

1974-1975թթ. Լիբանանի ողջ տարածքում տեղի էին ունենում պայթյուններ, ավազակային հարձակումներ, կողոպուտներ, սպանություններ և առևանգումներ, որոնք պարբերական բնույթ էին կրում, իսկ նրանց կազմակերպիչները մնում էին անպատիժ: Լիբանանյան գրեթե բոլոր քաղաքներում գործում էին հանցավոր խմբավորումներ, որոնք ունեին իրենց սեփական զինված ջոկատները: Այսպիսի մի խմբավորում գործում էր Տրիպոլիում, որը ղեկավարում էր Ահմադ Ալ-Քադդուրը: 1975թ. հունվարին երկու շաբաթ անընդմեջ Ռաշիդ Ալ-Սոլհի կառավարությունը ձեռնարկում էր մի շարք միջոցառումներ՝ հանցավոր այս խմբավորման ոչնչացման ուղղությամբ, որոնք դրական արդյունք տվեցին և Տրիպոլիի հին թաղամասը հաջողվեց մաքրել հանցավոր այդ խմբավորումից[462]: Սակայն կառավարության կողմից այս ուղղությամբ ձեռնարկած միջոցառումները կրում էին մասնավոր բնույթ և չէին տարածվում գործող այլ հանցավոր խմբավորումների վրա:

1970-ականների սկզբին Լիբանանում պետական համակարգը՝ կառավարությունը, խորհրդարանն ու բանակը, փաստորեն, կորցրել էին իրենց իրական իշխանությունը և չէին վերահսկում երկրում տիրող իրավիճակը: Կոռուպցիան, քաղաքական գործընթացներում զինված խմբավորումների գնալով ակտիվացող դերը, պետական մարմինների անդամալույծ լինելու փաստերը հանգեցրին բացահայտ քրեական տարրերի ակտիվացմանը:

1970-ականների սկզբին հատուկ նշանակություն էին ստացել լիբանանասիրիական հարաբերությունները: Լիբանանի տարածքում պաղեստինյան զինվորական խմբավորումների ներկայությունը և այդ հանգամանքով պայմանավորված Իսրայելի վտանգավոր

---

[461] Н. Горбунова, Ливан накануне гражданской войны (1975-1976гг.), с. 245.
[462] K. Salibi, նշխ. աշխ., էջ 31:

հարձակումները ստիպում էին Լիբանանին՝ հատուկ ուշադրություն դարձնել Սիրիայի հետ իր հարաբերություններին: Այս տեսանկյունից զգալի նշանակություն ուներ 1975թ. հունվարի 7-ի Լիբանանի նախագահ Սուլեյման Ֆրանջիեի հանդիպումը Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի հետ, որը տեղի ունեցավ լիբանանյան սահմանային Շթորա քաղաքի մոտ: Երկու երկրների ղեկավարները իրենց լիակատար աջակցությունը հայտնեցին Պաղեստինի արաբ ժողովրդի իր օրինական իրավունքների համար մղվող պայքարին և դատապարտեցին իսրայելյան օդային ուժերի հարձակումները հարավլիբանանյան բնակավայրերի վրա: Սիրիայի նախագահը հայտարարեց. «Լիբանանի դեմ ցանկացած ռազմական գործողություն Սիրիան դիտում է իբրև իր անվտանգության երկրի դեմ իրականացվող հարձակում և պատրաստ է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները որպեսզի ապահովվի Լիբանանի բնակչության անվտանգությունը, տարածքային ամբողջականությունն ու անկախությունը»[463]:

1975թ. հունվարի 2-ին պաղեստինցիների իսրայելյան հյուսիսային բնակավայրերի դեմ իրականացրած հերթական հարձակումից հետո Իսրայելը՝ որպես պատասխան, օդային հարձակում իրականացրեց Լիբանանի հարավում: Այս հարձակումից հետո պաղեստինյան զինվորական խմբավորումների և լիբանանյան զորամիավորումների միջև բախումներ տեղի ունեցան լիբանանի զինվորական սահմանի մոտ: Տիրում տեղակայված լիբանանահրայելյան բանակի զինանոցների վրա վեց արկ նետվեց: ՊԱԿ-ի ղեկավարությունը դրանում մեղադրեց իրենից անջատ գործող «Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատին»[464]: Պիեր Ժմայելը հանդես եկավ հայտարարությամբ, որում նա լրջորեն քննադատեց պաղեստինյան զինվորական խմբավորումների ներկայությունն ու նրանց գործողությունները Հարավային Լիբանանում և պահանջեց ՊԱԿ-ի ղեկավարությունից «վերջ դնել այն անհիշխանությանը, որ տիրում էր ՊԱԿ-ից անջատ գործող պաղես-

---

[463] "L'Humanité", 03.03.1975.
[464] TACC,15.01.1975.

տինյան մի շարք կազմակերպություններում և խմբավորումներում»: Ի պատասխան Պիեր Ժմայելի այս հայտարարության՝ ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթը հայտարարեց, որ կանի հնարավորինս, որպեսզի նման գործողություններն այլևս չկրկնվեն: Յասիր Արաֆաթի պատասխան հայտարարությունից երկու օր անց նա նամակ ստացավ նաև «Ազգային լիբերալ» կուսակցության ղեկավար Քամիլ Շամունից, որն ամբողջությամբ պաշտպանում էր Պիեր Ժմայելի դիրքորոշումը՝ Լիբանանում պաղեստինյան ներկայության և Հարավային Լիբանանում ստեղծված վտանգավոր իրավիճակի վերաբերյալ[465]: Մեկ ամիս անց՝ փետրվարի 20-ին, Պիեր Ժմայելը ուղերձ հղեց նախագահ Սուլեյման Ֆրանջիեին, որում նա առաջարկում էր Լիբանանում անցկացնել համընդհանուր հանրաքվե՝ պաղեստինյան զինվորական խմբավորումների ներկայության վերաբերյալ[466]: Թեև Պիեր Ժմայելի այս առաջարկը նախագահը թողեց անպատասխան, սակայն, այդ փաստն արդեն իսկ արտացոլում էր այն վճռականությունը, որ լիբանանյան աջերն ունեին պաղեստինյան զինված խմբավորումներին երկրի տարածքից դուրս բերելու հարցում:

1975թ. սկզբին իսրայելյան բանակը պարբերական հարձակումներ էր իրականացնում Լիբանանի հարավում գտնվող պաղեստինյան ռազմական ճամբարների վրա, որոնք Իսրայելը համարում էր «ահաբեկիչների ճամբարներ»: 1975թ. հունվարի սկզբին Իսրայելը հարձակում իրականացրեց Մարջայունի վրա, որը Լիբանանում պաղեստինյան զինված խմբավորումների ռազմավարական կարևոր հենակետերից էր[467]: 1975թ. հունվարի 12-ին իսրայելյան զինված ուժերը, անցնելով Լիբանանի սահմանը, հարձակվեցին լիբանանյան Քֆար-Շուբ գյուղի վրա, ինչն Իսրայելը որակավորեց իբրև «այդտեղ հաստատված պաղեստինցի ահաբեկիչների դեմ

---

[465] محسن ابرهيم، الحرب و تبرية الحركة الوطنية اللبنانية، بيروت ١٩٨٣، ص ٣٧.

[466] «Քաթաիբ» կուսակցության ղեկավար Պիեր Ժմայելի ուղերձի տեքստը տե՛ս ألنداء, «Ալ-նիդա», Բեյրութ, 25.02.1975:

[467] Н. Горбунова, Ливан накануне гражданской войны (1975-1976гг.), с. 250.

պայքարի դրսևորում»: Քֆար-Շուբի վրա իսրայելյան հարձակումը Լիբանանում առաջացրեց բողոքի մեծ ալիք: Բեյրութում տեղի ունեցավ բազմահազարանոց ցույց, որին իրենց մասնակցությունը բերեցին մի շարք քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ: Նրանք պահանջում էին միջոցառումների իրականացում, որոնք կնպաստեին լիբանանյան զինված ուժերի մարտունակության բարձացմանը:

Պիեր Ժմայելի՝ նախագահին ուղղված նամակից մոտ մեկ շաբաթ անց լուրջ խնդիրներ առաջացան Սիդոնում: Սիդոնի, ինչպես նաև լիբանանյան մի շարք այլ ափամերձ քաղաքների ու գյուղերի ճկնորսներ, խիստ անհանգստացած նոր ճկնորսական «Պրոտեյն» ընկերության կազմավորմամբ, որը գլխավորում էր Քամիլ Շամունը, կազմակերպեցին մի շարք ցույցեր, որոնք փետրվարի 26-ին վերածվեցին բախումների՝ լիբանանյան բանակի և ցուցարարների միջև: Բախումների հետևանքով վիրավորվեց և ապա նաև մահացավ ցուցարարներին առաջնորդող նախկին պատգամավոր, Սիդոնի ղեկավարներից Մարուֆ Սաադը: Փետրվարի 28-ին Սիդոնում տեղի ունեցած ղեպքերին ի պատասխան՝ ձախ ուժերը ցույցեր կազմակերպեցին նաև Բեյրութում: Մարուֆ Սաադի մահվանից մեկ օր անց Սիդոնի բնակչությունը կազմակերպեց երկրորդ մեծ ցույցը: Ցուցարարները փակել էին Սիդոն-Տիր ճանապարհը: Սիդոն ժամանեցին լիբանանյան բանակի մի քանի զորամիավորումներ: Վերջիններիս և Սիդոնի բնակիչների միջև կրկին տեղի ունեցան արյունալի բախումներ[468]: Սիդոնի բնակիչներին աջակցում էին նաև Այն Ալ-հիլուե պաղեստինյան փախստականների ճամբարի բնակիչները: Այս բախումների ընթացքում սպանվեց հինգ զինվոր և տասնմեկ սիդոնցի, կային նաև մեծ թվով վիրավորներ: Բախումների հաջորդ օրը Սիդոնի ճկնորսների և լիբանանյան բանակի հրամանատարության միջև ստորագրվեց կրակի դադարեցման մասին համաձայնագիր, որի արդյունքում բանակի զորամիավորումները դուրս բերվեցին Սիդոնից[469]:

---

[468] Новейшая история арабских стран Азии, с. 133.
[469] Е. Каршунов, Репортаж из взорванного рая, М., 1982, с. 46.

Սիդոնի դեպքերից հետո ակտիվացան լիբանանյան գրեթե բոլոր հակադիր ճակատները: Լիբանանյան ձախ ուժերն այդ բախումների հրահրման մեջ մեղադրեցին լիբանանյան իշխանություններին և բանակի հարմանատարությանը: Ձախերը պահանջեցին բանակի հրամանատար Իսքանդար Ջանիմի և վարչապետ Ռաշիդ Ալ-Սոլհի հրաժարականները: «Ազգային ճակատը» հայտարարեց, որ բանակն իրավունք չուներ կրակ բացել իր քաղաքացիների վրա, հատկապես եթե այն ի վիճակի չէր կատարել իր հիմնական պարտականությունը՝ պաշտպանել Լիբանանի սահմանները, ազգային անվտանգություն ու անկախությունը[470]:

Վարչապետ Ռաշիդ Ալ-Սոլհը ձեռնարկեց մի քանի միջոցառումներ հարթելու ստեղծված իրավիճակը, սակայն վարչապետի բոլոր հրամաններն արհամարհվում էին բանակի հրամանատարության կողմից, որն ուղղակիորեն կատարում էր երկրի նախագահի հրահանգները: Սուննի համայնքի ղեկավարները վարչապետից պահանջում էին դիմել կտրուկ քայլերի և վերակազմավորել բանակն այնպես, որ այն վերահսկեր երկրի կառավարությունը, ինչը որոշակիորեն կնվազեցներ Լիբանանի նախագահի կողմից բանակի՝ որպես գործիք օգտագործումը: Հակառակ դեպքում սուննի ղեկավարները պահանջում էին երկրի վարչապետի հրաժարականն ու ավելի ազդեցիկ ղեկավարի նշանակումը վարչապետի պաշտոնում[471]:

Մինչ լիբանանյան իսլամադավանները և ձախ ուժերն իրենց դժգոհություններ էին հայտնում Սիդոնի զարգացումներում լիբանանյան իշխանությունների դրսևորած դիրքորոշման նկատմամբ, Լիբանանի քրիստոնյաներն ու աջ ուժերն իրենց ամբողջական պաշտպանություն ու աջակցություն էին հայտնում լիբանանյան իշխանություններին: Այս կապակցությամբ վերջիններս նույնիսկ ցույցեր կազմակերպվեցին արևելյան Բեյրութի քրիստոնեական մասում, որտեղ հազարավոր ուսանողներ իրենց պաշտպանություն էին հայտնում լիբանանյան բանակի հրամանատարություն գործողություններին: Նրանք Սիդոնում իրավիճակի սրման գործում մեղադրեցին լի-

---

[470] الأهرام, «Ալ-ահրամ», Բեյրութ,19.02.1975:

[471] K. Salibi, նշխ. աշխ., էջ 95:

բանաձյան ձախ ուժերին, որոնք բանակը ներքաշել էին բախումնե-
րի մեջ՝ նպատակ ունենալով վարկաբեկել վերջինիս ղեկավարու-
թյանը[472]:

Մինչ ՊԱԿ-ի ղեկավարությունը փորձում էր ամեն կերպ ժխտել Սիդոնի դեպքերին պաղեստինյան շարժման մասնակցությունը, քրիստոնեական քաղաքական շրջանակները չափազանցնում էին պաղեստինցիների դերը վերը նշված դեպքերում: Լիբանանյան աջ ուժերը փորձում էին Սիդոնի դեպքերը ևս օգտագործել և կրկին մեղադրել պաղեստինցիներին այն բանում, որ նրանք խառնվում էին Լիբանանի ներքին գործերին և նպաստում ներքաղաքական իրավիճակի սրմանը:

Լիբանանյան աջ ուժերի կարծիքով՝ Սիդոնի դեպքերը պաղեստինցիների և ձախ ուժերի դաշինքի ծրագրավորված գործողությունների արդյունք էին, որի նպատակն էր ոչ միայն վարկաբեկել Ֆրանջիեների կառավարությունը, այլ նաև ողջ լիբանանյան բանակն ու նրա հրամանատարությանը, այլ նաև ողջ լիբանանյան կառավարման համակարգը[473]:

Սիդոնի դեպքերում վիրավորված Մարուֆ Սաադի մահվան օրը գումարվեց նաև «Գերագույն իսլամական խորհրդի» նիստ, որում որոշում ընդունվեց անվստահություն հայտնել Ռաշիդ ալ-Սոլհի կառավարությանը և մեղադրել նրան այն բանում, որ վերջինս ի վիճակի չեղավ պատշաճ կերպով ներկայացնել լիբանանյան իսլամադավան բնակչության շահերն ու դիրքորոշումը: Հինգ օր անց 16 իսլամադավան ազդեցիկ ղեկավարներ, այդ թվում վեց նախկին վարչապետներ, ներկայացրին բանակի վերակազմավորման պահանջ և սպառնացին սրել Լիբանանում ստեղծված ճգնաժամային իրավիճակը, եթե նրանց պահանջները չբավարարվեին: Իսլամադավան այդ ղեկավարները պահանջում էին, որ բանակի հրամանատարությունը նույնպես հաստատվեր «ազգային հավասարության» և ստեղծվեր հատուկ հրամանատարական խորհուրդ, որում իսլամադավանները ու քրիստոնյաները կունենային հավասար ներկայացուցչություն[474]:

---

[472] K. Joumblatt, Pour le Liban, Editions Stock, 1978, p. 121.
[473] Maghreb Machrek, Monde Arabe, Paris, 1987, p. 11.
[474] J. Bulloch, Death of a Country. The Civil War in Lebanon, London, 1977, p. 74.

Ռաշիդ Ալ-Սոլհը, որ ամեն կերպ փորձում էր պահպանել իր կառավարությունը, Քամալ Ջումբլաթի աջակցությամբ համաձայնեց ստանձնել բանակի վերակազմավորման այդ դժվար գործընթացը և նախաձեռնեց հատուկ խորհրդարանական հանձնաժողովի կազմավորումը, որը պետք է զբաղվեր այդ գործընթացով: Այս հանգամանքն առաջացրեց լիբանանյան աջ ուժերի և հատկապես մարոնիների կտրուկ քննադատությունը, որոնք բացառում էին բանակում որևէ վերակազմավորում: Ե՛վ Պիեր Ժմայելը և՛ Քամիլ Շամունը հայտարարեցին, որ կպայքարեն լիբանանյան բանակի հրամանատարության կազմում ցանկացած տեղաշարժերի դեմ: Լիբանանյան քրիստոնյաները դա դիտում էին իբրև իրենց դիրքերի թուլացմանն ուղղված փորձ[475]:

Մինչ 1970թ. լիբանանյան բանակն իր մարոնի հրամանատարությամբ վայելում էր Լիբանանի ողջ բնակչության հարգանքը՝ ստանձնելով հիմնականում, այսպես կոչված, «դիտորդի» դեր բոլոր միջհամայնքային և ներքին բախումներում: Սակայն 1970թ. հետո, երբ լիբանանյան բանակի շիահական կորիզը վերացվեց, և բանակի հրամանատար նշանակվեց գեներալ Իսքանդար Ջանիմը, իրավիճակը կտրուկ փոխվեց: 1973թ. սկսած լիբանանյան բանակն իր մարոնի ղեկավարությամբ երկրի աջ ուժերի հիմնական դաշնակիցն էր և ակտիվորեն մասնակցում էր ձախ ուժերի և պաղեստինցիների դեմ պայքարին:

Լիբանանյան հակադիր ճակատների միջև հակասությունների երկարատև զինված հակամարտության վերաճելու սպառնալիքի պայմաններում լիբանանյան աջերը որևէ կերպ չէին ցանկանում գնալ փոխզիջման և որոշակի բարեփոխումներ իրականացնել լիբանանյան բանակում: Այդ փուլում բանակում բարեփոխումների իրականացումը կհամապատասխաներ նաև լիբանանյան աջերի շահերին, քանի որ երկրում իրավիճակի վատթարացումն ամենից առավել կխարխլեր հենց նրանց, մասնավորապես մարոնիների տիրապետող դիրքեր:

---

[475] T. Petran, The Struggle over Lebanon, p. 165.

1973թ. հետո բոլոր այն արաբական երկրները, որոնք որոշակի շահագրգռվածություն էին ցուցաբերում մերձավորարևելյան հակամարտության կարգավորման ամերիկյան տարբերակի նկատմամբ, Լիբանանում քրիստոնյաներին դիտում էին իբրև իրենց դաշնակիցներ և տվյալ դեպքում նրանց ձեռնտու էր երկրում քրիստոնյաների վերադաս դիրքերի պահպանումը:

Այս պայմաններում, երբ քրիստոնյա լիբանանցիներն աջակցություն և օժանդակություն էին ստանում ոչ միայն Արևմուտքից, այլև արաբական մի շարք պահպանողական երկրներից, նրանք որևէ կերպ չէին ցանկանում զիջումների գնալ և իրականացնել որևէ բարեփոխում:

Սիդոնում տեղի ունեցած դեպքերից հետո, երբ Լիբանանում իրավիճակը շարունակում էր լարված մնալ, արևմտյան Բեյրութի թաղամասերից մեկում տեղի ունեցավ մի պատահար, որը պատմագրության մեջ ընդունված է համարել Լիբանանում 1975թ. բռնկված երկարատև քաղաքացիական պատերազմի սկիզբը:

Այսպիսով՝ Լիբանանը, որին հաջողվել էր զերծ մնալ մերձավորարևելյան հակամարտության ողողակի մասնակցությունից, 1970-ականներին ամբողջությամբ ներքաշվեց այդ հակամարտության մեջ՝ դրանից բխող բոլոր աղետաբեր հետևանքներով: Դժվար չէ նկատել այն ողողակի կապը, որ գոյություն ուներ մերձավորարևելյան ճգնաժամի և լիբանանյան հակամարտության միջև: Լիբանանում ստեղծված իրավիճակին սրություն էր հաղորդում նաև այն հանգամանքը, որ արտաքին մի շարք ուժեր, ելնելով իրենց շահերից, ջանում էին ավելի խորացնել լիբանանյան հակամարտությունը: Այս հակամարտության գլխավոր պատճառներից մեկն էլ երկրում պաղեստինյան ռազմաքաղաքական կառույցների ներկայությունն էր: Լիբանանը, փաստորեն, դարձավ երկրորդ արաբական պետությունը, որտեղ հաստատված պաղեստինցիները որոշակի հանգամանքների բերումով դուրս եկան իշխանությունների վերահսկողությունից և դարձան ներքաղաքական լուրջ գործոն, ինչն իր հերթին առաջ բերեց լիբանանահրայելյան հարաբերությունների սրում և նպաստեց լիբանանյան հասարակության երկփեղկմանն ու նրանում առկա հակասությունների անվախադեպ խորացմանը:

Արդյունքում 1975թ. Լիբանանում բռնկվեց երկարատև քաղաքացիական պատերազմ:

1970-ականներին մերձավորարևելյան ճգնաժամի սրման, Լիբանանում պաղեստինյան ռազմաքաղաքական կառույցների ներկայության, պաղեստինցիների՝ լուրջ քաղաքական գործոն դառնալու և արտաքին մի շարք այլ գործոնների ազդեցությամբ՝ աննախադեպ խորացան հակասությունները լիբանանյան հասարակության ներսում: Նրա պառակտումը դարձավ իրողություն: Այս բոլորի հետևանքով 1975թ. ապրիլին Լիբանանում սկսվեց երկարատև քաղաքացիական պատերազմ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԼԻԲԱՆԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1975-1989ԹԹ.)

1. Քաղաքացիական պատերազմի առաջին փուլը (1975թ. ապրիլից մինչև 1976թ. մայիս)

1975թ. ապրիլին Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմի հենց սկզբից, արտաքին որոշ ուժեր փորձում էին լիբանանյան հակամարտությունը ներկայացնել իբրև քրիստոնյաների և իսլամադավանների միջև ընթացող կրոնական պատերազմ: Այս համատեքստում լիբանանյան ճախերը ներկայացվում էին որպես բացառապես իսլամադավան, իսկ աջերը՝ քրիստոնեական ուժեր: Սակայն, ինչպես արդարացիորեն նշում է Նիկոլայ Հովհաննիսյանը, Լիբանանում այս կամ այն ուժերում համախմբումը տեղի էր ունեցել ոչ թե կրոնական, այլ որոշակի սոցիալ-քաղաքական սկզբունքների հիման վրա[476]: Լիբանանյան հակամարտությունը հակասությունների մի բարդ հանգույց էր, որն ուներ քաղաքական ենթատեքստ:

1975թ. ապրիլի 13-ի առավոտյան «Քաթաիբ» կուսակցության ղեկավար Պիեր Ժմայելը ժամանեց Բեյրութի Այն Ալ-Ռումմանա թաղամաս, որը բնակեցված էր գլխավորապես քրիստոնյաներով և որտեղ տիրապետող դիրքեր ունեին լիբանանյան փաղանգավորները: Պիեր Ժմայելը հրավիրված էր մասնակցելու մարոնիական նորակեղեցու օծման արարողությանը: Արարողությունը դեռ շարունակվում էր, երբ մի ավտոմեքենա, կանգնելով եկեղեցու մուտքի մոտ, կրակ բացեց, որի արդյունքում սպանվեց չորս մարդ: Բոլորն էլ «Քաթաիբ» կուսակցության անդամներ էին: Տեղեկանալով, որ դեպ-

---

[476] Այս մասին մանրամասն տե՛ս Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և հայ համայնքի դիրքորոշումը, էջ 32:

քի կազմակերպիչները պաղեստինյան զինված մարտիկներն էին, «Քաթաիբ» կուսակցությունը վճռականորեն որոշեց վրեժխնդիր լինել[477]:

Նույն օրը մի խումբ պաղեստինցիներ ավտոմեքենայով Բեյրութի արևմտյան հատվածից վերադառնում էին արևելյան հատվածում գտնվող Թել-Զաաթար ճամբարը: Ճանապարհն անցնում էր Այն Ալ–Ռումաննա թաղամասով, որտեղից անցնելու պահին փաղանգավորների զինված մարտիկները (իբրև եկեղեցու մոտ տեղի ունեցած պատահարի «վրեժխնդրություն»), կրակ բացեցին ավտոմեքենայի վրա, որի հետևանքով զոհվեց 27 պաղեստինցի, վիրավորվեց՝ 19-ը: Այս գրոհը տևեց 20 րոպե, որի ընթացքում «Քաթաիբ» կուսակցության մարտիկներն անընդմեջ կրակում էին ավտոմեքենայի վրա: Այս միջադեպը սկիզբ դրեց ռազմական բախումների, որոնք ընդգրկեցին ողջ Բեյրութն ու նրա արվարձաններն, ապա նաև Լիբանանի գրեթե բոլոր շրջանները. հյուսիսում՝ Տրիպոլիի շրջանը, հարավում՝ Սիդոնը, արևելքում՝ Բեքաայի հովիտը՝ մասնավորապես Զահլեի շրջանը և այլն[478]: Այսպես սկսվեց Լիբանանի ներագույն պատմության ամենաողբերգական էջը: Բախումների առաջին օրը սպանվեց 32, երկրորդ օրը՝ 33, երրորդ օրը՝ 37 մարդ: Մայիսի 26-ին արդեն սպանվածների թիվն անցնում էր 2.000-ը, իսկ վիրավորների թիվը 5.000 էր[479]:

Քաղաքացիական պատերազմը կանխելու նպատակով ՊԱԿ-ի ղեկավարությունն արաբական պետությունների ղեկավարներին հղեց նամակներ, որոնցում Լիբանանում իրավիճակի սրման պատասխանատվությունը դրեց «Քաթաիբ» կուսակցության վրա, ինչպես նաև անմիջապես միջամտության կոչ արեց: Պաղեստինցիներին աջակցություն հայտնեցին ձախ ուժերը: Միջնորդական առաքե-

---

[477] S. Mackey, նշխ. աշխ., էջ 157:
[478] Н. Оганесян, Тревоги и надежды Ливана, “Советакан Айастан”, Ереван, 17. 09.1978.
[479] Л. Вольнов, Ливанский дневник, М., 1980, с. 32.

լությամբ Բեյրութ ժամանեց ԱՊԼ գլխավոր քարտուղար Մահմուդ Ռիադը[480]:

Կրակի դադարեցումը հնարավոր դարձավ ապրիլի 16-ին, իսկ սակայն չնպաստեց երկրում խաղաղության հաստատմանը: Աջ ուժերի ղեկավարությունն ուժեղացրեց կառավարության նկատմամբ ճնշումները՝ փորձելով ստիպել կարգուկանոն հաստատելու գործընթացում ներգրավել նաև բանակը: Վարչապետ Ռաշիդ Սոլհը մերժեց այդ պահանջը, սակայն կառավարությունից «Քաթաիբ» կուսակցության նախարարների դուրս գալը ստիպեց նրան մայիսի 15-ին հրաժարական տալ: Ռաշիդ Սոլհը երկրում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների պատասխանատվությունը դրեց «Քաթաիբ» կուսակցության վրա[481]:

1975թ. մայիսի 23-ին Լիբանանի պատմության մեջ առաջին անգամ իշխանությունն անցավ զինվորականներին՝ գեներալ Նուրի Ալ-Դին Ռիֆաիի գլխավորությամբ: Հասկանալով, որ վերոնշյալ ուղղված էր աջ ուժերի մենիշխանության հաստատմանը, ձախերն ու ավանդական իսլամադավան ղեկավարները միավորվեցին կառավարության հրաժարականի կարգախոսի ներքո: Նրանց իրենց աջակցությունը հայտնեց «Ազգային դաշինք» մարոնիական կուսակցության ղեկավար Ռայմոն Էդդեն[482]:

Մայիս 24-ին ձախ ուժերի առաջարկությամբ հայտարարվեց համընդհանուր գործադուլ: Փողոցներում հայտնվեցին բարիկադներ, հաճախակի դարձան զինված բախումները: ՊԱԿ-ն ու ձախերն անհանգստացած էին աջերի լիբանանյան բանակն իրենց պաշտպանելու նպատակով բախումների մեջ ներքաշելու մտադրությունից: Նրանց անհանգստությունը կիսում էր նաև սիրիական կառավարությունը: Միջնորդական առաքելությամբ Բեյրութ գործուղվեց

---

[480] The Times, Guide to the Middle East: The Arab World and Its Neighbours, ed. by Peter Sluglett and Marion Farouk-Sluglett, Times Books, London, 1991, pp. 150-151.

[481] H. Cobban, The Palestinian Liberation Organization. People, Power and Politics, Cambridge University Press, Cambridge, New York, Sydney, Melbourne, Port Chester, 1990, p. 70-71.

[482] Новейшая история арабских стран Азии, с. 134.

Սիրիայի արտաքին գործերի նախարար Աբդ Ալ-Հալիմ Խադդամը: Չախերի ակտիվ ճնշման արդյունքում մայիս 26-ին Նուրի Ալ-Դին Ռիֆաիի կառավարությունը ստիպված էր հրաժարական տալ[483]:

Երկու օր անց նոր վարչապետ նշանակվեց չափավոր սուննի ղեկավար Ռաշիդ Քարամեն: Սակայն լիբանանյան տարբեր կուսակցությունների և խմբավորումների միջև առկա խորը հակասությունների պատճառով միայն հունիսի 30-ին հնարավոր դարձավ նոր կառավարության կազմավորումը, որ ստացավ «ազգային փրկության կառավարություն» անվանումը: Քարամեն իր գլխավոր նպատակ էր համարում ներքին հակամարտության կարգավորումն ու լիբանանցիների և պաղեստինցիների միջև համաձայնության հաստատումը:

Չախերի ճնշման արդյունքում նոր կառավարության կազմում չներգրավվեցին «Քաթաիբ» կուսակցության անդամները: Պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցրեց հենց ինքը՝ վարչապետը, ինչը երաշխիք էր, որ բանակը չէր միջամտի հակամարտությանը: Չախերը ևս ներկայացված չէին կառավարությունում: Ներքին գործերի նախարար նշանակվեց Քամիլ Շամունը, ինչը հնարավորություն տվեց աջերին վերահսկողություն հաստատել անվտանգության ուժերի նկատմամբ: Նախարարական մյուս աթոռները զբաղեցրին ավանդական ղեկավարներ, որոնք չէին հարում հակամարտող կողմերից և ոչ մեկին[484]:

Զինված հակամարտության արդյունքում Լիբանանը, ինչպես նաև մայրաքաղաք Բեյրութը, բաժանվեց երկու մասի: Արևելյան Բեյրութն ու երկրի քրիստոնեական շրջանները վերահսկում էին աջ ուժերը, իսկ արևմտյան Բեյրութն ու իսլամադավան շրջանները՝ ձախերը:

Աջ ուժերը համախմբվել էին «Լիբանանի քրիստոնեական բնույթն ու երկիրը պաղեստինցիներից և «միջազգային ձախ ուժերից» պաշտպանելու կարգախոսի ներքո[485]:

---

[483] K. Salibi, Cross Roads to Civil War: Lebanon 1958-1976, p. 108.
[484] Նույն տեղում:
[485] Ethnicity, Pluralism and the State in the Middle East, ed. by Milton J. Esman & Itamar Rabinovich, Cornell University Press, 1986, pp. 164-165.

«Ազգային ճակատում» համախմբված ձախերը հավանություն չէին տալիս ավանդական իսլամադավան ղեկավարների պահպանվող կրոնադավանական համակարգի շրջանակներում հակամարտությունը կարգավորելու կոչերին: Ձախերը շեշտում էին, որ այդ համակարգը սպառել է իրեն և չի արտացոլում լիբանանյան համայնքների միջև ստեղծված ուժերի նոր հարաբերակցությունը: 1975թ. օգոստոսին «Ազգային ճակատը» ներկայացրեց «քաղաքական համակարգի բարեփոխումների անցումային ծրագիրը», որում շեշտվում էր կրոնադավանական համակարգի վերացման անհրաժեշտությունը[486]: Այն ուղղված էր Լիբանանում այնպիսի քաղաքական համակարգի ստեղծմանը, որը կհամապատասխաներ բնակչության մեծամասնության՝ իսլամադավանների շահերին և կբացառեր զինված հակամարտությունների առաջացումը:

Սակայն վերոնշյալ ծրագիրը մեժեցին աջ ուժերի ղեկավարությունն ու իսլամադավան ավանդական ղեկավար շրջանակները: Հնչպես քրիստոնեական, այնպես էլ իսլամադավան վերնախավը երկյուղում էր կորցնել իր իշխանությունն ու այն առավելությունները, որ նրանց ընձեռում էր կրոնադավանական համակարգը:

1975թ. օգոստոսի վերջին բախումները կրկին ակտիվացան Լիբանանում: Մարտերն ընթանում էին Զահլեում և Տրիպոլիում: Շուտով բախումներ սկսվեցին նաև Բեյրութում: Պատահական չէր, որ բախումների նոր բռնկումը համընկավ ԱՄՆ-ի միջնորդությամբ Եգիպտոսի և Իսրայելի միջև 1975թ. սեպտեմբերի 4-ին Սինայ 2 համաձայնագրի ստորագրման հետ[487]: Դամասկոսն ու ՊԱԿ-ը դատապարտեցին այդ համաձայնագիրը և հայտարարեցին, որ բոյկոտում են եգիպտական իշխանություններին, իսկ Սիրիան ակտիվացրեց Լիբանանում զինված հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված իր ջանքերը:

Աբդ Ալ-Հալիմ Խադդամի նոր միջնորդական առաքելության արդյունքում 1975թ. սեպտեմբերին հայտարարվեց «Ազգային երկ-

---

[486] K. Salibi, Cross Roads to Civil War: Lebanon 1958-1976, p. 121.
[487] Ch. Smith, Palestine and the Arab-Israeli Conflict, San Diego State University, 1990, p. 250.

խոսության հանձնաժողովի» ստեղծման մասին, որում ներկայացված էին լիբանանյան հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերը[488]: ՊԱԿ-ի ղեկավարությունն իր հերթին Ռաշիդ Քարամեին ուղարկեց հուշագիր, ուր հաստատեց Լիբանանի ներքին գործերին չմիջամտելու իր դիրքորոշումը: Սակայն դա չհանգեցրեց իրավիճակի կայունացմանը: Այս անգամ ևս աջերը ձախողեցին «Ազգային երկխոսության հանձնաժողովի» շրջանակներում քաղաքական բարեփոխումների քննարկումը և ընդլայնեցին ռազմական գործողությունների շրջանակը:

Դեկտեմբերի սկզբին Լիբանանում իրավիճակը կրկին կտրուկ սրվեց: Անհայտ անձինք սպանեցին «Քաթաիբ» կուսակցության 4 անդամ, որից հետո դեկտեմբերի 6-ին փաղանգավորների զինված խմբավորումները Բեյրութի իրենց վերահսկողության տակ գտնվող շրջաններում հարձակումներ իրականացրին իսլամադավան խաղաղ բնակչության նկատմամբ: Այդ «սև շաբաթվա» զոհ դարձան 100 խաղաղ բնակիչներ: Սկսվեց բախումների նոր փուլ, որի ընթացքում ձախերի զինված խմբավորումներն աջերի ջոկատներին դուրս մղեցին մայրաքաղաքի ռազմավարական նշանակություն ունեցող «մեծ հյուրանոցների» շրջանից: Ի պատասխան՝ լիբանանյան աջերը մի քանի անգամ հարձակվեցին արևելյան Բեյրութի շիական թաղամասերի վրա: Մասնավորապես 1975թ. դեկտեմբերի վերջին լիբանանյան աջ ուժերի զինված խմբավորումները հարձակում իրականացրին Հարաթ ալ-ջաուարինա շիական թաղամասի նկատմամբ[489]: 1976թ. հունվարի սկզբին աջերը լայն հարձակում ձեռնարկեցին նաև Մասլուհ և Կարանտինա շիական չքավոր թաղամասերի նկատմամբ: Շրջափակման ենթարկվեցին նաև պաղեստինյան փախստականների Թել-Զաաթար և Ջիսր ալ-բաշա ճամբարները[490]:

Ի պատասխան՝ ձախերն ու պաղեստինցիները գրավեցին Բեյրութից հարավ ընկած և «Ազգային լիբերալ» կուսակցության զին-

---

[488] K. Salibi, Cross Roads to Civil War: Lebanon 1958-1976, p. 129.
[489] Shi'ism, Resistance and Revolution, ed. by Martin Kramer, Manshell Publishing Limited, 1992, p. 207.
[490] Նույն տեղում:

ված ջոկատների վերահսկողության տակ գտնվող Դամուր բնակավայրը: Դաժան մարտեր էին ընթանում նաև Բեյրութում և Զահլեի շրջանում[491]: Իրավիճակի սրումն էլ ավելի խորացրեց կրոնադավանական հակասությունները: Հազարավոր լիբանանցի քրիստոնյաներ և իսլամադավաններ ստիպված էին լքել կրոնական տեսանկյուններ

խումներն ակտիվորեն շարունակվում էին: Հունվարի 22-ին Բեյրութ ժամանած Աբդ Ալ-Հալիմ Խադդամի միջնորդությամբ կնքվեց հերթական 24-րդ զինադադարը: Իրավիճակի կայունացմանը հետևելու նպատակով ստեղծվեց լիբանանա-սիրիա-պաղեստինյան գերագույն ռազմական հանձնախումբ[493]: Դամասկոսի միջնորդությունը, որ ուղղված էր լիբանանյան հակամարտության կարգավորմանը, համաձայնեցված էր Բեյրութի իշխանությունների հետ և ստացել էր բոլոր շահագրգիռ կողմերի հավանությունը:

Ի տարբերություն մինչ այդ կնքված համաձայնագրերի՝ հունվարի 22-ի զինադադարի մասին համաձայնությունը կրում էր ոչ միայն ռազմական, այլ նաև քաղաքական բնույթ: Նախագահ Ֆրանժիեն և վարչապետ Ռաշիդ Քարամեն Սիրիայի հետ համաձայնեցված մշակել էին երկրում քաղաքական բարեփոխումների ծրագիր, որը հրապարակվեց 1976թ. փետրվարի 14-ին և ստացավ «սահմանադրական փաստաթուղթ» անվանումը[494]: Նրանում մասնավորապես նախատեսվում էր. 1. խորհրդարանում և պետական բարձր պաշտոններում քրիստոնյաների և իսլամադավանների հավասար ներկայացուցչություն. 2. սոցիալ-տնտեսական հարցերով զբաղվող հանձնաժողովի ստեղծում, որը պետք է զբաղվեր երկրի հետամնաց շրջանների զարգացման ծրագրավորմամբ. 3. 1969թ. Կահիրեի համաձայնագրի հիման վրա լիբանանապաղեստինյան հարաբերությունների կարգավորում. 4. երկրի վարչապետի լիազորությունների ընդլայնում, որին պետք է ընտրեր խորհրդարանը, այլ ոչ թե նշանակեր նախագահը[495]: Զուգահեռաբար վերահաստատվում էր «Ազգային դաշինքով» սահմանված այն դրույթը, որի համաձայն երկրի նախագահի պաշտոնը զբաղեցնելու էին մարոնի, վարչապետինը՝ սուննի, իսկ ազգային ժողովի նախագահինը՝ շիա համայնքների ներկայացուցիչները:

---

[493] K. Salibi, Cross Roads to Civil War: Lebanon 1958-1976, p. 150.
[494] M. Hudson, The Lebanese Crisis, Journal of Palestine Studies, Vol. 3-4, Spring, 1976, p.243.
[495] Նույն տեղում:

Սա փոխզիջումային տարբերակով հակամարտությունը կարգավորելու փորձ էր: Մարոնիական վերնախավը հրաժարվելու էր որոշ առավելություններից՝ փոխարենը ստանալով երաշխիքներ, որ երկրի նախագահի պաշտոնը պատկանելու էր մարոնի համայնքին: Սակայն այս ծրագրի իրականացումը ևս ձախողվեց:

1976թ. հունվարի 31-ին աջ ուժերը հայտարարեցին «Ազատության և մարդու ճակատի» կազմավորման մասին, որը «հետագա պայքար պետք է մղեր Լիբանանում կոմունիզմի և պաղեստինյան սպառնալիքի» դեմ[496]: Շուտով այդ միավորումն անվանվեց «Լիբանանյան ճակատ»:

Լիբանանում ուժերի բևեռացման գործընթացն ընդգրկեց նաև բանակը, որը 1976թ. հունվարին մասնատվեց քրիստոնեական և մուսուլմանական մասերի:

Լիբանանյան բանակի հրամանատարության աջերին աջակցություն ցույց տալուն ի պատասխան՝ Բեքաայի հովտում լեյտենանտ Ահմադ Խատիբի գլխավորությամբ մի քանի զորամիավորումներ հայտարարեցին բանակի կազմից իրենց դուրս գալու մասին[497]: Վերջինս հռչակեց «Արաբական Լիբանանի բանակի» կազմավորման մասին, որին իրենց աջակցությունը հայտնեցին ձախերն ու ՊԱԿ-ը: Բանակի քրիստոնեական հատվածն իր հերթին անցավ աջերի կողմը: Միայն առանձին զորամիավորումներ դրսևորեցին չեզոքություն:

Բանակի պառակտումն էականորեն ամրապնդեց ձախերի դիրքերը: Բանակի զգալի մասը՝ հիմնականում իսլամադավան շարքային զինվորները, համագործակցում էին ձախերի հետ: Ստեղծված իրավիճակում «Ազգային ճակատը» պահանջում էր կրոնադավանական համակարգի վերացում, ինչը դուրս էր «սահմանադրական փաստաթղթի» շրջանակներից: Վերոշյալ հարցադրմանը կողմնակից էին նաև ձախերին հարող զինվորական շրջանակները՝ Բեյրութի կայազորի հրամանատար գեներալ Ազիզ Ահդաբի գլխավորությամբ: Վերջինս 1976թ. մարտի 11-ին իրեն

---

[496] E. Picard, Lebanon. A Shattered Country. Myths and Realities of the Wars in Lebanon, New York, London, 1993, p. 110.

[497] Новейшая история арабских стран Азии, с. 137.

հռչակեց «ռազմական մարզպետ» և պահանջեց նախագահ Սուլեյման Ֆրանջիեի հրաժարականը[498]: Այդ պահանջին իրենց աջակցությունը հայտնեցին ձախ ուժերն ու խորհրդարանի պատգամավորմների 2/3-ը:

Իրենց հենքին աջ ուժերն էլ համախմբվեցին Սուլեյման Ֆրանջիեի շուրջը: Նախագահը հայտարարեց, որ չի պատրաստվում թողնել իր պաշտոնը մինչև նախագահական լիազորությունների ավարտը՝ 1976թ. սեպտեմբերի 22-ը: Բեյրութում, նրա արվարձաններում, Լեռնային Լիբանանում և երկրի հյուսիսում դաժան մարտերը վերսկսվեցին: Լեռնային շրջաններում ձախերի զինված խմբավորումները գրավեցին ռազմական մի քանի դիրքեր: Այդ փուլում «Ազգային ճակատը» վերահսկում էր երկրի տարածքի 80%-ը[499]: Սակայն «Ազգային ճակատի», ՊԱԿ-ի և Սիրիայի միջև լուրջ տարաձայնություններ ի հայտ եկան հետագա ռազմավարության մշակման հարցում:

Լիբանանում քաղաքական պայքարի կարևորագույն հարց դարձավ նոր նախագահի ընտրարշավը: Ապրիլի 10-ին խորհրդարանն ընդունեց հատուկ որոշում՝ սահմանադրության մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ, ինչը հնարավորություն կտար անցկացնել նախագահի արտահերթ ընտրություններ: 1976թ. մայիսի 8-ին նախագահ ընտրվեց Իլիաս Սարգիսը[500]: «Ազգային ճակատը» պաշտպանում էր Ռայմոն Էդդեի թեկնածությունը, ով քննադատում էր փաղանգավորների՝ երկրում աջ ուժերի մենիշխանություն հաստատելու փորձերը: Իլիաս Սարգիսը չկարողացավ անմիջապես անցնել իր պարտականությունների կատարմանը, քանի որ Ֆրանջիեն հրաժարվեց ժամկետից շուտ թողնել իր պաշտոնը:

Մայիսի երկրորդ կեսին ակտիվացան արտաքին ուժերի լիբանանյան հակամարտության կարգավորմանը միտված ջանքերը: Բեյրութ այցելեցին Վաշինգտոնի և Փարիզի բանագնացները:

---

[498] Նույն տեղում:

[499] The Times, Guide to the Middle East: The Arab World and Its Neighbours, pp. 150-151.

[500] E. Picard, նշվ.աշխ., էջ 111:

Ֆրանսիայի նախագահ Ժիսկար Դ'Էստենն ուղղակիորեն հայտարարեց, որ իր երկիրը պատրաստ է զորքեր ուղարկել Լիբանան[501]: ՏԱՍՍ-ի հունիսի 10-ի հայտարարության մեջ նշվում էր, որ ԽՍՀՄ-ը չի կարող անտարբերություն դրսևորել Լիբանանում ընթացող զարգացումների նկատմամբ, քանի որ Մերձավոր Արևելքի այդ շրջանն ավելի մոտ է իր (ԽՍՀՄ-ի-Լ.Հ.) սահմաններին, քան այն երկրների, որոնք փորձում են միջամտել Լիբանանի ներքին գործերին[502]:

Նշենք, որ քաղաքացիական պատերազմի բռնկումը ծանր երկընտրանքի առջև կանգնեցրեց նաև լիբանանահայ համայնքին: Կամ այն պետք է մասնակցեր քաղաքացիական պատերազմին, դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով, կամ էլ պետք է գրավեր ավելի ճկուն դիրքորոշում և մասնակցություն չունենար երկրում ընթացող զինված հակամարտության ու չնպաստեր լիբանանյան պետության պառակտմանն ու մասնատմանը: Հաշվի առնելով, որ լիբանանահայերի մասնակցությունը քաղաքացիական պատերազմին կարող էր նպաստել հակամարտության մեջ ներգրավված շրջանակների ընդլայնմանը, հայ համայնքի երկփեղկմանը, քանի որ այն միատարր չէր, հայկական համայնքը արտահայտվեց քաղաքացիական պատերազմին մասնակցելու դեմ և որպես պաշտոնական դիրքորոշում հռչակեց դրական չեզոքության քաղաքականությունը[503]:

---

[501] Новейшая история арабских стран Азии, с. 137.
[502] ТАСС, 10.06.1976.
[503] Այս մասին մանրամասն տե՛ս Մ. Էպլիղաթեան, Գաղթականութիւն խորհրդարան..., հ. բ, Հալէպ, 2005, էջ 28-49, Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. III, Երևան, 2006, էջ 646-650:

2. Քաղաքացիական պատերազմի երկրորդ փուլը (1976թ. հունիսից մինչև 1978թ. փետրվար): Սիրիական վերահսկողության հաստատումը Լիբանանում

Լիբանանում շարունակվող քաղաքացիական պատերազմի պայմաններում Սիրիան 1976թ. հունիսի 1-ին երկրի տարածք մտցրեց զորամիավորումներ և պահանջեց կրակի անմիջապես դադարեցում[504]:


Նշենք, որ Սիրիան Լիբանանի միասնականության պահպանման նպատակով որդեգրեց «ոչ հաղթող և ոչ պարտվող» կարգավորման տարբերակը[505]: Այսինքն՝ Սիրիային ձեռնտու չէր ոչ՛ Լիբանանի ձախացումը և պաղեստինյան ուժերի հաղթանակը, ոչ՛ էլ ամբողջությամբ քրիստոնյա մարոնիների ղեկավարած Լիբանանի գոյությունը: Փաստենք, որ Սիրիան բավական զգուշավոր դիրքորոշում էր որդեգրել նաև Լիբանանում պաղեստինցիների ներկայության ու նրանց աճող ազդեցության նկատմամբ: Այն գտնում էր, որ պաղեստինցիների ազդեցության ուժեղացումը կարող էր վտանգել Լիբանանում բազմաթիվ համայնքների խաղաղ գոյակցությունը և կրոնադավանական համակարգով հաստատված փխրուն հավասարակշռությունը, բացասական արձագանք կարող էր ունենալ Իսրայելում և սիրիահրայելյան նոր բախման պատճառ դառնալ, ինչը տվյալ պահին ձեռնտու և ցանկալի չէր իր համար[506]: Եվ, վերջապես, ազգայնական, հեղափոխական Լիբանանը, քաղաքական և գաղափարական առումով ավելի ձախ, քան բասասական Սիրիան, չէր կարող ընդունվել Դամասկոսի կողմից, որի համար «մրցակից բասասական Իրաքը միանգամայն բավական էր»[507]: Նշենք, որ Դամասկոսն ընդհանուր առմամբ համակարծիք էր պաղեստինցիների հետ, սակայն նա վերջիններիս հիմնականում դիտում էր որպես կարևոր և գործ-

---

[504] E. Picard, La Politique de la Syrie au Liban. Les Développements Incontrôlables d'une Stratégie Ambitieuse, Maghreb Machrek, Paris, 1987, p. 8.
[505] Ռ. Կարապետյան, Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996թթ.), Երևան, 2000, էջ 71:
[506] Նույն տեղում:
[507] "Le Monde", 14 April, 1976.

ԼԻԲԱՆԱՆԱՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԵՆԱԿԵՏԵՐԸ*

(1988թ. տվյալների համաձայն)



* Աղբյուրը՝ E. Picard, Lebanon A Shattered Country. Myths and Realities of the Wars in Lebanon, New York, 1993, p. 129.

նական միջոց տարածաշրջանում իր սեփական շահերի իրականացման համար: Ուստի պաղեստինցիներին արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ էր, որպեսզի նրանք կառավարելի լինեին տվյալ դեպքում Լիբանանում[508]:

Իրադարձությունների այդպիսի զարգացումը բարդացրեց ճակատները և պաղեստինցիների դրությունը, քանի որ սիրիական զորքերը մտան հենց այդ ուժերի վերահսկողության տակ գտնվող գոտի: Բախումներն ընդգրկում էին արևմտյան Բեյրութը, մայրաքաղաքից հարավ ափամերձ շրջանը՝ ներառյալ Սայդան և Տիրը, Լեռնային Լիբանանի մի մասը և մի քանի շրջաններ՝ երկրի հյուսիսում և հարավում: Բեքաայի հովիտը և Տրիպոլիի ու Սայդայի ծայրամասերը հայտնվեցին սիրիական բանակի վերահսկողության տակ[509]:

ՊԱԿ-ի ղեկավարությունը դիմեց ԱՊԼ-ին, խնդրելով հրավիրել արաբական պետությունների արտաքին գործերի նախարարների արտահերթ նստաշրջան, որտեղ քննարկվելու էր Լիբանանում ստեղծված իրավիճակը: Հունիսի 8-ին Կահիրեում հավաքված նախարարները որոշում ընդունեցին կրակի դադարեցման, ինչպես նաև Լիբանան Միջարաբական անվտանգության ուժերի (ՄԱՈՒ) խորհրդանշական զորամիավորումներ կազմավորելու և դրանք Լիբանան գործուղելու վերաբերյալ, որոնք կոչված էին նպաստել երկրում իրավիճակի շուտափույթ կայունացմանը: ԱՊԼ գլխավոր քարտուղար Մահմուդ Ռիադի գլխավորությամբ հանձնախումբն ստանձնեց լիբանանյան հակամարտության քաղաքական կարգավորմանը միտված ծրագրի մշակումը:

Մահմուդ Ռիադի և Լիբիայի վարչապետ Աբդ Ալ-Սալամ Ջելլուդի միջնորդական ջանքերը հնարավորություն տվեցին ՄԱՈՒ-ի Լիբանանում տեղակայման հարցում ստանալ բոլոր շահագրգիռ կողմերի համաձայնությունը: Սակայն աջերի ղեկավարությունը խախտեց կրակի դադարեցման մասին կնքված համաձայնագիրը և վերսկսեց ճախերի և պաղեստինյան զինված խմբավորումների հետ բախումները: Հունիսի 16-ին նախագահ Ֆրանժիեն Քամիլ Շամունի նախաձեռնությամբ հանդիպում տեղի ունեցավ Սահմուդ Ռիադի, Լիբիայի վարչապետ Աբդ Ալ-Սալամ Ջելլուդիի և Լիբանանի վարչապետ Ռաշիդ Քարամեի միջև: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Լիբանանում ստեղծված իրավիճակը, ինչպես նաև ՄԱՈՒ-ի տեղակայման հարցը: Հանդիպման արդյունքում ընդունվեց համատեղ հայտարարություն, որում նշվում էր, որ Լիբանանում ստեղծված իրավիճակը վտանգում է ոչ միայն Լիբանանի, այլև ամբողջ արաբական աշխարհի անվտանգությունը: Հայտարարության մեջ նշվում էր, որ Լիբանանում ստեղծված իրավիճակը պահանջում է ոչ միայն ռազմական, այլև քաղաքական լուծում

հունիսի 21-ին Լիբանան ժամանեցին ՄԱՈՒ-ի առաջին ստորաբաժանումները՝ մոտ 100 մարդ: Նույն օրն աջերի զինված խմբավորումները վերսկսեցին բախումները Բեյրութում և հարձակում իրականացրին պաղեստինյան Թել-Զաաթար և Ջիսր ալ-բաշա ճամբարների վրա: Հունիսի սկզբին ընկավ Ջիսր ալ-բաշա ճամբարը, իսկ օգոստոսի 12-ին, դաժան մարտերից հետո, գրավվեց նաև Թել-Զաաթարը[510]:

Աջերի զինված խմբավորումներն ուժեղացրեցին հակապաղեստինյան արշավը՝ կրակի դադարեցման համար առաջնահերթ պայման առաջ քաշելով 1969թ. Կահիրեի համաձայնագրի վերանայումը[511]:

1976թ. օգոստոսին աջերի զինված ուժերը մտան նաև շիական Նաբաա արվարձանը[512]: Արդյունքում հազարավոր շիա բնակիչներ ստիպված եղան լքել իրենց բնակարանները:

Օգոստոսի 23-ին Կահիրեում տեղի ունեցավ ԱՊԼ խորհրդի արտահերթ նստաշրջան, որում որոշումներ ընդունվեցին ՄԱՈՒ-ի ձևավորման ավարտման մասին[513]: Միաժամանակ Լիբանանում ԱՊԼ հատուկ ներկայացուցիչ Հասան Սաբրի Ալ-Հոլին հակամարտող խմբավորումների ղեկավարներին առաջարկեց «խաղաղության ծրագիր», որը նախատեսում էր իրավիճակի կայունացում՝ եռամսյա ժամանակացույցով[514]:

Սեպտեմբերի առաջին կեսին սիրիական ղեկավարությունն ակտիվ խորհրդակցություններ էր անցկացնում քաղաքական տարբեր ուժերի և Լիբանանի տարբեր կրոնական համայնքների ղեկավարների հետ, որոնց ընթացքում քննարկվում էին Էլիաս Սարգիսի՝ նախագահի պաշտոնը ստանձնելուն առնչվող հարցերն ու հակամարտության կարգավորմանն ուղղված հետագա քայլերը:

---

[510] E. Picard, նշվ.աշխ., էջ 110-111:
[511] Նույն տեղում:
[512] H. Cobban, The Grouth of Shi'i Power in Lebanon and Its Implications for the Future, Shi'ism and Social Protest, London, 1986, p. 143.
[513] E. Picard, La Politique de la Syrie au Liban. Les Développements Incontrôlables d'une Stratégie Ambitieuse, p. 6.
[514] Նույն տեղում:

1976թ. սեպտեմբերի 23-ին Իլիաս Սարգիսը պաշտոնապես ստանձնեց նախագահի պաշտոնը: Նույն օրը ՊԱԿ-ի գործադիր կոմիտեն հայտարարեց կրակի միակողմանիորեն դադարեցման մասին՝ նպատակ ունենալով օժանդակել նոր նախագահին երկրում խաղաղության հաստատման գործում:

Սակայն աջերը հայտարարեցին, որ չեն դադարեցնի ռազմական գործողությունները այնքան ժամանակ, մինչև երկրից ամբողջությամբ դուրս բերվեն պաղեստինյան զինված խմբավորումները, «Ազգային ճակատը» զինաթափվի: Միաժամանակ սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի առաջին կեսին բախումներ տեղի ունեցան մի կողմից սիրիական զորքերի, իսկ մյուս կողմից ձախերի և պաղեստինյան զինված խմբավորումների միջև:

Ինչ վերաբերում է Սիրիայի՝ Լիբանան ներխուժման նկատմամբ Իսրայելի դիրքորոշմանը, ապա Իսրայելը, հետևելով ԱՄՆ-ի խորհրդին, դեմ չէր, քանի դեռ Սիրիայի գործողությունները Լիբանանում կրում էին կայունացնող բնույթ, սաստում էին պաղեստինցիների և ուղղված չէին Իսրայելի դեմ: Պ. Սիլը նույնիսկ նշում է գոյություն ունեցող եռակողմ ԱՄՆ-Սիրիա-Իսրայել «կարմիր գծի» համաձայնագրի մասին, ըստ որի Իսրայելը համաձայնվել էր Լիբանանում սիրիական ներկայության հետ մինչև հյուսիսում անցնող Սիդոն-Ջիզզին գիծը[515]:

Ներխուժումից կարճ ժամանակ անց Լիբանանի մեծ մասը հայտնվեց սիրիական հսկողության տակ, սակայն երկրում բախումները դեռ շարունակվում էին: Արաբական պետությունների վերաբերմունքը սիրիական ներխուժման նկատմամբ միանշանակ չէր և նույնիսկ դադապարտվեց արաբական երկրների, մասնավորապես Եգիպտոսի կողմից, որը, միանալով Իրաքին, Լիբիային և ՊԱԿ-ին, փորձեց հակազդել սիրիական գործողություններին[516]:

1976թ. հոկտեմբերի 18-ին Ռիադում կայացավ արաբական երկրների ղեկավարների համաժողով, որին մասնակցում էին Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Քուվեյ-

---

[515] P. Seale, նշվ. աշխ., էջ 279:

[516] Հունիսի 5-ին Սիրիան և Եգիպտոսը խզեցին իրենց դիվանագիտական կապերը:

թի նախագահներն ու ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթը: Համաժողովի ընթացքում քննարկվեցին Լիբանանում ստեղծված իրավիճակն ու կրակի դադարեցման հնարավոր տարբերակները[517]: Այստեղ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադին հաջողվեց որոշակիորեն բարելավել սիրիաեգիպտական հարաբերությունները: Մի քանի օր անց՝ հոկտեմբերի 20-ից 26-ը, Կահիրեում տեղի ունեցավ արաբական երկրների ղեկավարների հաջորդ հանդիպումը, որի ընթացքում վավերացվեցին Ռիադում ընդունված որոշումները, այդ թվում ամենակարևորը. Լիբանանում կարգն ու օրինականությունը վերականգնելու նպատակով որոշվեց ընդլայնել ՄԱՈՒ-ի կազմը, որոնք բաղկացած էին հիմնականում սիրիական ուժերից: Միջարաբական ուժերի ընդհանուր թիվը կազմում էր 30.000, այդ թվում սիրիական զորքեր՝ տարբեր տվյալներով 20-ից 27.000[518]: Այդ ուժերի մեջ մտան նաև Սաուդյան Արաբիայի, Լիբիայի, Սուդանի և այլ երկրների զորամիավորումները: Այդ ուժերը դրվեցին Լիբանանի նախագահ Իլիաս Սարգիսի հրամանատարության տակ[519]: Կարգավորման ծրագրի համաձայն՝ մինչև նոյեմբերի 21-ը ՄՉՈՒ-ը պետք է վերահսկողություն հաստատեին Բեյրութի և Լիբանանի այլ շրջանների բոլոր թեժ կետերի նկատմամբ:

Այսպիսով՝ Սիրիան վերածվեց de-facto և de-jure Լիբանանում կայունություն ապահովող միակ գործնական և օրինական ուժի: Ռիադում և Կահիրեում տեղի ունեցած արաբական երկրների ղեկավարների համաժողովները թեև նպաստեցին Լիբանանում ռազմական գործողությունների ժամանակավոր դադարեցմանը, սակայն լուրջ ներդրում չունեցան խնդրի արմատական կարգավարման գործում: Ինչպես նշում է Ե. Դմիտրիևը, Ռիադի համաձայնագրում աչքի է ընկնում «ճշգրիտ դրույթների բացակայությունն այն մասին, թե

---

[517] Շ.Կարամանուկյան, նշվ. աշխ., էջ 164-165:

[518] Новейшая история арабских стран Азии, с. 139. 1976թ. հոկտեմբերից ՄԱՈՒ-ը կոչվեցին Միջարաբական զսպման ուժեր (ՄՉՈՒ):

[519] Այդ պահից սկսած մինչև 1982թ. իսրայելական ներխուժումը ԱՊԼ-ի խորհուրդը 6 ամիսը մեկ երկարացնում էր ՄՉՈՒ-ի մանդատը:

ինչպիսի միջոցներ են օգտագործվելու ներլիբանանյան խնդիրների լուծման համար»[520]:

1976թ. տարբեր տվյալների համաձայն՝ զինված հակամարտության արդյունքում Լիբանանում զոհվածների թիվն արդեն կազմում էր 44.000-ից 50.000, վիրավորներինը՝ 60.000[521]: Հայ համայնքում զոհերի թիվը 300 էր, իսկ վիրավորները՝ 1886[522]:

1977թ. որոշակիորեն վերականգնվեց Սիրիայի, ՊԱԿ-ի և «Ազգային ճակատի» միջև համագործակցությունը: Սակայն ձախ ուժերն ու պաղեստինցիների զինված խմբավորումներն ունեին լուրջ խնդիրներ, որոնք էլ ավելի սրվեցին 1977թ. մարտի 16-ին Քամալ Ջումբլաթի սպանությունից հետո[523]:

1976թ. վերջին ձևավորվեց նոր կառավարություն Սելիմ Հոսի գլխավորությամբ, ով քայլեր ձեռնարկեց ավերված ձեռնարկությունների ու ենթակառուցվածքները վերականգնելու ուղղությամբ: Գործարար և քաղաքական կյանքն աստիճանաբար վերականգնվում էր, քայլեր էին ձեռնարկվում հակամարտության խաղաղ կարգավորման համար: Սակայն աջ ուժերը քաղաքական կարգավարման համար շարունակում էին նախապայման համարել Կահիրեի համաձայնագրի վերանայումը[524]:

Օգտագործելով երկրի հարավում լարված իրավիճակը՝ աջերը ձգտում էին Իլիաս Սարգիսին ստիպել երկրում պաղեստինյան զինված խմբավորումների ներկայությունը հայտարարել անօրինական:

Հակառակ «Լիբանանյան ճակատի» ճնշումներին, որ պահանջում էր երկրում հաստատված պաղեստինցիների վերաբաշխում այլ արաբական երկրների միջև, կառավարությունը՝ Սիրիայի աջակցությամբ, անցավ ՊԱԿ-ի հետ հարաբերությունների բարելավմանը: 1977թ. հուլիսին Շթորայում սկսեց աշխատել լիբանանա-սիրիական հանձնաժողովը, որի շրջանակներում Կահիրեի

---

[520] Е. Дмитриев, Палестинский узел, с. 121.
[521] Մ. Էպլիղաթեան, նշվ. աշխ., հ. բ, էջ 23:
[522] Նույն տեղում:
[523] Ինչպես արդեն նշել ենք, «Ազգային ճակատի» նոր նախագահ դարձավ սպանվածի որդին՝ Վալիդ Ջումբլաթը:
[524] Новейшая история арабских стран Азии, с. 140.

համաձայնագրի հիմքի վրա վիճելի հարցերի շուրջ ձեռք բերվեցին որոշ պայմանավորվածություններ[525]:

Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա Լիբանանի նկատմամբ նրա հետաքրքրությունը կտրուկ ավելացավ, երբ 1977թ. մայիսին Իսրայելում իշխանության եկավ «Լիկուդ» աջ կուսակցությունը:

Դեռևս 1977թ. սկզբին իսրայելցիները Հարավային Լիբանանի քրիստոնեական մի շարք բնակավայրերում ստեղծեցին ռազմահենաղաշտեր և դրանք փոխանցեցին «Լիբանանի հարավի բանակին» (ԼՀԲ)՝ լիբանանյան բանակի նախկին մայոր Սաադ Հադդադի գլխավորությամբ[526]: 1977թ. ընթացքում Թել-Ավիվը մի քանի անգամ ռազմական գործողություններ ձեռնարկեց պաղեստինյան զինված խմբավորումների դեմ Լիբանանի հարավում: Իսրայելն ակտիվորեն նախապատրաստվում էր Լիբանան իր առաջին լայնածավալ ներխուժմանը:

3. Քաղաքացիական պատերազմի երրորդ փուլը (1978թ. մարտից մինչև 1979թ.): Իսրայելի առաջին ներխուժումը Լիբանան

1978թ. սկզբին ողջ Լիբանանը, այդ թվում և Բեյրութը շարունակում էր բաժանված լինել երկու մասի: Լիբանանյան պետական մարմինները բացարձակապես չէին վերահսկում երկրում տեղի ունեցող իրադարձությունները:

Թեև Լիբանանի հարավում գտնվող պաղեստինյան ջոկատներին հարաբերականորեն զսպում էին ՄԶՈՒ-ը, այնուամենայնիվ, նրանք երբեմն հարձակումներ էին իրականացնում Իսրայելի հյուսիսային բնակավայրերի վրա: 1978թ. մարտի 11-ին պաղեստինյան ջոկատներից մեկի նմանատիպ հարձակման հետևանքով մեծ թվով իսրայելցիներ զոհվեցին: Ի պատասխան՝ մարտի 15-ին «Լիտանի»

---

[525] Նույն տեղում:

[526] W. Khalidi, Conflict and Violence in Lebanon: Confrontation in the Middle East, Cambridge, 1979, p. 128.

ռազմական գործողության շրջանակներում իսրայելյան 30.000 բանակը ներխուժեց Հարավային Լիբանան և գրավեց մինչև Լիտանի գետն ընկած շրջանները՝ բացառությամբ Տիր քաղաքի (երկրի ողջ տարածքի 1/10-րդ մասը)[527]: Արդյունքում տարբեր տվյալներով կար 1.500-2.000 զոհ[528]:

Սիրիան անմիջապես արձագանքեց այս ներխուժմանը և ՄԶՈՒ-ի տրամադրության տակ դրեց երկրի օդային ուժերը, իսկ Ասադը հայտարարեց, որ «Սիրիան մշտապես կանգնած կմնա պաղեստինյան հեղափոխության կողքին»՝ այն համարելով իր «ազգային պարտքի մի մասը»[529]: 1978թ. սկսած՝ սիրիական զորքերը Լիբանանում որոշակի հակասություններ ունեին երկրի մարոնի ղեկավարության հետ, որոնք, համագործակցելով և օժանդակություն ստանալով Իսրայելից, ուղղակիորեն սկսել էին պայքարել Լիբանանում սիրիական ներկայության դեմ: Այդուհանդերձ, սիրիական ուժերը Լիբանանում հարաբերական հաջողությամբ կատարում էին իրենց հիմնական խնդիրը՝ հակազդել իսրայելյան հարձակումներին և կանխել Լիբանանի մասնատումը:

Իսրայելը Լիբանան իր ներխուժումն իրականացրեց Վաշինգտոնի իմացությամբ: Իսրայելցի մեկնաբան Ա. Կապելյուկը նշում էր, որ «այդ հարձակումն իրականացվեց այն բանից հետո, երբ ԱՄՆ-ն հասկացրեց, որ դեմ չէր լինի այդ ներխուժմանը, եթե այն դուրս չգա «թույլատրված սահմաններից»[530]:

Լիբանանի և այլ արաբական պետությունների պահանջով հրավիրվեց ՄԱԿ-ի ԱԽ նիստ, որը 1978թ. մարտի 19-ին ընդունեց թիվ 425 որոշումը՝ Լիբանանում կրակի դադարեցման և իսրայելյան զորքերի անմիջապես դուրս բերման մասին: Որոշվեց կազմավորել նաև ՄԱԿ-ի ժամանակավոր ուժեր՝ 4000 մարդ, որոնք պետք է մեկնեին Լիբանան: Այդուհանդերձ, Իսրայելի զորքերը

---

[527] Ближний Восток и Международное право, с. 190.

[528] Այս մասին մանրամասն տե՛ս Civil War in Lebanon, The Bureau of Public Affairs, U.S. Department of State, p. 323.

[529] ألبعث, «Ալ-բաաս», Դամասկոս, 11.03.1978:

[530] Ближний Висток и Международное право, с. 90.

Լիբանանի տարածքը լքեցին միայն 1978թ. հունիսին և սահմանի երկայնքով 10 կմ գոտին փոխանցվեց ոչ թե ՄԱԿ-ի ուժերին, այլ աջ ուժերի փաստացի դաշնակից, լիբանանյան բանակի նախկին մայոր Հադդադին[531]:

Այսպիսով՝ Իսրայելի ղեկավարությունն իրականացրեց իր վաղուց ծրագրած նախագիծը՝ de-facto «անվտանգության գոտու» ստեղծում Լիբանանի տարածքում: 1979թ. ապրիլի 19-ին Հադդադն իր վերահսկողության տակ գտնվող տարածքում (850 քառ. կմ, մոտավորապես 100.000 մարդ բնակչությամբ, որից 40.000-ը քրիստոնյա, իսկ 60.000-ը՝ շիա), հռչակեց «Անկախ Լիբանան» պետությունը: Ողջ զինամթերքը, այդ թվում՝ տանկեր և ծանր հրետանի, մատակարարում էր Իսրայելը: Թել-Ավիվը նույնիսկ վարձատրում էր Հադդադի զինվորներին[532]:

Իսրայելին հաջողվեց նպաստել Հարավային Լիբանանի շիաների և պաղեստինյան զինված խմբավորումների միջև որոշակի հակասությունների առաջացմանը: Պատահական չէ, որ շիաները, որոնք այդ ներխուժման հետևանքով ստիպված էին լքել Հարավային Լիբանանը[533], ստեղծված իրավիճակի համար մեղադրում էին պաղեստինցիներին, որոնք իրենց գործողություններով Իսրայելին դրդում էին պատասխան քայլեր ձեռնարկել Հարավային Լիբանանի դեմ: Այս պայմաններում նույնիսկ համագործակցության որոշակի եզրեր ի հայտ եկան լիբանանյան բանակի նախկին մայոր Սաադ Հադդադի ղեկավարած ԼՀԲ-ի և լիբանանցի շիաների միջև:

---

[531] Civil War in Lebanon, The Bureau of Public Affairs, U.S. Department of State, p. 323, Walid Khalidi, նշվ. աշխ, էջ 128:

[532] Լ. Հարությունյան, Սիրիայի և Իսրայելի գործոնը լիբանանյան ճգնաժամում 1975-1990թթ., «Արևելք», հոդվածների ժողովածու, Երևան, 2001, էջ 71:

[533] 1983թ. ժողովրդական մի զեկույցից տեղեկանում ենք, որ 1978թ. իսրայելյան ներխուժումից 5 տարի անց Հարավային Լիբանանը լքած 141.000 շիա փախստականի կարգավիճակով դեռևս շարունակում էին բնակվել արևմտյան Բեյրութում: Մանրամասն տե՛ս Salim Nasr, Conflit Libanais et Restruction de l'Espace Urbaines de Beyrouth, Politique Urbaines au Machreq et au Maghreb, Lyon, 1985, p. 210.

Փաստենք, որ Հարավային Լիբանանում ՊԱԿ-ի գործողությունների հակահարված հասցնելով՝ իսրայելյան բանակը, այդուհանդերձ, փորձում էր խուսափել սիրիական ուժերի հետ ուղղակի բախումներից: 1978թ. օգոստոսին Իսրայելի վարչապետ Մենահեմ Բեգինը մերժեց նաև սիրիական զորքերին օդային հարված հասցնելու աջ ուժերի խնդրանքը, թեև, միևնույն ժամանակ հայտարարեց, որ Սիրիայի կողմից լիբանանյան աջերի նկատմամբ «ցեղասպանություն» իրականացնելու դեպքում Իսրայելը չի կարող չմիջամտել: Այս գործում էական դեր էին խաղում մարոնիները, որոնք հրահրում էին բախումներ սիրիական ուժերի հետ՝ փորձելով Իսրայելին ներքաշել դրանց մեջ: Ավելի սերտորեն համագործակցելով Թել-Ավիվի հետ՝ 1978թ. «Լիբանանյան ճակատը» ռազմական գործողություններ ծավալեց ՄԶՈՒ-ի կազմում ներգրավված սիրիական զորքերի դեմ[534]: Բախումների առաջին փուլը տեղի ունեցավ փետրվարին, երկրորդը՝ որոշ ընդհատումներով հունիսի 6-ից մինչև հոկտեմբերի սկիզբը: 1978թ. հոկտեմբերի 15-17-ը Լիբանանյան Բեյթ Ալ-Դինում տեղի ունեցավ ՄԶՈՒ-ը ֆինանսավորող արաբական պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդակցությունը, որտեղ ընդունվեցին որոշումներ, որ կոչված էին լիցքաթափել Լիբանանում իրավիճակն ու նպաստել ազգային համաձայնության հաստատմանը:

Նշենք, որ լիբանանյան կառավարությունը բացասաբար էր վերաբերվում 1979թ. մարտի եգիպտահիսրայելյան խաղաղության հաստատմանը: Դեռևս 1978թ. նոյեմբերին Լիբանան-Իսրայել հաճախ այցելում էր Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթը, որի նպատակն էր քննարկել երկրների գագաթաժողովին, որի նպատակն էր քննարկել քեմփդևիդյան համաձայնագրերը: Գագաթաժողովը Ծոցի միապետությունների առաջարկով որոշեց Սադաթին Իսրայելի հետ հարաբերությունների ձայնության գալու հետագա քայլերից ետ պահելու նպատակով Եգիպտոս գործուղել Լիբանանի վարչապետ Սալիմ Հոսին: Սակայն

---

[534] 1978թ. ՄԶՈՒ-ի կազմում մնացել էին միայն սիրիական զորամիավորումները:

Սադաթը հրաժարվեց ընդունել բանագնացին և Հոսի առաքելությունը տապալվեց[535]: 1979թ. մարտին Լիբանանի պատվիրակությունը մասնակցեց նաև արաբական պետությունների արտաքին գործերի, էկոնոմիկայի և ֆինանսների նախարարների բաղդադյան համաժողովին, որտեղ դատապարտվեց Եգիպտոսի նախագահ Սադաթի՝ Իսրայելի հետ մերձեցման քաղաքական ուղեգիծը և որոշում ընդունվեց Եգիպտոսի դեմ համատեղ պատժամիջոցներ կիրառելու մասին[536]:

Թեև լիբանանյան իշխող շրջանակները հանդես էին գալիս պաղեստինյան խնդրի արդարացի լուծման օգտին, սակայն իրականում գնալով ավելի էին հակվում դեպի աջ ուժերը և ձգտում էին լիբանանյան քաղաքական կյանքից «վտարել» պաղեստինյան գործոնը: Դրան էին միտված նաև աջ շրջանակների լիբանանյան խնդիրը մերձավորարևելյան հակամարտության համատեքստից դուրս բերելու և Եգիպտոսի օրինակով նրա անջատողական լուծմանը հասնելու փորձերը:

Լիբանանում պայթունավտանգ իրավիճակի պահպանմանը մեծապես նպաստում էր Իսրայելի Լիբանանի նկատմամբ վարվող քաղաքականությունը: Այդ փուլում Իսրայելին անկասկած ձեռնտու էր ճգնաժամային իրավիճակի պահպանումը, որ հյուծում էր լիբանանյան պետությանն ու զինված հակամարտության մեջ ներգրավված ուժերին՝ շեղելով նրանց ուշադրությունը մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորման գործընթացից: Թել-Ավիվի Լիբանանի նկատմամբ վարվող քաղաքականությունը ստիպում էր ԱԽ-ին երկարացնել ՄԱԿ-ի ժամանակավոր ուժերի Լիբանանում գտնվելու մանդատը:

---

[535] Գ. Գևորգյան, Արաբական աշխարհում Եգիպտոսի մեկուսացման հարցի շուրջ 1970թ. վերջ-1980թ. սկիզբ, Լրաբեր Հասարակական Գիտությունների, N 2 «608» մայիս-օգոստոս, Երևան, 2003, էջ 108:

[536] Новейшая история арабских стран Азии, с. 141.

4. Քաղաքացիական պատերազմի չորրորդ փուլը (1980-1981թթ.): Լիբանանյան աջ ուժերի դիրքերի ամրապնդումը

1980թ. սկզբին Լիբանանում արդեն հինգ տարի շարունակվող զինված հակամարտության պայմաններում Լիբանանի իշխանությունները հերթական անգամ փորձեցին մշակել ճգնաժամը հաղթահարելու նոր ծրագիր, որը ներառում էր հետևյալ սկզբունքները. Լիբանանի կառավարման հիմքում ընկած կրոնադավանանքային համակարգում բարեփոխումների իրականացում, որոնք կնպաստեին իսլամադավանների և քրիստոնյաների իրավունքների հավասարեցմանը, Իսրայելի հետ ցանկացած համագործակցության, այդ թվում նաև վերջինիս հետ խաղաղության համաձայնագրի ստորագրման մերժում, Պաղեստինի արաբ ժողովրդի անկախ պետություն ունենալու օրինական իրավունքի ճանաչում[537]: Թեև հակամարտող ճակատների ղեկավարներն իրենց աջակցությունը հայտնեցին ծրագրին, սակայն այն այդպես էլ կյանքի չկոչվեց, ինչպես մինչ այդ ճգնաժամի քաղաքական կարգավորմանը միտված մի շարք այլ ծրագրեր ևս: Այս անգամ այն գլխավորապես պայմանավորված էր Լիբանանում պաղեստինյան զինված խմբավորումների ներկայության և երկրի ներքաղաքական կյանքում նրանց աճող ազդեցության, ինչպես նաև Իսրայելի դեմ պայքարում պաղեստինցի մարտիկների Լիբանանի հարցում աջ շրջանակներում առկա դժգոհության խորացմամբ[538]:

1980-ականների սկզբին Լիբանանում հակամարտող կողմերի միջև տարածայնությունների սրմանը զուգահեռ հակասությունները ուժեղացան նաև աջ ուժերի ճամակում: Մասնավորապես «Քաթաիբ» կուսակցության զինված ուժերի հրամանատար Բաշիր Ժմայելը փորձում էր նպաստել «Լիբանանյան ճակատի» ներսում փաղանգավորների մենիշխանության հաստատմանը և երկրի քաղաքական կյանքում այդ կուսակցության դերի բարձրացմանը

---

[537] Новейшая история Арабских стран Азии, с. 141.

[538] A. Sharon with D. Chanoff, Warrior: The Autobiography of Ariel Sharon, New York, London, Toronto, Sydney, Tokyo, Singapore, 1990, p. 427.

րացմանը: Բաշիր Ժմայելի քաղաքական ուղեգիծը լիբանանյան ուժերի շրջանում առաջ էր բերում հակասությունների սրում, որ հաճախ վեր էր ածվում նաև զինված պայքարի[539]: 1979-1980թթ. աջ ուժերի շրջանում տարաձայնությունների հերթական սրման արդյունքում արյունալի զինված բախումներ տեղի ունեցան նաև «Լիբանանյան ճակատի» երկու հիմնական ուժերի՝ «Քաթաիբ» և «Ազգային լիբերալ» կուսակցությունների զինված խմբավորումների միջև, որոնց նպատակը ճակատի ներսում գերակա դիրքերի ապահովումն էր: Փաղանգավորները պահանջում էին «Լիբանանյան ճակատի» զինված ջոկատների վերակազմավորում և դրանց նկատմամբ կենտրոնական ղեկավարության վերահսկողության ուժեղացում: Լավագույնս օգտագործելով իրենց թվային առավելությունը՝ փաղանգավորները 1980թ. հունիս-հուլիս ամիսներին պարտության մատնեցին «Ազգային լիբերալ» կուսակցության զինված խմբավորումներին և վերահսկողություն սահմանեցին աջ ուժերի ողջ ճամբարի նկատմամբ: Թեև «Լիբանանյան ճակատի» փաստացի ղեկավար շարունակում էր մնալ Քամիլ Շամունը, սակայն աջերի ճակատում ղեկավարման իրական լծակներն ամբողջությամբ կենտրոնացան Բաշիր Ժմայելի ձեռքում[540]:

Հակասությունները սրվել էին նաև ձախ ուժերի և պաղեստինցիների շրջանում: Շիաների և ՊԱԿ-ի միջև հարաբերություններն էլ

---

[539] Առաջին զինված բախումներն աջ ուժերի ճակատում լիբանանյան փաղանգավորների և երկրի նախկին նախագահ Սուլեյման Ֆրանջիեի գլխավորած Զղորթայի շրջանի մարոնիների «Մարադա» զինված խմբավորման միջև տեղի ունեցան դեռևս 1977-1978թթ.: 1978թ. հունիսին այդ բախումների զոհ դարձավ նաև Սուլեյման Ֆրանջիեի որդին՝ Թոնի Ֆրանջիեն: Այդ ողբերգական իրադարձություններից հետո Սուլեյման Ֆրանջիեն դուրս եկավ «Լիբանանյան ճակատից»՝ սերտ համագործակցություն հաստատելով սուննի ազդեցիկ ղեկավարների, մասնավորապես Ռաշիդ Քարամեի հետ: Լեռնային Լիբանանի հյուսիսային շրջաններն այդպես էլ մնացին նախկին նախագահի աջակիցների վերահսկողության ներքո: Այս մասին մանրամասն տե՛ս Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982թթ.), էջ 27:

[540] D. Hiro, նշվ.աշխ., էջ 301:

ավելի սրվեցին 1980թ. սեպտեմբերին իրաք-իրանյան պատերազմի բռնկումից հետո, երբ ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթը հրաժարվեց այդ պատերազմում աջակցություն ցույց տալ իրանցիներին և գրավեց չեզոք դիրք[541]: Հակասությունները ՊԱԿ-ի և շիաների միջև սրվեցին, որ 1980-1981թթ. ընթացքում Բեյրութի արվարձաններում և Հարավային Լիբանանում մի քանի զինված բախումներ տեղի ունեցան պաղեստինյան զինված խմբավորումների և շիական ջոկատների միջև[542]:

1980թ. դեկտեմբերին «Լիբանանյան ճակատը» հրապարակեց գործողությունների իր ծրագիրը, որտեղ նշվում էր կրոնադավանագանի համակարգի պահպանման անհրաժեշտության մասին, ինչպես նաև վերահաստատվում էր Լիբանանի պետական կառավարման մարմիններում լիբանանյան քրիստոնյաների, մասնավորապես մարոնիների գերակա դիրքերի ապահովման անհրաժեշտությունը: Ծրագրում առաջ էր քաշվում ինչպես սիրիական զորքերի, այնպես էլ պաղեստինյան զինված խմբավորումների Լիբանանի տարածքից դուրս բերման պահանջ[543]:

«Լիբանանյան ճակատի» ներսում իր դիրքերն ամրապնդելուց և աջերի ղեկավարումը բացառապես իր ձեռքում կենտրոնացնելուց հետո Բաշիր Ժմայելն օգտվելով 1978թ. սեպտեմբերի 18-ին Քեմփ Դևիդում եգիպտահրայելական համաձայնագրերի ստորագրումից հետո Սիրիայի տարածաշրջանային դիրքերի թուլացումից և Լիբանանում, մի շարք գործոններով պայմանավորված, Դամասկոսի նանում, մի շարք գործոններով պայմանավորված, Դամասկոսի ունեցած դժվարություններից, 1981թ. սկզբին փորձեց «Լիբանանյան ճակատին» ենթարկել Բեքաայի հովտի կենտրոնական, քրիստոնեական Զահլե քաղաքը՝ լիբանանասիրիական սահմանից 30 կմ հեռավորության վրա: Այն վերահսկում էին սիրիական զորքերը: Այդ նպատակով աջերը սկսեցին համագործակցել նաև երկրի հարավում գործունեություն ծավալող Սաադ Հադդադի գլխավորած ԼՀԲ-ի հետ: Զահլե ուղարկվեց աջ ուժերի մոտ 2.500 մարտիկ: 1981թ. ապ-

---

[541] H. Cobban, The Grouth of Shi'i Power in Lebanon and Its Implications for the Future, Shi'ism and Social Protest, p. 146.
[542] K. Pakradouni, La Paix Manquée, Beyrouth, 1983, pp. 105-107.
[543] D. Hiro, նշվ.աշխ., էջ 301:

րիլին առաջին զինված բախումները գրանցվեցին լիբանանյան աջ ուժերի զինված ջոկատների և սիրիական զորքերի միջև[544]:

Լիբանանում իրավիճակն ավելի սրվեց Թել-Ավիվի լիբանանյան գործերին անմիջական միջամտության հետևանքով: Իրադարձությունները վտանգավոր բնույթ ստացան, երբ Մենախեմ Բեգինը կնեսետում հայտարարեց, որ իրամայել է ոչնչացնել Լիբանանի տարածքում առկա սիրիական հակաօդային պաշտպանության միջոցները, որոնք սպառնում էին Իսրայելի անվտանգությանը[545]: Թել-Ավիվը բացեիբաց սկսեց խոսել «սահմանափակ» պատերազմի մասին, եթե Սիրիան Լիբանանից դուրս չբերեր իր հակաօդային պաշտպանության միջոցները: 1981թ. ապրիլին, երբ սիրիական ուժերը փորձեցին աջ ուժերին դուրս մղել Զահլեից, Իսրայելը ներգրավվեց հակամարտության մեջ և ապրիլի 28-ին Զահլեի մոտ խփեց երկու սիրիական տրանսպորտային ուղղաթիռ[546]:

Միաժամանակ Իսրայելն ընդլայնեց Լիբանանում պաղեստինյան զինված խմբավորումների և ձախ ուժերի դեմ ռազմական գործողությունների գոտին: Մայիսի 28-ին իսրայելցիները ծովից ռմբակոծեցին Դ-ամուր բնակավայրը: Հուլիսին Իսրայելն ակտիվ ռազմական գործողություններ իրականացրեց նաև պաղեստինյան զինված խմբավորումների դեմ Լիբանանի հարավում: Ռմբակոծվեցին ոչ միայն պաղեստինցիների ռազմական դիրքերը, այլ նաև Հարավային Լիբանանի քաղաքացիական շինությունները[547]: Իսրայելը նպատակ էր հետապնդում մեկուսացնել Լիբանանի հարավը երկրի կենտրոնական և հյուսիսային շրջաններից, ինչպես նաև հույս ուներ ճնշումների միջոցով ստիպել լիբանանյան կառավարությանը հետևողական գործողություններ ձեռնարկել պաղեստինյան զինված խմբավորումների և սիրիական զորքերի Լիբանանից դուրս բերման գործում:

---

[544] P. Seale, նշվ.աշխ., էջ 284:
[545] Новейшая история Арабских стран Азии, с. 143.
[546] Ch. Herzog, The Arab-Israeli Wars: War and Peace in the Middle East, New York, 1989, p. 351.
[547] H. Cobban, The Palestinian Liberation Organization, p. 108.

Մինչ այդ՝ 1981թ. մայիսի 22-ին, Ալժիրի և ՊԱԿ-ի միջնորդությամբ Թունիսում գումարվեց ԱՊԼ-ի արտահերթ նիստ, որի նպատակն էր քննարկել Լիբանանում ստեղծված իրավիճակը: Նիստի մասնակիցները հանդես եկան սիրիական ներկայության պահպանման օգտին և քննադատեցին ԱՄՆ-ի քաղաքականությունը, որ հանդես էր գալիս Լիբանանի հանդեպ Իսրայելի վարած ագրեսիվ քաղաքականության պաշտպանությամբ[548]:

Չգտելով թույլ չտալ Լիբանանում իրավիճակի հետագա սրում և փորձելով մշակել ներլիբանանյան հակամարտության քաղաքական կարգավորման ծրագիր՝ նիստում որոշում ընդունվեց վերսկսել Լիբանանի հարցով քառակողմ հանձնաժողովի աշխատանքները՝ Սաուդյան Արաբիա, Քուվեյթ, Լիբանան և Սիրիա կազմով[549]: Այդ հանձնաժողովի աշխատանքի արդյունքում Չահլեում հաստատվեց հարաբերական կայունություն: Հանձնաժողովի ճնշման տակ «Լիբանանյան ճակատը» պարտավորվեց խզել իր կապերն Իսրայելի հետ, ինչը հնարավորություն տվեց հակասությունների լուծումը տեղափոխել քաղաքական բանակցությունների հարթություն:

1981թ. հուլիսի 24-ին Իսրայելի և ՊԱԿ-ի միջև կնքվեց համաձայնագիր՝ երկրի հարավում կրակի դադարեցման մասին, որի համաձայն՝ ՊԱԿ-ը պարտավորվեց չձեռնարկել որևէ զինված գործողություն լիբանանաիսրայելական սահմանի շրջանում, իսկ Իսրայել իր հերթին խոստացավ դադարեցնել Լիբանանում պաղեստինյան դիրքերի ռմբակոծությունը[550]:

Համաձայնագրի ստորագրումից հետո Լիբանանի նախագահ Իլիաս Սարգիսի վարչակազմն աջ ուժերի ճնշման արդյունքում փորձեց ուժեղացնել իր վերահսկողությունը Լիբանանում պաղեստինյան զինված խմբավորումների, ապա նաև սիրիական զորքերի նկատմամբ: Սակայն ո՛չ «Լիբանանյան ճակատ» գործողությունների

---

[548] Новейшая история Арабских стран Азии, с. 143.

[549] Վերոնշյալ հանձնաժողովը կազմավորվել էր դեռևս 1976թ. Ռիադի և Կահիրեի՝ արաբական երկրների ղեկավարների համաժողովների ընթացքում՝ Լիբանանում զինված հակամարտության քաղաքական կարգավարմանը միտված ծրագրերի իրականացմանը հետևելու նպատակով:

[550] Ближний Восток и Международное право, с. 86.

տը» և ո՛չ էլ կենտրոնական իշխանություններն այդ փուլում ի վիճակի չէին ինքնուրույն լուծել պաղեստինյան ռազմական ներկայության և սիրիական զորքերի առկայությամբ պայմանավորված խնդիրները: Պատահական չէր, որ հատկապես աջ ուժերը վերոնշյալ խնդիրների լուծման հարցում ակնկալում էին Իսրայելի անմիջական օժանդակությունը:

Հակառակ 1981թ. հուլիսին ՊԱԿ-ի հետ կրակի դադարեցման մասին համաձայնագրի ստորագրմանը, իսրայելական բանակը շարունակում էր պարբերաբար գրոհներ իրականացնել Հարավային Լիբանանում պաղեստինյան զինված խմբավորումների դիրքերի և պաղեստինյան փախստականների ճամբարների դեմ՝ ստիպելով պաղեստինցիներին դիմել պատասխան քայլերի:

1981թ. սեպտեմբերին իսրայելյան բանակի գլխավոր սպայակույտի ղեկավար Ռաֆայել Էյտանը հայտարարեց, որ Իսրայելը նպատակ է հետապնդում թուլացնել Լիբանանում պաղեստինյան ռազմական և քաղաքական ենթակառուցվածքները և մեկ հարվածով ջախջախել դրանք[551]: Վարվող քաղաքականության համատեքստում Իսրայելը փորձում էր խեղաթյուրել ՊԱԿ-ի հետ կրակի դադարեցման մասին համաձայնագրի էությունը: Իսրայելցիները պնդում էին, որ համաձայնագիրը պետք է տարածվեր ոչ միայն լիբանանաիսրայելյան սահմանի շրջանում պաղեստինցի մարտիկների գործողությունների, այլ նաև պաղեստինյան կազմակերպությունների ողջ ռազմաքաղաքական գործունեության վրա, այդ թվում նաև Հորդանան գետի Արևմտյան ափում և Ղազայի հատվածում[552]: Ընականաբար պաղեստինցիները չէին համաձայնվում վերոնշյալ վերջնագրային պահանջների հետ, ինչն առիթ էր տալիս Իսրայելին տարբեր մեղադրանքներ հնչեցնել պաղեստինցիների հասցեին, որոնց հետևում էին Լիբանանի հարավում պաղեստինցիների և ձախ ուժերի դիրքերի ռմբակոծությունները:

---

[551] U. Benziman, Sharon: An Israeli Caesar, Robson Books, 1992, p. 239.
[552] Новейшая история Арабских стран Азии, с. 145-146.



Ֆուադ Շիհաբ



Պիեր Ժմայել




Ռաշիդ Քարամե



Ռայմոն Էդդե



Քամիլ Շամուն



Իմամ Մուսա Ալ-Սադր



Գեներալ Իսքանդար Ջանիմ



Թաքի Ալ-Դին Ալ-Սոլհ



Քամալ Ջումբլաթ



Սաիբ Սալամ



Իլիաս Սարգիս



Սուլեյման Ֆրանջիե




Շարլ Հելու



Հասան Թուեյնի



Ռաշիդ Ալ-Սոլհ



Ռաֆիկ Հարիրի



Գեներալ Միշել Աուն



Մուհամմադ Հուսեյն Ֆադլալլահ



Նաբիհ Բերրի



Վալիդ Ջումբլաթ

5. Քաղաքացիական պատերազմի հինգերորդ փուլը (1982թ. հունիսից մինչև 1984թ. փետրվար)

ա/ 1982թ. իսրայելական «Խաղաղություն Գալիլեայինն» ռազմական գործողությունը

Պատահական չէ, որ 1982թ. ապրիլի վերջին 1979թ. ստորագրված եգիպտահիսրայելական խաղաղության համաձայնագրով նախատեսված Սինայ թերակղզուց իսրայելական զորքերի ամբողջաչքով դուրս բերումից շուրջ 6 շաբաթ անց՝ հունիսի 6-ին, Իսրայելը «Խաղաղություն Գալիլեայինն» ռազմական գործողության հրամայեց առիթ օգտագործվեց 1982թ. հունիսի 3-ին Լոնդոնում Իսրայելի դեսպանի դեմ անհաջող մահափորձը:

Նշենք, որ Լիբանան ներխուժմամբ Իսրայելը հետապնդում էր հետևյալ նպատակները. 1.Ռազմական ճանապարհով ոչնչացնել 1970թ. Հորդանանում «սև սեպտեմբերի» արյունալի դեպքերից հետո Լիբանանի տարածքում հաստատված ՊԱԿ-ի ռազմական կառույցները. 2. Հասնել Լիբանանի տարածքից սիրիական զորքերի դուրս բերմանը, որոնք 1976թ.-ից Միջարաբական զսպման ուժերի կազմում գտնվում էին Լիբանանում, ինչը, անկասկած, կհանգեցներ տարածաշրջանում Սիրիայի դիրքերի թուլացմանը. 3. Նպաստել Լիբանանում 1982թ. օգոստոսին կայանալիք նախագահական ընտրությունների արդյունքում այնպիսի վարչակազմի հաստատմանը, որ պատրաստ կլիներ Իսրայելի հետ կնքել խաղաղության մասին համաձայնագրի: Ե՛վ ԱՄՆ-ը, և՛ Իսրայելը Լիբանանը հարմարում էին Եգիպտոսից հետո արաբական աշխարհում երկրորդ երկիրը, որ ներքաղաքական փոփոխություններով պարտադրված կարող էր համաձայնել Իսրայելի հետ ստորագրել խաղաղության մասին անջատողական համաձայնագիր, ինչն ընդհանուր առմամբ համապատասխանում էր նաև տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերին և ըստ

էության կարող էր դառնալ 1978թ. սկսված քեմփդևիդյան գործընթացի հաջող շարունակություն:

1982թ. հունիսի 6-ի առավոտյան իսրայելական տարբեր տվյալներով 80-ից 100հզ. ցամաքային ուժերը՝ ռազմաօդային և ռազմածովային ուժերի հետ համատեղ՝ զինված նորագույն տեխնիկայով, անցան Լիբանանի սահմանը: Նույն օրը ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց թիվ 508, իսկ մեկ օր անց՝ հունիսի 7-ին, թիվ 509 բանաձևը, որոնք դատապարտում էին Իսրայելի գործողությունները և պահանջում իսրայելական զորքերի անմիջապես դուրս բերում Լիբանանի միջազգայնորեն ճանաչված սահմաններից[553]: Հունիսի 8-ին իսրայելական զորքերին հաջողվեց գրավել Տիր, Սիդոն, ապա նաև Նաբաթիա քաղաքները[554]: Լիբանանի կենտրոնական մասում իսրայելական զորամիավորումները գրավեցին Լիտանի գետի կամուրջները: Իսրայելցիները փորձում էին իրենց վերահսկողությունը հաստատել նաև Բեքաայի հովտում, ինչը կօգներ նրանց հսկողության տակ պահել Բեյրութ-Դամասկոս ռազմավարական մայրուղին: Հունիսի 9-ին Բեքաայի հովտում օդային մարտի ընթացքում, որին մասնակցում էին 70 սիրիական և 100 իսրայելական կործանիչներ, սիրիական կողմը պարտություն կրեց: Տարբեր տվյալներով՝ Սիրիան կորցրեց 34-ից 37 կործանիչ[555]: Միայն հունիսի 11-ին, մերձավորարևելյան տարածաշրջանում ընթացող զարգացումների շուրջ ամերիկախորհրդային շփումների ակտիվացման արդյունքում ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանն իսրայելական կողմից պահանջեց դադարեցնել Լիբանանում ռազմական գործողությունները: 1982թ. հունիսի 11-ի լույս 12-ի գիշերն Իսրայելի առաջարկությամբ կնքվեց Սիրիայի և Իսրայելի միջև կրակի դադարեցման մասին համաձայնագիր: Հաջորդ օրն ամերիկյան ներկայացուցիչ Ֆիլիպ Հաբիբի միջնորդությամբ, որ տարածաշրջան էր գործուղվել դեռևս 1981թ. գարնանը, համաձայնագիր

---

[553] Палестинская проблема, Док. ООН, международных организаций и конференций, Москва, 1984, с. 112.
[554] Reason not the Need: Eyewitness Chronicles of Israel's War in Lebanon, ed. by Franklin P. Lamb, England, 1984, pp. 8-9.
[555] D. Hiro, նշվ.աշխ., էջ 237:

կնքվեց նաև Իսրայելի և ՊԱԿ-ի միջև[556]: Իսրայելական վերահսկողության տակ հայտնվեց Լիբանանի տարածքի գրեթե կեսը՝ 4.5 հզ. կմ^2: Սակայն իսրայելական կողմը խախտեց համաձայնագրի դրույթները և հունիսի կեսին արդեն գրավեց նաև Լեռնային Լիբանանի մի շարք ռազմավարական շրջաններ, մասնավորապես Ալեյ և Բհամդուն քաղաքները, որոնք մինչ այդ գտնվում էին սիրիական ուժերի վերահսկողության տակ[557]: Հունիսի 13-ին իսրայելական զորքերը Բեյրութի արևելյան մասում վերահսկողություն իրականացնող աջ ուժերի զինված խմբավորումների աջակցությամբ շրջապատեցին արևմտյան Բեյրութը՝ 8 կմ^2 տարածքով, շուրջ կես մլն բնակչությամբ, որտեղ հաստատվել էին նաև զգալի թվով պաղեստինցի փախստականներ, պաղեստինյան զինված խմբավորումներ և ՄԶՈՒ-ի առանձին ստորաբաժանումներ[558]: Հակառակ գոյություն ունեցող որոշ հակասությունների՝ լիբանանյան շիաները, ձախ ուժերը և ՊԱԿ-ը կրկին համախմբվեցին Իսրայելի դեմ պայքարում[559]:

Հունիսի 21-ին իսրայելյան զինված խմբավորումներին հաջողվեց գրավել նաև Բեյրութի միջազգային օդանավակայանի հարավային հատվածը: Արևմտյան Բեյրութը ենթարկվեց ցամաքային և ծովային շրջափակման, որը զուգորդվում էր ջրի, էլեկտրաէներգիայի, սննդի և վառելիքի մատակարարման դադարեցմամբ[560]:

Արաբական շրջանակներում առկա հակասությունների հետևանքով արաբական երկրների ղեկավարներն այդպես էլ չկարողացան հստակ դիրքորոշում որդեգրել Լիբանան իսրայելական երկրորդ ներխուժման հարցում: Միայն հունիսի 26-ին Թունիսում հնարավոր եղավ հրավիրել ԱՊԼ շրջանակներում

---

[556] Security in the Middle East: Regional Change and Great Power Strategies, ed.by Samuel F. Wells, Jr. and Mark A. Bruzonsky, Westview Press, London, 1991, p. 340.

[557] Նույն տեղում:

[558] D. Hiro, նշվ.աշխ, էջ 238:

[559] A. R. Norton, External Intervention and the Politics of Lebanon, Washington, D.C., Washington Institute for Values in Public Policy, 1984, pp. 12-13.

[560] Л. Вольнов, Ливан: эхо агрессии, М., 1984, с. 8-10.

արաբական երկրների արտաքին գործերի նախարարների համաժողով՝ Լիբանանում ստեղծված իրավիճակը քննարկելու նպատակով: Այս համաժողովը չհաստատեց Սիրիայի և ՊԱԿ-ի Լիբանանում իսրայելական ագրեսիայի դեմ արաբների համատեղ ռազմական գործողություններ ծավալելու և ԱՄՆ-ի դեմ քաղաքական և տնտեսական պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ առաջարկությունը[561]: Միջարաբական շրջանակներում տարաձայնությունների առկայության պայմաններում համաժողովը սահմանափակվեց միայն ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու առաջարկով, որը ձևավորեց պատվիրակություն ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, ԽՍՀՄ և Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն մեկնելու նպատակով, ինչը միտված էր լիբանանյան հակամարտության խաղաղ կարգավորմանը նպաստող ուղիների որոնմանը[562]:

Հերթական զինադադարը իսրայելական ուժերի և ՊԱԿ-ի միջև տևեց հուլիսի 12-ից մինչև հուլիսի 21-ը: Այն այդ անգամ խախտեցին պաղեստինցիները՝ հարձակում իրականացնելով իսրայելական դիրքերի նկատմամբ: Հուլիսի 22-ից օգոստոսի 12-ը իսրայելական զինված ուժերը որոշակի ընդմիջումներով արևմտյան Բեյրութը ենթարկեցին օդային, ցամաքային և ծովային ռմբակոծության: Իսրայելական զորքերի գործողությունները դժգոհություն առաջ բերեցին Վաշինգտոնում: Ամերիկյան ճնշումների արդյունքում Իսրայելը դադարեցրեց արևմտյան Բեյրութի պաշարումը: Հարաբերական հանգստություն արևմտյան Բեյրութում վերականգնվեց օգոստոսի 13-ին[563]:

Օգոստոսի 19-ին Իսրայելն ընդունեց Ֆիլիպ Հաբիբի միջնորդությամբ արևմտյան Բեյրութից սիրիական զորամիավորումների և ՊԱԿ-ի զինված խմբավորումների դուրս բերման ծրագիրը:

---

[561] Новейшая история Арабских стран Азии, с. 146-147.

[562] Գ. Գևորգյան, 1982թ. իսրայելյան ագրեսիան Լիբանանում և Եգիպտոսի դիրքորոշումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 60:

[563] "Civil War in Lebanon", The Bureau of Public Affairs, U.S. Depaetment of State, p. 325.

Հայտնվելով բավական բարդ իրավիճակում՝ ՊԱԿ-ը համաձայնվեց քննարկել Բեյրութից իր զինված ջոկատների դուրս բերման իսրայելական պահանջը: Բանակցությունները ՊԱԿ-ի և Իսրայելի միջև ընթանում էին ամերիկյան բանագնաց Ֆիլիպ Հաբիբի և լիբանանյան կառավորության միջնորդությամբ: Ֆիլիպ Հաբիբն իր կառավարության անունից երաշխավորեց. 1. իսրայելական զորքերը չէին մտնի արևմտյան Բեյրութ. 2. կապահովվեր պաղեստինյան փախստականների ճամբարների անվտանգությունը[564]: Չցանկանալով հետագա փորձությունների ենթարկել լիբանանցիներին, պաղեստինյան ղեկավարությունը համաձայնեց իր զինված խմբավորումները դուրս բերել Բեյրութից: Լիբանանում անվտանգության ապահովման, ինչպես նաև պաղեստինյան զինված խմբավորումների Բեյրութից դուրս բերումը վերահսկելու նպատակով 1982թ. օգոստոսի 21-ին Բեյրութ մտցվեցին բազմազգ խաղաղապահ ուժեր՝ ամերիկյան, ֆրանսիական, իտալական և անգլիական զորամիավորումներ[565]: Մինչև 1982թ. սեպտեմբերի 1-ը ՊԱԿ-ի 8.144 և սիրիական վերահոսկողության տակ գտնվող Պաղեստինի ազատագրության բանակի 3.500 մարտիկներ, ինչպես նաև 2.700 սիրիացի զինվորներ լքեցին արևմտյան Բեյրութը[566]:

Նշենք, որ Լիբանանում իրավիճակի սրումը բացատրվում էր ոչ միայն պաղեստինցիների աճող ազդեցությամբ և քրիստոնյա մարդկանց գործողությունների ակտիվացմամբ, այլև ֆինանսական դժվարությունների պատճառով Լիբանանից որոշ ստորաբաժանումներ դուրս բերելու Դամասկոսի որոշմամբ, ինչպես նաև Սիրիայի ՊԱԿ-ի նկատմամբ քաղաքականության փոփոխմամբ՝ հարաբերությունների բարելավում և պաղեստինյան զինված խմբավորումների աջակցության տրամադրում Իսրայելի դեմ պայքարում: Սրան գումարվեց նաև Իսրայելում տեղի ունեցող ներքին քաղաքական իրադարձություններն ու ամերիկյան նոր վարչակազմի որդեգ-

---

[564] Агарышев, От Кэмпт-Дэвида к трагедии Лавана, с. 133.
[565] E. Picard, Lebanon. A Shattered Country: Miths and Realities of the War in Lebanon, p. 127.
[566] D. Hiro, նշվ. աշխ., էջ 238:

րած քաղաքականությունը, որն էլ ավելի վստահություն հաղորդեց Իսրայելի իշխանությունների գործողություններին:

Մինչ իսրայելյան բանակն ավերում էր Բեյրութը, Վաշինգտոնը՝ հակառակ Իսրայելի հետ որոշ տարաձայնությունների, իրականացնում էր նրա քաղաքական և դիվանագիտական պաշտպանությունը: 1982թ. ընթացքում ԱՄՆ-ը, աջակցելով Իսրայելին, 6 անգամ օգտագործեց ՄԱԿ-ի ԱԽ-ում «վետոյի» իր իրավունքը[567]:

Փաստենք, որ 1982թ. օգոստոսի 23-ին գումարվեց Լիբանանի խորհրդարանի արտահերթ նիստ, որում երկրի նախագահ ընտրվեց միակ թեկնածու, Լիբանյան ուժերի զինված խմբավորումների 34-ամյա հրամանատար Բաշիր Ժմայելը: Ուղիղ մեկ ամիս անց սահմանադրության համաձայն նոր նախագահը պետք է ստանձներ իր պաշտոնը, սակայն 1982թ. սեպտեմբերի 14-ին Բեյրութում, այն շենքում, որտեղ տեղակայված էր «Քաթաիբ» կուսակցության գրասենյակը, տեղի ունեցած հզոր պայթյունի հետևանքով նա զոհվեց[568]: Հաջորդ օրը՝ 1982թ. սեպտեմբերի 15-ին իսրայելական բա-

---

[567] Ближний Виток и Международное право, с. 90.

[568] Բաշիր Ժմայելի սպանության վերաբերյալ կան երկու հակադիր կարծիքներ: Որոշ հետազոտողներ գտնում են, որ Ժմայելի սպանության ետևում կանգնած էր Սիրիան: Մասնավորապես փաստարկվում է, որ Ժմայելը սերտ կապեր էր հաստատել և ակտիվորեն համագործակցում էր Իսրայելի հետ Լիբանանից պաղեստինյան զինված խմբավորումների և սիրիական զորամիավորումների դուրս բերման գործում: Բաշիր Ժմայելը բազմիցս հայտարարում էր, որ նախագահ ընտրվելու դեպքում պատրաստ է խաղաղության համաձայնագիր կնքել Իսրայելի հետ՝ հաշվի առնելով վերջինիս պահանջները: Բնական է, որ այս ամենը չէր բխում Սիրիայի շահերից, որի հետ Ժմայելը խուսափում էր համագործակցության եզրեր գտնել: Այս տեսակետը կիսող հետազոտողները պնդում են, որ Ժմայելի սպանությունն իրականացրել է 25-ամյա Հաբիբ Շարթունին, որ «Սիրիական ազգային սոցիալական» կուսակցության անդամ էր և սիրիական հետախուզական ծառայությունների գործակալ: Այն շենքում, որտեղ տեղակայված էր «Քաթաիբ» կուսակցության գրասենյակը, բնակվում էր Շարթունի քույրը, որի բնակարանում էլ տեղակայված ռումբի հզոր պայթյունից էլ զոհվեց Բաշիր Ժմայելը: Մյուս տեսակետի համաձայն՝ Բաշիր Ժմայելի սպանությունը կազմակերպել էր Իսրայելը: Սերտորեն համագործակցելով Իսրայելի հետ և խոստանալով, որ ամեն կերպ կնպաստի Լիբանանից պաղեստինյան զինված խմբավորումների և

նակը, այնուամենայնիվ, մտավ արևմտյան Բեյրութ: Լիբանանյան կառավարությունն Իսրայելի գործողությունները որակեց որպես նոր ագրեսիա: Այն պահանջեց ՄԱԿ-ի ԱԽ հրավիրում և Թել-Ավիվի գործողությունների համար մեղադրեց ամերիկյան կառավարությանը, քանի որ ԱՄՆ-ը Հաբիբի միջոցով երաշխավորել էր, որ Իսրայելն իր արևմտյան Բեյրութ ներխուժումը հիմնավորեց հետևյալ փաստարկներով. 1. ներխուժմամբ նա ձգտում էր կանխել նախագահի սպանության հետևանքով արևմտյան Բեյրութում հնարավոր քաոսային իրավիճակի առաջացումը և 2. Իսրայելը պնդում էր, որ Բեյրութում հակառակ ձեռք բերված պայմանավորվածության շարունակում էին մնալ շուրջ 2.000 պաղեստինյան զինված մարտիկներ[569]:

Այն ժամանակ, երբ ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունում էր որոշում, որը դատապարտում էր արևմտյան Բեյրութ իսրայելական ներխուժումը, Իսրայելի փաստացի դաշնակիցները՝ աջ ուժերի զինված խմբավորումները, 1982թ. սեպտեմբերի 17-ի գիշերը պաղեստինյան փախստականների Սաբրա և Շաթիլա ճամբարներում իրականացրին շուրջ 3.000 պաղեստինյան փախստականների դաժան սպանու-

---

սիրիական զորամիավորումների դուրս բերմանը՝ Բաշիր Ժմայելը նախագահ ընտրվելու նպատակով ստիպված էր հրաժարվել Իսրայելին տված իր որոշ խոստումներից և զիջումների գնալ ու համագործակցել լիբանանյան ձախ ուժերի հետ, որոնք սերտ կապեր էին պահպանում պաղեստինցի մարտիկների և Լիբանանում տեղակայված սիրիական զորամիավորումներ հետ: Նախագահ ընտրվելու համար Բաշիր Ժմայելին անհրաժեշտ էր նաև ձախ ուժերի աջակցությունը: Նա չէր կարող լինել միայն լիբանանյան աջերի նախագահը: Այդ էր պատճառը, որ Ժմայելը հարկադրված էր հրաժարվել Իսրայելին տված իր որոշ խոստումներից, որի համար էլ ստիպված եղավ վճարել իր կյանքով: Սակայն Բաշիր Ժմայելի սպանությունն, ինչպես և լիբանանյան իրականության մեջ մի շարք այլ քաղաքական սպանություններ ևս, մինչև օրս էլ բացահայտված չէ: Այս մասին մանրամասն տե՛ս Th. L. Friedman, From Beirut to Jerusalem, Anchor Book, USA, 1995, pp. 157-158, T. Chamoun, Au Nom du Père, France, 1992, p. 76.

[569] A. Sharon with D. Chanoff, Warrior: The Autobiography of Ariel Sharon, pp. 500-502.

թյունը[570]: Այս հանցագործությունն իրականացվեց իսրայելական բանակի վերահսկողության տակ գտնվող գոտում:

Սեպտեմբերի 21-ին Լիբանանի նոր նախագահ ընտրվեց Բաշիր Ժմայելի ավագ եղբայրը՝ «Քաթաիբ» կուսակցության քաղաքական վարչության անդամ Ամին Ժմայելը, որ երկու օր անց ստանձնեց նախագահի պաշտոնը: Սեպտեմբերի վերջին լիբանանյան կառավարության պահանջով և համաշխարհային հանրության ճնշմամբ՝ Իսրայելը ստիպված էր իր զորքերը դուրս բերել Լիբանանի մայրաքաղաքից:

1982թ. Լիբանան իսրայելական ներխուժման արդյունքում զոհվեց տարբեր տվյալներով 15.700-ից 30.000 մարդ, այդ թվում նաև 1.110 պաղեստինցի մարտիկներ և 1.350 սիրիացի զինվորներ, վիրավորվեց մոտ 30.000 մարդ: Իսրայելական կողմում զոհերի թիվը տարբեր տվյալներով կազմում էր 350-ից 500 մարդ: Ռազմական կորուստները հետևյալն էին. Սիրիա՝ 92 կործանիչ, 42 տանկ, ՊԱԿ՝ 20 տանկ, Իսրայել՝ 2 կործանիչ, 2 տանկ: Իսրայելական երկրորդ ներխուժման հետևանքով Լիբանանին պատճառած տնտեսական վնասը մասնագետների կարծիքով հավասար էր գրեթե 2 մլրդ դոլարի[571]:

Միայն 1982թ. հոկտեմբերի 4-ին լիբանանյան հակամարտող կողմերի միջև երկարատև բանակցություններից հետո Ամին Ժմայելը երկրի վարչապետ նշանակեց Շաֆիկ Ուազանին, որը ձևավորեց նոր կառավորություն:

1982թ. հոկտեմբերին Լիբանանի նորանշանակ նախագահ Ամին Ժմայելի հրամանով լիբանանյան բանակի մի քանի զորամիավորումներ մտան արևմտյան Բեյրութի Վազայի շիական արվարձանը և սկսեցին քանդել շիաների խրճիթները: Արդյունքում շուրջ 5.000 շիա մնաց անօթևան[572]:

---

[570] Այս մասին մանրամասն տե՛ս В. И. Киселев, Палестинская побле-ма в международных отношениях: региональный аспект, М., 1988, с. 184, Е. Дмитриев, Палестинская трагедия, с. 107, Shi'is and Social Protest, ed. by Juan R. Cole and Nikki R. Keddie, London, 1986, p. 147.

[571] Մանրամասն տե՛ս D. Hiro, նշվ.աշխ., էջ 238; Новейшая история Арабских стран Азии, с. 148.

[572] A. Norton, Lebanon's Old Politics Must Yield to the New, New York Times, January, 3, 1984.

Հակառակ Բեյրութից պաղեստինյան ռազմաքաղաքական կառույցների դուրս բերմանը՝ Թել-Ավիվը, այնուամենայնիվ, չէր շտապում իր զորքերը դուրս բերել Լիբանանի տարածքից: Իսրայելի ղեկավարները չէին թաքցնում, որ նրանց հիմնական նպատակը Լիբանանի հետ խաղաղության համաձայնագրի ստորագրումն էր:

Իսրայելական շարունակվող օկուպացիան նպաստեց Լիբանանում Իսրայելի ռազմական ներկայության դեմ արմատական տրամադրությունների և զինված դիմադրության ուժեղացմանը: Այդ դիմադրությունը գլխավորեցին ձախ ուժերը, որոնք 1982թ. սեպտեմբերին ձևավորեցին «Լիբանանյան հայրենասիրական դիմադրության» ճակատը, որի գործունեության նրանց ակտիվ մասնակցություն էին բերում նաև շիական «Ամալ» շարժումն ու «Հիզբալլահ» կուսակցությունը:

* * *

Նշենք, որ 1978թ. Մուսա Ալ-Սադրի խորհրդավոր անհետացումից հետո[573] «Ամալի» ղեկավարությունը ժամանակավորապես ստանձնեց Հուսեյն Ալ-Հուսեյնին, իսկ 1980թ. «Ամալի» ղեկավար

---

[573] 1978թ. օգոստոսի 25-ին Մուսա Ալ-Սադրը ժամանեց Լիբիա: Ալ-Սադրի խորհրդավոր անհետացումը տեղի ունեցավ օգոստոսի 31-ին Տրիպոլի հյուրանոցում, երբ նա պատրաստվում էր Լիբիայի նախագահ Մուամմար Կադդաֆիի հետ հանդիպմանը: «Ամալի» ղեկավարի անհետացումից հետո Մուամմար Կադդաֆին հայտարարեց, որ Ալ-Սադրը Լիբիայի տարածքը լքել էր իտալական ավիաուղիների օդանավով, որը մեկնում էր Հռոմ: Նրա խորհրդավոր անհետացման վերաբերյալ առաջ քաշվեցին մի քանի վարկածներ, սակայն «Ամալի» ղեկավարները մամուլում ակնարկում էին, որ Մուամմար Կադդաֆին որոշակի առնչություն ուներ Ալ-Սադրի խորհրդավոր անհետացման հետ: Այդ մեղադրանքները, սակայն, որևէ կերպ չհաստատվեցին: Ալ-Սադրի անհետացումից հետո շիա որոշ ղեկավարներ պնդում էին, որ նա կենդանի է, ինչի արդյունքում Ալ-Սադրը դասվեց շիականության մեջ լայնորեն տարածված «թողարկված իմամների» շարքին: Այս մասին մանրամասն տե՛ս Ն. Հովհաննիսյան, Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004, էջ 15; F. Ajami, The Vanished Imam Musa al Sadr and the Shia of Lebanon, Cornell University, p. 180; A. Norton, Shi'ism and Social Protest in Lebanon, London, 1986, p. 169.

ընտրվեց Նաբիհ Բերրին՝ երիտասարդ, աշխարհիկ հայացքներով աչքի ընկնող իրավաբան: Բերրին, սակայն, չուներ այնպիսի խարիզմատիկ ազդեցություն, ինչպես Ալ-Սադրը, իսկ նրա «չափավոր» քաղաքաղական ուղեգիծը քննադատության էին ենթարկում ինչպես «Ամալը», այնպես էլ ողջ շիա համայնքի ծայրահեղական շրջանակները[574]: Այս նշանակումը շրջադարձային էր կազմակերպության քաղաքական գործունեության փոփոխության տեսանկյունից: Կազմավորվելով որպես ընդդիմություն գործող իշխանությանը՝ «Ամալը» որոշ ժամանակ անց վերածվեց քաղաքական ուժի, որ պատրաստ էր համագործակցել իշխանության հետ:

«Ամալի» այս քաղաքականությունը նպաստեց շարժման հեղինակության անկմանը շիա բնակչության այն շրջանում, որը պահանջում էր ծայրահեղ միջոցառումների իրականացում Լիբանանից իսրայելյան զորքերի դուրս բերման ուղղությամբ:

Շիա համայնքում տարածայնությունների առկայության պայմաններում 1982թ. ամռանն «Ամալի» հրամանատարական խորհրդի անդամ Հուսեյն Մուսավին լքեց շարժումը՝ ձևավորելով իր գինված խմբավորումը, որ անվանվեց «Իսլամական Ամալ»[575]: Մուսաուիի համախոհների թիվը սահմանափակ էր, սակայն այն աջակցություն էր ստանում Իրանից[576], որտեղից «Իսլամական հեղափոխության պաշտպանների էլիտար ստորաբաժանումների» 3.000 մարտիկ Սիրիայի տարածքով անցել էր Լիբանան և ակտիվ օժանդակություն էր ցույց տալիս Մուսավիին[577]:

---

[574] A. Norton, "Making Enimies in South Lebanon: Harakat Amal, the IDF and South Lebanon", Middle East Insight, Washington, D. C., No. 3, January-February, 1984, p. 19.

[575] A. Mougneres "Le Hizbollah Libanais: Contribution de l'Etude d'un Mouvement Islamique", Paris, 1994, p. 24.

[576] 1979թ. փետրվարի հեղափոխությունից և շահի տապալումից հետո Իրանը հռչակեց «Իսլամական հեղափոխության արտահանման» կարգախոսը: Շիական ծայրահեղականներին աջակցություն ցույց տալով՝ Իրանը փորձում էր իր գաղափարական ազդեցությունը տարածել Լիբանանում ողջ շիա համայնքի վրա:

[577] H. Hizar, Islamism in Lebanon, Middle East Review, September, 1997.

1982թ. ամռանը Բեքաայի հովտում կազմավորվեց մեկ այլ ծայրահեղական շիական շարժում ևս, որ նույնպես խիստ քննադատության էր ենթարկում «Ամալի» ղեկավարի «չափավոր» քաղաքականությունը[578]: Այս շարժումն անվանվեց «Հիզբալլահ» (արաբերեն՝ «Ալլահի կուսակցություն»), որ գլխավորեց խարիզմատիկ շիա հոգևոր ղեկավար շեյխ Մուհամմադ Հուսեյն Ֆադլալլահը[579]: «Հիզբալլահի» մեջ ներգրավվեցին հիմնականում «Ամալի» առավել ծայրահեղական թևը՝ Հուսեյն Մուսաուիի գլխավորությամբ, այնպես էլ տարբեր շիական կրոնական և ռազմական միավորումների որոշ անդամներ, որոնք սերտ կապեր ունեին Իրանի ղեկավարության հետ[580]:

Իսրայելի ռազմական ներկայության դեմ դիմադրության առաջին լայնածավալ գործողությունը 1982թ. նոյեմբերին Տիրում իսրայելական սպայակույտի շենքի պայթյունն էր, որի արդյունքում սպանվեց 10 իսրայելցի, կային նաև տասնյակ վիրավորներ[581]:

Իսրայելն իր հերթին փորձում էր առավելագույնս օգտագործել ներխուժումից հետո Լիբանանում ստեղծված իրավիճակը: Պատահական չէ, որ Բեյրութի քրիստոնեական Դբայ արվարձանում Լիբանանի կառավարության թույլատվությամբ բացվեց իսրայելական կապերի գրասենյակը, որ իրականացնում էր կիսապաշտոնական դիվանագիտական ներկայացուցչության գործառույթներ[582]: Չսահմանափակվելով գաղտնի դիվանագիտությամբ՝ իսրայելական ռազ-

---

[578] Այս մասին մանրամասն տե՛ս Ա Հարությունյան, Լիբանանյան «Հիզբալլահը» որպես տարածաշրջանային գործոն, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 124-132:

[579] Դեռևս 1960-ականներին Ալ-Նաջաֆում (Իրաք) ստեղծվեց շիա ուսողների մի խմբակ, որի անդամները հետագայում կազմավորեցին «Ալ-դաուա» (արաբերեն՝ «Կոչ») կուսակցությունը, որում ներգրավված էին նաև «Հիզբալլահի» ապագա ղեկավարները՝ Մուհամմադ Հուսեյն Ֆադլալլահը, Թուֆեյլին և Կուրանին: 1980-ականների սկզբին նրանք փորձում էր ինքնուրույն կազմակերպել Հարավային Լիբանանում իսրայելյան ներկայության դեմ պայքարը:

[580] В. Семеновых, "Хезболлах", Азия и Африка сегодня, М., 1989, № 1.

[581] N. Kliot, The Territorial Disintegration of a State: The Case of Lebanon, Center for Middle Eastern and Islamic Studies, England, 1986, p. 30.

[582] Новейшая история Арабских стран Азии, с. 149.

խարարները, այդ թվում նաև պաշտպանության նախարար Արիել Շարոնը, հաճախակի այցելում էին աջ ուժերի ղեկավարներին:

Նորընտիր նախագահ Ամին Ժմայելը քաղաքական ուղեգիծ հռչակեց հակամարտող կողմերի միջև խաղաղության հաստատման ճանապարհով Լիբանանի ամբողջականության վերականգնումն ու երկրից բոլոր օտարերկրյա զորքերի դուրս բերումը[583]: Այդուհանդերձ, նոր վարչակազմն ամեն կերպ ցանկանում էր պահպանել կրոնադավանական համակարգի շրջանակներում ամրագրված լիբանանյան քրիստոնյաների, մասնավորապես մարոնիների գերակա դիրքերը: Պատահական չէ, որ պետական կառավարման մարմիններում մի շարք կարևոր պաշտոններ՝ լիբանանյան բանակի գլխավոր հրամանատարի, անվտանգության ուժերի ղեկավարի և այլն, զբաղեցրեցին «Քաթաիբ» կուսակցության անդամները: Ամին Ժմայելը չէր թաքցնում, որ պատրաստվում է իր քաղաքական ծրագիրը կյանքի կոչել հիմնականում ԱՄՆ-ի և Արևմուտքի օժանդակությամբ: Հատուկ նշանակություն էր հատկացվում մարտունակ բանակի ստեղծմանը, որի պատրաստման և զինման հարցում Լիբանանի նախագահին իր աջակցությունը հայտնեց ԱՄՆ-ը[584]:

բ/1983թ. մայիսի 17-ի լիբանանաիսրայելյան խաղաղության համաձայնագիրը լիբանանյան հակամարտության միջազգայնացման համատեքստում

Եվ Իսրայելը և՛ ԱՄՆ-ը շատ մոտ էին Լիբանան Իսրայելի ներխուժմամբ իրենց առջև դրված գլխավոր խնդրի իրագործմանը: Լիբանանում արդեն իսկ ձևավորվել էր արևմտամետ վարչակազմ, որ կտրականապես դեմ էր երկրում պաղեստինյան և սիրիական ռազմական ներկայությանը և պատրաստակամություն էր հայտնել սերտացնել իր շփումներն Իսրայելի հետ, ճնշել լիբանանյան ձախ

---

[583] E. Picard, Lebanon a Shattered Country: Myths and Realities of the Wars in Lebanon, New York, London, 1993, pp. 126-127.

[584] H. Cobban, The Making of the Modern Lebanon, London, 1985, pp. 229-230.

ուժերին և այդ ճանապարհով «կայունություն» հաստատել երկրում, ինչը ճանապարհ պիտի հարթեր դեպի լիբանանաիսրայելյան հաշտության պայմանագրի կնքումը:

Լիբանանում ամերիկյան ազդեցության ուժեղացման պայմաններում 1982թ. վերջին լիբանանյան իշխանությունները ԱՄՆ-ի միջնորդությամբ համաձայնվեցին բանակցություններ վարել Իսրայելի հետ, որոնք միտված էին Լիբանանից իսրայելյան զորքերի դուրս բերմանը: Բանակցությունները սկսվեցին 1982թ. դեկտեմբերի 29-ին և ընթանում էին պարբերաբար Կիրիատ-Շմոնում (Իսրայել) և Խալդում (Բեյրութի արվարձան): Իսրայելյան կողմն իր զորքերի դուրս բերումը պայմանավորում էր լիբանանաիսրայելյան խաղաղության համաձայնագրի ստորագրմամբ, Լիբանանի հարավում ապառազմականացված «անվտանգության գոտու» պահպանմամբ և Հադդադի ղեկավարած ԼՀԲ-ի զորամիավորումների երկրի բանակում ընդգրկելով[585]:

Երկարատև բանակցությունների արդյունքում 1983թ. մայիսի 17-ին Լիբանանի և Իսրայելի պատվիրակությունները ստորագրեցին «Խաղաղության մասին համաձայնագիրը»: Այդ փաստաթուղթը նախատեսում էր երկու երկրների միջև պատերազմական իրավիճակի դադարեցում և իսրայելյան զորքերի աստիճանաբար դուրս բերում: Համաձայնագիրն արգելում էր Լիբանանին թույլ տալ իր տարածքով (նաև օդային) որևէ երկրի զորամիավորումների տեղաշարժ, որն Իսրայելի հետ չուներ դիվանագիտական հարաբերություններ[586]: Լիբանանն իր տարածքում չէր կարող ունենալ հրետանի, որի գործողության հեռավորությունը գերազանցեր 5 կմ-ը: Այնուհանդերձ պահանջում էր Լիբանանից չեղյալ հայտարարել ցանկացած համաձայնագիր, պայմանագիր կամ արձանագրություն, որ հակասում էր լիբանանաիսրայելական համաձայնագրի դրույթներին՝ նեռայալ բոլոր այն պարտավորությունները, որ Լիբանանը՝ որպես արաբական պետություն, ստանձնել էր 1945թ.-ից՝ դառնալով ԱՊԼ

---

[585] E. Picard, Lebanon a Shattered Country: Myths and Realities of the Wars in Lebanon, p. 127.

[586] The Text of Lebanese-Israeli (Putative) Peace Treaty տե՛ս Dilip Hiro, նշվ. աշխ., էջ 302-303:

հիմնադիր անդամ[587]: Այն սահմանափակեց լիբանանյան կառավարության Ալ-Զահրանի և Ալ-Առալի գետերի միջև ընկած տարածքում զորքերի տեղակայումը և պահանջեց կառավարությունից ճանաչել Իսրայելի հովանավորյալ ԼՀԲ-ը՝ որպես միակ օրինական ուժ, որ կարող էր վերահսկել մինչև Ալ-Զահրանի գետն ընկած տարածքը, ինչպես նաև թույլ էր տալիս լիբանանաիսրայելյան սահմանի երկայնքով իսրայելական վերահսկողական զորամիավորումների տեղակայում, որոնք լիազորված էին վերոնշյալ շրջանում ոչնչացնել ցանկացած զինված խմբավորում: Լիբանանի հարավին վերաբերող բոլոր որոշումները Լիբանանն ու Իսրայելը պետք է ընդունեին համատեղ[588]:

Լիբանանի խորհրդարանում համաձայնագիրը հավանության արժանացավ 64 կողմ և 2 դեմ ձայնով, սակայն նրա վավերացումը հետաձգվեց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իսրայելը Լիբանանից իր զորքերի դուրս բերումը պայմանավորում էր սիրիացիների և պաղեստինյան զինված խմբավորումների՝ երկրի տարածքից ամբողջությամբ դուրս բերմամբ: Նախագահ Ժմայելը խուսափեց իր ստորագրությունը դնել այդ համաձայնագրի տակ:

Հակառակ լիբանանյան աջերի, որոնք ոգևորությամբ ընդունեցին լիբանանաիսրայելական համաձայնագրի ստորագրումը, ձախ ուժերը, նրանց հետ համագործակցող շիական կազմակերպությունները, ինչպես նաև Սիրիան, կտրականապես մերժում էին ճանաչել այն՝ փաստարկելով, որ համաձայնագիրը ոտնահարում է Լիբանանի անկախությունն ու ինքնիշխանությունը: Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադն այս կապակցությամբ նշեց, որ լիբանանաիսրայելական համաձայնագրի համաձայն՝ իսրայելական զինվորները հայտնվում էին Դամասկոսից 24 կմ, իսկ սիրիական զորքերը՝ Թել-Ավիվից 250 կմ հեռավորության վրա, ինչն Իսրայելի հետ պատերազմական վիճակում գտնվող Սիրիային թելադրում էր բացասաբար վերաբերվել այդ համաձայնագրին[589]:

---

[587] The Text of Lebanese-Israeli Peace Treaty տե՛ս նաև http://www.monde-diplomatique.fr/cahier/proche-orient/region-liban

[588] Նույն տեղում:

[589] Ե. Պրիմակով, Մի դավադրության պատմություն, Երևան, 1987, էջ 361:

1983թ. հունիսի 23-ին ձախ ուժերը հայտարարեցին «Ազգային փրկության» ճակատի (ԱՓՃ) ստեղծման մասին, որում միավորվեցին «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցությունը, «Լիբանանի կոմունիստական» կուսակցությունը, «Կոմունիստական գործունեության» կուսակցությունը և այլն: Ճակատին իրենց աջակցությունը հայտնեցին նաև նախկին վարչապետ Ռաշիդ Քարամեն և նախկին նախագահ Սուլեյման Ֆրանջիեն: ԱՓՃ-ի հետ սերտորեն համագործակցում էր նաև շիական «Ամալ» շարժումը: Ճակատի խարտիան որպես նպատակ հռչակեց Լիբանանից իսրայելյան զորքերի և բազմազգ խաղաղապահ ուժերի դուրս բերումը, ինչպես նաև լիբանանա-իսրայելյան համաձայնագրի չեղյալ հայտարարումն ու լիբանանյան աջերի, մասնավորապես «Քաթաիբ» կուսակցության քաղաքական մենիշխանության դեմ պայքարը, ինչի արդյունքում էլ հնարավոր էր դարձել այդ համաձայնագրի ստորագրումը[590]:

«Խաղաղության մասին համաձայնագրի» ստորագրումն ուժեղացրեց մի կողմից լիբանանյան աջերի և Իսրայելի, իսկ մյուս կողմից՝ ԱՓՃ-ի միջև հակամարտությունը, որին զգալի աջակցություն էին ցույց տալիս Սիրիան և Լիբանանի որոշ շրջաններում դեռևս իրենց ներկայությունը պահպանած պաղեստինյան զինված խմբավորումները:

Իսրայելի հետ համաձայնագրի կնքումը լիբանանյան վարչակազմը հիմնավորում էր այն փաստարկով, որ այն նախատեսում էր իսրայելյան զորքերի աստիճանաբար դուրս բերում: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, Իսրայելն իր զորքերի դուրս բերումը նախապայմանավորում էր սիրիական զորքերի դուրս բերմամբ: Սիրիան իր հերթին կտրականապես հրաժարվում էր իր զորքերը դուրս բերել Լիբանանի տարածքից՝ դրան հակադրելով սեփական տարբերակը՝ զորքերի դուրս բերումը միայն ՄԱԿ-ի ԱԽ համապատասխան բանաձևերի հիման վրա իսրայելյան զորքերի դուրս բերումից հետո:

---

590 G. Helmick, Internal Lebanese Politics: The Lebanese Front and Forces, London, 1988, pp. 306-323, Toward a Viable Lebanon, ed. by H. Barakat, Croom Helm & Washington Center for Contemporary Arab Studies, London, 1988, p. 317.

հետո[591]: Իսրայելը հրաժարվեց այդ առաջարկից: Հետևաբար լիբանանահիսրայելյան համաձայնագրի ստորագրման լիբանանյան վարչակազմի ամենագլխավոր փաստարկը՝ իսրայելյան զորքերի դուրս բերումը, կորցրեց իր նշանակությունը՝ պահպանելով Լիբանանի և Սիրիայի համար բոլոր բացասական դրույթները:

Լիբանանահիսրայելյան համաձայնագրի ստորագրումից հետո Լիբանանում դեպքերի զարգացումը կենտրոնացավ հիմնականում մինչև Առալի գետն ընկած տարածքներից իսրայելյան զորքերի մասնակի դուրս բերման վրա: Էական նշանակություն ունեցավ 1983թ. սեպտեմբերի 3-ին մեծամասամբ դրուզներով բնակեցված Լեռնային Լիբանանի Շուֆ շրջանից իսրայելյան զորքերի դուրս բերումը, որոնք այդ շրջանում ձախ ուժերի հետ բախումներում կրում էին զգալի կորուստներ: Շուֆից իսրայելյան զորքերի դուրս բերումից հետո նրանց դիրքերը գրավեցին աջ ուժերի զինված խմբավորումներն ու լիբանանյան բանակի ստորաբաժանումները, ինչն իր հերթին բախումներ առաջ բերեց վերջիններիս և դրուզների զինված ջոկատների միջև: Ռազմական գործողությունների ընթացքում Շուֆը մաքրվեց լիբանանյան աջերի զինված ստորաբաժանումներից և անցավ ձախերի հսկողության տակ[592]: Երկյուղելով, որ դեպքերի նման զարգացումը կարող էր նպաստել լիբանանահիսրայելյան խաղաղության համաձայնագրի չեղյալ հայտարարմանը, ԱՄՆ-ը լիբանանյան բանակի ստորաբաժանումներին և աջ ուժերի զինված խմբավորումներին աջակցություն ցույց տալու նպատակով որոշեց միջամտել ռազմական գործողություններին: Ամերիկյան հետևակը և 6-րդ նավատորմի նավերը լայնածավալ ռմբակոծության ենթարկեցին Լեռնային Լիբանանում ձախ ուժերի դիրքերը[593]: Նպատակ հետապնդելով ստիպել սիրիական կառավարությանը հրաժարվել ձախ ուժերին ցույց տրվող աջակցությունից և իր զորքերը դուրս բերել Լիբանանի տարածքից՝ Սիրիա գործուղվեց ԱՄՆ-ի նախագահի

---

[591] L. Rokach, Israel's Sacred Terrorism, Association of Arab-American University Graduates, 1986, pp. 24-30.
[592] D. Hiro, նշվ. աշխ., էջ 299:
[593] Նույն տեղում:

հատուկ ներկայացուցիչ Ռ. Մակֆարլեյնը[594]: Սակայն ո՛չ տարածաշրջանում ամերիկյան ուղղակի ռազմական ներկայությունը, ո՛չ էլ քաղաքական ճնշումները չստիպեցին Սիրիային փոխել իր դիրքորոշումը:

Մինչ այդ՝ 1983թ. հուլիսին արևմտյան Բեյրութի շիա փախստականներով բնակեցված թաղամասերից մեկում առաջին լուրջ զինված բախումները տեղի ունեցան «Ամալի» զինված ջոկատների և ռամիավորումները փորձում էին տեղի դպրոցի տարածքը «մաքրել» շիա փախստականներից, որոնք երկու օր «Ամալի» զինված ջոկատների աջակցությամբ դիմադրություն էին ցույց տալիս:

Բախումներն «Ամալի» և բանակային զորամիավորումների միջև վերսկսվեցին օգոստոսի վերջին և որոշ ընդհատումներով տևեցին մինչև սեպտեմբերի 25-ը[595], երբ լիբանանյան հակամարտությունը մեջ ներքաշված բոլոր կողմերը համաձայնեցին զինադադարի կնքել: Այս ընթացքում շիական համայնքի ներսում ավելանում էին ճնշումներն ու դժգոհությունները «Ամալի» ղեկավարության հանդեպ, որը համաձայնել էր համագործակցել լիբանանյան իշխանությունների հետ և կնքել զինադադար:

1983թ. սեպտեմբերի 25-ին Սիրիայի և Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ լիբանանյան հակամարտող ուժերը ստորագրեցին կրակի դադարեցման մասին հերթական համաձայնագիրը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հրավիրել ազգային երկխոսության համաժողով, որը բացառելու էր ոչ հավասարակշռված որոշումների ընդունումը[596]: Փաստորեն, սա նշանակում էր «Քաթաիբ» կուսակցության քաղաքական մենիշխանության, ինչպես նաև լիբանանյան հակամարտության կարգավորման գործընթացում այլ ուժերի և նրանց արևմտյան դաշնակիցների փորձերի ձախողում: Լիբանան-

---

[594] Մակֆարլեյնը փոխարինել էր Ֆիլիպ Հաբիբին, որի հետ սիրիացիները հրաժարվել էին բանակցել դեռևս 1983թ. հունիսին:

[595] L. Weymouth, "What the Shias Want in Bloody Lebanon", Los Angeles Times, November 13, 1983, p. 2.

[596] Shi'is and Social Protest, p. 151.

յան գործերում նախաձեռնությունը կրկին անցավ լիբանանյան ձախերի և Սիրիայի կողմը:

Լիբանանյան հակամարտության դեռևս չկարգավորված լինելը, 1982թ. իսրայելական ներխուժումը, հակամարտող կողմերի և նրանց դաշնակիցների գործողությունները նպաստեցին Լիբանանում, մասնավորապես շիական շրջանակներում ծայրահեղական տրամադրությունների սրմանը: Պատահական չէր, որ 1983թ. ապրիլին շիական ծայրահեղականները Լիբանանում պայթյուն կազմակերպեցին ԱՄՆ դեսպանատան մոտ, իսկ 1983թ. հոկտեմբերի 23-ին միաժամանակ պայթյուններ տեղի ունեցան նաև Լիբանանում տեղակայված բազմազգ խաղաղապահ ուժերի ամերիկյան և ֆրանսիական զորամիավորումների զորանոցներում[597]: Պայթյունի հետևանքով զոհվեց տարբեր տվյալներով 50-56 ֆրանսիացի և 239-241 ամերիկացի զինծառայող[598]: Պայթյունների կազմակերպման պատասխանատվությունն իր վրա վերցրեց մինչ այդ անհայտ «Իսլամական ջիհադ» խմբավորումը, սակայն որոշ ժամանակ անց մամուլից հայտնի դարձավ, որ պայթյունները կազմակերպել էին Հուսեյն Մուսավին և Մուհամմադ Հուսեյն Ֆադլալլահը[599]:

1983թ. հոկտեմբերի 10-ին Իսրայելի զինված ուժերը Նաբաթիայում հարձակվեցին Աշուրայինի[600] մասնակցող շիաների բազմամարդ թափորի վրա, որին հաջորդած զարգացումների և շիական համայնքում անհանդուրժողական տրամադրությունների մեծացման արդյունքում 1985թ. մարտին շիա ազդեցիկ ղեկավարներից մուֆթի Մու-

---

[597] E. Picard, The Lebanese Shi's and Political Violence, Geneva: Unites Nations Research Institute for Social Development, 1993, pp. 34-35.

[598] E. Picard, Lebanon. A Shattered Country: Miths and Realities of the Wars in Lebanon, p. 127.

[599] A. Norton, Shi'ism and Social Protest in Lebanon, London, 1986, p. 172.

[600] Աշուրան շիական կրոնական օրացույցի գլխավոր ամսաթիվն է՝ շիա իմամ Ալ-Հուսեյնի իբն Ալիի նահատակման հիշատակության օրը (ավելի հայտնի է «շախսեյ-վախսեյ» անվամբ), որը սպանվել է 680թ. հոկտեմբերի 10-ին: Սովորաբար այդ օրը կազմակերպվում են բազմամարդ թափորներ, որոնց ընթացքում թափորի մասնակիցներն իրենք իրենց մտրակում են, իսկ ավելի մոլեռանդ հավատացյալներն անգամ իրենց գանահարում են դանակներով և այլ սուր գործիքներով:

համմադ Մահդի Շամս Ալ-Դինը «պաշտպանական ջիհադ» հայտարարեց Իսրայելի դեմ[601]:

Հոկտեմբերի վերջին Տիրում կրկին պայթեցվեց իսրայելական սպայակույտի շենքը, որի արդյունքում սպանվեցին տասնյակ իսրայելցիներ[602]: Վերոնշյալ զարգացումների արդյունքում Իսրայելում և Արևմուտքում ավելի հաճախակի դարձան Լիբանանից իսրայելական զորքերի և բաժմազգ ուժերի դուրս բերման օգտին հնչող կոչերը, սակայն ԱՄՆ նախագահ Ռեյգանը հայտարարեց, որ ամերիկյան ծովային հետևակը դեռևս դուրս չէր բերվի Բեյրութից, քանի դեռ Լիբանանում շարունակում էին մնալ օտարերկրյա զինված ուժեր[603]: Իրենց հերթին ֆրանսիական ռազմաօդային ուժերը հոկտեմբերի վերջին Բաալբեքի շրջանում գրոհի ենթարկեցին շիա ծայրահեղականների դիրքերը, իսկ դեկտեմբերի 4-ին ամերիկյան 6-րդ նավատորմի օդային ուժերը ռմբակոծեցին նաև Լեռնային Լիբանանում սիրիական զորքերի դիրքերը[604]:

Լիբանանում զինված հակամարտության կարգավորմանն էր միտված ազգային երկխոսության համաժողովի անցկացումը, որի առաջին փուլը կայացավ Ժնևում 1983թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը: Համաժողովին իրենց մասնակցությունը բերեցին Լիբանանի նախագահ Ամին Ժմայելը, ԱՓՇ-ի ղեկավարներ՝ Վալիդ Ջումբլաթը, Ռաշիդ Քարամեն, Սուլեյման Ֆրանժիեն, «Ամալ» ղեկավար Նաբիհ Բերրին, աջ ուժերի ղեկավարներ Պիեր Ժմայելը, Քամիլ Շամունը և այլն: Համաժողովին մասնակցեցին նաև Սիրիայի արտաքին գործերի նախարար Աբդ Ալ-Հալիմ Խադդամը և Սաուդյան Արաբիայի պետնախարար Մաուդը[605]: Դժվարին բանակցություններից հետո համաժողովում ձեռք բերվեց կրակի դադարեցման վերաբերյալ համաձայնագիր, որի հա-

---

[601] Մուֆթի Շամս Ալ-Դինի կոչը տե՛ս Daily Report, Middle East & Africa, March 5, 1985, p. 62.

[602] A. Norton, External Intervention and the Politics of Lebanon, Washington, D. C.: Washington Institute for Values in Public Policy, pp. 12-13.

[603] D. Hiro, նշվ. աշխ., էջ 299:

[604] Նույն տեղում:

[605] Новейшая история Арабских стран Азии, с. 152.

մար հիմք ծառայեց լիբանանահսրայելյան համաձայնագրի այս կամ այն չափով համընդհանուր դատապարտումը: Պարզ դարձավ, որ ներլիբանանյան բախումների հուսալի դադարեցումը հնարավոր էր միայն լիբանանահսրայելյան համաձայնագրի չեղյալ հայտարարման հիմքի վրա, որի հետ լիովին համաձայն էր Սիրիան: Համաժողովը որոշում ընդունեց չեղյալ հայտարարել լիբանանահսրայելյան համաձայնագիրը և հանձնարարեց Ամին Ժմայելին այցելել Վաշինգտոն՝ ամերիկյան վարչակազմի հետ քննարկելու Լիբանանից իսրայելյան զորքերի դուրս բերման հարցը: ԱՄՆ-ն իր հերթին փորձեց ճնշումների միջոցով ստիպել Լիբանանի նախագահին՝ հրաժարվել լիբանանահսրայելյան համաձայնագրից[606]:

Լիբանանում խորացող հակամարտության պայմաններում 1984թ. հունվարին ձախ ուժերի զինված խմբավորումները նոր դիրքեր գրավեցին Լեռնային Լիբանանում և Բեյրութի հարավային արվարձաններում: Լիբանանյան բանակը ԱՄՆ-ի ծովային հետևակի աջակցությամբ հրետանային հարձակման ենթարկեց արևմտյան Բեյրութի շիական թաղամասերը: Փետրվարի 4-ին «Ամալի» ղեկավար Նաբիհ Բերրին կոչով դիմեց բանակի իսլամադավան շարքային զինվորներին, որոնք հիմնականում շիաներ էին և խնդրեց ձեռնպահ մնալ զինված բախումներին մասնակցությունից[607]: Բերրիի կոչից մի քանի ժամ անց շիա և ընդհանրապես իսլամադավան զինվորները լքեցին բանակի շարքերը: Կոչին հետևեց բանակի նոր պառակտումը քրիստոնեական և մուսուլմանական մասերի: Փետրվարի 6-ին ձախ ուժերը և «Ամալն» իրենց կողմն անցած շարքային զինվորների օժանդակությամբ պարտության մատնեցին բանակային ստորաբաժանումներին և վերահսկողություն հաստատեցին արևմտյան Բեյրութում՝ պահանջելով լիբանանահսրայելյան հանձնագրի չեղյալ հայտարարում[608]: Լիբանանում դեպքերի վերոնշյալ զարգացումները ստիպեցին ԱՄՆ-ին փետրվարի 7-ին ամե-

---

[606] Նույն տեղում:

[607] A. Norton, Shi'ism and Social Protest in Lebanon, p. 175.

[608] H. Cobban, The Growth of Shi'i Power in Lebanon and Its Implication for the Future, Shi'ism and Social Protest, p. 151.

րիկյան ծովային հետևակը և բազմազգ խաղաղապահ ուժերի մեջ ներգրավված իր զորքերը 6-րդ նավատորմի նավերով շուտափույթ դուրս բերել Բեյրութից[609]:

6. Քաղաքացիական պատերազմի վեցերորդ փուլը (1984թ. փետրվարից մինչև 1988թ.): Միրիական դիրքերի վերահաստատումը Լիբանանում

Վերոնշյալ զարգացումների արդյունքում լիբանանյան վարչակազմը նույնպես հարկադրված էր վերանայել իր քաղաքական ուղեգիծը: Փետրվարի 28-ին Ամին Ժմայելն առաջին անգամ այցելեց Դամասկոս, ինչն ընկալվեց որպես լիբանանյան իշխանությունների բացառապես արևմտամետ, ինչպես նաև միայն Իսրայելի հետ հարաբերությունից հրաժարում և լիբանան-յան հակամարտության կարգավորման գործընթացում Սիրիայի առհասարակ դերի ճանաչում: 1984թ. մարտի 5-ի Դամասկոսի հետ ստորագրված պայմանավորվածության համաձայն լիբանանյան կառավարությունը պաշտոնապես չեղյալ հայտարարեց Իսրայելի հետ «Խաղաղության համաձայնագիրը»[610]:

Մայիսի 17-ի համաձայնագրի չեղյալ հայտարարումը նոր քաղաքական իրավիճակ ստեղծեց Լիբանանում և նրա շուրջ: 1984թ. փետրվար-մարտ ամիսներին Լիբանանից դուրս բերվեցին նաև բազմազգ ուժերի կազմում ներգրավված ֆրանսիական, իտալական և անգլիական առորաբաժանումները[611]: Կրկին ստեղծվեց ներլիբանանյան հակամարտությունը քաղաքական ճանապարհով կարգավորելու հնարավորություն: Մարտի 12-20-ը Լոզանում հրավիրվեց ազգային երկոսության համաժողովի 2-րդ փուլը: Տարածայնու-

---

[609] Նույն տեղում:
[610] A. Norton, External Intervention and the Politics of Lebanon, pp. 12-13.
[611] Ch. Herzog, The Arab-Israeli Wars: War and Peace in the Middle East, New York, 1989, p. 351.

թյունների առկայության պատճառով հակամարտող կողմերը չկարողացան համաձայնության գալ քաղաքական բարեփոխումների հարցում: Նրանք հաստատեցին կրակի դադարեցման համար անհրաժեշտ միջոցառումները և հավանություն տվեցին նոր սահմանադրության մշակման սկզբունքներին[612]: Ապրիլին Ամին Ժմայելի Դամասկոս նոր այցելության շրջանակներում համաձայնեցվեց լիբանանյան քաղաքական կառուցվածքի բարեփոխումների համալիրը, որը, պահպանելով կրոնադավանական համակարգը, նախատեսում էր բարեփոխումների արդյունքում հավասարեցնել իսլամադավանների և քրիստոնյաների իրավունքները[613]:

Դամասկոսի անմիջական միջամտությամբ՝ բանակցությունների արդյունքում 1984թ. մայիսի 7-ին կազմավորվեց «ազգային միասնության» կառավարություն՝ ազդեցիկ սուննի ղեկավար Ռաշիդ Քարամեի գլխավորությամբ[614]: Նոր կառավարության կազմում ներգրավվեցին հակամարտող ճամբարների ղեկավարները՝ «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցության ղեկավար Վալիդ Ջումբլաթը և «Ամալ» շարժման ղեկավար Նաբիհ Բերրին, ինչպես նաև աջ ուժերը ներկայացնող Պիեր Ժմայելը և Քամիլ Շամունը: Նաբիհ Բերրին նոր կառավարության կազմում ստանձնեց Լիբանանի հարավի գործերի և վերակառուցման նախարարի նորաստեղծ պաշտոնը և պարտավորվեց օգնել նախագահին երկրում կարգուկանոն հաստատելու գործում[615]: Այս նշանակումից հետո «Ամալ» շարժումն իր գործունեությունը տեղափոխեց հիմնականում քաղաքական դաշտ, իսկ Հարավային Լիբանանում իսրայելյան ներկայության դեմ զինված պայքարը գլխավորեց «Հիզբալլահ» շարժումը[616]: Նոր կառավարության ծրագիրն արտացոլում էր ձախ ուժերի պահանջները՝ իսրայելական զորքերի դուրս բերում, անկախ

---

[612] T. Chamoun, Au Nom du Père, Paris, p. 121.
[613] E. Picard, Lebanon a Shattered Country: Myths and Realities of the Wars in Lebanon, p. 128.
[614] J. Cole and N. Keddie, Shi'ism and Social Protest, London, 1986, p. 149-150.
[615] H. Cobban, The Growth of Shi'i Power in Lebanon and Its Implications for the Future, p. 152.
[616] Նույն տեղում:

արտաքին քաղաքականության վարում, Սիրիայի հետ համագործակցության սերտացում և հակամարտող կողմերի միջև համաձայնեցված քաղաքական բարեփոխումների իրականացում[617]:

Նոր կառավարության առաջին քայլերից էր Դ-բայում իսրայելական կապերի գրասենյակի փակումը: Լիբանանում ստեղծված նոր իրավիճակը հնարավորություն տվեց իշխանություններին, որ իրենց գործողությունները համաձայնեցնում էին Սիրիայի հետ, ավելի ակտիվորեն պայքարել երկրից իսրայելյան զորքերի դուրս բերման համար: Էական մարդկային կորուստները, ֆինանսական ծախսերը, հարավի բնակչության՝ մասնավորապես շիաների զինված պայքարը, ստիպեցին իսրայելյան նոր կառավարությանը՝ Շիմոն Պերեսի գլխավորությամբ, համաձայնել զորքերի դուրս բերման հետ՝ այն չպայմանավորելով Լիբանանից սիրիական զորքերի դուրս բերմամբ[618]:

Լիբանանյան կառավարության և Իսրայելի միջև բանակցությունները սկսվեցին 1984թ. նոյեմբերին Նակուրա բնակավայրում՝ լիբանանաիսրայելյան սահմանի մոտ: Իսրայելյան զորքերի դուրս բերման առաջին փուլը նախատեսում էր զորքերի հեռացում Սիդոնի շրջակայքից մինչև Լիտանի գետը: Այդ շրջանում անվտանգության ապահովման համար պատասխանատվություն իսրայելյան կողմը դնում էր լիբանանյան բանակի վրա: Երկրորդ փուլը նախատեսում էր զորքերի դուրս բերում երկրի կենտրոնական և արևելյան շրջաններից և դուրս բերված զորքերի վերադասավորում լիբանանաիսրայելյան սահմանի շրջանում: Երրորդ և վերջին փուլը նախատեսում էր զորքերի դուրս բերում դեպի Իսրայելի հյուսիսային սահման: Լիբանանի հարավում պահպանվելու էր 10 կմ լայնությամբ «անվտանգության գոտին», որը շարունակելու էր վերահսկել ԼՀՔ-ը[619]:

---

[617] Е. Примаков, История одного зговора (Ближневосточная политика США в 70-е-начале 80-х годов), Москва, 1985, с. 305.
[618] Новейшая история Арабских стран Азии, с. 153.
[619] С. Гасратян, Ю. Агавельян, Отнашения Израиля с Ливаном: религиозно-политические проблемы, Востоковедный сборник, Выпуск 11, Институт изучения Израиля и Ближнего Востока, Москва, 2001, с. 88.

Փաստենք, որ 1985թ. հունիսի 6-ին ավարտվեց Լիբանանի մեծ մասից իսրայելյան զորքերի դուրս բերումը: Իսրայելցիները լքեցին Սայդան, Տիրը, Նաբաթիան, Լեռնային Լիբանանի մեծ մասը և Բեքաայի հովիտը: Այդուհանդերձ, Թել-Ավիվն իր ներկայությունը պահպանվեց լիբանանաիսրայելական սահմանի երկայնքով «անվտանգության գոտում»՝ ԼՀՔ-ի տրամադրության տակ թողնելով 1000 իսրայելցի զինվորներ[620]: Իսրայելը պահպանեց նաև «անհրաժեշտության դեպքում» Լիբանանի տարածքում գրոհներ իրականացնելու իրավունքը:

Մինչ այդ Լիբանանում աջ ուժերի համար ոչ բարենպաստ զարգացումները կանխելու նպատակով լիբանանյան աջ ուժերի առավել ծայրահեղական թևը՝ զինված ուժերի հրամանատար Սամիր Ջաջայի[621] գլխավորությամբ, 1985թ. մարտի 11-ին հանդես գալով քրիստոնյաների՝ առավելապես մարոնիների գերակա դիրքերի պահպանման կարգախոսով և Ամին Ժմայելի վարչակազմի Սիրիայի հետ մերձեցման կտրուկ քննադատությամբ՝ վերահսկողություն

---

[620] 1985թ. հունիսի 6-ին լքելով Լիբանանի մեծ մասը՝ իսրայելցիներն իրենց հետ տարան 1000 լիբանանցի գերիներ, որոնք հիմնականում շիա մարտիկներ էին: Ի պատասխան շիա ծայրահեղակաները գրավեցին ամերիկյան մի ավիաընկերության «Բոինգ 727» ինքնաթիռը, որ Աթենքից մեկնում էր Հռոմ և ստիպեցին օդաչուին վայրէջք կատարել Բեյրութի օդանավակայանում՝ գերիների ազատ արձակումը պայմանավորելով Իսրայելում բանտարկված շիաների ազատ արձակմամբ: Սակայն ամերիկյան և իսրայելական իշխանությունները կտրականապես հրաժարվեցին բանակցել ահաբեկիչների հետ: Նման պայմաններում վերջիններիս հետ բանակցությունները իր վրա վերցրեց «Ամալ» շարժման ղեկավար Նաբիհ Բերրին: Հունիսի վերջին համապատասխան պայմանավորվածություններ ձեռք բերվեցին գերիների և Իսրայելում բանտարկված շիա մարտիկների ազատ արձակման ուղղությամբ: Այս մասին մանրամասն տե՛ս П. Кальвокоресси, Мировая политика после 1945 года, т. 1, Москва, 2000. с. 515.

[621] 1982թ. Բաշիր Ժմայելի սպանությունից հետ լիբանանյան աջերի զինված ուժերի հրամանատարությունը ստանձնեց Ֆադի Աֆրամը: 1984թ. մարտին՝ լիբանանաիսրայելական խաղաղության համաձայնագրի չեղյալ հայտարարումից հետո, լիբանանյան ուժերի հրամանատար նշանակվեց Ֆուադ Աբու Նադրը, որին 1985թ. մարտի սկզբին փոխարինեց Սամիր Ջաջան:

հաստատեց ողջ «Լիբանանյան ճակատի» հանդեպ: Դրան հետևեց աջ ուժերի զինված ջոկատների վերազինումն ու Սիդոնի շրջանում ձախ ուժերի դիրքերի դեմ գրոհները: Ձախ ուժերի ստորաբաժանումները պարտության մատնեցին Ջաջայի զինված ջոկատներին և վերահսկողություն հաստատեցին Բեյրութ-Սիդոն ռազմավարական մայրուղու նկատմամբ[622]:

Ռազմական պարտությունը սրեց աջ ուժերի ճակատում առկա հակասությունները: Մայիսին լիբանանյան աջ ուժերի զինված խմբավորումների հրամանատարի պաշտոնում Սամիր Ջաջային փոխարինեց առավել չափավոր քաղաքականության կողմնակից Ալի Հոբեյկան, ով պատրաստակամություն հայտնեց Դամասկոսի հովանու ներքո ձախ ուժերի հետ կնքել կրակի դադարեցման մասին համաձայնագիր[623]:

1985թ. աշնանը Դամասկոսում սկսվեցին լիբանանյան հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններ՝ լիբանանյան ձախ ուժերի, «Ամալի» և լիբանանյան աջերի միջև: Դեկտեմբերի 28-ին բանակցություններն ավարտվեցին «Եռակողմ համաձայնագրի» ստորագրմամբ, որ նախատեսում էր քաղաքացիական պատերազմի դադարեցում և արմատական բարեփոխումների իրականացում[624]:

Այդ փաստաթղթի համաձայն՝ Լիբանանի կառավարման հիմքում ընկած կրոնադավանական համակարգը պետք է աստիճանաբար՝ 11-ից 13 տարիների ընթացքում վերացվեց: Անցումային շրջանի ընթացքում նախատեսվում էր մարոնի նախագահի իշխանության սահմանափակում և միաժամանակ կառավարության և խորհրդարանի լիազորությունների ընդլայնում, ինչպես նաև քրիստոնյաների և իսլամադավանների հավասար ներկայացուցչության ապահովում երկրի խորհրդարանում: Համաձայնագիրը հռչակում

---

[622] С. Гасратян, Ю. Агавельян, Отнашения Израиля с Ливаном-религиозно-политические проблемы, с. 89.
[623] D. Hiro, նշվ. աշխ., էջ 299:
[624] The Text of Tripartite Accord տե՛ս
http://www.monde-diplomatique.fr/cahier/proche-orient/region-liban

էր Լիբանանի և Սիրիայի միջև «հատուկ բնույթի» հարաբերություններ, ընդհուպ մինչև «ռազմավարական ինտեգրացիա»[625]:

1980-ականների սկզբին Լիբանանում ընթացող զարգացումները՝ 1982թ. իսրայելական ներխուժումը, բազմազգ ուժերի տեղակայումը, լիբանանաիսրայելյան խաղաղության համաձայնագրի ստորագրումը ու դրանց արդյունքում լիբանանյան ճգնաժամի խորացումը, մեծապես պայմանավորված էին նաև «սառը» պատերազմի շրջանակներում գերտերությունների ու նրանց մերձավորարևելյան դաշնակիցների միջև հակամարտության խորացմամբ: Մի շարք գործոններով պայմանավորված՝ Լիբանանն արաբական երկրների շարքում դարձավ այն թույլ օղակը, որտեղ բախվեցին գերտերությունների ու նրանց տարածաշրջանային դաշնակիցների շահերը: ԱՄՆ-ի հովանու ներքո քեմփդևիդյան գործընթացն իր հնարավոր շարունակությունն ունեցավ Լիբանանում: Արդյունքում, 1983թ. ստորագրվեց լիբանանաիսրայելյան խաղաղության համաձայնագիրը, որը սակայն ոչ միայն չհանգեցրեց Լիբանանի և Իսրայելի միջև վերջնական խաղաղության հաստատմանն ու Լիբանանում իրավիճակի կայունացմանը, այլ նաև էլ ավելի խորացրեց ներլիբանանյան հակասությունները: Երկրում տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային զինված ուժերի առկայությունն առաջ բերեց արմատական տրամադրությունների և զինված դիմադրության ուժեղացում, որի արդյունքում էլ չեղյալ հայտարարվեց լիբանանաիսրայելյան համաձայնագիրը, իսկ իսրայելյան զինված ուժերը (բացառությամբ «անվտանգության գոտուց») և բազմազգ խաղաղապահ ուժերի ստորաբաժանումներն արդեն 1984-85թթ. հարկադրաբար դուրս բերվեցին Լիբանանի տարածքից:

* * *

Նշենք, որ 1980-ականների երկրորդ կեսին սրվեցին ձախ ուժերի ճակատում համագործակցող շիական շրջանակների և պաղես-

---

[625] Նույն տեղում:

տինյան զինված խմբավորումների միջև հակասությունները: Նախ ներքին պայքար գոյություն ուներ «Ամալի» և «Հիզբալլահի» միջև, ինչը ներհամայնքային հակասությունների վառ օրինակ էր[626]: Այս պայքարի արդյունքում 1984թ. մի շարք զինված բախումներ տեղի ունեցան վերոնշյալ շիական ուժերի միջև, ինչը բացատրվում էր այն հանգամանքով, որ և՛ «Ամալը» և՛ «Հիզբալլահը» ցանկանում էին հնարավոր ամբողջական ազդեցություն ունենալ լիբանանյան շիաների շրջանում: Այս հարցում խիստ ակտիվություն էր ցուցաբերում նաև Սիրիան, որը, սակայն, ելնելով իր շահերից, փորձում էր հնարավորինս նպաստել շիական երկու շարժումների միջև հավասարակշռության պահպանմանը: Այդ նպատակով 1987թ. սիրիական զորքերը ներխուժեցին Բեյրութի հարավային արվարձաններում տեղակայված «Հիզբալլահի» ռազմական ճամբարներ, որի արդյունքում զոհվեց 22 մարդ[627]: «Հիզբալլահ» և «Ամալ» շիական շարժումների նկատմամբ իր ազդեցության ցուցադրումն այն գլխավոր «խաղաքարտերից» մեկն էր, որ հնարավորություն էր տալիս Սիրիային մեկ անգամ ևս ընդգծել իր կարևոր դերը լիբանանյան հարցերի բարդ խաղում:

Փաստենք, որ միջշիական լարվածությունը շարունակվեց նաև 1988-1990թթ. ընթացքում, երբ Բեյրութի արվարձաններում և հարավային Լիբանանում կրկին զինված բախումներ տեղի ունեցան «Ամալ» և «Հիզբալլահ» շարժումների միջև: 1990թ. նոյեմբերի 6-ին Սիրիայի ակտիվ միջամտությամբ հաջողվեց զինադադար կնքել, ինչը նպաստեց Լիբանանում ներշիական բախումների դադարեցմանը[628]:

1985թ. հունիսին հարաբերությունները սրվեցին նաև շիական զինված ջոկատների և պաղեստինյան մարտիկների միջև: Նրանց միջև առկա հակասությունները վերաճեցին զինված բախումների,

---

[626] Арабский мир, Три десятилетия независимого пазвития, М., 1990, с. 91.

[627] Н. Шевченко, Ливанская “Хезболлах” и ее роль на Ближнем Востоке, Востоковедный сборник, Выпуск 4, Институт изучения Израиля и Ближнего Востока, М., 2002, с. 345.

[628] Նույն տեղում:

որը ստացավ «ճամբարների պատերազմ» անվանումը: Շիական զինված ջոկատները ձգտում էին թույլ չտալ տարբեր տվյալներով 2.000-2.500 պաղեստինյան մարտիկների հնարավոր վերադարձը Լիբանան և նրանց վերահաստատումը շիական վերահսկողության շրջաններ, հատկապես Բեյրութի արվարձաններում և Հարավային Լիբանանում գտնվող պաղեստինյան փախստականների ճամբարներ: Այդ «պատերազմի» ողջ ընթացքում պաղեստինցիների և շիաների միջև ստորագրվեցին մի շարք համաձայնագրեր, որոնք, սակայն, անընդհատ խախտում էին հակամարտող ուժերը: 1987թ. սեպտեմբերի 11-ին ստորագրվեց վերջնական համաձայնագիրը, որով հաշտություն կնքվեց հակամարտող կողմերի միջև և հայտարարվեց «ճամբարների պատերազմի» ավարտը, որի ընթացքում սպանվեց 2.000-3.000 մարդ[629]:

Վերադառնալով շիական ծայրահեղական «Հիզբալլահ» շարժման գործունեությանը՝ նշենք, որ 1985թ. փետրվարի 16-ին հրապարակվեց շարժման «Բաց նամակը՝ ուղղված Լիբանանի և ողջ աշխարհի կեղեքվածներին»[630]: Այս փաստաթղթում շարադրված էին շարժման ծրագիրն ու հիմնական նպատակները.

1. Վերջ դնել իսրայելյան և ընդհանրապես օտարերկրյա զավթիչների ցանկացած ներկայությանը Լիբանանում.
2. Պատասխանատվության ենթարկել «Լիբանանյան փաղանգներ» կուսակցության ղեկավարներին՝ Լիբանանում իսլամադավանների և քրիստոնյաների դեմ իրականացված հանցագործությունների համար.
3. Բնակչությանը կոչ անել Լիբանանում ընտրել «իսլամական սկզբունքների վրա խարսխված իշխանություն», որը ստեղծված իրավիճակում միակ իրական հնարավորությունն էր՝ երաշխավորելու երկրում անկախության և արդարության վերահաստատումը[631].

---

[629] E. Picard, Lebanon. A Shattered Country: Miths and Realities of the Wars in Lebanon, p. 128.

[630] «Բաց նամակի» տեքստը տե՛ս ألنهار, «Ալ-նահար», Բեյրութ, 16.02.1985:

[631] Նույն տեղում:

Ծրագրում հիմնական թշնամիներ համարվում էին Իսրայելը, նրան հովանավորող ԱՄՆ-ը և արևմտյան տերությունները[632]: Ինչ վերաբերում է Իսրայելի հետ հնարավոր որևէ հարաբերություններին, ապա սկզբնական շրջանում շարժումը ոչ միայն մերժում էր Իսրայելի գոյության փաստը, այլև Լիբանանի շահերին դավաճանելու մեջ մեղադրում էր ցանկացած ուժի, որ պատրաստ էր միջնորդ լինել իսլայելյան կողմի հետ բանակցություններում:

Անդրադառնալով Լիբանանի կառավարման հիմքում դրված կրոնահամայնքային համակարգին՝ «Հիզբալլահը»՝ ի տարբերություն «Ամալի», գտնում էր, որ այդ համակարգը վաղուց սպառել է իրեն և այդ ուղղությամբ ցանկացած բարեփոխում համարում էր ոչ արդյունավետ[633]:

1980-ականներին «սառը» պատերազմի վերջին փուլում «Հիզբալլահն» իսլամն «առաջարկում էր» որպես այլընտրանք Արևմտյան կապիտալիզմին և Արևելքի սոցիալիզմին: Շարժումը փորձում էր իր քաղաքականության հիմնական ուղղություններն ընդօրինակել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական ուղեգծից և պատահական չէ, որ «Հիզբալլահն» իր «Բաց նամակում» Իրանն անվանում էր պետություն, որին կարելի է նմանվել[634]:

Իսրայելյան պաշտոնական կայքերում «Հիզբալլահին» տրվում է հետևյալ որակավորումը. «Հիզբալլահը» շիական ահաբեկչական կազմակերպություն է, որը գտնվում է Սիրիայի և Իրանի վերահսկողության ներքո»[635]: Ինչ վերաբերում է շարժման ահաբեկչական բնույթին, ապա նշենք, որ թեև «Հիզբալլահի» կայացմանն փուլում նրա քայլերն այս առումով բավական խոսուն էին (Բեյրութում միջազգային խաղաղապահ ուժերի զորանոցների պայթյուններ, Բաալբեքում լիբանանյան բանակի ռազմական ճամբարի վրա հարձակում, ինքնաթիռների առևանգում և պատանդների վերցնում), սակայն այդ գործողություններն ուղղված էին այն ժամանակ լիբա-

---

[632] Н. Шевченко, Ливанская “Хезболлах” и ее роль на Ближнем Востоке, Востоковедный сборник, с. 342.
[633] Նույն տեղում:
[634] www.hizballa.org
[635] www.ict.org.il

նանյան գլխավոր խնդրի՝ 1982թ. Իսրայելի հարավային Լիբանան ներխուժման հանդեպ համաշխարհային ուշադրության սևեռմանն ու հարավային Լիբանանից իսրայելյան զորքերի դուրս բերմանը և պայմանավորված էին Իսրայելի Լիբանանի հանդեպ վարվող քաղաքականությամբ:

Ինչ վերաբերում է «Հիզբալլահը» հովանավորող պետություններին՝ Իրանին և Սիրիային, ապա Իրանը «Հիզբալլահին» ֆինանսական օժանդակություն էր ցույց տալիս իր սեփական գաղափարական ազդեցության տարածման նպատակով՝ նաև լիբանանյան սուննի իսլամադավանների շրջանում, իսկ Սիրիան այս շարժումը համարում է «կարևոր լծակ և ճնշման յուրահատուկ միջոց» Իսրայելի հետ 1967թ. արաբ-իսրայելական պատերազմի ընթացքում վերջինիս գրաված Գոլանի բարձունքները վերադարձնելու բանակցություններում:

1970-1980-ական թվականներին լիբանանյան շիաների քաղաքական ակտիվացման արդյունքում աննախադեպ մեծացավ այդ համայնքի դերը Լիբանանի քաղաքական կյանքում: Շիաները, փաստորեն, գլխավորեցին Լիբանանում Իսրայելին դիմակայող ուժերի ճակատը: Պատահական չէ, որ հենց «Հիզբալլահի» ակտիվ գործողությունների արդյունքում 2000թ. մայիսի 24-ին Իսրայելը ստիպված էր իր զորքերը դուրս բերել Լիբանանի ողջ տարածքից՝ «անվտանգության գոտուց»:

7. Քաղաքացիական պատերազմի յոթերորդ փուլը (1988-1989թթ.): Միշել Աունի «Սիրիայից ազատագրման պատերազմը» և Տաիֆի համաձայնագրի ստորագրումը

1988թ. սեպտեմբերին լրացավ Լիբանանի նախագահ Ամին Ժմայելի պաշտոնավարման ժամկետը: Սակայն շարունակվող զինված հակամարտության պայմաններում այդպես էլ հնարավոր չեղավ նոր նախագահի ընտրության հարցում համաձայնության գալ ինչպես լիբանանյան աջ ուժերի, այնպես էլ ձախ շրջանակնե-

րի հետ: Արդյունքում սեպտեմբերի 21-ին Լիբանանի խորհրդարանը ձախողեց նոր նախագահի ընտրությունը[636]: Ստեղծված պայմաններում հաջորդ օրն Ամին Ժմայելը հանձնարարեց իր աշխատակազմի ղեկավար գեներալ Միշել Աունին ձևավորել ժամանակավոր «զինվորական կառավարություն»: Կառավարությունը պետք է կազմված լիներ հինգ սպաներից, որոնցից երեքը ներկայացնելու էին երկրի իսլամադավան համայնքները: Սակայն վետրոնշյալ երեք նախարարական աթոռներն այդպես էլ մնացին թափուր, քանի որ որևէ սուննի կամ շիա զինվորական չհամաձայնեց ներգրավվել ձևավորվող կառավարության կազմում[637]: Սրա հիմնական պատճառը թերևս այն էր, որ Լիբանանի կառավարման հիմքում ընկած կրոնադավանական համակարգի համաձայն երկրի վարչապետի պաշտոնը մշտապես պատկանում էր սուննի հանրությունից: Այս պարագայում մարոնի համայնքը ներկայացնող Աունի ժամանակավորապես վարչապետի պաշտոնում նշանակվելն ու կառավարություն ձևավորելու նախաձեռնությունը դիտվում էին որպես ոչ օրինական, ինչը հակասում էր «Ազգային դաշինքով» ամրագրված կրոնադավանական համակարգի սկզբունքներին:

Հակառակ երկրի աջ ուժերի շրջանում թվացյալ միասնությանը՝ «Լիբանանյան ճակատը» ևս միանշանակորեն չընդունեց Ամին Ժմայելի՝ ժամանակավոր կառավարության կազմավորումն Աունին հանձնարարելու որոշումը: 1980-ականների վերջին աջերի զինված խմբավորումների ղեկավարության շրջանում ուժեղանում էր մենիշխանության հաստատման համար մղվող պայքարը: Սամիր Ջաջան, որը 1987թ. կրկին ստանձնեց աջ ուժերի միլիսների հրամանատարությունը, փորձում էր իր վերահսկողությունը հաստատել ողջ «Լիբանանյան ճակատի» նկատմամբ և յուրովի էր պատկերացնում Լիբանանում քրիստոնյաների, մասնավորապես մարոնիների շահե-

---

[636] E. Picard, Lebanon, A Shattered Country: Miths and Realities of the Wars in Lebanon, p. 155.

[637] R. Helmick, Internal Lebanese Politics: The Lebanese Front and Forces, in Halim Barakat ed. Towards a Viable Lebanon, London, Groom Helm & Washington, Center for Contemporary Arab Studies, 1988, pp. 310-312.

րի պաշտպանությունն ու նրանց գերակա դիրքերի պահպանումը[638]: Պատահական չէ, որ Սամիր Ջաջան ձգտում էր կյանքի կոչել դեռևս 1975թ.-ից սկսած աջ ուժերի առավել ծայրահեղական, հատկապես «Քաթաիբ» կուսակցությանը հարող որոշ արմատական շրջանակների պարբերաբար առաջ քաշած հետևյալ ծրագիրը. «քրիստոնեական ինքնավար պետության» ստեղծում՝ արևելյան Բեյրութ կենտրոնով, որ զերծ կլիներ սիրիական ռազմական ներկայությունից և ամուր կապեր կպահպաներ Իսրայելի հետ: Այն ամբողջությամբ պետք է լիներ լիբանանյան աջ ուժերի վերահսկողության ներքո: Կազմավորվելու էին ռազմական և քաղաքացիական կառույցներ, որոնց նպատակը «քրիստոնեական ինքնավարությունում» «լիբանանյան պետությանը փոխարինելն» էր[639]:

1987-1988թթ. Սամիր Ջաջան ակտիվորեն ստանձնեց վերոնշյալ ծրագրի գործնական իրականացումը: Լիբանանյան ուժերի հրամանատարը նախ վերակազմավորեց իր զինված խմբավորումները՝ դրանց տալով կանոնավոր բանակի բնույթ, որ զենք և զինամթերք էր ստանում Իսրայելից, իսկ 1987թ. սկսած՝ մասամբ նաև Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնից[640]: Վերջինս ցանկանում էր հնարավոր բոլոր միջոցներով թուլացնել իր մրցակից Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի դիրքերը Լիբանանում: Ջաջայի նախաձառնությամբ կազմավորվեցին նաև «քրիստոնեական ինքնավար պետության» քաղաքացիական և հասարակական կառույցները: Ստեղծվեցին սոցիալական, բժշկական, մաքսային և մի շարք այլ ծառայություններ[641]:

Սամիր Ջաջան իր քաղաքական նպատակ էր հռչակել նաև երկրի ողջ քրիստոնյաներին «լիբանանականության» ("Lebanism") գաղափարի շուրջ համախմբումը: Այս նախագիծը նա զարգացնում էին

---

[638] Nationalism & Ethnic Politics, Vol. 8, No. 2, Summer, 2002, p. 36.
[639] W. Phares, Lebanese Christian Nationalism: The Rise and Fall of an Ethnic Resistance, Boulder, CO: Lynne Rienner Publishers, 1995, p. 221.
[640] E. Picard, A Shattered Country: Miths and Realities of the Wars in Lebanon, p. 138.
[641] H. Faris, The Failure of Peacemaking in Lebanon: 1975-1989, in D. Collings ed. Peace for Lebanon? From War to Reconstruction, Boulder, CO: Lynne Rienner Publishers, 1994, pp. 18-30.

մարոնի ծայրահեղական քաղաքական և մտավորական որոշ շրջանակներ, որոնք նախատեսում էին երկազգային (bi-national)՝ քրիստոնյաների և իսլամադավանների ինքնավար հանրապետությունների կամ լայն ապակենտրոնացման ստեղծում Լիբանանի դաշնային պետության համատեքստում[642]: Այս առնչությամբ Էթիեն Սակլին պետության համատեքստում[642]: Այս առնչությամբ Էթիեն Սակլին՝ «Լիբանանյան ճակատում» ներգրավված մարոնիական քաղաքական կուսակցություններից մեկի՝ «Մայրիի պաշտպաններ» կուսակցության ռազմական թևի հրամանատարը, որն աչքի էր ընկնում Լիբանանի ինքնության առնչվող հարցերում խիստ արմատական հայացքներով, նշում էր. «Լիբանանյան ազգը չի կարող նույնացվել արաբական, սիրիական կամ որևէ այլ, արաբական ինքնություն ունեցող ազգի հետ»[643]: Մարոնի պատմաբան Ալ-Բուսթանին կոչ էր անում նեղացնել լիբանանյան պետության սահմանները՝ սահմանափակվելով միայն «քրիստոնեական ինքնավար պետությամբ», նպատակ ուներ պահպանել լիբանանյան ազգի քրիստոնեական բնույթը[644]:

Նշենք, որ «Լիբանանյան ճակատի» ոչ բոլոր ուժերն էին համաձայն արժանացնում վերոնշյալ ծրագրի իրականացումը: Մասնավորապես «Ազգային լիբերալ» կուսակցությունը («Շամունականներ») կտրուկ քննադատության էր ենթարկում Լիբանանը դաշնային պետություն դարձնելու որոշ մարոնիական շրջանակների փորձերը: «Շամունականները» հանդես էին գալիս Լիբանանի միասնականության և ամբողջականության պահպանմամբ և այս հարցում սերտորեն համագործակցում էին հակադիր ճակատի ղեկավար ուժի՝ «Առաջադիմական սոցիալիստական» կուսակցության ղեկավարության հետ[645]:

Վերադառնալով Միշել Աունին՝ նշենք, որ հանձինս սունների ազդեցիկ ղեկավար Սալիմ Ալ-Հոսի՝ նա ուներ մրցակից, որը թեև մի քանի ամիս էր, ինչ արդեն պաշտոնանկ էր արվել, սակայն որևէ

---

[642] R. Helmick, նշվ. աշխ., էջ 320:
[643] F. Al-Bustani, De l' Erreur du Grand Liban, Lebanon, Kislik University Press, 1988, p. 115.
[644] W. Phares, նշվ. աշխ., էջ 130:
[645] T. Chamoun, նշվ. աշխ., էջ 135:

կերպ չէր ցանկանում հրաժարվել վարչապետի պաշտոնից և հանձնել գործադիր իշխանությունը: 1988թ. սեպտեմբերի վերջից Լիբանանում հաստատվել էր երկիշխանություն: Գործում էր երկու կառավարություն, երկու քաղաքացիական վարչակարգ և երկու կանոնավոր բանակ[646]:

Ստեղծված իրավիճակն իր իշխանության ամրապնդմանը ծառայեցնելու և վերջնականապես երկրի կառավարումն իր ձեռքում կենտրոնացնելու, ինչպես նաև 1989թ. փետրվարից Սամիր Ջաջայի իր նկատմամբ վերահսկողություն հաստատելուն ուղղված գինված հարձակումներին վերջ դնելու նպատակով Աունը մայիսին հայտարարեց Լիբանանի տարածքը «Սիրիայից ազատագրելու պատերազմ»[647]: Սիրիան իր հերթին ցամաքային և ծովային շրջափակման ենթարկեց «քրիստոնեական ինքնավարության» այն շրջանները, որ գտնվում էին Միշել Աունի գինված խմբավորումների հսկողության տակ: Ի պատասխան՝ գեներալը ռմբակոծեց Արևմտյան Բեյրութում տեղակայված սիրիական ռազմական ուժերի դիրքերը: Միշել Աունն ընտրեց լիբանանյան աջ ուժերի «Ճանաչիր քո թշնամուն: Սիրիան քո թշնամին է» կարգախոսը[648]: Իբրև նպատակ նա հռչակեց Լիբանանի միասնականության և անկախության վերականգնումն ու օրենքի ուժի հաստատումը, որին հասնելու համար Աունն ակնկալում էր լիբանանյան աջ ուժերի, ապա նաև իսլամադավանների աջակցությունը: Այս ընթացքում Աունի հեղինակությունը խիստ բարձրացել էր, ինչը բացատրվում էր այն հանգամանքով, որ վերջինս ծայրահեղ քննադատության էր ենթարկում և՛ աջ ուժերի և՛ ձախերի գինված խմբավորումների գործողությունները, որոնք չէին նպաստում Լիբանանում խաղաղության հաստատմանը և էլ ավելի էին խորացնում առկա պառակտվածությունը[649]: Սակայն իր քաղաքական նպատակների իրականացման ընթացքում Աունը թույլ

---

[646] W. Charara, Deux Ans de Réunification Nationale: Une Libanisation Gigogne, Cahiers de la Méditerranée, No. 44, June, 1992, p. 168.
[647] D. Hiro, նշվ. աշխ., էջ 300:
[648] E. Picard, Lebanon. A Shattered Country: Miths and Realities of the Wars in Lebanon, p. 138-139.
[649] R. Sneiger-Parri, Guerres Maronites 1975-1990, Paris, 1995, pp. 181-182.

տվեց երկու ռազմավարական սխալ, որոնք էլ հենց կանխորոշեցին նրա պարտությունը.

1. Նա հավատում էր, որ արևմտյան տերությունները, հատկապես ԱՄՆ-ը և Ֆրանսիան հնարավորինս կաջակցեին իրեն Սիրիայի դեմ պայքարում: Գեներալը շատ լավ հասկանում էր, որ առանց արտաքին օժանդակության նա երբեք չէր կարող հաղթանակ տանել ինչպես հակասիրիական պայքարում, այնպես էլ աջ ուժերի շրջանում մենիշխանության հաստատման գործում: Սակայն ԱՄՆ-ը, ելնելով տարածաշրջանում իր հետագա ռազմավարական ծրագրերից, արդեն իսկ հավաստիացրել էր Սիրիային, որ ամերիկյան վարչակազմը պատրաստ է «աչք փակել» Լիբանանում սիրիական ներկայության պահպանման նկատմամբ: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա վերջինս բավարվեց միայն Աունին «բանավոր աջակցություն» ցույց տալով.
2. Աունին այդպես էլ չհաջողվեց միավորել լիբանանյան աջ ուժերի ողջ ճակատը: Վերջինիս զինված խմբավորումները միայնակ, առանց աջերի ամբողջական ճակատի աջակցության, անկարող էին լուրջ պայքար մղել սիրիական ուժերի դեմ: Սիրիական զինված ուժերի դեմ հարձակումների ընթացքում զգալիորեն տուժում էին հատկապես Բեյրութի հյուսիսային արվարձանները: Արդյունքում Աունն իր «ազգային ազատագրման» պատերազմը՝ հակառակ Լիբանանի ամբողջականության և անկախության վերականգնման կոչերին, վերածեց սեփական մենիշխանության պահպանման պայքարի: Պարզ էր, որ նա ևս ձգտում էր «Լիբանանյան ճառակում» մենիշխանության հաստատմանը[650]: Այդուհանդերձ, մինչև 1989թ. օգոստոսի 15-ը Աունին հաջողվեց միավորել լիբանանյան 14 խմբավորումների, որոնք ձևավորեցին հակասիրիական ճակատ[651].

1980-ականների վերջին ուժեղացել էր միջազգային հանրության, հատկապես ԱՄՆ-ի, լիբանանյան հակամարտության վերջ-

---

[650] G. Corm, Hégémonie Milicienne et Problème du Rétablissement de l'Etat, in Liban: Les Guerres de l'Europe et de l'Orient, 1840-1992, Paris, 1992, pp. 225-230.

[651] D. Hiro, նշվ.աշխ., էջ 300:

նական կարգավորմանն ուղղված ջանքերը: Պատահական չէ, որ 1989թ. մայիսի 25-ին, նաև ԱՄՆ-ի ակտիվ աջակցությամբ, Արաբական պետությունների լիգայի 16-րդ համաժողովում որոշում ընդունվեց կազմավորել հանձնախումբ՝ Ալժիր, Մարոկկո և Սաուդյան Արաբիա կազմով, որ կոչված էր առաջիկա վեց ամիսների ընթացքում ուղի հարթել դեպի լիբանանյան ճգնաժամի վերջնական կարգավորումը[652]:

1989թ. սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 22-ը լիբանանյան խորհրդարանի ողջ մնացած 63 պատգամավորներից 58-ը Տաիֆում (Սաուդյան Արաբիա), քննարկում էին Ազգային համաձայնության խարտիան: Նշենք, որ Սալիմ Ալ-Հոսը, լիբանանյան ձախերն ու աջ ուժերի հրամանատարությունը՝ Սամիր Ջաջայի գլխավորությամբ, նպատակ ունենալով վերջ դնել Լիբանանում երկարատև քաղաքացիական պատերազմին, ճանաչեցին Տաիֆի համաձայնագիրը: Միայն Աունը հրաժարվեց ընդունել այն: Նա փաստարկեց, որ վերոնշյալ համաձայնագիրը, որով Լիբանանի և Սիրիայի միջև հաստատվում էին հատուկ բնույթի հարաբերություններ, «օրինականացնում էր Սիրիայի Լիբանանի նկատմամբ հավակնություններն ու երկրի տարածքում սիրիական ռազմական ուժերի ներկայությունը»[653]:

1989թ. հոկտեմբերի 22-ին Տաիֆի համաձայնագրի ստորագրմամբ Լիբանանում վերջ դրվեց քաղաքացիական երկարատև պատերազմին[654]: Տաիֆի համաձայնագրի համաձայն՝ պահպանվող կրոնադավանական համակարգում տեղի էին ունեցել մի շարք բարեփոխումներ.

1. Հաշվի առնելով երկրում մարոնիների, սուննիների և շիաների միջև ստեղծված ուժերի նոր հարաբերակցությունը՝ տեղի ունեցած ժողովրդագրական փոփոխությունները, հատկապես շիա-

---

[652] A. Norton, Lebanon after Taif: Is the Civil War Over?, The Middle East Journal, Vol. 3. No. 54, 1991.

[653] Նույն տեղում:

[654] http://www.ict.org.il; Տաիֆի համաձայնագրի տեքստը տե՛ս http://www.monde-diplomatique,fr/cahier/proche-orient/region-liban

ների, թվաքանակի կտրուկ աճը[655], նախատեսվում էր մեծացնել իսլամադավանների մասնակցությունը երկրի կառավարման մարմիններում.

2. Նվազեցվել էին երկրի մարոնի նախագահի լիազորություններն ու ավելացվել սուննի վարչապետինն ու խորհրդարանի շիա նախագահինը.
3. Հավասարեցվել էր խորհրդարանում իսլամադավանների և քրիստոնյաների համամասնությունը: Նախկին 5:6 համամասնությունը փոխարինվել էր 5:5-ով[656]: Ավելացվել էր նաև պատգամավորների թիվը՝ 99-ից հասցվել էր 108-ի[657].

Համաձայնագրով ամրագրվեց նաև Լիբանանի տարածքում լիբանանյան պետականության վերահաստատումն ու Հարավային Լիբանանից իսրայելյան զորքերի դուրս բերումը[658]: Այսպիսով՝ վերջ Լիբանանից իսրայելյան զորքերի դուրս բերումը[658]: Այսպիսով՝ վերջ դնելով Լիբանանում երկարատև զինված հակամարտությանը՝ հաստատեց Սիրիայի մաձայնագիրը հատուկ հարաբերություններ հաստատեց Սիրիայի և Լիբանանի միջև՝ բոլոր բնագավառներում, ներառյալ արտաքին քաղաքականության, անվտանգության, պաշտպանության, տնտեսության, կրթության և տեղեկատվության ոլորտները: Համաձայնագրով ստեղծվեց Գերագույն խորհուրդ, որը կազմված էր յուրաքանչյուր երկրի նախագահից և երեք պաշտոնյաներից: Համաձայնագրում ամրագրվեց նաև Լիբանանի ձևական խնդրանքը՝ որոշակի հիմունքների վրա սիրիական զորամիավորումներն այնտեղ թողնելու վերաբերյալ[659]: Տաիֆի համաձայնագիրը իրավական տեսանկյունից հնարավոր դարձրեց սիրիական ազդեցության հաստատումը Լիբանանում:

---

[655] 1986թ. ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ շիաներն արդեն կազմում էին Լիբանանի բնակչության 31-ից 39%-ը:

[656] The Text of the Document of National Reconciliation մանրամասն տե՛ս J. Maila, "The Document of National Reconciliation: A Commentary", Prospects for Lebanon, No. 4, Oxford, Center for Lebanese Studies, 1992.

[657] 1992թ. Լիբանանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում պատգամավորների թիվն արդեն հասցվել էր 128-ի:

[658] TACC, 10.09.1990.

[659] D. Pipes, Damascus Courts the West: Syrian Politics, 1989-1991, Washington Institute for Near East Policy, Washington DC, 1991, p. 71.

Այս համաձայնագրի ստորագրումից հետո, երբ զինված հակամարտության բոլոր կողմերը համաձայնեցին զինաթափվել, «Հիզբալլահը» միակ շարժումն էր, որ, օգտվելով Տաիֆի համաձայնագրով հաստատված սիրիալիբանանյան հարաբերությունների հատուկ բնույթից, Սիրիայի ակտիվ միջամտությամբ կարողացավ պահպանել իր ռազմական խմբավորումները և շարունակել Իսրայելի դեմ իր զինված պայքարը Լիբանանի հարավից: Այս համաձայնագրի ստորագրումը հնարավորություն տվեց «Հիզբալլահին» մուտք գործել նաև Լիբանանի քաղաքական դաշտ: 1992թ. մասնակցելով խաղաղության հաստատումից հետո երկրում տեղի ունեցող առաջին խորհրդարանական ընտրություններին՝ «Հիզբալլահը» ստացավ 8 տեղ 128-ից[660]:

8. Քաղաքացիական պատերազմի ութերորդ փուլը: Վերջնական խաղաղության հաստատումը Լիբանանում

1989թ. նոյեմբերի 5-ին՝ արդեն Լիբանանի տարածքում՝ Քուվեյթում, Տաիֆի համաձայնագրի հաստատումից հետո, լիբանանյան խորհրդարանը նախագահ ընտրեց Ռենե Մուաուադին, որը, սակայն սպանվեց նոյեմբերի 22-ին: Երկու օր անց նոր նախագահ ընտրվեց Իլիաս Հրաուին, որ վարչապետի պաշտոնում կրկին նշանակեց Սալիմ Ալ-Հոսին[661]:

1989թ. դեկտեմբերին, ստանալով երկրի նախագահի և վարչապետի աջակցությունը՝ լիբանանյան աջ ուժերի հրամանատար Սամիր Ջաջան ստանձնեց Աունին վերջնական պարտության մատնե-

---

[660] «Արաքս», Թեհրան, 07.08.2000: 1992թ. խորհրդարանում ընտրվեցին 64 քրիստոնյա՝ 34 մարոնի, 14 հույն ուղղափառ, 8 հույն կաթոլիկ, 6 հայ, 2 այլ քրիստոնեական համայնքների ներկայացուցիչ և 64 իսլամադավան՝ 27 սուննի, 27 շիա, 8 դրուզ, 2 ալավի:

[661] E. Picard, Lebanon. A Shattered Country: Miths and Realities of the Wars in Lebanon, p. 160.

լու գործը: Զինված բախումներ տեղի ունեցան աջերի զինված խմբավորումների և գեներալ Աունի զորամիավորումների միջև, որոնք վերահսկում էին «քրիստոնեական ինքնավարության» մեկ երրորդը: Բախումները հատկապես սաստկացան 1990թ. ապրիլին, երբ Ջաջան պաշտոնապես իր հավատարմությունը հայտնեց նախագահ Իլիաս Հրաուիին և Սիրիայի հետ մերձեցման նրա քաղաքական ուղեգծին[662]: Աունի անզիջում դիրքորոշումը հանգեցրեց 1990թ. ապրիլ-հուլիս ամիսներին աջ ուժերի ճակատում ներմարտնձական հակամարտության ուժեղացմանը, որի ընթացքում Աունը պայքարում էր լիբանանյան աջ ուժերի նկատմամբ ամբողջական վերահսկողություն սահմանելու, ինչպես նաև «ազատագրված» տարածքում՝ Բեյրութից մինչև Ջուբայլ, իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու համար: Այս բախումների արդյունքում կար շուրջ 1000 սպանված և 3000 վիրավոր, ինչպես նաև զգալի ավերածություններ[663]:

Սիրիան լավագույնս օգտագործեց Ծոցի II ճգնաժամի ընթացքում ԱՄՆ-ի հովանու ներքո հակաիրաքյան միջազգային կոալիցիային միանալու գործոնը, որով և ապահովեց Լիբանանում սիցիային միանալու գործոնը, որով և ապահովեց Լիբանանում սիրիական ռազմաօդային և ցամաքային ուժերն արդեն ամբողջովին լիբանանյան կառավարության վերահսկողության տակ գտնվող բանակի ինչպես նաև Սամիր Ջաջայի գլխավորությամբ լիբանանյան ուժերի զինված խմբավորումների հետ համատեղ հաջողեցրին վերջնական պարտության մատնել Աունին[664]: Վերջինս ստիպված էր երկար ժամանակ ապաստան գտնել Լիբանանում Ֆրանսիայի դեսպանատանը, ապա նաև ֆրանսիական ռազմանավով տեղափոխվել Ֆրանսիա[665]: Երկարատև քաղաքացիա-

---

662 R. Sneiger-Parri, նշվ.աշխ., էջ182:

663 E. Picard, Lebanon. A Shattered Country: Miths and Realities of the Wars in Lebanon, p. 161.

664 D. Hiro, նշվ.աշխ., էջ 306:

665 Միշել Աունի վերադարձը Լիբանան հնարավոր եղավ միայն 2005թ. մայիսի 7-ին՝ նույն թվականի փետրվարի 14-ին Ռաֆիկ Հարիրիի

կան պատերազմն ավարտված էր[666]: Լիբանանը փորձում էր հնարավորինս արագ վերականգնել հակամարտող ուժերի միջև հավասարակշռությունը:

Նշենք, որ լիբանանյան աջ ուժերի ճակատում հակասությունները չէին սահմանափակվում միայն Սամիր Ջաջայի և Աունի հակամարտությամբ: Աջերի նկատմամբ մենիշխանության հաստատման պայքարի վառ օրինակ էր նաև 1980-ականների վերջին կրկին սրված մրցակցությունը «Լիբանանյան ճակատի» երկու հիմնական ուժերի՝ «Ազգային լիբերալ» և «Քաթաիբ» կուսակցությունների զինված խմբավորումների միջև: Այդ հակասությունների ուժեղացման արդյունքում 1990թ. հոկտեմբերին սպանվեց շամունականների ղեկավար, Լիբանանի նախկին նախագահ Քամիլ Շամունի որդին՝ Դենի Շամունը[667]: Այս ամենն ապացուցում էր այն իրողությունը, որ աջերի ճակատում նեղ անձնական շահերը դեռևս շարունակում էին գերիշխող լինել համընդհանուր պետական շահերի նկատմամբ:

Լիբանանյան ուժերի ղեկավարները, որ ստացել էին «պատերազմի լորդեր» անվանումը, իրենց ձեռքում էին հիմնականում կենտրոնացրել Սիրիայի և Իսրայելի հետ սննդամթերքի, վառելիքի, զենքի և թմրանյութերի անօրինական առևտուրը, որ ապահովում էր խոշոր չափի եկամուտներ[668]: Այս գործում սերտորեն համագործակցելով Լիբանանում տեղակայված սիրիական զորամիավորումների սպաների հետ՝ լիբանանյան աջերի որոշ ղեկավարների հովանավորյալներն իրականացնում էին լայնածավալ մաքսանենգություն: Լիբանանից դուրս էին բերվում մեծաքանակ գողացված ապրանքներ և դրանք իրացվում էին Սիրիայում: Վերջիններս քաջալերում

սպանությանը հետևած զարգացումների արդյունքում երկրից սիրիական զորքերի ամբողջությամբ դուրս բերումից հետո:

[666] 1975-1990թթ. Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքում զոհվել է 150.000 մարդ, որից 15.700-ը՝ միայն 1982թ. իսրայելական ներխուժման ընթացքում: Տե՛ս D. Hiro, նշվ.աշխ., էջ 300:

[667] H. Syrrieh, The Triumph or Compromise: The Decline of Political Maronitism in Lebanon after the Civil War, Civil Wars, Vol. 1, No. 41, 1998, p. 61.

[668] E. Picard, Lebanon. A Shattered Country: Miths and Realities of the Wars in Lebanon, p. 143.

էին նաև Բեքաայի հովտում օպիումի աճեցումն ու կազմակերպում էին հերոինի առևտուրը[669]:

Ամբողջությամբ լիբանանյան աջ ուժերի վերահսկողության տակ էր գտնվում Ջունիյի նավահանգիստը, որ դարձել էր երկրի առևտրային կենտրոնը:

Պատերազմի ավարտից հետո Լիբանանում օրենքի ուժի հաստատումը դարձել էր անհետաձգելի գործ: 1990թ. օգոստոսի 21-ին Լիբանանի խորհրդարանն ընդունեց որոշում, որի համաձայն երկրի սահմանադրությունը պետք է համապատասխանեցվեր Տաիֆի համաձայնագրի դրույթներին: 1991թ. մարտին բոլոր զինված խմբավորումները, (բացառությամբ «Հիզբալլահի») զինաթափվեցին: Հուլիսին վերակազմավորված և վերազինված լիբանանյան բանակն իր վերահսկողությունը հաստատեց Լիբանանի ողջ տարածքի նկատմամբ, բացառությամբ «անվտանգության գոտուց», որ դեռևս գտնվում էր իսրայելական վերահսկողության ներքո: Լիբանանյան հակամարտության մեջ ներգրավված բոլոր ուժերը, այդ թվում նաև աջերը, զրկվեցին իրենց ոչ օրինական եկամտի աղբյուրներից:

Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո լիբանանյան աջ ուժերը փոխակերպվեցին քաղաքական կուսակցության, որ պահպանվեց մինչև 1994թ. մայիս, երբ Ջունիյում մարոնիական եկեղեցում պայթյուն կազմակերպելու, ինչպես նաև մինչ այդ՝ 1990թ. հոկտեմբերին Դենի Շամունի սպանությունը կազմակերպելու մեղադրանքով բանտարկվեց այդ ուժերի ղեկավար Սամիր Ջաջան[670]: 1995թ. նա դատապարտվեց մահվան, որն ավելի ուշ փոխարինվեց ցմահ բանտարկության[671]:

1992թ. ամռանը շուրջ 20 տարի ընդմիջումից հետո երկրում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ: Սիրիական վերահսկողության տակ ընթացող այդ ընտրությունները բոյկոտեցին

---

669 Նույն տեղում:

670 D. Hiro, նշվ. աշխ., էջ 301:

671 2005թ. հուլիսի 18-ին լիբանանյան խորհրդարանը ձայների մեծամասնությամբ քվեարկեց Սամիր Ջաջային ներում շնորհելու օգտին, և վերջինս ազատ արձակվեց շուրջ տասը տարվա ազատազրկումից հետո:

լիբանանյան աջ ուժերն ու նրանց ընտրազանգվածի շուրջ 80%-ը[672]: Ընտրությունների արդյունքում, ինչպես արդեն նշել ենք, ընտրվեց 128 պատգամավոր:

Մինչ այդ, 1991թ. մայիսի 22-ին, նախագահներ Էլիաս Հրաուին և Հաֆեզ Ալ-Ասադը ստորագրեցին լիբանանասիրիական եղբայրության և համագործակցության համաձայնագիրը, որ պարտավորեցնում էր երկու հարևաններին համակարգել իրենց արտաքին, պաշտպանության և տնտեսական քաղաքականությունները[673]: Այս համաձայնագիրը մեկ անգամ ևս ամրապնդեց այն հատուկ բնույթի հարաբերությունները, որ առկա էին երկու երկրների միջև:

1991թ. վարվող պաշտոնական քաղաքականության համաձայն՝ զինված խմբավորումների մինչև 25 տարեկան բոլոր մարտիկները համալրեցին կանոնավոր բանակի կազմը: Կառավարությունը լիբանանյան ուժերի 6.500 մարտիկի ևս ներգրավեց լիբանանյան բանակի շարքերում[674]:

1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին լիբանանյան աջերի ճակատում մենիշխանության համար պայքարն ու հակասությունների սրումը հանգեցրին ճակատի վերջնական պառակտմանը: Այս գործընթացում զգալի դեր խաղաց նաև Տաիֆի համաձայնագրի ստորագրումն ու նրա դրույթների նկատմամբ լիբանանյան ուժերի ազդեցիկ ղեկավարներից մեկի՝ Միշել Աունի բացասական դիրքորոշումը: Վերջինս Տաիֆի համաձայնագրի ստորագրման նկատմամբ ունեցած առարկություններն փորձեց հնարավորինս օգտագործել ի նպաստ «Լիբանանյան ճակատում» և, ընդհանրապես, երկրում սեփական իշխանության հաստատմանը՝ իր պայքարին, որպես համախմբող գործոն, հաղորդելով հակասիրիական բնույթ: Սակայն Աունի «պատերազմը» ավարտվեց պարտությամբ, որի արդյունքը եղավ «Լիբանանյան ճատակում» բևեռացման գործընթացի էլ ավելի խորացումը:

---

[672] E. Picard, Lebanon. A Shattered Country: Miths and Realities of the Wars in Lebanon, p. 161.

[673] The Text of Lebanese-Syrian Treaty of Brotherhood, Cooperation and Coordination տե՛ս Dilip Hiro, նշվ. աշխ., էջ 303:

[674] D. Hiro, նշվ. աշխ., էջ 301:

Խորհրդարանական ընտրությունների ավարտից հետո՝ 1992թ. նոյեմբերին, Լիբանանի վարչապետ նշանակվեց Ռաֆիկ Հարիրին: Նոր կառավարության կազմում նա զբաղեցրեց նաև ֆինանսների նախարարի պաշտոնը: Հարիրիի գլխավորած կառավարությունը ստանձնեց լիբանանյան պետականության վերահաստատման և տնտեսության վերականգնման դժվարին գործընթացի իրագործումը:

ՎԵՐՋԱԲԱՆ

1960-ականների երկրորդ կեսին և 1970-ականների սկզբին Լիբանանում քաղաքական ճգնաժամի խորացումը, ինչպես նաև 1975թ. ապրիլին երկրում երկարատև քաղաքացիական պատերազմի բռնկումը զանազան ներքին և արտաքին գործոնների հետևանք էր: Ներքին գործոններից էին.

1. Լիբանանի կառավարման հիմքում դրված կրոնադավանական համակարգի ճգնաժամը: Այն կարիք ուներ զգալի բարեփոխումների, որին կտրականապես դեմ էին լիբանանյան աջ ուժերը, մասնավորապես մարոնիները: Վերջիններս չէին ցանկանում կորցնել այդ համակարգով ամրագրված իրենց վերադաս դիրքերը.
2. Սոցիալ-տնտեսական իրավիճակի խիստ սրումը, կլանային տարրերի աննախադեպ հզորացումը, իշխանական շրջանակներում կոռուպցիայի ուժեղացումը.
3. Ներքաղաքական անկայունությանը նպաստեց նաև Լիբանանում ՊԴԾ-ի ջոկատների և մեծաքանակ պաղեստինյան փախստականների ներկայությունը, որի նկատմամբ վերաբերմունքը ջրբաժան գիծ դարձավ լիբանանյան տարբեր քաղաքական ուժերի միջև՝ հանդիսանալով ներքաղաքական իրավիճակի սրման և լիբանանյան հակամարտության խորացման հիմնական գործոններից մեկը.

Վերոնշյալ գործոնները հանգեցրել էին լիբանանյան պետական կառավարման մարմինների գրեթե բացահայտ անդամալուծմանը, որի հետևանքով արտաքին գործոնները՝ շարունակվող «սառը» պատերազմի պայմաններում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի գլխավորած խմբավորումների ու նրանց մերձավորարևելյան դաշնակիցների միջև դիմակայության ու հակամարտության գնալով ավելի ու ավելի խորացման պայմաններում, անմիջականորեն անդրադառնում էին ներլիբանանյան իրականության վրա՝ ավելի բարդացնելով ճգնաժամի քաղաքական կարգավորման խնդիրը:

1. Լիբանանում շուրջ 1 տարի շարունակվող զինված հակամարտության պայմաններում, 1976թ. Սիրիան իր քաղաքական շա-

հերից ելնելով, անմիջականորեն միջամտեց լիբանանյան զարգացումներին: Սիրիային ձեռնտու չէր ինչպես Լիբանանի ձախսացումը և պաղեստինյան ուժերի հաղթանակը, այնպես էլ միայն քրիստոնյա մարոնիների ղեկավարությամբ Լիբանանի գոյությունը: Պաշտոնական Դամասկոսի կարծիքով պաղեստինցիների ազդեցության ուժեղացումը կարող էր վտանգել Լիբանանում բազմաթիվ համայնքների խաղաղ գոյակցությունը և կրոնադավանական համակարգով հաստատված փխրուն հավասարակշռությունը, հանգեցնելով սիրիահրայելյան նոր բախման, ինչը տվյալ պահին ձեռնտու և ցանկալի չէր Սիրիայի համար: 1976թ. Ռիադում և Կահիրեում տեղի ունեցած արաբական երկրների ղեկավարների համաժողովներում ստանալով արաբական երկրների համաձայնությունը և ընդգրկվելով ՄԶՈՒ-ի կազմի մեջ՝ Սիրիան վերածվեց de-facto և de-jure Լիբանանում կայունություն ապահովող միակ գործնական և օրինական ուժի:

2. Լիբանանի տարածքում պաղեստինյան զինված խմբավորումների ներկայությունը համագործակցության եզրեր ի հայտ բերեց ինչպես ձախ ուժերի և պաղեստինցիների, այնպես էլ լիբանանյան աջ ուժերի և Իսրայելի միջև: Պատահական չէր, որ հենց պաղեստինյան ռազմական ներկայությամբ էլ Իսրայելը հիմնավորում էր նախ 1970-ականների առաջին կեսին Լիբանանի տարածք իր պարբերական հարձակումները, իսկ քաղաքացիական պատերազմի տարիներին՝ նաև 1978 և 1982 թվականների ներխուժումները: 1970-80-ականներին Լիբանանում պայթունավտանգ իրավիճակի պահպանմանը մեծապես նպաստում էր նաև Իսրայելի Լիբանանի նկատմամբ վարած քաղաքականությունը: Այդ փուլում Իսրայելին անկասկած ձեռնտու էր ճգնաժամային իրավիճակի պահպանումը, որ հյուծում էր լիբանանյան պետությանն ու զինված հակամարտության մեջ ներգրավված ինչպես լիբանանյան այնպես էլ վերջիններիս ետևում կանգնած տարածաշրջանային այլևայլ ուժերի՝ շեղելով նրանց ուշադրությունը նաև մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորման գործընթացից:

3. 1970-ականների երկրորդ կեսին և 1980-ականներին մի շարք գործոններով պայմանավորված՝ Լիբանանն արաբական երկրների շարքում դարձավ այն թույլ օղակը, որտեղ բախվեցին գերտերությունների ու նրանց տարածաշրջանային դաշնակիցների շահերը: ԱՄՆ-ի հովանու ներքո քեմփդևիդյան գործընթացը շարունակելու փորձ արվեց Լիբանանում: Արդյունքում, 1983թ. ստորագրվեց լիբանանաիսրայելյան խաղաղության համաձայնագիրը, որը սակայն ոչ միայն չհանգեցրեց Լիբանանի և Իսրայելի միջև վերջնական խաղաղության հաստատմանն ու Լիբանանում իրավիճակի կայունացմանը, այլ նաև էլ ավելի խորացրեց ներլիբանանյան հակասությունները: Երկրում տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային զինված ուժերի առկայությունն առաջ բերեց արմատական տրամադրությունների և զինված դիմադրության ուժեղացում, որի արդյունքում էլ չեղյալ հայտարարվեց լիբանանաիսրայելյան համաձայնագիրը, իսկ իսրայելյան զինված ուժերը (բացառությամբ «անվտանգության գոտուց») և բազմազգ խաղաղապահ ուժերի ստորաբաժանումներն արդեն 1984-85թթ. հարկադրաբար դուրս բերվեցին Լիբանանի տարածքից:
4. 1980-ականներին արաբական աշխարհում ընդհանրապես և Լիբանանում մասնավորապես նկատվում էր իսլամական գործոնի հզորացման միտումներ: Պատահական չէ, որ դեռևս 1970-ականներին Մուսա Ալ-Սադրի ղեկավարությամբ լիբանանյան շիա համայնքի քաղաքական ակտիվացումը, 1979թ. Իրանում իսլամական հեղափոխությունը, 1978 և 1982 թվականներին Լիբանան իսրայելական ներխուժումները և մի շարք այլ գործոններ նպաստեցին «Հիզբալլահ» կազմակերպության կազմավորմանը, որը 1980-ականներին «սառը» պատերազմի վերջին փուլում իսլամն «առաջարկում էր» որպես այլընտրանք Արևմուտքի կապիտալիզմին և Արևելքի սոցիալիզմին: Շարժումը փորձում էր իր քաղաքականության հիմնական ուղղություններն ընդօրինակել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական ուղեգծից և 1985թ. հրապարակած իր «Բաց նամակում» Իրանն անվանում էր պետություն, որին կարելի է նման-

վել: 1970-1980-ական թվականներին լիբանանյան շիաների քաղաքական ակտիվացման արդյունքում աննախադեպ մեծացավ այդ համայնքի դերը Լիբանանի քաղաքական կյանքում: Շիաները, փաստորեն, գլխավորեցին Լիբանանում Իսրայելին դիմակայող ուժերի ճակատը: Պատահական չէ, որ հենց «Հիզբալլահի» ակտիվ գործողությունների արդյունքում 2000թ. մայիսի 24-ին Իսրայելը ստիպված էր իր զորքերը դուրս բերել Լիբանանի ողջ տարածքից՝ «անվտանգության գոտուց»:

5. Լիբանանում քաղաքացիական պատերազմի բռնկումից ի վեր աջ ուժերի առավել ծայրահեղական, հատկապես «Քաթաիբ» կուսակցությանը հարող որոշ արմատական շրջանակներ պարբերաբար առաջ էին քաշում արևելյան Բեյրութ կենտրոնով «քրիստոնեական ինքնավար պետություն» ստեղծելու ժամանակ առ ժամանակ շրջանառվող ծրագիրը, որը զերծ կլիներ սիրիական ռազմական ներկայությունից և ամուր կապեր կպահպաներ Իսրայելի հետ: Այն ամբողջությամբ պետք է լիներ լիբանանյան աջ ուժերի վերահսկողության ներքո: Կազմավորվելու ընթացքում էին ռազմական և քաղաքացիական կառույցներ, որոնց նպատակը «քրիստոնեական ինքնավարությունում» «լիբանանյան պետությանը փոխարինելն» էր: Վերոնշյալ ուժերն իրենց քաղաքական նպատակ էին հռչակել նաև երկրի ողջ քրիստոնյաներին «լիբանանականության» (“Lebanism”) գաղափարի շուրջ համախմբումը: Նախատեսվում էր երկազգային (bi-national)՝ քրիստոնյաների և իսլամադավանների ինքնավար հանրապետությունների կամ լայն ապակենտրոնացման ստեղծում Լիբանանի դաշնային պետության համատեքստում: Սակայն այս նախագիծը հավանություն չստացավ «Լիբանանյան ճակատում» համախմբված բոլոր աջերի շրջանում:

6. 1980-ականների վերջին ուժեղացել էր միջազգային հանրության, հատկապես ԱՄՆ-ի, լիբանանյան հակամարտության վերջնական կարգավորմանն ուղղված ջանքերը: Պատահական չէ, որ 1989թ. հոկտեմբերի 22-ին հենց ԱՄՆ-ի և Սաուդյան Արաբիայի ակտիվ աջակցությամբ Տաիֆում ստորագրվեց համաձայնագիր, որով Լիբանանում վերջ դրվեց քաղաքացիական եր-

կարատև պատերազմին: Այդ համաձայնագրի համաձայն՝ պահպանվող կրոնադավանական համակարգում տեղի էին ունեցել մի շարք բարեփոխումներ, որոնք հաշվի առնելով երկրում մարոնիների, սուննիների և շիաների միջև ստեղծված ուժերի նոր հարաբերակցությունը՝ տեղի ունեցած ժողովրդագրական փոփոխությունները, հատկապես շիաների, թվաքանակի կտրուկ աճը, նախատեսվում էր մեծացնել իսլամադավանների մասնակցությունը երկրի կառավարման մարմիններում: Համաձայնագրով ամրագրվեց նաև Լիբանանի տարածքում լիբանանյան պետականության վերահաստատումն ու Հարավային Լիբանանից իսրայելյան զորքերի դուրս բերումը: Այսպիսով՝ վերջ դնելով Լիբանանում երկարատև զինված հակամարտությանը՝ համաձայնագիրը հատուկ հարաբերություններ հաստատեց Սիրիայի և Լիբանանի միջև՝ բոլոր բնագավառներում: Ավելի ուշ Սիրիան լավագույնս օգտագործեց Ծոցի II ճգնաժամի ընթացքում ԱՄՆ-ի հովանու ներքո հակաիրաքյան միջազգային կոալիցիային միանալու գործոնը, որով և ապահովեց Լիբանանում սիրիական երկարատև ներկայության պահպանման նկատմամբ ամերիկյան վարչակազմի լուռ համաձայնությունը:

7. Քաղաքացիական պատերազմի տարիներին լիբանանյան իրականությանը բնորոշ էր այն, որ զինված բախումներ տեղի էին ունենում ոչ միայն հակամարտող ճակատների միջև, այլ նաև միևնույն ճակատում համագործակցող ուժերի շրջանում, ինչն այս կամ այն ուժի տվյալ ճակատում իր դիրքերի ամրապնդման համար մղվող պայքարի հետևանք էր: 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին լիբանանյան աջերի ճակատում մենիշխանության համար պայքարն ու հակասությունների սրումը հանգեցրին ճակատի պառակտմանը, ինչպես նաև երկրում վերջնական խաղաղության հաստատման ևս մեկ տարով հետաձգմանը: Զգալի դեր խաղաց նաև Տաիֆի համաձայնագրի ստորագրումն ու նրա դրույթների նկատմամբ լիբանանյան աջ ուժերի ազդեցիկ ղեկավարներից մեկի՝ Միշել Աունի բացասական դիրքորոշումը: Վերջինս Տաիֆի համաձայնագրի ստորագրման նկատմամբ ունեցած առարկությունները փորձեց

հնարավորինս օգտագործել ի նպաստ «Լիբանանյան ճակատում» և, ընդհանրապես, երկրում սեփական իշխանության հաստատմանը: Որպես լրացուցիչ խաղաքարտ նա իր պայքարին հաղորդեց հակասիրիական բնույթ: Սակայն Աունի «պատերազմը» ավարտվեց պարտությամբ, որի արդյունքը եղավ «Լիբանանյան ճատակում» բևեռացման գործընթացի էլ ավելի խորացումը:

1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին լիբանանյան հակամարտությունը հօգուտ այս կամ այն ճակատի զինված ճանապարհով լուծելը դարձել էր գրեթե անհնար: Բացի այդ հակամարտող կողմերն իրենք արդեն հոգնել էին երկարատև հյուծիչ զինված պայքարից:

Տաիֆի համաձայնագիրն ընդհանուր առմամբ լուծեց իր առջև դրված խնդիրները: Համաձայնագրի ստորագրումից հետո մինչև 2005թ. փետրվարի 14-ը, երբ սպանվեց երկրի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրին, Լիբանանում, ընդհանուր առմամբ, հնարավոր եղավ պահպանել վերոնշյալ համաձայնագրով հաստատված խաղաղությունը՝ զերծ մնալով միջհամայնքային բախումներից, ապահովվել երկրի բնականոն սոցիալ-տնտեսական զարգացումը և նույնիսկ որոշակի առաջընթաց արձանագրել:

1990թ. հոկտեմբերին Լիբանանում քաղաքացիական պատերազմի ավարտը մեծապես պայմանավորվեց նաև տարածաշրջանային և միջազգային գործոններով: «Սառը» պատերազմի ավարտը, միջազգային հարաբերություններում ԽՍՀՄ-ի դիրքերի թուլատը, միջազգային և տարածաշրջանային գործընկերների դիրքեցումն ու ԱՄՆ-ի և նրա տարածաշրջանային գործընկերների դիրքեցումն ու ԱՄՆ-ի և նրա տարածաշրջանային գործընկերների դիրքեցումը նպաստեցին նախ 1989թ. Տաիֆի համաձայնագրի ստորագրմանը, ապա 1990թ. Լիբանանում քաղաքացիական պատերազմի վերջնական ավարտին:

LEBANON FROM 1958 TO 1990

EXECUTIVE SUMMARY
INTRODUCTION

The Republic of Lebanon in spite of its small area and population[1] plays a special role in the Arab World because of its favorable geographic position as well as intellectual and cultural potential.

Lebanon has always been a focus of interest for foreign forces. One of the main reasons for that is also its an important role of a banking and trade centre of the Middle East. It is not coincidental that some regional and not regional state's profits are pushing in this country.

The confessional political system of Lebanon is oddity in the Arab World. Lebanon consists of several Christian and Muslim communities: the Maronite, the Greek Orthodox, the Greek Catholic, the Armenian Apostolic, the Armenian Catholic, the Sunni, the Shi'i, the Druze, etc. In the unwritten National Pact of 1943, the major religious communities, the Maronite and the Sunni, reached a compromise accord. Under the arrangement, the President of the Republic must always be a Maronite, the Prime Minister a Sunni and the Speaker of the Parliament a Shi'i. The apportionment of deputies in the Parliament rested on a numerical formula for communal representation, six Christians per five Muslims. (The formula was changed only by the Taif Accord of 1989: five Christians per five Muslims.) The Parliament seats as well as administrative positions are also divided in accordance with the Confessional system.

---

[1] The area of Lebanon is 10.4 square kilometers and the population, nearly 3 million.

It is too difficult to grasp the Lebanese modern history and present reality without the research of the often negative but sometimes very important role of the Confessional political system.

One of the most essential periods of the Lebanese history is the period from the first civil war of 1958 until the end of the second one in 1990.

In the 1960's and in the early 1970's, during this precarious period of Lebanese history, on the one hand there was tangible general socio-economic progress and relative political stability and on the other hand the prime causes of the 1975 second civil war that lasted nearly 15 years were engendered.

From the second half of the 1960's the influence of the regional developments (the Arab-Israeli wars of 1967 and 1973, the world energy crisis after the Arab-Israeli war of 1973, and the escalation of the Palestinian factor in the Middle Eastern conflict, etc.) on the Lebanese domestic political life became more effective. Such developments often acquired international significance.

The analysis of domestic Lebanese and regional developments in the researching period is very topical and contributes to the adequate appreciation of present realities and processes in Lebanon and in the region in general.

The discussion of some important problems also adds to the more comprehensive insight into some aspects of the Middle Eastern conflict and the deepening contradictions in different Middle Eastern countries (in this case in Lebanon) caused in some cases by the deteriorating Arab-Israeli conflict.

Until the 1970's Lebanon was not directly involved in the Middle Eastern conflict. That reality did not last very long and from the end of the 1960's Lebanon step by step had to be involved in the Arab-Israeli conflict with all the negative consequences.

I discuss also the causes and consequences of second civil war as well as the role of internal and external (especially regional) forces such were Syria and Israel and their sensible role in inter-Lebanese developments.

It is too important the research of the factors that assisted to the political and economical growth of the Shi'i community in Lebanon in 1970's. It is not occasional that after the Israeli invasions of 1978 and 1982 the Shi'i community (in face of "Amal" and "Hizballah" movements) headed the struggle against the Israeli military presence in Lebanon.

The analyses of the processes that were passing in the Shi'i community in the 1970-80's are useful not only for the research of the Shi'i factor in the domestic political life of the present-day Lebanon but also for the adequate comprehension of the causes and consequences of the Israeli military operation against "Hizballah" in Lebanon in July-August 2006.

In the second half of 1970's under the sponsorship of the USA began the Middle Eastern Camp David Peace Process. As a result there were signed Camp David Accords (between Egypt and Israel) in 1978 and the Egypt-Israeli Agreement in 1979.

The signing of the Lebanese-Israeli Peace Agreement on May 17, 1983 followed the 1982 Israeli intervention and was the trial of possible continuation of the Camp David process. The Lebanese-Israeli Peace Agreement not only did not contribute to the establishment of final peace and the stabilization of Lebanon's situation but aggravated the existing crisis and stimulated radical tendencies.

I also analyze the Taif Accord's subscription process signed in October 22, 1989 and the establishment of final peace in the country in 1990.

The signing of the Taif Accord got a head of some dissidence particularly in the rightist "Lebanese Front" that run into the armed conflict delaying the establishment of final peace in Lebanon for one more year, till October 1990.

The topicality of the work deals also with the research of the modern history, internal and external policy and economic developments of the Republic of Lebanon, one of the important Middle Eastern partners of the Republic of Armenia.

CHAPTER ONE

THE SOCIO-ECONOMIC SITUATION IN LEBANON 1958-1975

Of the total area of Lebanon, just over half (52 percent) consists of mountain, swamp or desert and a further 7 percent of forest. Only 23 percent of the area was cultivated but there was a further 17 percent which could be cultivated given suitable conditions. The coastal strip enjoyed a Mediterranean climate and was exceedingly fertile, producing mainly olives, citrus fruits and bananas but many of the steep valleys leading up from the coastal plain were carefully terraced and very productive in olives and soft fruit, especially mulberries and in the Zahle and Shtaura regions there were well-known vineyards. Cotton, in particular, and onions were grown in the hinterland of Tripoli. The main cereal-growing district, however, is the Bekaa, the fertile valley between Lebanon and the Anti-Lebanon ranges.

In the 1960's and in the early 1970's the main economic fields of Lebanon were services and light industry. They were the basis of the country's economy. In that period the unprecedented economic development of the Gulf countries promoted the economic growth of Lebanon. The Lebanese financial and banking system played the intermediate role between the Gulf countries' capital and the investment possibilities abroad.

After the 1967 Six Day War the Suez Canal was closed because of which the transit and re-exporting role of Lebanon became more important.

The free trade-financing activity, the development of Hotel net and tourism were the guaranty of Lebanese economic growth which is known as "the Lebanese phenomenon." From 1965 to 1975 the growth of the Lebanese Gross Domestic Product (GDP) was 7 percent annually.

In the early 1970's 30 percent of the economically active population of Lebanon was engaged in agriculture which gave only 19 percent of National income.

The country was far from being self-supporting in agricultural products. It covered 1/3 of country's population's food consumption, the other 2/3 Lebanon had to export from the abroad. It had negative influence on trade balance and food security.

Industry. From 1943 until 1970 the share of Industry in National income increased from 7 to 17 percent.

In the researching period in comparison with other Arab countries the Industrial development of Lebanon had numerous good figures.

The mineral wealth of Lebanon was not great. Both iron and lignite were mined in the country in the early 20th century and there were deposits of bitumen near Hasbaya. In spite of intensive prospecting, no oil has been found in commercial quantities. On the other hand, the geographic position of Lebanon was of great importance to the oil industry of the Middle East. For the country was crossed by two highly important pipelines, that from Kirkuk to the Mediterranean at Tripoli, and that from Aramco in Saudi Arabia to Sidon, Tapline. There were also important refineries at both Sidon and Tripoli.

Manufacturing industry had far many years been highly developed in Lebanon compared with other Middle Eastern States. The reason for the apparently disproportionate development of manufacturing industries in Lebanon was that they have been mostly established to supply Syrian market, as well as that of Lebanon, and the economic separation of the two countries in 1950 was therefore a severe blow to Lebanon's industry. Another handicap was the shortage of fuel and electric power. In spite of all this, Lebanon's industry made a good deal of progress during the 1960's.

The largest employers were probably the food-processing industries, which included biscuit factories and sugar refineries, followed by the textile industries, which were well developed.

Perhaps more important was the cement industry which not only covered Lebanon's consumption but could be imported to Saudi Arabia, Jordan and other Gulf countries.

Foreign Trade. There had been an adverse balance of visible trade for many years, the ratio between the value of imports and exports generally being between three and four to one.

The Arab-Israeli June war of 1967 distorted the country's foreign trade, and the value of imports fell to 1.451 million LL but that of exports actually increased to 367 million LL. None of these figures included the highly important transit trade through the tree port of Beirut to Syria, Jordan and Iraq. The value of this trade had amounted in good years to several times the value of domestic exports from Lebanon, and it was, of course, an important source of gain to the country's economy.

The principal articles of export were fruits and vegetables. The total value of Lebanon's exports of citrus fruit, bananas, apples, pears and fresh vegetables usually amounted to about a quarter were included wool, cotton and hides. Owing to the increase in cement production, there was an exportable surplus. The principal import consisted of gain and flour. Large numbers of sheep and cattle also have to be imported, as well as a whole range of industrial raw materials, notably fuel and timber, and of course, machinery, and manufactured goods.

In the late 1960's and early 1970's half of the country's exports went to the members of the Arab League with Arabia Saudi taking approximately 21 percent. The other main importers of Lebanese goods were Iraq, Jordan, Kuwait and Syria. Apart from these, Lebanon's main customers was the U.S.S.R., the United States and the United Kingdom. Over half of the countries of the West.

The heavily adverse balance of visible trade was generally made good by the large net of invisible exports which Lebanon's position as the chief entrepôt and distributing centre of Middle East enabled it to earn, and by the remittances from the Lebanese overseas, of whom there were large numbers, especially in the United States, South America and South East Asia.

Finance, State Budget, Banking system, Tourism and Transport.

The importance of Beirut as the commercial and financial centre of the Middle East has increased remarkably since 1960's. This was due mainly to the almost complete absence of restriction on the free movement of goods and capital, for Lebanon is one of the few free markets left in the Middle East. Lebanon benefited as well from the growing xenophobia in Egypt, particularly after 1951. Many foreign firms which till then had found it convenient to locate the headquarters of their Middle Eastern activities in Cairo moved them to Beirut, where the compromise the Lebanese succeeded in working out between their own Muslim and Christian population evidently provided a more accommodating atmosphere for foreigners. In the early 1970's there were eighty officially recognized banks established in Beirut, including branches or representatives of very many major international banks.

The growth in importance of Beirut as a centre for air communications was remarkable. In the 1960's a new international airport was opened, which could accommodate the largest of modern airlines, and traffic increased. The number of passenger/kilometers handled at Beirut had by 1967 exceeded the figure for cargo was nearly ten times bigger, and much of the traffic which formerly went via Egypt passed through Beirut. In addition Lebanon was successfully developed as a tourist centre for the Middle East.

Many large modern hotels were built in the 1960's and early 1970's and the invisible income the country earned from tourism was of great importance. In the 1970's the income from tourism accounted for 20% of national income.

In the 1960's and in early 1970's the nation finances appeared to have been on a sound basis though budgetary expenditure had constantly increased owing largely to the rising cost of defense, which had generally accounted for about fifth of total expenditure. However, the revenue of the State, of which, as usual in the Middle East a comparatively small proportion was provided by direct taxation, increased simultaneously.

The general standard of living of Lebanon in the early 1970's was higher than in most of the other Arab countries of the Middle East (except in the refugee camps where there were from 300.000 to 450.000 Palestinian expatriates).

Lebanon accepted grants and long-term credits, principally for economic development and mainly from the United States and Kuwait.

The Economic Development projects. There were in addition a large number of important development projects under active consideration or in process of realization. Of these the most far-reaching was the Litani River Scheme. Its purpose was to provide the country for the first time with an adequate supply of electricity and simultaneously to extend the acreage of irrigated land. The whole scheme would take about 20-25 years to complete, and it was originally estimated some years ago that it would provide for the Five-Years Plans. When finished it would have the effects of increasing the irrigation area of Lebanon from about 120,000 to 170,000 acres and of making possible the production of an additional 500 million KWh of electricity per annum, compared with the production of 181 million KWh. The scheme would therefore entirely revolutionize the country's economy. Work began on the first stage of the project in which the combined output of the hydro-electric plant to be installed was to have been 336 million KWh per annum. That phase of the operation was estimated to cost $ 40 million, of which $ 27 million was to be provided in the form of loan from the International Bank for Reconstruction and Development. By the end of 1967 the whole of this loan was taken up and $ 4.7 million had been repaid. In July 1966 the Kuwait Economic Development Fund agreed to make a loan of Kuwait Dinar (KD) 2.4 million towards the financing of the second stage of the scheme. Until 1975 there were numerous other smaller projects of port facilities at the harbor of Tripoli and Beirut.

Lacking mineral resources, unable to feed themselves out of their agricultural production, and possessing no important raw materials, the

inhabitants of Lebanon were driven to trade and commerce to find a living. The abilities and traditions they have thereby developed over the centuries stood them in good stead.

Beirut made a name for itself as an entrepôt, as a centre of international commerce and finance, and as a sounding-board for what was going on throughout the Middle East, not only in the economic but also in the political field.

CHAPTER II

THE BALANCE OF CONFESSIONAL AND POLITICAL FORCES AND PARTIES IN LEBANON IN 1958-1975

National pact of 1943. Lebanon is a multiparty, multi-confessional republic, where since 1943 confessionalism has been built into the political-administrative system. It specifies that the republic's president is to be a Maronite Christian, the prime minister a Sunni Muslim, and the parliamentary speaker a Shia Muslim.

According to the unwritten National Pact of 1943 accepting the existing frontiers of Lebanon, the Muslim leadership gave up its demand for union with Syria to re-create Greater Syria. In return its Christian counterpart agreed that Lebanon should be free of any foreign ties and should present an "Arab face" to the world. Later the National Pact was given the status of an official decree by the Free French government's General Georges Catroux.

In 1960 the number of parliamentary seats was increased from seventy-seven to ninety-nine, with fifty-four going to Christians and forty-five to Muslims. This lasted until the National Reconciliation Charter of 1989; the number of seats was raised to 128 and the proportion altered to parity Christians and Muslims.[2]

According to the unofficial estimate of 1977, the Shia composed 28 percent of the Lebanese population, the Sunni 19 percent, the Druze 8 percent; the Maronites 24 percent, Greek Orthodox 9 percent, Greek Catholic 6 percent, and Armenian Apostolic 8 percent.[3]

---

[2] The 1990 amendments to the constitution curtailed the power of the president, elected for a six-year term by parliament, and increased the authority of the cabinet, making it more autonomous. The president has the power to approve and implement laws passed by the National Assembly.

[3] According to the unofficial estimate of 1986 Muslims already composed 60-73 percent of Lebanese population of which Shia 31-39 percent, Sunni 21-26

The main Lebanese right-wing political forces were the Maronite-dominated "Phalange Party" ("Lebanese Kataeb" Party) established in November 1936 by Pierre Gemayel. The party attracted Christian youths from the mountainous Metn region, the heartland of the Maronites, and Christian students in Beirut. It participated in the talks that led to the National Pact of 1943, which formalized the Christian domination of the state.

Its pro-Western stance and opposition to pan-Arabism led it to back President Camille Chamoun in the first 1958 Lebanese Civil War. Its initial support for President Fuad Chehab waned when he tried to strengthen state powers at the expense of financial and commercial oligarchs who had led the "Phalange".

Its leaders began to highlight the presence of Palestinians, whose numbers had been boosted by the June 1967 Arab-Israeli War and the 1970-1971 Jordanian Civil war. On the eve of the Lebanese second Civil War of 1975-1990 the Party, now 20.000 strong, had a militia under the command of Bashir Gemayel, who later became commander of the coalition of Maronite militias. The "Phalange" party, "National Liberal" Party (established in September 1958 by Camille Chamoun), the "Guardians of the Cedars" and some other right-wing political forces formed the "Lebanese Front" (LF) in September 1976. The "Front's" constituents stressed their distinctness from the Arab world by emphasizing that Maronite history, centering on the church and Mount Lebanon, stood apart from mainstream Muslim Arabs and even non-Maronite Christians. In December 1980 the front issued a manifesto calling for the replacement of the 1943 National Pact by some sort of federation or confederation within a unified Lebanon.

The left-wing Lebanese political forces were mainly various Muslim-dominated nationalist and Progressive parties: the "Progressive

---

percent, Druze 7 percent, Alawi 1 percent; Christians 26-39 percent of which Maronite 16-25 percent, Greek Orthodox 5-6 percent, Greek Catholic 3-4 percent, Armenian Apostolic and Catholic 2-3 percent; other 1 percent.

